21-ՐԴ ԴԱՐ

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

6 (76)

ԵՐԵՎԱՆ

2017

21-ՐԴ ԴԱՐ
տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից **6 (76), 2017**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ալեքսանդր Գասպարիշվիլի
Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետհամալսարանի լաբորատորիայի վարիչ, փ.գ.թ. (Մոսկվա, ՌԴ)
Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր
Արա Մարջանյան
«Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, ՄԱԿ ԶԾ էներգետիկայի ազգային փորձագետ, տ.գ.թ.
Արամ Սաֆարյան
«Ինտեգրացիա և զարգացում» ՀԿ նախագահ, բ.գ.թ.
Բաբկեն Վարդանյան
«Հայք հաստատություն» հ/կ տնօրեն, ՀՀ պաշտպանության նախարարի ավագ խորհրդական
Գագիկ Հարությունյան *(համակարգող)*
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, բ.գ.թ.
Զավեն Եկավյան
Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)

Էդուարդ Լ. Դանիելյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան
ՀՀ վարչապետ, տ.գ.դ.
Հրանուշ Հակոբյան
ՀՀ Սփյուռքի նախարար, ի.գ.դ.
Միհրան Դաբաղ
Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր Սփյուռքի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)
Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ
Ջորջ Կոստոպուլոս
Կիբեռանվտանգության պրոֆեսոր (Աթենք, Հունաստան)
Սամվել Մանուկյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, ս.գ.թ.
Սերգեյ Գրինյան
Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տ.գ.դ. (Մոսկվա, ՌԴ)
Վահագն Ազլյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ
Վարդան Հարությունյան
ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 6 (76), 2017թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի առաջին տեղակալ
Սամվել Մանուկյան

Գլխավոր խմբագրի տեղակալներ
Արա Մարջանյան
Վահագն Ագլյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Վահրամ Հովյան

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Սամվել Մանուկյան
Հեռուստալսարանի դինամիկան Հայաստանում 2012-2016թթ. ……..……. 4

Արմեն Ղալեչյան
Տեղեկատվական մեթոդների միջոցով ԶՈՒ անձնակազմի գիտակցության վրա ներազդելու որոշ հարցեր ...……..... 19

Հրայր Փաշայան, Լիանա Բալայան
Արցախի Հանրապետություն. մարտահրավերներ և դրանց հաղթահարման ուղիները ……....…… 30

Գայանե Չոբանյան
Թուրքական կրոնական ազդեցությունը Ադրբեջանի Հանրապետության վրա ……..… 37

Աշոտ Մարկոսյան, Էլյանորա Մաթևոսյան
Էլեկտրաէներգիայի արտահանման հնարավորությունները ՀՀ-ում ……..…… 54

Ռոբերտ Խաչատրյան, Ֆրիդա Հակոբյան
Բարձրագույն կրթության դերը կրթական անվտանգության ապահովման գործընթացում …… 70

Արթուր Աթանեսյան, Նվարդ Մելքոնյան, Լիլիթ Իսկանդարյան, Արմեն Խաչիկյան
Երևանաբնակ երիտասարդության ընկալումները Եվրոպայի և եվրոպացիների մասին ……..… 99

Վահրամ Հովյան
ԱՄՆ հայ համայնքի քաղաքական ներուժը. դասակարգման փորձ ……..... 118

Վլադիմիր Հակոբյան
Հայկական սփյուռքը Եվրոպայում և ՌԴ-ում …… 131

Դերենիկ Մելիքյան
Ա. Աշխարհամարտը, Իրանը և թուրքական նկրտումներն Ատրպատականում ……. 138

Հուշագիր հեղինակին ……..…..…..…... 151

ՀՏԴ 654.197 (479.25)

ՀԵՌՈՒՍՏԱԼՍԱՐԱՆԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2012-2016ԹԹ.

Սամվել Մանուկյան[*]

Բանալի բառեր ՝ ինֆորմացիոն վարք, Հայաստանի հասարակություն, հեռուստալսարան, հեռուստադիտումների ինտենսիվություն, հեռուստալսարանի սեգմենտ։

Ներածություն

Աշխարհում տեղի է ունենում տեղեկատվության (ինֆորմացիայի) աղբյուրների դերերի փոխակերպում։ Սրընթաց զարգանում է ինտերնետը, ավանդական հեռուստատեսությունը ձեռք է բերում նոր հնարավորություններ և զարգանում է ինտերակտիվ լրատվամիջոցի վերածվելու ուղղությամբ։ Նվազում է այլ լրատվամիջոցների, մասնավորապես՝ տպագիր մամուլի և ռադիոյի դերը։ Միանշանակ չէ անմիջական շփման՝ որպես ինֆորմացիայի աղբյուրի, դերի փոփոխությունը։ Անձնական շփումը մեսենջերների և վիրտուալ սոցիալական ցանցերի միջոցով նույնպես տեղափոխվում է վիրտուալ տարածք։

Հոդվածում ներկայացված է Հայաստանում 2012-2016թթ. ընթացքում ինֆորմացիայի տարբեր աղբյուրների նշանակության, ինչպես նաև հասարակությունում ինֆորմացիոն վարքի մի քանի բնութագրերի փոփոխության դինամիկան։ Հատուկ ուշադրություն է դարձվել հեռուստատեսությանը։

Հետազոտությունն իրականացվել է Հայաստանում, Կյանքի որակը 2012-2016թթ. ընթացքում համահանրապետական ներկայացուցչական սոցիոլոգիական հետազոտությունների տվյալների շտեմարանների մշակմամբ։ Դրանք իրականացվել են Հայաստանի կառավարության պատվերով, *IPSC* Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի կողմից։

Հետազոտությունների ընդհանուր համակցությունն էր Հայաստանի 18 և ավելի բարձր տարիքի բնակչությունը։ Տարբեր տարիների հետազոտություններում հարցվել է 2000-2018 անձ։

---

[*] «Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, սոց.գ.թ.։

Ինֆորմացիայի աղբյուրների գերակայությունների դինամիկան 2012-2016թթ.

2012-2016թթ. Հայաստանում իրականացված Կյանքի որակի հետազոտություններում Հայաստանի բնակչության ինֆորմացիայի ստացման աղբյուրների նշանակությունն ուսումնասիրվել է հետևյալ հարցի կիրառմամբ. *«Ի՞նչ աղբյուրներից եք հիմնականում տեղեկանում նորություններին: Նշեք միայն առաջին և երկրորդ ամենակարևոր աղբյուրները»*:

Հետազոտական տվյալները ցույց են տալիս, որ 2012-2016թթ. ընթացքում Հայաստանի բնակչության ինֆորմացիոն վարքում տեղի են ունեցել էական փոփոխություններ (*Գծապատկեր 1-Ա*):

Գծապատկեր 1

Ինֆորմացիայի աղբյուրների գերակայությունների դինամիկան 2012-2016թթ.





Մասնավորապես՝ կտրուկ աճել է ինտերնետի նշանակությունը՝ 2012թ. 33%-ից մինչև 59%՝ 2016թ.: Կտրուկ նվազել է անմիջական միջանձնային հաղորդակցության[1] (ընկերներ, հարևաններ, բարեկամներ) նշանակությունը՝ 38%-ից 21%, իսկ ընտանիքի անդամների նշանակությունը՝ 15%-ից՝ 7.3%: Ինֆորմացիայի երկու ավանդական աղբյուրների՝ ռադիոյի և տպագիր մամուլի 2012թ. արդեն իսկ շատ ցածր նշանակությունը շարունակել է նվազել և 2016թ. դարձել է համապատասխանաբար՝ 5.5% և

[1] Հետազոտությունում «անմիջական միջանձնային հաղորդակցությունը» նշանակում է միջանձնային հաղորդակցություն՝ առանց ինտերնետի: Այն ստորաբաժանված է երկու կատեգորիայի՝ «Շփում ընտանիքի անդամների հետ» և «Շփում այլ անձանց հետ», այդ թվում՝ հարազատներ, հարևաններ, ընկերներ, աշխատակիցներ:

4.7%: Այնուամենայնիվ, «ավանդական» ինֆորմացիայի աղբյուրներից հեռուստատեսությունը պահպանել է իր առաջնությունը: Այդ տարիներին հեռուստատեսության նշանակությունը՝ որպես ինֆորմացիայի 1-ին կամ 2-րդ աղբյուր, մնացել է շատ բարձր՝ 83-85% մակարդակի վրա:

Ինֆորմացիայի միջոցների կարևորության դիտարկումը տարիքային խմբերում թույլ է տալիս մանրամասնել ինֆորմացիայի յուրաքանչյուր աղբյուրի յուրահատուկ նշանակությունը և, բացի դրանից, պատկերացում կազմել այդ աղբյուրի նշանակության հետագա փոփոխության վերաբերյալ: *Գծապատկեր 1-Բ*-ում ներկայացված է 2016թ. ինֆորմացիայի աղբյուրների նշանակությունը՝ որպես 1-ին կամ 2-րդ առավել կարևոր աղբյուր, ըստ տարիքային խմբերի:

Տվյալներից պարզվում է, որ ինտերնետը միակ ինֆորմացիայի աղբյուրն է, որի կարևորությունը ժամանակի ընթացքում աճելու է (քանի որ միայն ինտերնետի նշանակությունն է աճում տարիքային խմբերի երիտասարդացմանը զուգահեռ): Ինֆորմացիայի մնացած միջոցների՝ հեռուստատեսության, միջանձնային հաղորդակցության, ռադիոյի և տպագիր մամուլի նշանակությունը շարունակելու է նվազել: Հատկանշական է, որ 19-24 տարեկան անձանց 90%-ի և 25-29 տարեկան անձանց 76%-ի համար ինտերնետն արդեն նորությունների ստացման 1-ին կամ 2-րդ կարևոր աղբյուրն է:

Հայաստանի հեռուստալսարանի ծավալի դինամիկան 2012-2016թթ.

Քանի որ հեռուստատեսության նշանակությունը համեմատաբար երիտասարդ տարիքային խմբերում ունի շարունակական նվազման միտում, հետևաբար մոտակա տարիների ընթացքում հեռուստատեսության՝ որպես ինֆորմացիայի ստացման առաջին կարևոր աղբյուրի, նշանակությունը նվազելու է: Այս համատեքստում արժե դիտարկել Հայաստանի հեռուստալսարանի, տվյալ դեպքում՝ Հայաստանի հեռուստացույց դիտող 18 և ավելի տարեկան բնակչության կրճատման հարցը կամ այն մարդկանց քանակի փոփոխությունը, ովքեր *ընդհանրապես հեռուստացույց չեն դիտում*:

Հետազոտական տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում, ինտերնետի զարգացմանը զուգահեռ, հեռուստալսարանի ընդհանուր ծավալը նվազում է: Եթե 2012թ. հեռուստացույց չէր դիտում բնակչության 2.6%-ը, ապա 2016թ.՝ արդեն՝ 7.4%-ը (*Գծապատկեր 2-Ա*): Ընդ որում, եթե 2016թ. հեռուստացույց ընդհանրապես չէր դիտում 60 և ավելի տարեկան բնակչության 1%-ը, ապա 18-29 տարեկանների՝ 13%-ը (*Գծապատկեր 2-Բ*):

Գծապատկեր 2

Հեռուստացույց չդիտող բնակչությունը



Տվյալների մանրամասն դիտարկումից պարզվել է, որ որքան անձն ավելի երիտասարդ է, ավելի բարեկեցիկ է, ունի ավելի բարձր կրթամակարդակ, բնակվում է ավելի մեծ բնակավայրում, այնքան ավելի բարձր է հավանականությունը, որ նա հեռուստացույց չի դիտում: Հեռուստացույց չդիտող բնակչության աճը տեղի է ունենում դիտարկված սոցիալ-ժողովրդագրական խմբերի բոլոր կատեգորիաներում:

Առավել հաճախ դիտվող հեռուստաալիքները 2013-2016թթ.

Հետազոտություններում առավել հաճախ դիտվող հեռուստաալիքները բացահայտվել են հետևյալ հարցի միջոցով. *«Ո՞ր հեռուստաալիքներն եք առավել հաճախ դիտում»:* Ընդունվում էր մինչև 2 պատասխան:

Հետազոտություններում հարցվողները նշել են հայաստանյան և այլ երկրների ընդհանուր առմամբ 85 հեռուստաալիք: Դրանց շարքում «Արմենիայի» և «Շանթի» լսարանների ծավալները, համապատասխանաբար՝ 62% և 58%, նշանակալիորեն գերազանցում էին մյուս հեռուստաալիքների լսարանները (*Գծապատկեր 3*)[1]: Երրորդ տեղում էր Հ1-ը (19%), իսկ չորրորդ և հինգերորդ տեղերում էին համապատասխանաբար՝ «Կենտրոնը» (9%) և *ՕՐՏ*-ն (8%):

Հայաստանի նշված հինգ առավել դիտվող հեռուստաալիքներից միայն «Կենտրոնի» կերպարն է շաղկապված քաղաքական կուսակցության հետ, այն է՝ «Բարգավաճ Հայաստան», որը 2017թ. ընտրված Ազգային ժողովում ունի 28 պատգամավոր՝ ընդամենը 101-ից: Նշենք, որ իշխող՝ Հայաս-

[1] Ակնհայտ է, որ կիրառված մեթոդաբանությունը թույլ չի տալիս գնահատել հեռուստաալիքի ամբողջ լսարանը: Ստացված տվյալները մի փոքր ավելի ցածր են, սակայն մոտ են հեռուստալսարանների իրական ծավալները: 2012թ. հեռուստաալիքների լսարանների հետազոտությունը ցույց է տվել, որ Հայաստանի ամբողջ բնակչության 78%-ը նորություններ է դիտում մեկ կամ երկու հեռուստաալիքով, 15%-ը՝ երեք, իսկ չորս կամ ավելի հեռուստաալիքով՝ 4%-ը:

տանի Հանրապետական կուսակցությունն ունի 58 պատգամավոր: Հայ հեղափոխական դաշնակցության հետ է շաղկապված «Երկիր մեդիա» հեռուստաալիքի կերպարը: ՀՅԴ-ն Ազգային ժողովում ունի 7 պատգամավոր:

Գծապատկեր 3

Տվյալ հեռուստաալիքը որպես 1-ին կամ 2-րդ առավել հաճախ դիտվողը նշած անձանց քանակը



Տվյալների մանրամասն ուսումնասիրությունը ցույց տվեց, որ 2013-2016թթ. ընթացքում աճել են «Արմենիայի», «Շանթի», «Կենտրոնի» և *ATV*-ի հեռուստալսարանները: Նույն ժամանակահատվածում նվազել են Հ1-ի, *РТР*-ի, «Երկիր մեդիայի» և «Արմնյուզի» լսարանները:

Հեռուստաալիքների ազդեցությունն ինֆորմացիոն դաշտի կազմավորման հարցում նշանակալիորեն կախված է դրանց լսարանների տարիքային կազմից: Այդ տվյալներն առավել մեծ լսարան ունեցող հեռուստաալիքների համար ներկայացված են *Գծապատկեր 4-Ա* և *Բ*-ում:

Գծապատկերների տվյալները ցույց են տալիս, որ «Արմենիա» և «Շանթ» հեռուստաալիքների լսարաններում հարաբերականորեն գերակշռում են երիտասարդ տարիքային խմբերը (18-29 և 30-45 տարեկան): *ATV*-ի լսարանում հարաբերականորեն գերակշռում են ամենաերիտասարդ՝ 18-29 և ամենաավագ՝ 60 և ավելի տարիքային խմբերը: Իսկ Հ1, «Կենտրոն», *РТР, НТВ* և Հ2 հեռուստաալիքների լսարաններում գերակշռում են բարձր տարիքային խմբերը՝ 46-60 և 60-ից բարձր տարեկան:

Գծապատկեր 4

Առավել տարածված հեռուստաալիքներն ըստ տարիքային խմբերի («Ո՞ր հեռուստաալիքներն եք առավել հաճախ դիտում»: Ընդունվել է մինչև երկու պատասխան), 2016: Տվյալները ցույց են տալիս, թե Հայաստանի չափահաս բնակչության տվյալ տարիքային խմբի որ մասն է նշել տվյալ հեռուստաալիքը որպես 1-ին կամ 2-րդ առավել դիտվող:





Հեռուստադիտումների օրական միջին ժամանակը

Հայաստանում 2016թ. հեռուստացույց դիտող բնակչությունը օրական հեռուստացույց էր դիտում միջինը 3:47 ժամ: Այդ ցուցանիշը սոցիալ-ժողովրդագրական խմբերում ներկայացված է *Գծապատկեր 5*-ում:

Գծապատկեր 5

Հեռուստադիտումների օրական միջին ժամանակը (այն անձանց համար, ովքեր դիտում են հեռուստատեսություն)



Հեռուստադիտումների միջին ժամանակն աճում է տարիքի աճին զուգահեռ, նվազում է՝ բարեկեցության աճին զուգահեռ, համեմատաբար ավելի բարձր է գյուղերում, համեմատաբար ավելի ցածր է բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում:

Միջին հաշվով ավելի երկար են դիտվում *PTP, HTB*, «Կենտրոն» և «Երկիր մեդիա» հեռուստալիքները: Բոլոր հեռուստալիքներում ավագ տարիքային խմբերը միջին հաշվով ավելի շատ ժամանակ են անցկացնում հեռուստաէկրանի դիմաց, քան երիտասարդները: Մասնավորապես, եթե 18-24 տարեկաններն օրական հեռուստացույց են դիտում միջինը 2:21 ժամ, ապա 60 և ավելի տարիքային խմբում՝ մոտ 5:50 ժամ:

Հեռուստահաղորդումների տիպերի գերակայությունները Հայաստանի և հեռուստալիքների լսարաններում

Հետազոտությամբ ուսումնասիրվել է, թե ինչ տիպի հեռուստահաղորդումներ են գերադասում դիտել Հայաստանի և առանձին հեռուստալիքների լսարանները, ինչի նպատակով կիրառվել է հետևյալ հարցը. *«Հետևյալ հեռուստատեսային հաղորդումների տեսակներից որո՞նք եք գերադասում դիտել»* (ներկայացվել է քարտ՝ պատասխանների տարբերակներով, ընդունվել է մինչև երկու պատասխան):

Գծապատկեր 6

Հեռուստահաղորդումների տիպերի գերադասելիությունը Հայաստանի հեռուստալսարանում («Հետևյալ հեռուստատեսային հաղորդումների տեսակներից որո՞նք եք գերադասում դիտել»: Ներկայացվել է քարտ՝ պատասխանների տարբերակներով, ընդունվել է մինչև երկու պատասխան):



Տվյալների ընդհանուր պրոֆիլը (*Գծապատկեր 6*) ցույց է տալիս, որ հեռուստատեսությունը Հայաստանի բնակչության համար հիմնականում լուրերի ստացման, պասիվ ժամանցի և զվարճանքի միջոց է: Այլ կերպ, եթե հեռուստատեսությունը դիտվի հասարակական կառավարման տեսանկյունից, ապա Հայաստանում այն զանգվածային մշակույթի կազմավորման և կայունացման գործիք է: Հայաստանի հեռուստաալիքներում էթիկական, էսթետիկական և քաղաքացիական դաստիարակությանը նպաստող հաղորդումներն ունեն երկրորդական դեր:

Հեռուստադիտողների ճնշող մեծամասնության համար առավել գերադասելի հաղորդումը լուրերն են, որոնք 1-ին կամ 2-րդ առավել գերադասելին են հեռուստադիտողների 70%-ի համար: Պասիվ ժամանցի հաղորդումներից առավել գերադասելի են սերիալները և ժամանակակից ֆիլմերը (45%), դրանց զիջում են զվարճալի հաղորդումները, շոուները և ժամանակակից երաժշտությունը (32%): Այդ հաղորդումների խումբը եզրափակում են սպորտային հաղորդումները (15%):

Էթիկական և էսթետիկական զարգացմանը նպաստող հեռուստահաղորդումների խմբում սովետական ժամանակի և դասական ֆիլմերը գերադասելի են հեռուստալսարանի 15%-ի շրջանում, իսկ մշակութային և կրոնական հաղորդումներն ու դասական երաժշտությունը՝ 9%-ի:

Քաղաքական հաղորդումները գերադասելի են հեռուստալսարանի 8%-ի շրջանում:

Առանձին հեռուստաալիքներում հեռուստահաղորդումների տիպերի գերադասելիությունը ներկայացված է *Աղյուսակ 1*-ում: Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, թե տվյալ հեռուստաալիքի լսարանի որ տոկոսի համար է տվյալ հեռուստահաղորդման տիպը 1-ին կամ 2-րդ առավել գերադասելին: Աղյուսակի վանդակների գունավորումը թույլ է տալիս արագ ընկալել, թե տվյալ տիպի հեռուստահաղորդումը որ հեռուստաալիքներում է համեմատաբար ավելի գերադասելի: Որքան ավելի մուգ կարմիր է վանդակի գույնը, այնքան հարաբերականորեն ավելի բարձր է տվյալ հեռուստահաղորդման գերադասելիությունը տվյալ հեռուստաալիքում մնացած հեռուստաալիքների համեմատ:

Հեռուստաալիքների լսարաններն ուսումնասիրելիս փոքր հեռուստալսարաններով ալիքները միավորվել են երեք խմբում. ***Ռուսաստանյան*** *հեռուստաալիքներ, որոնցում միավորվել են ОРТ, РТР, НТВ, Россия 24, Мир, Звезда և Культура հեռուստաալիքները:* ***Մտավորական*** *հեռուստաալիքներ տիպում են խմբավորվել Ար, «Շողակաթ», «Երկիր մեդիա», «Արա-*

րատ» և Հ3 հեռուստաալիքները: ***Երիտասարդական*** *հեռուստաալիքներ տիպում միավորվել են 74 այլ հեռուստաալիքներ: Նշված հեռուստալսարաններում միավորվել են այն անձինք, ովքեր որպես 1-ին կամ 2-րդ գերադասելի ալիք նշել են տվյալ խմբի հեռուստաալիքներից գոնե մեկը: Յուրահատուկ հեռուստալսարանների ծավալները ներկայացված են Գծապատկեր 7-ում:*

Գծապատկեր 7

«Մտավորական», «Երիտասարդական» և «Ռուսաստանյան» հեռուստալսարանները



«Արմենիայի» և *«Շանթի»* լսարաններում մնացած հեռուստաալիքների համեմատ ավելի գերադասելի են սերիալները և համեմատաբար նվազ գերադասելի՝ մշակութային ու կրոնական, քաղաքական հաղորդումները, սովետական ու դասական շրջանի ֆիլմերը:

Հ1-ի լսարանում ամենաբարձրն է լուրերի գերադասելիությունը և համեմատաբար ավելի ցածր՝ քաղաքական թեմաներով հաղորդումները:

Ռուսաստանյան ալիքների լսարաններում ցածր է սերիալների գերադասելիությունը և շատ բարձր՝ սովետական և դասական ֆիլմերի գերադասելիությունը: Այս լսարանում բարձր է նաև քաղաքական թեմաներով հաղորդումների գերադասելիությունը:

Մտավորական հեռուստաալիքներում մշակութային և կրոնական հեռուստահաղորդումների գերադասելիությունը 2-3 անգամ գերազանցում է այլ հեռուստաալիքների լսարանների ցուցանիշները: Մտավորական հեռուստաալիքներում բարձր է նաև քաղաքական թեմաներով հաղորդումների գերադասելիությունը, իսկ սերիալների և շոուների գերադասելիությունը ցածր է:

Աղյուսակ 1

Հեռուստաալիքների լսարանների պրոֆիլներն ըստ հեռուստահաղորդումների տիպերի: Գունավորումը համադրելի է ըստ տողերի

Հաղորդումների տեսակներ	Արմենիա	Շանթ	Հ1	Գեղարքունի	ՕՐՏ	ՊՏՊ	Ստավրոպոլիս	ՌԴ ալիք	Երիտասարդական	ՀՀ
Լուրեր	71.3%	72.0%	81.2%	70.3%	73.2%	60.3%	72.7%	66.5%	50.6%	69.7%
Սերիա՝ ներ, ժամանակակից ֆիլմեր	51.3%	54.9%	36.1%	48.4%	21.5%	20.5%	23.6%	20.2%	30.2%	45.0%
Զվարճալի հաղորդումներ, շոուներ, ժամանակակից երաժշտություն	34.5%	29.7%	26.7%	22.6%	33.6%	34.6%	20.0%	34.2%	40.7%	31.6%
Սովետական ժամանակի և դասական ֆիլմեր	11.9%	13.3%	14.7%	14.8%	27.5%	26.9%	14.5%	27.0%	21.5%	15.3%
Սպորտային հաղորդումներ	13.1%	11.1%	14.7%	14.8%	16.1%	20.5%	18.2%	19.8%	26.7%	14.8%
Մշակութային և կրոնական հաղորդումներ, դասական երաժշտություն	7.0%	7.5%	12.9%	9.7%	12.1%	15.4%	30.9%	13.3%	12.2%	9.2%
Քաղաքական թեմաներով հաղորդումներ	6.4%	6.3%	8.2%	12.3%	12.8%	15.4%	14.5%	13.7%	9.3%	7.6%

Երիտասարդական հեռուստաալիքներում՝ մնացած հեռուստաալիքների համեմատ, ամենացածրն է լուրերի գերադասելիությունը, սակայն ամենաբարձրն է զվարճալի հաղորդումների, շոուների և ժամանակակից երաժշտության և սպորտային հաղորդումների գերակայությունը: Անսպասելի արդյունք է, որ այդ հեռուստաալիքներում սովետական ժամանակաշրջանի և դասական ֆիլմերի գերադասելիությունն ավելի բարձր է, քան «զանգվածային մշակույթի» հեռուստաալիքներում, Հ1-ում, «Կենտրոնում» և նույնիսկ մտավորական հեռուստաալիքներում: Այդ տեսակետից երիտասարդական հեռուստաալիքները զիջում են միայն ռուսաստանյան հեռուստաալիքներին:

Հայաստանի հեռուստաալիքների սեգմենտները

Որքանո՞վ են Հայաստանում դիտվող հեռուստաալիքների լսարանները միմյանց «մոտ» կամ «հեռու» ըստ թեմատիկ գերակայությունների պրոֆիլների: Այդ հարցի պատասխանը ստանալու համար իրականացվել է դրանց պրոֆիլների հիերարխիկ կլաստերային վերլուծություն, որի դենդրոգրամը (որը պատկերում է խնդրո առարկա հեռավորությունները) ներկայացված է *Գծապատկեր 8-Ա*-ում: Որպես երկու պրոֆիլների միջև հեռավորության չափ սահմանվել է էվկլիդեսյան հեռավորությունը:

Հայաստանում դիտվող հեռուստաալիքները կարելի է դասակարգել երկու մակարդակում: Առաջին մակարդակում զատվում են «Հայկական

զանգվածային մշակույթի» հեռուստաալիքները՝ «Արմենիա» և «Շանթ», որոնց հարում են «Կենտրոնը» և Հ1-ը: Այդ հեռուստաալիքների խումբը սահմանում է հայաստանյան հեռուստաալիքների դեմքը: Երկրորդ խումբն են կազմում ռուսաստանյան հեռուստաալիքները: Առաջին մակարդակի դասակարգման շրջանակներում առանձին խմբեր են կազմում երիտասարդական հեռուստաալիքները և մտավորական հեռուստաալիքները:

Գծապատկեր 8

Հեռուստաալիքների կլաստերային վերլուծության դենդրոգրամը



Երկրորդ մակարդակի՝ ավելի լայն խմբավորման դեպքում Հայաստանում դիտվող հեռուստաալիքները ստորաբաժանվում են երկու խմբի՝ երկրորդ մակարդակում ռուսաստանյան հեռուստաալիքների խմբին են միավորվում երիտասարդական և մտավորական հեռուստաալիքները: Ընդ որում՝ ռուսաստանյան ալիքներին ավելի մոտ են երիտասարդական, քան մտավորական հեռուստաալիքները:

Հեռուստաալիքների երկրորդ խմբում գտնվող 81 հեռուստաալիքների (առավելապես երիտասարդական) ազգային պատկանելության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք առավելապես ռուսաստանյան, եվրոպական կամ ամերիկյան հեռուստաալիքներ են, որոնց նշանակալի մասն իր հաղորդումները թարգմանում է հայերեն կամ ռուսերեն:

Այդ պատճառով հեռուստաալիքների առաջին խումբը կարելի է պայմանականորեն անվանել «Հայաստանյան կամ պերիֆերիկ», իսկ երկրորդ խումբը՝ «Օտարերկրյա կամ կենտրոնական»:

Հայաստանի հեռուստալսարանի սեգմենտները

Ինֆորմացիոն դաշտի կառավարման նպատակ ունեցող սուբյեկտի տեսանկյունից՝ ինֆորմացիոն քաղաքականության մշակման համար կարևոր է ոչ միայն հեռուստաալիքների, այլև ամբողջ հեռուստալսարանի սեգմենտավորումը: Այն կարելի է կատարել տարբեր հայեցակարգային հիմքերով: Առկա հետազոտական տվյալները թույլ են տալիս Հայաստանի հեռուստալսարանը սեգմենտավորել հեռուստահաղորդումների գերակայությունների հիմքով:

Սեգմենտավորման արդյունքում առանձնացված է հինգ պայմանականորեն «մաքուր» և չորս «բաղադրյալ» սեգմենտ, ինչպես նաև մեկ սեգմենտ, որում ընդգրկված անձինք չեն կողմնորոշվել, թե ինչ հեռուստահաղորդումներ են գերադասում: Սեգմենտները ներկայացված են *Գծապատկեր 9*-ում: Գծապատկերում յուրաքանչյուր սեգմենտին համապատասխանող շրջանի մակերեսը համեմատական է սեգմենտի ծավալին:

Ագրեգացված «մաքուր»սեգմենտներն են.

«*Սերիալային*» սեգմենտը՝ այն անձինք, ովքեր որպես 1-ին կամ 2-րդ գերադասելի հեռուստահաղորդում նշել են «սերիալներն» ու «շոուները»: Ծավալը՝ 8.6%:

«*Մշակութային*» սեգմենտ՝ այն անձինք, ովքեր որպես 1-ին կամ 2-րդ գերադասելի հեռուստահաղորդում նշել են մշակութային կամ կրոնական հաղորդումները և սովետական կամ դասական ֆիլմերը: Ծավալը՝ 15.7%:

«*Քաղաքական*» սեգմենտ: Ծավալը՝ 5.9%: Այդ սեգմենտի կազմում են՝ ա) այն անձինք, ովքեր որպես 1-ին գերադասելի հեռուստահաղորդում նշել են «քաղաքական» հաղորդումները, իսկ որպես 2-րդ՝ «լուրերը» կամ «սպորտային հաղորդումները», «սովետական կամ դասական ֆիլմերը» կամ՝ «մշակութային և կրոնական հաղորդումները», բ) այն անձինք, ովքեր որպես 2-րդ գերադասելի հեռուստահաղորդում նշել են «քաղաքական» հաղորդումները, իսկ որպես 1-ին՝ «լուրերը» կամ «սպորտային հաղորդումները»:

«*Սպորտային*» սեգմենտ՝ այն անձինք, ովքեր որպես 1-ին կամ 2-րդ գերադասելի հեռուստահաղորդում նշել են «սպորտային հաղորդումները» կամ «Լուրերը»: Ծավալը՝ 7.1%:

«*Միայն լուրեր*» դիտող սեգմենտ: Ծավալը՝ 3.4%:

- **«Մաքուր» սեգմենտների ընդհանուր ծավալը կազմում է Հայաստանի հեռուստալսարանի 40.7%-ը:**

«Բաղադրյալ» սեգմենտներն են.

«Սերիալ-լուրեր-սպորտային» սեգմենտը, ծավալը՝ 45.5%,
«Սերիալ-սպորտային» սեգմենտը, ծավալը՝ 4.8%,
«Սերիալ-մշակութային» սեգմենտը՝ ծավալը՝ 7.3%,
«Սերիալ-քաղաքական» սեգմենտը, ծավալը՝ 1.1%:
«Չկողմնորոշված» սեգմենտը, ծավալը՝ 0.7%:

Գծապատկեր 9

Հայաստանի հեռուստալսարանի ագրեգացված սեգմենտները: Տոկոսները տրված են Հայաստանի ամբողջ հեռուստալսարանի ծավալից:



Գծապատկեր 9-ը բացահայտում է երկու կարևոր դրույթ: Նախ՝ սերիալները, շոու ծրագրերը շաղկապվելով լուրերի հետ՝ հանդիսանում են մեծ հեռուստալսարանի կազմավորման և պահպանման գործոններ: Երկրորդ՝ պարզվում է, որ Հայաստանի հեռուստալսարանում բավական մեծ ծավալ ունի զուտ մտավորական սեգմենտը. այն կազմում է ամբողջ հեռուստալսարանի 1/6-րդ մասից ավելին, իսկ սերիալ-մշակութային սեգմենտի հետ համատեղ՝ հեռուստալսարանի համարյա ¼-ը:

Հիմնական արդյունքներ

Հեռուստատեսությունը Հայաստանում մնում է ինֆորմացիայի ստացման առաջին առավել կարևոր աղբյուրը: Սակայն ինտերնետը 2014-2016թթ. ընթացքում զգալիորեն բարձրացրել է իր նշանակությունը: Որպեսզի միջնաժամկետ հեռանկարում հեռուստատեսությունն ունակ լինի պահպանելու իր դերը, անհրաժեշտ պայման է, որ այն ինտեգրվի ինտերնետում:

Սակայն դա բավարար պայման չէ՝ անհրաժեշտ է գտնել համապատասխան ռազմավարություն սեփական լսարանը ինտերնետ-հեռուստատեսային դարձնելու համար՝ չկորցնելով այն։

Ընդհանուր առմամբ, Հայաստանի հիմնական հեռուստաալիքների լսարանները դասական զանգվածային լսարաններ են, որոնք առավելապես գերադասում են լուրեր և զանգվածային լսարանին ուղղված պասիվ հանգստի հաղորդումներ՝ սերիալներ և շոուներ։

Ժամանակի ընթացքում արտասահմանյան երիտասարդական հեռուստաալիքների առատությունը կարող է տարրալուծել հայաստանյան զանգվածային հեռուստալսարանը՝ նվազեցնելով դրա ծավալը։

Փաստը, որ Հայաստանի հեռուստալսարանի 1/6-ը կազմում է մտավորական տիպի սեգմենտը, հուշում է, որ Հայաստանի ընդհանուր հեռուստալսարանում ճշգրիտ լրատվական և մշակութային ռազմավարության իրականացման դեպքում հնարավոր է կազմավորել և պահպանել բավական մեծ մտավորական հեռուստալսարան։ Այլ կերպ.

- **Հայաստանում հնարավոր է վերականգնել հեռուստատեսության կարևորագույն սոցիալական ֆունկցիան՝ մարդու էթիկական, էսթետիկական և քաղաքացիական զարգացումը, որը հեռուստատեսության առևտրայնացման պայմաններում խիստ ապաճել է։**

Սեպտեմբեր, 2017թ.

ՀԵՌՈՒՍՏԱԼՍԱՐԱՆԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2012-2016ԹԹ.

Սամվել Մանուկյան

Ամփոփագիր

Հոդվածում ներկայացված է 2012-2016թթ. ընթացքում Հայաստանի հասարակությունում ինֆորմացիայի տարբեր աղբյուրների, հատկապես հեռուստատեսության կարևորության փոփոխության դինամիկան։ Իրականացված է Հայաստանում դիտվող հեռուստաալիքների սեգմենտավորումն ըստ հեռարձակվող հեռուստահաղորդումների տիպերի, ինչպես նաև Հայաստանի հեռուստալսարանի սեգմենտավորումն ըստ գերադասելի հեռուստահաղորդումների տիպերի։

ДИНАМИКА ТЕЛЕАУДИТОРИИ В АРМЕНИИ В 2012-2016ГГ.

Самвел Манукян

Резюме

В статье представлена динамика изменения значимости разных источников информации, особенно телевидения, в Армении за 2012-2016гг. Осуществлено сегментирование телеканалов, которые смотрят в Армении, согласно типам транслируемых ими телепередач, а также сегментирование телеаудитории Армении по типам предпочитаемых телепередач.

TV AUDIENCE DYNAMICS IN ARMENIA IN 2012-2016

Samvel Manukyan

Resume

The article presents the dynamics of various information sources, and especially the importance of television changes in the Armenian society during the period of 2012-2016. The TV channels watched in Armenia are segmented according to the types of TV programs broadcasted, whereas the TV audience is segmented by their preferred programs.

ՀՏԴ 321+32.019.5+32:316.77:06

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԶՈՒ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՆԵՐԱԶԴԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Արմեն Ղալեչյան*

Բանալի բառեր ՝ամենօրյա լրահոս, ԶԼՄ, մեդիայի ներազդեցություն, տեղեկատվական հնարամտություն, Համահայկական տեղեկատվական ռազմավարություն:

Ժամանակակից մեդիայում զանգվածների գիտակցության վրա ներազդելու ամենատարածված միջոցն ամենօրյա լրահոսն է: Նրա հիմքում ընկած է ունկնդիրների ուշադրությունը տեղեկատվական տիրույթում պահանջված և անհրաժեշտ թեմաների, իրողությունների և մեկնաբանությունների վրա կենտրոնացնելու կարողությունը: Ունկնդիրներին չեն հետաքրքրում այնպիսի դեպքեր, պատմություններ (լուրեր), որոնք տվյալ ժամանակահատվածում առավել քննարկվող թեմաներից դուրս են: Ուստի, ինչպես մեզ մոտ, այնպես էլ ամենուր, որպես առավել ազդեցիկ հաղորդում, պահպանվում է օրվա լրահոսը[1]:

Զանգվածային լրատվամիջոցները (ԶԼՄ) կարող են «լռեցնել» կամ, ընդհակառակը՝ «թեժացնել» ցանկացած թեմա: Իհարկե, կան նաև տեղեկատվության «աղավաղման» այլ մեթոդներ և ձևեր: Օրինակ, ԶԼՄ-ն կարող են գործողությունների ալգորիթմը մասնատել ու ներկայացնել այնպիսի տեղեկատվություն, որն ընդհանրապես չի համապատասխանում սկզբնական տեղեկատվությանը[2]: Այս հնարքն անվանում են *տրոհում*[3]:

* Գնդապետ, ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան Ռազմական համալսարանի հրամանատարաշտաբային ֆակուլտետի ռազմամասնագիտական ամբիոնի ավագ դասախոս:

[1] Օրինակ՝ mil.nkr-ի կողմից տրված սահմանում հրադադարի ռեժիմի խախտման մասին ամենօրյա տեղեկատվություն: 02 հաղորդաշարը: Կամ *Haqqin.az* կայքում՝ մշտական տեղադրվում են հակահայկական «հրատապ լուրեր» (հոդվածներ)՝ «ստիպելով» մեզ հետևել իրենց լրահոսին:

[2] Օրինակ՝ այդ մեթոդներով հաճախ *«Arm comedy»* հումորային առաջին հայրենասիրական հաղորդումը պատրաստում է իր հումորային հոլովակները, մասնավորապես՝ քաղաքական գործիչներից հարցազրույցներ վերցնելիս:

[3] Տրոհում (*фрагментирование*) - դրվագեցում, տեղեկատվության մասնատում:

Սկզբնական տեղեկատվության տրոհումից հետո հեռուստաէկրանին նոր իրադարձություն է «հավաքվում», ներկայացվում, հետևապես՝ այդ իրադարձությունն այլ կերպ և նորովի է մեկնաբանվում:

Նորությունների մատուցման այս տարբերակը ծրագրավորում է հեռուստադիտողների ընկալումները (արձագանքները): Իրադարձությունների բնութագրման համար ստեղծվում է նոր «այբուբեն», որը կբավարարի ներկայացնողի պահանջները: Իրադարձությունները «տրոհվում» են տարբեր մասերի այնպես, որպեսզի նրանցից հնարավոր լինի կառուցել (պատրաստել) պահանջվող տեղեկույթը: Արդեն իսկ այդ տեղեկույթի շրջանակներում լրագրողները, հաղորդավարները, փորձագետները կրկնում են նախապատրաստված տեղեկատվությունը: *Ոլորտի մասնագետները* պնդում են, որ կարևոր իրադարձություններին վերաբերող լուրերին լայնորեն ավելացվում է *«կեղծ, բարձրտեխնոլոգիական, ինքնամոդելավորված, հորինված իրադարձություններով հագեցած տեղեկատվության որոշ մասնաբաժին»*: Այսօր մենք ապրում ենք կառուցված (հորինված) լուրերի աշխարհում, որի անհրաժեշտ սկզբնամասը կարող է պեղված լինել անցյալից, որպեսզի ներկայացվի այսօրվա լրատվական հոսքով[1]:

Ակնհայտ է, որ ցանկացած օբյեկտի մեջ կարող ենք գտնել բազմաթիվ բաղադրիչներ: Դրանք կարող են լինել բնութագրիչներ ներկայից, անցյալից և նույնիսկ ապագայից: Գոյություն չունեցող օբյեկտը դառնում է ակտիվ քարոզչության առարկա: Տրամադրվող «տեղեկատվության» այդ մեթոդների տարածման պատճառներից մեկն այսօրվա լսարանի պասիվությունն է: Այդ լսարանը առաջացել է սոցիալական ցանցերին զուգահեռ և սերտաճել նրանց հետ:

Արդի աշխարհում ամեն ինչ դարձել է հնարավոր, մասնավորապես՝ վիրտուալ աշխարհի ծնունդ զոմբիներն ու այլմոլորակայինները հանգիստ գոյատևում են մեր իրական աշխարհում: Ակնհայտորեն շեշտակի ավելացել է կեղծ հաղորդագրությունների քանակը: Սարսափազդու, տձև, հորինված հերոսների ներազդեցության թիրախը երեխաներն են, ովքեր առավել ներշնչվող են և հուզական: Նպատակային ստեղծված համակարգչային խաղերն ու մուլտֆիլմերը նպաստում են երեխաների բազմապիսի վախերի և ֆոբիաների առաջացմանը, որոնք հաճախ ուղեկցվում են տարաբնույթ տեսիլքներով և զառանցանքներով:

[1] Օրինակ՝ «Ադրբեջանը կողմ է հակամարտության խաղաղ կարգավորմանը, սակայն Հայաստանը խոչընդոտում է խաղաղ բանակցային գործընթացներին»:

Պետք է նշել նաև, որ 1,5-2 տարեկան երեխայի խոսքի զարգացման զգայուն շրջանում մեդիա-կախվածությունն ու համակարգչային չարաշահումը հաճախ նպաստում են երեխաների խոսքի հապաղմանը, համակարգչային խոսքի ընդօրինակմանը, ռոբոտային, ալգորիթմային, շաբլոնային վարքի դրսևորմանը, ուշադրության անկայունությանը, կամակորությունների, հակադրվող վարքագծի դրսևորմանը, հոգեկան զարգացման տարբեր խնդիրների առաջացմանը, ինչն էլ իր հերթին նպաստում է անառողջ հասարակության ձևավորմանը[1]:

Այսօր մեր հասարակության գիտակցության ձևավորման գործում մեծ դեր ունի հնդկական կինոարտադրությունը, որի գլխավոր հեռուստասպառողը հաճախ սոցիալական ցածր կարգավիճակ ունեցող երկրներն են, համապատասխանաբար՝ «նպատակների և խնդիրների գիտակցման ցածր մակարդակով»: Մենք պարբերաբար համոզվում ենք, որ մեդիայի ներազդեցության օգնությամբ փաստացի կարողանում ենք ազդել հանրության գիտակցության, վարքագծի և մտածողության վրա: Այդ կինոարտադրության «հերոսները» «ներխուժել» են մեր հեռուստատեսային իրականություն, մասնավորապես՝ խոսքը հայաստանյան մեդիա-դաշտում շրջանառվող հնդկական հեռուստասերիալների կերպարների՝ «ամաջիների», «բայաջիների», «չակորիաների» մասին է:

Իհարկե, կլինեն մարդիկ (տեսակետներ), որոնք կպնդեն, որ այդ ֆիլմերում բացակայում են մարդասպանությունները, ագրեսիան, այլասերությունները, սարսափ տեսարանները, որոնք առկա են մեր մեդիա-դաշտում: Հնարավոր է՝ նրանք իրավացի են, բայց հավաստենք, որ դա մեր առկա խնդրի լուծման միակ տարբերակը չէ… Մեդիա-ազդեցության հնարավոր մեխանիզմների ներգործությունը տարածվում է ինչպես երեխաների, այնպես էլ ողջ ազգաբնակչության, այդ թվում՝ *զինված ուժերի անձնակազմի շրջանում*:

Մասնավորապես՝ հայաստանյան հանրության և սփյուռքի մեջ ազգասիրություն ձևավորելու նպատակով հայաստանյան մեդիա-դաշտում հարկավոր է ավելի շատ ժամանակ տրամադրել հայրենասիրության, ազգային գաղափարախոսության քարոզմանը, մեր պատմության լավագույն էջերի լուսաբանմանը, *զինված ուժերի անձնակազմի սխրագործությունների քննարկմանը,* փոխարենը՝ բոլոր առաջատար հեռուստաալիքներով *(բացառությամբ Հ1-ի*) պարբերաբար «քարոզվում» է հնդկական մշակույթը, որի շնորհիվ հանրությունը մանրամասն տեղեկացված է Հնդկաստանում հարսանեկան արարողության ընթացքին՝ իր բոլոր փուլերով:

[1] *Ս.Անտոնյան*, «21-րդ ԴԱՐ», # 5 (75), «Նորավանք» ԳԿՀ, 2017թ.:

Միանման, նույնօրինակ զանգվածային մտածելակերպը չի կարող ապահովել հասարակության ինտելեկտուալ աճ, որը փաստացի սկզբունքորեն իջեցված է: Ակնհայտ է, որ այդ հասարակության բաղկացուցիչն ու կարևոր բաղադրիչը *զինված ուժերի սպայակազմն է, շարքային և սերժանտական կազմը, ինչպես նաև բանակը համալրող գաղափարապես պատրաստված մեր երիտասարդները:*

Վերոնշյալ մեդիա-քաղաքականությունը կարող է նպաստել.

- զինված ուժերը համալրող նորակոչիկների և ոչ միայն նրանց արժեհամակարգի փոփոխմանը,
- սոցիալական հմտությունների թերզարգացածությանը,
- պարզունակ սենտիմենտալ պատմություններից (կտրվածություն, անտեղյակություն օբյեկտիվ իրականությունից) մեդիա-ռեֆլեքսիվ կապվածությանը:

Զինվորական փորձագետների համար կարևորվում է հետևյալ եզրակացությունը. այլ իրողությունների վրա անձնակազմի ուշադրությունը շեղելով[1] *բթանում է նաև նրանց ուշադրության կենտրոնացումը արդի վտանգների վրա*[2]:

Մենք ապրում ենք օրըստօրե բարդացող աշխարհում, և այդ իրավիճակների բնութագրման ու ղեկավարման համար պարտադիր է անընդհատ իրականացնել ընկալման ձևերի փոփոխություններ: Ներկայում ժամանակակից նեյրոհոգեբանական հետազոտությունների արդյունքները հասանելի են լայն շերտերին ու արդեն իսկ ներմուծվել են խոշոր կորպորացիաներ *և, իհարկե, բանակ:*

Այսօր նկատվում է տպագիր նյութից հեռացում դեպի տեսողականը և միաժամանակ՝ անցում դեպի բանավորը: *20-րդ դարի պատերազմների ժամանակ ակտիվ կիրառված և ներկայում որոշ մարդկանց մեջ կարծրացած «թռուցիկների» ժամանակները վաղուց պատմություն են դարձել:* Համացանցի կողմից ապահովվող ժամանակակից կոմունիկատիվ միջավայրը շատ ուժեղ է տեղեկատվության ղեկավարման տեսանկյունից, բայց

[1] Այլ իրողություններ են՝ քաղաքական ընտրապայքարը, տարբեր հասարակական պարտականությունները, բանկային ֆինանսական պարտավորվածությունները, աննպատակ ու անմակարդակ մեդիա-դաստիարակչությունը (ներազդեցություն) և այլն:

[2] Օրինակ՝ բանակը հասարակական և այլ՝ ոչ զինվորական գործունեության մեջ ներքաշելով՝ զինվորական անձնակազմը հեռանում է բուն մասնագիտական պարտականությունների կատարումից, և, հետևաբար, նրանց ուշադրության կենտրոնացումն արդի վտանգների ուղղությամբ հետզհետե չեզոքանում է:

շատ թույլ՝ դրանց հակազդելու հնարավորությունների առումով: Իհարկե, գոյություն ունի զանգվածային արտադրանքի ընդունված սահմանում. որքան շատ զանգվածային արտադրանք ենք մենք տալիս, այնքան այն պետք է լինի պարզունակ[1]: Ներկայիս միտումները հստակ ցույց են տալիս, որ ընդհանուր բարդ համակարգից հեռանում ենք դեպի պարզը: Տպագիր տեղեկատվությունից անցում կատարվեց դեպի տեսատեղեկատվությունը և բանավոր տեղեկատվությունը: Մեդիա-նախադասությունները կառուցվում են կարճ, նրանք չեն ընդգրկում անհասկանալի բառեր, ուղեկցվում են բազմակի կրկնություններով և համապատասխան կադրերի ցուցադրմամբ: Գովազդը մեր իրականության մեջ գոյություն ունի վաղուց, և դա բնական իրողություն է: Բայց ժամանակակից գովազդը պահանջում է ստեղծագործական մոտեցում: Ինչ-որ մեկը պետք է ստեղծի և զարգացնի մարդկանց հետաքրքրությունների և ուշադրության ներգրավման մեխանիզմներ, որից հետո այն ուղղորդի դեպի ապրանքը, որն այլ պարագաներում մարդկանց չէր հետաքրքրի: Հենց այդ նպատակով գովազդային գործունեության մեջ ստեղծվել է մի ուղղություն, որն այնպիսի գովազդներ (պաստառներ) է պատրաստում հասարակական վայրերում, դպրոցներում, բուհերում և այլուր[2], որոնք անցյալում անթույլատրելի էին:

Այդ ամենից անմասն չեն կարող մնալ նաև զինված ուժերը: Փորձեր են արվում հայրենասիրական թեմաներով գովազդային պաստառների պատրաստման և տեղադրման ուղղությամբ[3]: Պատրաստվում են նաև թեմատիկ տեսահոլովակներ, ունենք որոշակի արդյունքներ: Մասնավորապես՝ դրական օրինակներից է Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկի պատրաստած գովազդը՝ նվիրված ժամկետային զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին վարկի տրամադրմանը, և նմանատիպ այլ գովազդային հոլովակներ: Իսկ բացասական օրինակներից կարելի է նշել հայրենական երգիչ-երգչուհիների «մոդայիկ» դարձած հոլովակների նկարահանումը զորքի, ռազմական տեխնիկայի մասնակցությամբ, մարտական գործողությունների տեսարաններով (բարձր դիտում ապահովելու նպատակով), նույնիսկ երբ դրանք չեն համապատասխանում երգի թեմային:

[1] Օրինակ՝ մեր հեռուստատեսությամբ ամբողջ օրը տրվող հնդկական (միանման) հեռուստասերիալները և գիտական լուրջ հաղորդումները, ռաբիսը և դասական երաժշտությունը և այլն:

[2] Օրինակ՝ շենքերի վերելակներում, հասարակական տրանսպորտում, մետրոպոլիտենում, օդանավակայանում, տաքսիներում, փողոցների գովազդային վահանակներին:

[3] Օրինակ՝ բանակի խորհրդանիշներով հուշանվերներ և տարբեր բացիկներ, ՌՈՒՀ-երի և զորամասերի պատերին դաստիարակչական թեմատիկ մեծ պաստառներ, աֆիշներ և այլն:

Որքան բարդանում է «մարդկանց ուղեղներին հասնելը», այնքան գովազդելու հնարքներն ավելի քողարկված կերպով են դրսևորվում:

Ներկայում սոցիալական ցանցերի շնորհիվ տեղեկատվությունը դարձել է ավելի սոցիալական, այն մեծ արագությամբ և կարճ ժամանակահատվածում տարածվում է հասարակության լայն շերտերում՝ ունենալով առավել օպերատիվ ազդեցություն: Սոցիալական ցանցերում տեղեկատվությունը մարդկանց հասցեավորելու համար անհրաժեշտ են բանավոր խոսքի զարգացած հմտություններ և բազմակողմանի գիտելիքներ աշխարհի մասին: Մասնավորապես՝ դա շատ ավելի լավ կարողանում են «աշխատեցնել» որոշ քաղաքական գործիչներ: Սոցիալական ցանցերն ապահովում են յուրաքանչյուր անձի ձայնի իրավունքը: Այժմ բանակում նաև սոցիալական ցանցերի օգնությամբ որպես այլընտրանքային և օպերատիվ տեղեկատվական աղբյուր իրականացվում է տեղեկատվության տարածում: Ռազմական տեղեկատվության սակավության, ինչպես նաև օպերատիվության պակասը (հատկապես ֆորսմաժորային իրավիճակներում) զինված ուժերի անձնակազմը (մասնավորապես սպայակազմը) լրացնում է սոցիալական ցանցերի (հիմնականում ֆեյսբուքի) լրատվության միջոցով: Բանակայինները՝ որպես «ոլորտային մասնագետներ», տվյալ «տարածություններում» շրջանառվող ռազմական տեղեկատվության վերաբերյալ տալիս են մասնագիտական վերլուծականներ և կարծիքներ:

Այսպիսով, կարելի է փաստել, որ սոցիալական մեդիան մեր աշխարհը դարձնում է միասեռ ու բազմաթիվ բնութագրիչներով: Պարզվում է, որ կարելի է բավարարվել առանց երկար տեքստերի առկայության: Այստեղ որոշողը հեղինակը չէ, այլ զանգվածային մշակույթ ստեղծող (ծնող) *ընթերցողը* կամ *դիտողը*: Հեղինակը կարող է ցանկանալ ստեղծել ինչ-որ բարդ «գործ», որը, սակայն, չի համապատասխանում սպառողի պահանջարկին: Այս ամենն առաջնահերթ ի հայտ եկավ գրականության, արվեստի, կինոյի մեջ՝ առաջացնելով զանգվածային գրականություն և զանգվածային մշակույթ: Այժմ այդ «էստաֆետը» փորձում է ընդունել «զանգվածային» քաղաքականությունը:

Տեղեկատվության տարածման և դեմոկրատական բանավեճի մեխանիզմներն արմատականորեն փոփոխվել են՝ սոցիալական մեդիայի առաջացման հետ համատեղ: Օրինակ՝ քաղաքականության և սոցիալական հարցերի վերաբերյալ կարծիքների փոխանակմամբ ֆեյսբուքը «դեմոկրատական բանավեճում» հպարտանում է իր ներդրումներով: Կան նաև բացասական կարծիքներ, մասնավորապես՝ մասնագետները նշում են այն, որ սոցիալական հարթակների ոչ ադեկվատ օգտագործումը կհանգեցնի մի շարք

վտանգների: Տեղեկատվության մանիպուլյացիան, ապատեղեկատվության տարածումը և չճշգրտված տեղեկատվությունը պատկանում են այդպիսի վտանգների շարքին: Ֆեյսբուքը մեզ տրամադրում է այնպիսի տեղեկատվություն, որը համընկնում է սպասումների հետ: Այսօր մենք աշխարհին ընկալում ենք ֆեյսբուքի և այլ սոցիալական ցանցերում մեր ընկերների գրառումների, նորությունների ժապավենի միջոցով: Չենք կարող հերքել, որ այդ եղանակով տեղեկացված լինելն ավելի հարմարավետ է, և որ մեզ այնքան էլ չի մտահոգում դրա ճշմարտացիությունը, առավել ևս, երբ այդ նորությունները հաստատում են մեր տեսակետները և մեր պատկերացումները: Վառ օրինակ է «ապրիլյան քառօրյա պատերազմը», որի ընթացքում սոցիալական ցանցերում տեղեկատվություն էր տարածվել բանակի մի շարք բարձրաստիճան սպաների պաշտոնանկությունների վերաբերյալ, կամ մեր և հակառակորդի կողմից զոհերի աղավաղված տվյալների վերաբերյալ:

Համացանցը, ինչպես և հասարակությունները, տարբեր ձևերով թաքցնում են իրենց թերությունները: Իրական մտավոր անկման վտանգի փոխարեն մենք խոսում ենք և քննարկումներ իրականացնում մտավոր վերելքի վերաբերյալ: Հիշենք, որ համացանցի հայտնվելուն համընթաց նվազեց մտապահելու և հիշելու անհրաժեշտությունը, սակայն ի հայտ եկավ երկար տեքստեր կարդալու անկարողությունը: Գեղարվեստական գրականությունը փոխակերպվեց կինոսցենարների, որտեղ պետք չեն թևավոր խոսքեր և գեղարվեստական հնարքներ, կա միայն գործողությունների հետաքրքիր հաջորդականություն: Իհարկե, հիմնական հետևանքը, որին մենք պետք է սևեռենք մեր ուշադրությունը, ընդհանուր զանգվածային գիտակցության ստեղծումն է: Նոր թվայնացված միջոցներով ստեղծվում է համարժեք ամբոխ, որն ապրում է միասնական օրենքներով՝ ենթարկվելով ելքի և մուտքի միասնական կանոններին: Ակնհայտ է, որ մեր առջև ի հայտ է գալիս ամբոխի ֆենոմենը, որը ոչ վաղ անցյալում ստեղծել էին բռնապետները, իսկ այսօր դրանք ստեղծում են թվայնացված միջոցները, հեռուստատեսությունը և սերիալները: Ստացվում է, որ ամբոխ կարելի է հավաքել ինչպես հրապարակներում, այնպես էլ տներում, որտեղ ամեն մեկը նստում է իր համակարգչի կամ հեռուստացույցի առջև, սակայն իրականում նա ամբոխում է: Նույն սկզբունքով են հավաքագրվում «կիբեռբանակները», որոնք իրական ռազմական գործողությունների թատերաբեմի բացակայության պարագայում անդամագրվում, ինքնակազմակերպվում և վիրտուալ տիրույթում իրականացնում են կիբեռգործողություններ: Դրանք հաճախ իրականացնում են «պատվիրատուի» պատվերները կամ էլ հաճախ գոր-

ծում են անկախ՝ առաջնորդվելով իրենց համոզմունքներով և սկզբունքներով: Այլընտրանքային տեսակետների բացակայության պայմաններում դա կարող է հանգեցնել աղետալի վիճակների: Մարդկային ուղեղները չեն զարգանում, նոր տեղեկատվության հանդեպ պահանջմունքը նվազում է, այլընտրանքային տեղեկատվությունը՝ մերժվում:

«Այս աշխարհում բնակվող և ոչ մի անձ չի կարող իրենից հետո չունենալ որոշակի քանակությամբ էլեկտրոնային հետք»: Սոցիալական կայքերում և այլ էլեկտրոնային տիրույթներում մեր ակտիվությունը բացում են շատ հետքեր: Ամենատարօրինակն այն է, որ բոլոր մարդկանց անձնական տվյալները կարող են կանխատեսվել մեր էլեկտրոնային հետքերի շնորհիվ: Օրինակ՝ արտերկրների ռազմաուսումնական հաստատություններ ավարտած ցանկացած սպա պարտադիր պետք է ուսումնական հաստատությանը տրամադրի իր էլեկտրոնային հասցեն կամ սոցիալական ցանցում իր կոորդինատները և այլ կոնտակտային տվյալներ՝ նամակագրության և կապ պաշտպանելու համար, որոնք իրենց հերթին հասանելի են ուսանողությանը, այդ թվում նաև այդ հաստատությունների բաց աղբյուրներից օգտվողներին: Էլեկտրոնային հետքեր մնում են նաև համացանցային կայքերում, պարբերականներում տպագրություններից, նամակագրական գրառումներից, վերլուծական նյութերից և տրված հարցազրույցներից, որոնք վերլուծելով՝ հավաքագրվում են այդ զինծառայողների անձնական տվյալները:

Այսպիսով, ներկայացված հոդվածի շրջանակներում բարձրաձայնված հարցերը և դրանց պատասխանները մտորելու տեղիք են տալիս «տեղեկատվական հնարամտություններին» առնչվող արդի հիմնախնդիրների վերաբերյալ և թույլ տալիս կատարել որոշակի հետևություններ: Այդ «հնարամտությունների» հետևանքները, այդ թվում նաև բացասական, մեզ երկար սպասել չեն տա:

Անցել են համացանցով, մասմշակույթով, մասմեդիայով դաստիարակված պարզունակ ուղեղների ժամանակները: Ամեն մի նոր տեխնոլոգիական հնարքի ծնունդով ավելանում է տեղեկատվության հաղորդման արագությունը, հետևաբար՝ նվազում են նրա համարժեք վերծանման հնարավորությունները: Մարդը սկսում է ամբողջովին ապրել իրեն պարտադրվող վերծանումների համակարգում: Կարծում ենք՝ վերոնշյալ խնդիրներն իրենց ազդեցությունն են ունենում զինված ուժերի անձնակազմի, հետևաբար նաև նրա մարտունակության վրա: Հնարավոր չէ հոդվածում բարձրացված խնդիրները և դրանց հնարավոր ազդեցությունը դիտարկել հասարակությունից և զինված ուժերից տարանջատված:

Մասնավորապես՝ ակնհայտ է, որ նշված ուղղություններով պետք է անցկացնել առավել *խոր և մասնագիտական* հետազոտություններ՝ թե՛ գիտական ուսումնասիրությունների մակարդակով, թե՛ գործնական՝ բանակի կողմից: Ներկայացված վերլուծություններով փորձ է արվում վեր հանել զինված ուժերի ոլորտի պատասխանատուների կարծիքն ու մտահոգությունները բարձրաձայնվող հիմնահարցերի վերաբերյալ: Ոլորտում, անշուշտ, առաջնահերթ պետք է դառնա գիտության փորձարարական և վերլուծական գերակայության սկզբունքը: Առկա են տեղեկատվական պատերազմներին վերաբերող տարբեր ուսումնասիրություններ և առաջարկություններ, իսկ մասնագետներն, անշուշտ, շատ բան կարող են հետազոտել և բարձրաձայնել ոլորտի պատասխանատուներին, բայց այդ առաջարկներին հարկավոր է ականջալուր լինել և օգտվել տրվող առաջարկություններից (գիտելիքներից), քանի որ հապաղումներով կողմնորոշումները «ուշացած» են լինում: Օրինակ՝ մինչ մենք բանավիճում ենք «տեղեկատվական պատերազմի» ոլորտի կառուցվածքի և գործունեության արդյունավետության ուղղությամբ, ԱՄՆ Ֆլեթչերի համալսարանի պրոֆեսոր Շուլցն իր դասախոսություններում նշել է. «ԱՄՆ ՊՆ ղեկավարությունը վաղուց «տեղեկատվական պատերազմները» դիտարկում է որպես անցած փուլ, այժմ դրանք դասում ենք «ոչ կանոնավոր պատերազմներ» բլոկում և գործում այդ համատեքստում»:

Կարծում ենք, եթե առաջիկայում հաջողվի մշակել նոր «Համահայկական տեղեկատվական ռազմավարության» *արդյունավետ ձևաչափ*, ապա այն կապահովի նոր միասնական մեդիա-քաղաքականություն՝ ներքին և արտաքին մարտահրավերներին համահունչ:

Հունիս, 2017թ.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԶՈՒ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՆԵՐԱԶԴԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Արմեն Ղալեչյան

Ամփոփագիր

Նորագույն տեղեկատվական մեխանիզմները և մեդիա-հնարքները կարևոր ազդեցություն ունեն ԶՈՒ անձնակազմի գիտակցության, ընկալումների, վերլուծական կարողությունների և գործողությունների, վրա:

Հոդվածում շոշափված են «տեղեկատվական հնարքների» կիրառման արդի հիմնախնդիրները և դրանց կարգավորման մեխանիզմները: Առաջարկվում է անցկացնել «տեղեկատվական հնարքների» կիրառման հարցերի առավել խոր և մասնագիտական հետազոտություններ: Վերլուծության մեջ ներկայացված են նաև զինված ուժերի պատասխանատուների կարծիքն ու մտահոգությունները բարձրաձայնվող հիմնահարցերի վերաբերյալ:

Առաջնահերթ է դարձել նոր «Համահայկական տեղեկատվական ռազմավարության» մշակումը, որը կապահովի ներքին և արտաքին մարտահրավերներին համահունչ նոր միասնական մեդիա-քաղաքականության մշակումն ու իրականացումը:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ВОЗДЕЙСТВИЯ НА СОЗНАНИЕ ЛИЧНОГО СОСТАВА ВС ИНФОРМАЦИОННЫМИ МЕТОДАМИ

Армен Галечян

Резюме

Новейшие информационные механизмы и медиа-уловки имеют важное воздействие на сознание личного состава ВС, в частности, на восприятие, аналитические возможности и действия.

В статье затрагиваются современные проблемы применения «информационных уловок» и механизмы их регулирования. В частности, предлагается провести глубокие и специализированные исследования вопросов применения «информационных уловок». В анализе представлены также мнение и опасения ответственных представителей ВС о поднимаемых проблемах.

Первоочередной задачей видится разработка новой «Всеармянской информационной стратегии», которая обеспечит разработку и осуществление соответствующей внешним и внутренним вызовам новой медиа-политики.

CERTAIN ISSUES OF INFLUENCING ON THE CONSCIOUSNESS OF THE ARMED FORCES PERSONNEL BY INFORMATION METHODS

Armen Ghalechyan

Resume

The newest information mechanisms and media tricks have an important influence upon the consciousness of Armed Forces personnel; particularly, their perceptions, analytical abilities, and actions.

The article touches upon modern issues of application of the 'information tricks' and their regulation mechanisms. Particularly, it is suggested to carry out *deep and specialized* research into the issues of application of the "information tricks". The analysis also presents the position and concerns of the Armed Forces officials on raising issues.

There is a crucial need to develop a "Pan-Armenian Information Strategy" which would provide for the development and implementation of a unified media policy concordant with the domestic and international challenges.

ՀՏԴ 323.1/327

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հրայր Փաշայան**, *Լիանա Բալայան**

Բանալի բառեր՝ Արցախի Հանրապետություն, Ղարաբաղյան հակամարտություն, Ադրբեջանի Հանրապետություն, Թուրքիա, մարտահրավերներ, հաղթահարման ուղիներ:

Արդի գլոբալացվող աշխարհն ունի բնորոշ այնպիսի մարտահրավերներ ու սպառնալիքներ, ինչպիսին են ահաբեկչությունը, բնապաշտպանական հիմնախնդիրները, միջուկային պատերազմի սպառնալիքը, իսլամական ծայրահեղականությունը, կիբեռանվտանգությունը և այլն: Լինելով միջազգային հանրության մի մասնիկը՝ Արցախը, բնականաբար, նույնպես զերծ չէ այդ վտանգներից ու սպառնալիքներից: Սակայն արցախահայությանը սպառնացող հիմնական մարտահրավերը գրեթե 100 տարի շարունակում է մնալ 1918թ. ստեղծված ադրբեջանական պետությունը:

Զգտելով Ղարաբաղյան հակամարտությունը լուծել թյուրքական ձևով՝ 1990-ականներին ադրբեջանական կողմը բացահայտորեն դիմեց զենքի օգնությանը: 1994թ. հրադադարի պայմանագրի կնքումից հետո շարունակելով որդեգրած ապակառուցողական քաղաքականությունը՝ Բաքուն անընդհատ խախտում է հրադարարի պահպանման ռեժիմը, կազմակերպում հետախուզական-դիվերսիոն հանկարծագրոհներ, նույնիսկ բացահայտ հարձակվում Արցախի Հանրապետության վրա՝ ամենաբարձր մակարդակով հնչեցնելով անթաքույց սպառնալիքներ և տարածքային նկրտումներ [1, էջ 22]:

Արցախի Հանրապետության անկախության հռչակումից շուրջ 26 տարի անց, և տեսանելի ապագայում նույնպես, մեր երկրին սպառնացող հիմնական մարտահրավերները կապված են լինելու Ադրբեջանի Հանրապետության կողմից բացահայտ և Թուրքիայի կողմից առավելապես անուղ-

* Արցախի պետական համալսարանի փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս, ք.գ.թ., դոցենտ:
** Ստեփանակերտի թիվ 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի:

դակիորեն իրականացվող ռազմատենչ քաղաքականության հետ: Այդ ծրագրերում վերջինիս որոշիչ դերակատարումը կրկին դրսևորվեց 2016թ. ապրիլյան առճակատման օրերին: Թուրքիան միակ պետությունն էր, որը բացահայտ զորակցություն հայտնեց Բաքվի ռազմատենչ քաղաքականությանը և ողջունեց նրա ագրեսիվ գործողությունները[1]:

Խորքային առումով թուրք-ադրբեջանական հարաբերությունների վտանգավորությունն այն է, որ եթե անգամ Բաքվում համաձայնեն հակամարտության փոխզիջումային կարգավորմանը, ապա դա անընդունելի կլինի մեծ եղբոր համար: Եվ հակառակը: Երբեք չպետք է մոռանալ, որ ադրբեջանական պետությունն առաջին անգամ Հարավային Կովկասում ստեղծվել է Թուրքիայի ակտիվ աջակցությամբ [2, էջ 94-113]: Հետևաբար, երկիրը ազգայնամոլության ճանապարհով ուղղորդող Ռեջեփ Թայիփ Էրդողանն անընդունելի կհամարի հայկական տարրի ուժեղացումը պանթուրքիզմի սեփական ծրագրերի իրականացման համատեքստում: Թերևս, դա է պատճառը, որ անցած տարվա ապրիլյան առճակատման օրերին Թուրքիայի նախկին և ներկա պաշտոնյաների, քաղաքական և հասարակական գործիչների շրջանում կարծես յուրօրինակ մրցույթ էր հայտարարված, թե ով ավելի խրոխտ կեցվածք կընդունի և ավելի բարձրագոչ կարտահայտի իր զորակցությունը եղբայրական Ադրբեջանին [3]:

Սահմանադրական փոփոխությունների շնորհիվ մեծացնելով նախագահի լիազորությունները՝ Ռ.Էրդողանն ապահովել է նաև առնվազն հաջորդ նախագահական ընտրություններում ընտրվելու իր հնարավորությունը: Այսինքն՝ առաջիկա տասնամյակում Թուրքիայի ներկայիս իշխանությունների գործունեության հիմնական ուղղություններից մեկը շարունակելու է մնալ նեոպանթուրքական ծրագրերի իրականացումը, այդ թվում՝ հայկական պետության հնարավորինս թուլացումը կամ վերացումը, ցամաքային կապի ստեղծումը միջինասիական թուրքական պետությունների հետ և այլն: Այս պարագայում նորից արդիական է դառնալու «հայկական սեպի» վերացման խնդիրը: Բայց քանի որ երկիրն առաջիկա տարիների ընթացքում զբաղված է լինելու քրդական, արաբական և ներքին ու արտաքին այլ ռազմաքաղաքական խնդիրներով, վերոնշյալ ծրագրերը Հարավային Կովկասում փորձելու է

[1] Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը 2016թ. ապրիլի 4-ին թուրքական «Կարմիր մահիկ» կազմակերպության նիստում ունեցած ելույթում անդրադառնալով Ղարաբաղյան հակամարտության սրմանը՝ ասել է. «Թուրքիան Ադրբեջանի հարցում մշտապես նրա կողքին է եղել և կշարունակի լինել: Ղարաբաղն անպայման մի օր իր իսկական տիրոջը կվերադարձվի, Ադրբեջանինը կլինի: Ես հավատում եմ դրան»,
տե՛ս http://www.ermenihaber.am/am/news/2016/04/04:

իրագործել նախնառաջ Ադրբեջանի միջոցով: Հետևաբար, Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված քայլերը, ինչպես էլ դրանք կոչվեն կամ ում մասնակցությամբ էլ տեղի ունենան, թյուրքական իշխանությունների (թե՛ Ադրբեջանի և թե՛ Թուրքիայի իշխանությունների մասին է խոսքը) հակահայկական դիրքորոշման պայմաններում հաջողությամբ չեն կարող պսակվել[1]: Ավելին՝ Թուրքիան, օգտագործելով ժամանակակից պատերազմների վարման ՆԱՏՕ փորձն ու հմտությունները, ադրբեջանական կողմին հրահրել և հրահրելու է նավթադոլարներով ձեռք բերվող նորագույն զենքերի օգնությամբ դիմելու արկածախնդրությունների: Դա են փաստում 2014թ. հուլիսից առայսօր հակառակորդի կողմից կիրառվող մարտավարական քայլերն ու 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմը: Դրա մասին է վկայում թուրքական ռազմական հրահանգիչների թվաքանակի շարունակական ավելացումն Ադրբեջանում և մասնավորապես Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում: Հատկապես վերջերս ադրբեջանական մամուլում հաճախակի են հայտնվում Նախիջևանում թուրքական ռազմաբազա տեղակայելու մասին ոչ պաշտոնական տեղեկությունները, ինչը, կարծում ենք, պատահական չէ[2]:

Միաժամանակ, ապրիլյան գործողությունների ընթացքում հակառակորդի կողմից պաշտպանության բանակի հյուսիսային և հարավային ուղղություններում մի քանի դիրքերի գրավումը, ադրբեջանական հասարակության մեջ հաղթանակի էյֆորիայի ներարկումը և Բաքվի շարունակվող ռազմաշունչ հռետորաբանությունն ու ապակառուցողական քաղաքականությունը թույլ են տալիս ենթադրելու, որ առաջիկայում ևս շարունակվելու է եթե ոչ լայնածավալ, ապա ապրիլյան ռազմական գործողություններին համահունչ՝ կարճաժամկետ հատվածներով ու սահմանափակ զորախմբերով ակտիվ հարձակողական քայլերի կիրառումը: Ասվածի մասին են վկայում այս տարվա փետրվարին պաշտպանության բանակի հարավային ուղղությամբ հակառակորդի դիվերսիոն-հետախուզական ներթափանցման փորձի անհաջող ձեռնարկումն [4, էջ 3-4] ու մայիսի 15-ին ժամանակակից կառավարվող հրթիռներով ՊԲ զինտեխնիկայի ոչնչացմանն ուղղված քայլերը[3]: Ամենայն հավանականությամբ, դա կրելու է պարբերական

[1] Ցյուրիխյան՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը Ադրբեջանի «գրված տարածքների վերադարձի» հետ կապելու թուրք պաշտոնյաների հայտարարություններն այս մասին վկայող լրացուցիչ փաստարկ են: Այս մասին տե՛ս *Գեղամյան Վ.,* Հայ-թուրքական հարաբերությունների 2008-2010թթ. հետահայաց ամփոփում, http://www.noravank.am/arm

[2] В Нахчыване будет создана военная база Турции? https://haqqin.az/news/99966

[3] ԱՀ ՊՆ մամուլի ծառայության հաղորդագրություն, 15 մայիսի 2017թ., http://nkrmil.am/news/view/1884

բնույթ, որի նպատակը ոչ միայն նոր տարածքների գրավումը կլինի, այլև մեր երկիրը կաթվածահարության հասցնելը:

Այս սցենարի իրականացմանը կնպաստեն արդի աշխարհաքաղաքական զարգացումներն ու տարբեր տարածաշրջաններում նոր հակամարտային իրավիճակների ձևավորումը: Այդպիսիք կարելի է համարել ռուս-թուրքական հարաբերությունների մերձեցումը, Եվրոպական միությունում ծագած խնդիրները, Ռուսաստան-ՆԱՏՕ (մասնավորապես՝ ԱՄՆ) հարաբերությունների նկատելի վատթարացումը, Մերձավոր Արևելքում, արաբական աշխարհում տիրող անկայուն իրավիճակը և այլն:

Մյուս կողմից, չնայած միջնորդների՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ տարվող դիվանագիտական քայլերին, Ադրբեջանի Հանրապետության քաղաքականությունը ներկայում ուղղված է բանակցությունների անարդյունավետության «ապացուցմանը», ժամանակի ձգձգմանն ու հարմար միջազգային և ներքաղաքական պահ ընտրելուն՝ ռազմական նոր ագրեսիա սկսելու համար: Դրա մասին են վկայում հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ նրանց հնչեցրած հայտարարություններն ու տարվող քաղաքականությունն ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտ զորքերի սահմանագծում: Հենց այդ նպատակն էր հետապնդում 2016թ. հունիսի 20-ին նախագահների հերթական եռակողմ հանդիպումից հետո Իլհամ Ալիևի հնչեցրած հայտարարությունը՝ միջադեպերի հետաքննության մեխանիզմների ներդրման կամ, ավելի ճիշտ՝ դրանց ներդրումը բացառելու հետ կապված[1]:

Բնականաբար, նման պայմաններում պետք է ուղիներ որոնել ինչպես նշված, այնպես էլ մյուս տեսանելի և անտեսանելի մարտահրավերներին դիմակայելու համար: Որո՞նք են այդ ուղիները: Մեր կարծիքով, դա հնարավոր է իրագործել միայն այն պարագայում, եթե մեր երկրի գործունեության հիմքում դրվի գիտելիքահեն պետության գաղափարն ու քայլեր ձեռնարկվեն գործնականում դրանք կյանքի կոչելու համար: Մեզ սպասվող երկարատև և հյուծիչ մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է, որ գիտությունն ու երկրի անվտանգությունը, գիտությունն ու արտաքին քաղաքականությունը, գիտությունն ու տնտեսությունը փոխադարձաբար կապ-

[1] Շարունակելով ապակառուցողական քաղաքականությունը՝ Ի.Ալիևը 2016թ. հունիսի 25-ին հայտարարեց, որ միջադեպերի հետաքննության մեխանիզմի կիրառման որևէ անհրաժեշտություն չկա: Եթե դրա տակ հասկացվում է հակամարտության «սառեցումը» և շփման գծում ինչոր լրացուցիչ միջոցների ձեռնարկումը, Ադրբեջանն, իհարկե, չի գնա այդ քայլին: Ինչ վերաբերում է հակամարտության կարգավորմանը, ապա, ըստ նրա, հարցը պետք է կարգավորվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակում, տե՛ս Ալիևը հրաժարվում է Սանկտ Պետերբուրգում հանդիպման արդյունքներից, https://armenpress.am/arm/print/852334

ված լինեն միմյանց հետ, ինչը հնարավոր է կենսագործել միայն կառավարման արդյունավետության բարձրացման և բոլոր ոլորտներում պրոֆեսիոնալների ներգրավման դեպքում: Այլ կերպ ասած՝ երկրի համար կարևոր այս ուղղությունները, ըստ անհրաժեշտության, պետք է պատվեր առաջադրեն գիտությանը, իսկ գիտությունն իր հերթին կներկայացնի դրանց լուծման հիմնավոր ու հնարավոր տարբերակներ (տե՛ս *Գծապատկեր 1*):



Գաղափարի իրականացման արդյունքում մենք կկարողանանք երկարաժամկետ առումով ապահովել մեր երկրի անվտանգությունը, մոտավորապես այն ձևով, որն այսօր կարողանում է կատարել Իսրայելը՝ տարիներ շարունակ շրջապատված լինելով թշնամական երկրներով:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ այսպիսի թշնամական պետությունների հարևանությամբ գոյատևելու այլ տարբերակ մեր հայրենիքը չունի:

Հուլիս, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Օհանյան Ս.,* ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայման էությունը և նպատակները, «Հայկական բանակ», հ. 3, էջ 22, Երևան, 2015:
2. *Փաշայան Հ.,* Ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության իրավաքաղաքական ետնախորքը և «ադրբեջանական» պետության ստեղծման անօրինականության հիմքերը, Լրատու, Մեսրոպ Մաշտոց համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, թիվ 2(9), Ստեփանակերտ, 2010:

3. *Գաբրիելյան Հ.,* Թուրքիայի «ռազմակայանային» քաղաքականության շուրջ, Գլոբուս, թիվ 4 (73), Երևան, 2016:
4. *Փաշայան Հ.,* Հայ դիրքապահների սխրանքներն ու հակառակորդի հերթական ձախողումը, ՊԲ «Մարտիկ» պաշտոնաթերթ, թիվ 9-10 (1235-1236) 4-18 մարտի 2017թ.:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հրայր Փաշայան, Լիանա Բալայան

Ամփոփագիր

Հոդվածում ցույց է տրվում, որ արցախահայությանը սպառնացող հիմնական մարտահրավերները, ինչպես վերջին հարյուրամյակում, այնպես էլ տեսանելի ապագայում, հիմնականում կապված են 1918թ. ստեղծված ադրբեջանական պետության ռազմատենչ քաղաքականության հետ: Աշխարհաքաղաքական նոր զարգացումների համատեքստում մեզ սպառնացող ադրբեջանա-թուրքական մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է, որ գիտությունն ու երկրի անվտանգությունը, գիտությունն ու արտաքին քաղաքականությունը, գիտությունն ու տնտեսությունը փոխադարձաբար կապված լինեն միմյանց հետ՝ զումարած արդյունավետ կառավարումը:

АРЦАХСКАЯ РЕСПУБЛИКА: ВЫЗОВЫ И ПУТИ ИХ ПРЕОДОЛЕНИЯ

Грайр Пашаян, Лиана Балаян

Резюме

В статье указывается, что главные вызовы, угрожающие армянам Арцаха в последнем столетии и в ближайшем будущем, связаны с агрессивной политикой Азербайджана, проводимой с 1918 года. Для сопротивления турко-азербайджанским вызовам в контексте геополитических развитий важно наличие эффективного управления, а также чтобы наука и госбезопасность, наука и внешняя политика, наука и экономика были взаимосвязаны.

THE REPUBLIC OF ARTSAKH: CHALLENGES AND WAYS TO OVERCOME THEM

Hrayr Pashayan, Liana Balayan

Resume

The article demonstrates that the main challenges threatening the Armenians of Artsakh both during the last century and in the nearest future are closely related with the aggressive policy of Azerbaijan created in 1918. To face the challenges posed by Turkey and Azerbaijan in the context of geopolitical developments it is crucial to make sure the science and state security, science and foreign policy, science and economy are mutually connected with each other, along with effective governance.

ՀՏԴ 327 (560+479.24)

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Գայանե Չոբանյան*

Բանալի բառեր ՝թուրքական կրոնական կառույցներ, Ադրբեջան, Թուրքիա, երկկողմ հարաբերություններ, իսլամական գործոն, գյուլենական շարժում, նաքշիբենդիա թարիքաթ:

ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիան շտապեց օգտվել համաթյուրքական տարածք ձևավորելու և տարածաշրջանային առանցքային ուժ դառնալու ռազմավարական հնարավորությունից՝ փորձելով նորանկախ երկրներ արտահանել իսլամի «թուրքական մոդելը»: Այն իր արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը դարձրեց հետխորհրդային մուսուլմանական երկրների, մասնավորապես՝ էթնոլեզվական ամենամոտ կապեր ունեցող Ադրբեջանի վրա իր ազդեցության տարածումը: Հետխորհրդային տարիներին ստեղծված թուրք-ադրբեջանական «եղբայրական» հարաբերությունները խարսխվեցին քաղաքական և տնտեսական շահերի վրա. Թուրքիայի համար Ադրբեջանը միջանցք էր պանթյուրքական գաղափարախոսության քաղաքական իրագործման ճանապարհին, իսկ Ադրբեջանի համար Թուրքիան կապող օղակ էր ՆԱՏՕ-ի և էներգառեսուրսների մեծ պահանջարկ ունեցող եվրոպական շուկայի միջև: Երկու երկրների ընդհանուր շահերը պայմանավորված էին նաև պատմամշակութային, էթնիկական, լեզվական և կրոնական ընդհանրությամբ: Կրոնական գործոնը թեև առաջնային դեր չէր խաղում երկկողմ հարաբերություններում, սակայն կարևոր նշանակություն ուներ ինչպես մշակութային, կրթական, գաղափարախոսական ոլորտներում թուրքական ազդեցության տարածման, այնպես էլ արտաքին այլ ուժերի կրոնական, հետևաբար նաև քաղաքական ազդեցությունը չեզոքացնելու գործում:

Անկախացումից հետո Ադրբեջանում նոր ձևավորվող ազգային ինքնագիտակցության զարթոնքը, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, քաղաքական, ռազմական արտաքին օգնության անհրաժեշտությունը,

* Թուրքագետ:

ինչպես նաև երկրում տիրող սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը նպաստեցին տարբեր երկրների կողմից իսլամի՝ որպես «փափուկ ուժի» կիրառման արդյունավետությանը: Ադրբեջանում քաղաքական ազդեցության հաստատման համար տարբեր երկրների միջև տարվող պայքարն իր արտացոլումն էր գտնում կրոնական դաշտում:

Իսլամի վերիմաստավորմանը և քաղաքականացմանը նշանակալի դեր էին հատկացնում նաև ադրբեջանական իշխանությունները, ինչն ուներ ներքին և արտաքին քաղաքական դրդապատճառներ: Ներքաղաքական դաշտում այն հանդիսանում էր ազգային ինքնագիտակցության կերտման կարևորագույն տարր, նաև օգտագործվում էր հակահայկական քարոզչության մեջ՝ որպես ժողովրդի համախմբման գործիք, արտաքին դաշտում նպաստում էր իսլամական երկրների տնտեսական, ռազմական, քաղաքական աջակցությանը և իսլամական միջազգային կառույցներում ադրբեջանանպաստ որոշումների ընդունմանը:

Աբուլֆազ Էլչիբեյի նախագահությամբ Ադրբեջանի ազգային ճակատի իշխանության տարիները (1992-1993թթ.) ընդգծված միաբևեռ՝ թուրքամետ քաղաքականության ժամանակաշրջան էին: Որոշ հետազոտողներ այդ շրջանը որակել են թյուրքիզմի ամբողջական հաղթանակ իսլամիզմի նկատմամբ [1, стр. 201]: Այսինքն՝ իսլամն Ադրբեջանում սկսեց ընկալվել բացառապես պանթյուրքականության, ոչ թե պանիսլամականության պրիզմայով: Իսլամիզմն ադրբեջանցիների համար ասոցացվում էր Իրանի Իսլամական Հանրապետության հետ, իսկ տվյալ ժամանակահատվածում ադրբեջանա-իրանական հարաբերությունները լարված բնույթ էին ստացել ինչպես, այսպես կոչված, «Հարավային Ադրբեջանի» խնդրի, այնպես էլ Ղարաբաղյան հակամարտության համատեքստում:

Իսլամը կարևոր դեր զբաղեցրեց որպես թյուրքական ինքնության բաղկացուցիչ և ստացավ ազգային, մշակութային դիմագիծ: Իրականացվեցին կրոնական ոլորտն ազատականացնող սահմանադրական փոփոխություններ[1], ինչը նպաստեց Ադրբեջանում արտաքին ուժերի, մասնավորապես՝ Իրանի Իսլամական Հանրապետության, Սաուդյան Արաբիայի, Քու-

[1] 1992թ. օգոստոսի 20-ին Ադրբեջանի Ազգային ժողովի կողմից ընդունվեց 29 հոդվածներից բաղկացած «Կրոնի ազատության վերաբերյալ օրենքը», որով սահմանվում էր դավանանքի ազատության իրավունքը (հ. 1-3), կրոնը անջատվում էր պետությունից (հ. 5), կրոնական բոլոր կառույցները դուրս էին գալիս պետական հսկողությունից և ֆինանսավորվելու էին նվիրատվությունների միջոցով (հ. 18), թույլատրվում էր կրոնական համայնքների ու հաստատությունների հիմնում և գործունեության ծավալում, որոնց ղեկավար կենտրոնները գտնվում էին Ադրբեջանից դուրս (հ. 8-9), կրոնական կառույցներին վերադարձվում էին մինչ այդ պետության կողմից բռնագրավված պաշտամունքի օբյեկտները:

վեյթի, Ռուսաստանի (Հյուսիսային Կովկաս) և Թուրքիայի կողմից իսլամական հոսանքների ներթափանցմանը և ազդեցության հաստատմանը:

Անկախ այն փաստից, որ Ադրբեջանի բնակչության մեծամասնությունը իսլամի շիա ուղղության հետևորդներ էին[1], աշխարհիկ Թուրքիայի սուննի իսլամական մոդելը համարվում էր ամենահամապատասխանը: Ադրբեջանի Կրոնական համայնքների հարցերով պետական կոմիտեի նախկին ղեկավար Ռաֆիկ Ալիևը նշել է. «Թուրքական իսլամն այն միակ ուղղությունն է, որը համադրելի է ադրբեջանական պետության աշխարհիկ մոդելի հետ» [2]: Ի տարբերություն այլ երկրներից ներթափանցող կրոնական շարժումների նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների թշնամական վերաբերմունքի՝ թուրքական իսլամական հոսանքները չէին ընկալվում որպես քաղաքական սպառնալիք, այլ, ընդհակառակը՝ որպես միջոց՝ խոչընդոտելու ծայրահեղական իսլամական ուղղությունների տարածմանը: Օրինակ՝ Ադրբեջանի Հանրապետության նախկին նախագահ Հեյդար Ալիևն ամեն կերպ խրախուսում էր թուրքական կրոնական հոսանքների գործունեությունը երկրի հյուսիսային շրջաններում՝ հատկապես Գուսարի շրջանում, որտեղ բնակվում է ամենամեծ սուննիադավան փոքրամասնությունը (լեզգիներ)՝ հուսալով, որ թուրքական ակտիվությունը կկասեցնի դեռևս առաջին չեչենական պատերազմից հետո Դաղստանից այս շրջան ներթափանցած սալաֆիական ազդեցության տարածումը: Սակայն Դաղստանի և Ադրբեջանի հյուսիսային շրջանների բնակիչների միջև ամուր կապի և սալաֆիական հոսանքի ծայրահեղական գաղափարների պատճառով թուրքական իսլամն այս շրջաններում չկարողացավ այլընտրանքային կրոնական ուղղություն դառնալ [3]:

Թուրքական կրոնական ուղղությունների տարածումն Ադրբեջանում համընկավ Խորհրդային Միության փլուզման և Թուրքիայում Թուրգութ Օզալի նախագահության տարիների հետ (1989-1993թթ.): Օզալը, նպաստելով տարբեր կրոնական շարժումների, սուֆիական միաբանությունների մուտքին Թուրքիայի քաղաքական դաշտ, ցանկանում էր հավասարակշռության բերել բանակի և քաղաքացիական տարրի ուժերը: Նրա լիբերալ քաղաքականության շնորհիվ թուրքական տնտեսական անհատական սեկտորը սկսեց ներթափանցել հետխորհրդային իսլամական երկրներ, մասնավորապես՝ Ադրբեջան: Թուրք գործարարներից շատերը, ստանձնե-

[1] Պաշտոնական տվյալների համաձայն՝ Ադրբեջանի բնակչության 85%-ը իսլամի շիա ուղղության ջաֆարիական մազհաբի հետևորդներ են, իսկ 15%-ը՝ սուննիական ուղղության հանաֆիական մազհաբի, Administrative Department of the Republic of Azerbaijan, Prezidential Library, http://www.webcitation.org/616xyRI4u:

լով նորանկախ Ադրբեջանի Հանրապետության հետ «եղբայրական» կապեր ստեղծելու ոչ պաշտոնական ներկայացուցչի դերը, հաճախ աջակցում էին թուրքական կրոնական տարբեր կազմակերպությունների քարոզչական գործունեությանը:

Ադրբեջանում թուրքական կրոնական գործունեությունն անհրաժեշտ է բաժանել 2 ուղղությունների՝ պաշտոնական և ոչ պաշտոնական: Պաշտոնականն իրականացվում է Կրոնական հարցերով Թուրքիայի վարչության (*Diyanet Işleri Başkanlığı*) և Կրոնական տեսչության վաքըֆի (*Diyanet Vakfi*), իսկ ոչ պաշտոնականը՝ Թուրքիայում տարածում գտած տարբեր կրոնական խմբերի և սուֆիական միաբանությունների (թարիքաթների) միջոցով:

Կրոնական հարցերով Թուրքիայի վարչությունը և Կրոնական տեսչության վաքըֆը Ադրբեջանում կառուցել են 8 մզկիթ, որոնց իմամները Թուրքիայի քաղաքացիներ էին, իսկ մզկիթներին կից գործում էին նաև Ղուրանի դասընթացներ [4, s. 215]: Սակայն նրանց ամենակարևոր նախագծերից մեկը 1992թ., Ադրբեջանի կրթության նախարարության հետ համատեղ, Բաքվի պետական համալսարանում Թուրքական իսլամական ֆակուլտետի հիմնադրումն էր, որը հետագայում ստացավ իսլամագիտության ֆակուլտետ անվանումը: Այն Ադրբեջանում ակադեմիական մակարդակով հեղինակություն վայելող միակ կրոնական հաստատությունն է: Ֆակուլտետի շրջանավարտները, ովքեր ցանկանում էին շարունակել բարձրագույն կրթությունը, Կրոնական տեսչության վաքըֆի տրամադրած կրթաթոշակներով ընդունվում էին Թուրքիայի Մարմարայի համալսարան, ինչից հետո վերադառնում և դասավանդում էին Բաքվի պետական համալսարանի իսլամագիտության ֆակուլտետում: Ֆակուլտետին կից՝ Բաքվում, նաև Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում բացվեցին թուրքական միջնակարգ դպրոցներ, որոնք կրոնական ուսուցման ոլորտում գրավում էին առաջատար դիրքեր: Թուրք ուսուցիչներ ուղարկվեցին ոչ միայն Բաքու, այլ նաև Ապշերոնյան թերակղզու տարբեր շրջաններ, երկրի հյուսիս՝ Գուսարի, Խաչմազի, Զաքաթալայի, Բալականի, ինչպես նաև երկրի կենտրոնական՝ Եվլախի, Սաաթլրի, Աղդաշի շրջաններ [5]: Սակայն այսօր թուրքական կրթական հաստատությունները և կրոնական կառույցները գտնվում են պետական խստագույն հսկողության ներքո, իսկ դասավանդելու իրավունք ունեն միայն Ադրբեջանի քաղաքացիները:

Ադրբեջանում թուրքական կրոնական պետական կառույցների գործունեության վերահսկողությունն իրականացնում է Բաքվի թուրքական դեսպանատան Կրոնական հարցերով զբաղվող խորհրդատվության բաժի-

նը [4, s. 214]: Օրինակ՝ «թուրքական իսլամի» կրոնական համայնքի կենտրոնը դարձած «Շահիդլար» մզկիթում[1] աղոթքներն անցկացվում էին ոչ միայն թուրք հոգևորականների, այլև Թուրքիայի դեսպանատան կրոնական հարցերով կցորդի կողմից [6]:

Թեև 1990-ականների սկզբներին ադրբեջանական իշխանություններն աջակցում էին թուրքական կրոնական պաշտոնական կառույցների գործունեությանը երկրում, և այն մեծ տարածում էր գտել որպես աշխարհիկ պետությանը համապատասխան չափավոր իսլամական ուղղություն, սակայն 1990-ականների երկրորդ կեսից նրանց դիրքերը սկսեցին թուլանալ՝ պայմանավորված և՛ միջպետական հարաբերությունների լարվածության, և՛ տեղի հավատացյալների շրջանում «թուրքական» իսլամի հանդեպ դժգոհության աճով: Խնդիրն այն էր, որ Ադրբեջանի իշխանություններն աշխատում էին կերտել իսլամի ազգային՝ ադրբեջանական տարբերակը, չընդգծելով շիա և սուննի ուղղությունների դավանաբանական տարբերությունները[2], իսկ թուրք պաշտոնական իսլամական գործիչները քարոզում էին իսլամի սուննի ուղղությունը, որը հակադրվում էր տեղական շիական սովորույթներին ու ավանդույթներին[3]:

Բացի պաշտոնական կրոնական կառույցներից, «թուրքական» իսլամական ուղղությունն Ադրբեջան է մտել սուֆիական եղբայրությունների՝ թարիքաթների միջոցով: 1990-ական թթ. սկզբից Թուրքիայից Ադրբեջան ներթափանցեցին նաքշիբենդիա, սուլեյմանիա, մևլանա և քադիրիա թարիքաթների հետևորդները: Հետխորհրդային շրջանում Ադրբեջանի Հանրապետությունում առաջինն ակտիվ գործունեություն սկսեցին ծավալել նաքշիբենդիա թարիքաթի քարոզիչները: Դա զարմանալի չէր, քանի որ խորհր-

[1] 2009թ. «Շահիդլար» մզկիթը վերականգնողական աշխատանքներ իրականացնելու պատրվակով փակվեց և ցայսօր չի գործում: Կրոնական հարցերով Թուրքիայի վարչության ներկայացուցիչը մզկիթի փակումը պարզաբանել է այն փաստով, որ հավատացյալների մեծ հոսքը ճանապարհային խցանումներ էր առաջացնում Բաքվի կենտրոնական շրջանում, սակայն ոչ պաշտոնական աղբյուրներն այդ քայլը համարում են պատասխան 2008-2010թթ. թուրք-հայկական հարաբերությունների կարգավորմանն ուղղված Թուրքիայի գործողություններին:

[2] Ադրբեջանը միակ պետությունն է, որտեղ իսլամի երկու ճյուղերի հետևորդները միասին աղոթում են նույն մզկիթում, և հաճախ երկու կրոնական արարողություններն անցկացվում են միևնույն մոլլայի կողմից, իսլամագիտության ֆակուլտետում շիա և սուննի ուսանողների համար նախատեսված ուսուցողական ծրագրերի միջև չկա տարբերություն, ինչպես նաև Կովկասի մուսուլմանների վարչության ղեկավարը շիա է, իսկ նրա տեղակալը՝ սուննի:

[3] Օրինակ՝ Ադրբեջանում ամենասկանդալային կրոնական գործիչներից Թուրքիայի դեսպանատան կրոնական գործերով խորհրդատու Աբդուլքադիր Սեզգինը (1992-1995թթ.) խիստ բացասական վերաբերմունքի արժանացավ շիական ավանդույթները և հավատալիքները քննադատող գրքի հրատարակման և հակաշիական քարոզչության համար, տե՛ս *A.Goyushov,* Islamic Revival in Azerbaijan, Hudson Institute, November 11, 2008, https://hudson.org/research/9815-islamic-revival-in-azerbaijan

դային ժամանակաշրջանում՝ 1920-1930-ական թթ., երկրի հիմնականում հյուսիսարևմտյան շրջաններում և Նախիջևանում թարիքաթը տարածված էր և ուներ իր հետևորդները: Անգամ ճնշումների և աթեիզմի քաղաքականության պայմաններում այն խորհրդային իշխանության ժամանակ կարողացավ պահպանել դիրքերը երկրի հյուսիս-արևմուտքում, որտեղ Զաքաթալայի շրջանի Մուխախ գյուղում բնակվում էր Ադրբեջանում թարիքաթի առաջնորդ շեյխ Նասուհ Էֆենդին (1917-1996թթ.) [7, стр. 39]: Նրա գործունեության շնորհիվ Զաքաթալա-Գախ-Բելական հատվածում պահպանվեցին իսլամի ավանդական կարգերը: Նասուհ Էֆենդին խորհրդային ժամանակաշրջանի սուֆիական նաքշիբենդիա թարիքաթի միակ և վերջին շեյխն էր Ադրբեջանում [8]: Նրանով ավարտվեց Ադրբեջանում ավանդական նաքշիբենդիա միության հաջորդականության շղթան: Անկախությունից անմիջապես հետո թարիքաթը Թուրքիայի օժանդակությամբ վերականգնեց գործունեությունը, մասնավորապես՝ Զաքաթալայի, Շեքիի, Ղազախի, Աղդաշի, Գեյչայի, Գաբալայի շրջաններում և Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում [9]:

Նաքշիբենդիական ուսմունքն Ադրբեջանի Հանրապետություն էր ներթափանցում երկու ուղղություններով՝ Թուրքիայից և Դաղստանից, ինչի հետևանքով երկրի իշխանությունները երկակի քաղաքականություն էին վարում միաբանության անդամների նկատմամբ: Թուրքիայի բարձրաստիճան պաշտոնյաներից շատերը թարիքաթի անդամ էին կամ ստանում էին նրա օժանդակությունը[1], և կարելի է ասել, որ հենց այս թարիքաթն էր Թուրքիայում քաղաքական իսլամի առաջացման հիմքը[2]: Հետևաբար, Թուրքիայից եկող նաքշիբենդիական գործունեությունն ընկալվում էր որպես թուրքական պաշտոնական քաղաքականության մի մաս և Ադրբեջանի իշխանությունների շրջանակներում ընդունվում էր համակրանքով: Այնինչ, թարիքաթի հյուսիսկովկասյան առաջնորդների քարոզչությունը տարածում էր գտնում մեծ մասամբ երկրի հյուսիսային հատվածում բնակվող ազգային փոքրամասնությունների՝ ավարների, լեզգիների շրջանում՝ նպաստելով

[1] Թուրքիայի 8-րդ նախագահ Թուրգութ Օզալը (1989-1993թթ.), 23-րդ վարչապետ Նեջմեթթին Էրբաքանը (1996-1997թթ.), 11-րդ նախագահ Աբդուլա Գյուլը (2007-2014թթ.), Թուրքիայի փոխվարչապետ Բյուլենթ Արընչը (2009-2015թթ.), քաղաքական գործիչ, նախկին պատգամավոր Սուլեյման Արիֆը և այլք:

[2] Սուֆիական նաքշիբենդիա միաբանության առաջնորդ Զահիդ Քոթքուի աջակցությամբ 1970թ. Թուրքիայում առաջին անգամ ստեղծվում է իսլամամետ «Ազգային կարգ» կուսակցությունը՝ Նեջմեթթին Էրբաքանի գլխավորությամբ, որից էլ, կրելով գաղափարական որոշ փոխակերպումներ, ձևավորվել է այժմ Թուրքիայում իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցությունը:

Հյուսիսային Կովկասի նրանց արյունակից և հավատակից եղբայրների հետ միավորվելու ձգտումների ամրապնդմանը: Ադրբեջանի իշխանություններն ամեն կերպ խոչընդոտում էին նրանց մուտքը երկիր և ճնշում գործադրում շարժման հետևորդների վրա:

Բայց երբ հայտնի դարձավ թուրք դիվանագետ, Թուրքիայի ազգային անվտանգության գործակալ Ֆերման Դեմիրքյոլի ակտիվ մասնակցությունը 1995թ. պետական հեղաշրջման փորձին, որը նաքշիբենդիա թարիքաթի անդամ էր, շարժումը ենթարկվեց ճնշումների, իսկ անդամները վտարվեցին երկրից: Իրականում շարժումն անցավ ընդհատակ և որոշ ժամանակ անց կրկին շարունակեց գործունեությունը, հատկապես Ղազախի, Զաքաթալայի շրջանում և Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում:

Ներկայում նաքշիբենդիա թարիքաթի հետևորդներն Ադրբեջանում բաժանված են մի քանի խմբերի[1], որոնցից ամենաակտիվ գործունեությունն է ծավալում Թուրքիայի նաքշիբենդիական Էրենքյոյ համայնքի շեյխ Օսման Նուրի Թոփբաշի գլխավորած խումբը: Համայնքին պատկանող «Ազիզ Մահմուդ Հյուդայի» վաքֆը[2] Ադրբեջանում ներկայացնում է Երիտասարդության օգնության ֆոնդը, որը 1990-ականների սկզբից իրականացնում էր Ադրբեջանից Թուրքիա ուսանողների տեղափոխումը և Մարմարայի համալսարանի կրոնագիտության բաժնում նրանց բարձրագույն կրթություն ստանալու գործընթացը: Կրթություն ստանալու նպատակով Թուրքիա եկած ուսանողները մնում են «Հյուդայի» վաքֆի հանրակացարաններում, որտեղ էլ Օսման Նուրի Թոփբաշի ղեկավարած մզկիթում մասնակցում են կրոնական զրույցներին: Բարձրագույն կրթություն ստացածները վերադառնում են Ադրբեջան և դասավանդում «Հյուդայի» վաքֆի կողմից Զաքաթալա շրջանում հիմնադրված իսլամագիտական ֆակուլտետում [4, s. 216]: Հաշվի առնելով նաքշիբենդիա թարիքաթի և հատկապես Թոփբաշ ընտանիքի մեծ դերը Թուրքիայի քաղաքական, տնտեսական կյանքում և սերտ կապերն իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության ղեկավարների հետ՝ կարելի է ասել, որ

[1] Շեքիի և Շիրվանի շրջաններում նաքշիբենդիա թարիքաթը գլխավորում է շեյխ Օսման Նուրի Թոփբաշը (Թուրքիայից), Ղազախի և Աղստեֆի շրջաններում՝ շեյխ Մահմուդ Ուստա Օսմանօղլուն (Թուրքիայից), Զաքաթալայի, Բալականի և Գախի շրջաններում՝ շեյխ Սաիդ Աֆանդի ալ-Չիրքավին (Դաղստանից, որի մուտքն Ադրբեջան արգելված է), Ղուբայի և Խաչմազի շրջաններում՝ Միրաջուդին Իսրաֆի Թաբասարանին (Դաղստանից, որի մուտքն Ադրբեջան արգելված է), Բաքվում՝ շեյխ Նազիմ ալ-Հաքքանի ալ-Քիբրիսին (Հյուսիսային Կիպրոսից):

[2] «Ազիզ Մահմուդ Հյուդայի» վաքֆը հիմնադրվել է 1985թ.: Այն կրում է սուֆիական ջելվեթիյե թարիքաթի հիմնադիր Մահմուդ Հյուդայի (1541-1628թթ.) գաղափարների ազդեցությունը: Կրթական, սոցիալական ծրագրեր է իրականացնում ավելի քան 40 երկրներում: Ղեկավար խորհրդի նախագահն է Ահմեդ Համդի Թոփբաշը, մանրամասն տե՛ս http://hudayivakfi.org/

այս գործընթացն ուղղորդվում է Թուրքիայի պետական կառույցների կողմից: Ադրբեջանի կառավարությունը խրախուսում է ֆոնդի գործունեությունը հատկապես հյուսիսային շրջաններում՝ որպես հակակշիռ ուժեղացող վահաբական կրոնական ազդեցության: 2001թ. պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ Երիտասարդության օգնության ֆոնդի հսկողության տակ էին գտնվում իր իսկ կառուցած 18 մզկիթները: Մինչև 2007թ. այն Ադրբեջանում ուներ 3 մեդրեսե, սակայն 2007թ. Իսմայիլի և Աքթաշ շրջաններում գործող դպրոցները փակվեցին, միայն Զաքաթալայում գտնվող դպրոցին թույլատրվեց շարունակել գործունեությունը:

1990-ականների սկզբին նաքշիբենդիա թարիքաթից բացի Թուրքիայից Ադրբեջան էին ներթափանցում քաղիրիա, մևլանա, սուլեյմանիա ուղղությունների հետևորդները, որոնց գաղափարախոսության հիմնական տարածողները Բաքվում ուսում ստացող թուրք ուսանողներն էին: 1993թ. թուրք ուսանողները հիմնեցին Ադրբեջանում սովորող մուսուլման ուսանողների միություն: Պաշտոնական փաստաթղթերում նշված էր, որ միության նպատակն է բոլոր մուսուլման ուսանողներին հավաքել իր շուրջը, սակայն տարօրինակն այն էր, որ միության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն անհրաժեշտ էր պահել գաղտնի: Թեև 1997թ. միությունը դադարեց պաշտոնապես գործել, քանի որ Թուրքիայից եկած ուսանողները վերջացրին ուսումը, սակայն նրանց գաղափարակիրները մնացին երկրում և շարունակեցին իրենց գործունեությունը՝ համախմբվելով Բաքվի Հաջի Սուլթան մզկիթի շուրջ: Բաքվից դուրս նրանք գործում են հիմնականում Լենքորանում՝ տեղի շիադավան բնակչության շրջանում:

Սուլեյմանիա թարիքաթի հետևորդներն Ադրբեջանում հատկապես տարածվեցին 2000-ականներից սկսած: Բաքվում նրանք ունեին իրենց մզկիթը՝ «Սուլեյմանջըլար», որը 2009թ. փակվեց կառավարության կողմից: Նրանք ակտիվություն էին ցուցաբերում նաև Գյանջա, Շամախի, Խաչմազ քաղաքներում: 2010թ. իրավապահ մարմինները Գյանջայում ձերբակալեցին Թուրքիայի 4 քաղաքացիների՝ սուլեյմանիա թարիքաթի մասին գրականություն տարածելու և բնակչության շրջանում քարոզչություն իրականացնելու մեղադրանքով[1]: Միության անդամները ենթարկվեցին ճնշումների: Այսօր նրանք իրենց ընդհատակյա գործունեությունն են ծավալում միայն Բաքվում:

Ադրբեջանում հաստատված ամենաազդեցիկ թուրքական ոչ պաշտոնական կրոնական ուղղությունը նուրջուական ծագում ունեցող՝ Ֆեթուլա

[1] http://news.day.az/society/206750.html

Գյուլենի գլխավորած գյուլենական շարժումն էր[1]: Այն ամենամեծ ներդրումն է ունեցել իսլամի վերածննդի գործում ոչ միայն Ադրբեջանում, այլև նախկին Խորհրդային Միության ողջ տարածքում: Ունենալով ֆինանսական մեծ կապիտալ, ինչպես նաև Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի (1993-2000թթ.) աջակցությունը՝ ԽՍՀՄ փլուզումից հետո կարճ ժամանակահատվածում Գյուլենը կարողացավ իր շարժումը հաստատել հետխորհրդային բոլոր մուսուլմանական երկրներում:

Առաջին անգամ գյուլենականների 11 հոգանոց խումբը 1990թ. հունվարի 11-ին այցելեց Խորհրդային Վրաստան, այնտեղից էլ Խորհրդային Ադրբեջան՝ այնտեղ տիրող իրավիճակն ուսումնասիրելու և տեղեկատվություն հավաքելու նպատակով: 1990թ. մայիսի 28-ին Գյուլենի կողմնակից 37 գործարարներ՝ օգնության համար նախատեսված 3 տոննա բեռով, երկրորդ անգամ ժամանեցին Ադրբեջան, որտեղից էլ անցան Ուզբեկստան, Ղազախստան, Տաջիկստան՝ ճանապարհին տարածելով Գյուլենի գրքերը և տեսաձայնագրությունները [10]: Արդեն ԽՍՀՄ փլուզումից հետո՝ 1991թ. վերջին, գյուլենական «Զաման» թերթի գլխավոր խմբագիր Իլհան Իշբիլենը սկսեց հաճախակի հանդիպումներ ունենալ երկրի պաշտոնական շրջանակների հետ, իսկ Գյուլենի ներկայացուցիչ Ալի Բայրամը՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Հեյդար Ալիևի հետ[2]: Այնուհետև, 1992թ. բացվեցին առաջին 2 թուրքական վարժարանները: Թուրքիայից հետո Ադրբեջանը երկրորդ երկիրն էր, որտեղ հիմնադրվեցին գյուլենական կրթական հաստատությունները [11]: Երբ 1992թ. երկրում իշխանության գլուխ անցավ Ադրբեջանի ազգային ճակատը, Գյուլենը ժամանեց Ադրբեջան և նախագահ Էլչիբեյից թույլտվություն ստացավ «Զաման» թերթի հրատարակման, «Սամանյոլու» (*STV*) հեռուստաալիքի հեռարձակման և մի շարք ձեռնարկությունների ու ընկերությունների

[1] Նուրջուական շարժման կամ «Նուր» համայնքի անդամները նուրջուներն են (թուրք.՝ լույսի հետևորդներ), որոնք իրենց համարում են իսլամական հոգևոր առաջնորդ Սաիդ Նուրսիի (1876-1960թթ.) հետևորդներ: Սաիդ Նուրսիի մահից հետո շարժումը բաժանվեց 6 տարբեր հոսանքների, որոնց առաջնորդներն էին Հյուսրև Ալթընբաշաքը, Մեհմեդ Քայալարը, Հուլուսի Յահյագիլը, Զյուբեյր Գյունդուզալփը, Մուսթաֆա Սունգուրը (նուրջուների մեծ մասը հարում է նրան), Մեհմեդ Քուրդողլուն: Ֆեթուլա Գյուլենը Նուրսիի աշակերտներից էր և սկզբնական շրջանում հարում էր Զյուբեյր Գյունդուզալփի շարժմանը, սակայն XXդ. 70-ական թթ. Գյուլենի և մյուս ավանդական նուրջուների հայացքները բաժանվեցին, և Գյուլենի հետևորդները սկսեցին անվանվել ֆեթուլայականներ, «Գյուլենական համայնք» կամ «Հիզմեթ» (թուրք.՝ ծառայություն) շարժում, սակայն հաճախ նրանց բոլորին ընդհանուր կոչում են «նուրջուներ»:

[2] Գյուլենական շարժումը զգալի աջակցություն է ցուցաբերել ծանր տնտեսական դրության մեջ գտնվող Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը և անձամբ Հեյդար Ալիևին՝ Ադրբեջանի Հանրապետության նախագահի պաշտոնը ստանձնելու գործընթացում:

հիմնադրման համար [1, стр. 248]: Գյուլենի շարժումն իր դիրքերն Ադրբեջանում վերջնականապես ամրապնդեց և լայն արտոնություններ ստացավ Հ.Ալիևի նախագահության տարիներին (1993-2003թթ.): 1999թ. Հ.Ալիևը հայտարարել է. «Ֆեթուլա Գյուլենը պետք է ոչ միայն Թուրքիային կամ թյուրքական աշխարհին, այլև ողջ աշխարհին» [7, стр. 49]:

Գյուլենը հանդես է գալիս այնպիսի ուսմունքի դիրքերից, որը դիտարկում է իսլամի և արդիականության միասնությունը՝ այն համադրելով ժողովրդավարության արևմտյան մոդելի հետ: Ըստ էության, նա փորձ է արել Սաիդ Նուրսիի ուսմունքի հետ սինթեզել սուֆիական, մասնավորապես՝ նաքշիբենդիա և քադիրիա ուղղությունների գաղափարները՝ կապելով այն ժամանակակից մարտահրավերների հետ [12]: Արդյունքում՝ սուննի ուղղության հետևորդները շարժումը մեղադրում են «մաքուր» իսլամին չհետևելու, նորարարություններ ներդնելու և մուսուլմաններին վերաբերող կրոնական խնդիրներն անտեսելու, իսկ աշխարհիկ գործիչները և շիա հավատացյալները՝ քողարկված թուրքական-սուննիական իսլամական քաղաքական օրակարգ քարոզելու, թուրքական պետության գործակալը հանդիսանալու և Ադրբեջանի տեղական շիական ուղղության դեմ սուննիական ուղղության քարզչության մեջ [13]: Իրականում այն հանդիսանում էր պաշտոնական Թուրքիայի արտաքին քաղաքականության իրականացման գործիք և ստանում էր Կրոնական տեսչության վաքըֆի լիակատար աջակցությունը:

Գյուլենական շարժման հեռահար նպատակների վերաբերյալ բացահայտումներ է արել կենտրոնական ղեկավար մարմնի նախկին անդամ Նուրեթթին Վերենը: Նա մասնավորապես նշել է, որ գյուլենական շարժումը զուտ կրոնական շարժում չէ, նպատակը օտար երկրներում դպրոցներ բացելը, երեխաներին թուրքերեն սովորեցնելը չէ, դրա հետևում կանգնած են Վատիկանի, Հետաքննությունների դաշնային բյուրոյի, Կենտրոնական հետախուզական վարչության հետ կապված հզոր ֆինանսական ուժեր: Շարժման նպատակն է՝ ամբողջ աշխարհը վերցնել իրենց ձեռքը [14]: Իրենց նպատակին հասնելու համար շարժման անդամներն առաջնորդվում են քողարկված, դանդաղ, սակայն կայուն և արմատական ռազմավարությամբ. ժամանակի ընթացքում ձևավորել կրթված նոր սերունդ, որոնք, ներթափանցելով երկրի ամենակարևոր պետական ոլորտներ, կստեղծեն կայուն ցանց և հարմար առիթի դեպքում իշխանությունը կվերցնեն իրենց ձեռքը:

Ֆեթուլա Գյուլենի դիտարկմամբ, ժամանակակից աշխարհի գլխավոր հարստությունը գիտելիքն է, հետևաբար նա շեշտը դրել է ոչ թե կրոնական ծիսական կամ դավանաբանական սկզբունքների քարոզչության, այլ կրթա-

կան հաստատությունների, տնտեսական ձեռնարկությունների, հրատարակչության, հեռուստառադիոհեռարձակման վրա, ինչն ապահովում է նրան տնտեսական, քաղաքական բազմաթիվ լծակներ [15]:

Ադրբեջանում փոքր և միջին թուրքական բիզնեսը և արտադրությունները հիմնականում ղեկավարվում էին գյուլենական շարժման համակիրների կողմից: Թուրք գործարարները ստեղծել են իրենց ընկերությունն Ադրբեջանում՝ Թուրքական և ադրբեջանական արտադրողների և գործարարների միջազգային ընկերություն (*Azərbaycan Türk Sənayeci və Işadamları Beynəlxalq Cəmiyyəti*), որը սկիզբ է առնում գյուլենական շարժումից, չնայած ոչ բոլոր անդամներն են կիսում շարժման կրոնական և քաղաքական հայացքները [16]: Նրանց պատկանող առևտրային ընկերություններից են կահույքի վաճառքի «Իսթիքբալ», ժամացույցների «Ռոմանսոն», քաղցրավենիքների «Ուլքյար» ընկերությունները, գրենական պիտույքների և գրքերի «Նիլ» խանութների ցանցը և այլն: Կրթական ծրագրերն իրականացվում էին «Չաղ» (*Çağ Öyrətim İşlətmələri*) և «Ֆեզա» ընկերությունների կողմից, որոնք Ադրբեջանում հիմնադրել էին 14 կրթական հաստատություններ[1]: Գյուլենական ուսումնական հաստատություններն աչքի էին ընկնում միջազգային բարձրակարգ կրթական ուսուցմամբ, և դասաժամերի ընթացքում չէր իրականացվում կրոնական քարոզչություն: Սակայն Ղուրանի ուսուցումը, Սաիդ Նուրսիի և Ֆեթուլա Գյուլենի կրոնական գաղափարները տարածվում էին դասաժամերից հետո՝ ոչ պաշտոնական շփումների և զրույցների միջոցով: Գյուլենական շարժման կառույցներից Ադրբեջանում բացահայտ կրոնական գործունեությունն էր ծավալում Երիտասարդների աջակցության հիմնադրամը, որը կազմակերպում էր արաբերենի և Ղուրանի դասընթացներ:

2006 թվականից սկսած՝ Ադրբեջանի իշխանությունները որդեգրեցին կրոնական խիստ վերահսկողության քաղաքականություն, ինչը պայմանավորված էր քաղաքական դաշտում իսլամական ուղղվածության ընդդիմադիր խնբավորումների ակտիվացմամբ և կրոնի միջոցով ներքաղաքական իրադարձությունների վրա արտաքին ուժերի ազդեցության ակտիվացմամբ: Այս հետապնդումներից զերծ չմնաց նաև գյուլենական շարժումը: Երկրի տարբեր շրջաններում ձերբակալվեցին շարժման անդամներ, ան-

[1] Դրանց մեջ էին մտնում «Կովկաս» համալսարանը, «Կովկաս» միջնակարգ դպրոցը, թուրքական մասնավոր վարժարաններն ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ փոքր նահանգային քաղաքներում՝ Գյանջայում, Լենքորանում, Շեքիում, Ղուբայում, Ագդաշում, Մինգեչաուրում, Սումգաիթում (2 վարժարան), Ալի Բայրամլըում, Շարուրում, Օրդուբադում (աղջիկների համար), սակայն ներկայում այս կրթական հաստատությունները փակվել են ադրբեջանական կառավարության կողմից:

գամ թուրք քաղաքական գործիչներ, որոնցից էր Մեհմեթ Հարուն Քայաջին[1]: Շեյխ ուլ իսլամ Ալլահշյուքուր Փաշազադեն 2007թ. նոյեմբերի իր ելույթում, նույն հարթության վրա դնելով վահաբականներին և նուրջուներին, նրանց անվանեց ոչ ցանկալի տարր և հանցավոր խմբավորումներ, որոնք վնաս են հասցնում սուրբ իսլամին [17]: 2009-2011թթ. Ադրբեջանի Ազգային ժողովը փոփոխություններ կատարեց Կրոնի ազատության մասին օրենքում, որով նվազագույնի պետք է հասցվեր երկրի ներսում կրոնական կյանքի վրա արտաքին ազդեցության հավանականությունը[2], ինչպես նաև խստացվեց անօրինական կրոնական գործունեություն ծավալելու համար նախատեսված պատիժը: Արգելքները և հետապնդումներն իրականացվեցին ոչ միայն ծայրահեղական իսլամական ուղղությունների, այլև թուրքական գրեթե բոլոր կրոնական խմբերի նկատմամբ: Գյուլենականներին անգամ մեղադրեցին հայերի հետ համագործակցության և հակաադրբեջանական գործունեություն ծավալելու մեջ: Այդ գործընթացն ուղղակիորեն պայմանավորված էր հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ արված փորձերով, ինչը հանգեցրեց թուրք-ադրբեջանական հարաբերությունների լարվածությանը:

Երբ 2013թ. Ֆեթուլա Գյուլենի և այն ժամանակվա վարչապետ Թայիփ Էրդողանի հարաբերությունները վատացան և հակասությունները ստացան սուր բնույթ, գյուլենականների դիրքերն Ադրբեջանում ավելի սասանվեցին: Թուրքիայի կառավարության հրահանգով 2014թ. մարտին աշխատանքից ազատվեցին Ադրբեջանի կառավարական համակարգում աշխատող գյուլենական բարձրաստիճան պաշտոնյաներ[3], գյուլենական 13 կրթական կենտրոններ, 11 բարձրագույն դպրոցներ և Կովկասի ինստիտուտը պետականացվեցին և փոխանցվեցին Ադրբեջանի պետական

[1] http://m2.islam.az/news/a-479.html

[2] 2010թ. կրոնի վերաբերյալ օրենքի փոփոխության համաձայն՝ միայն երկրի ներսում կրոնական կրթություն ստացած քաղաքացիներին էր իրավունք տրվում կատարել իսլամական կրոնական արարողություններ, արգելվում էր հոգևորականների փոխանակումը, դժվարացվում էր կրոնական համայնքների գրանցման գործընթացը: Արդյունքում՝ Թուրքիայի քաղաքացի իմամների կրոնական գործունեությունը համարվեց անօրինական, և նրանք լքեցին Ադրբեջանը, նրանց փոխարինելու եկան ադրբեջանցի հոգևորականներ:

[3] Աշխատանքից հեռացվեցին նախագահի աշխատակազմի քաղաքական վերլուծության և տեղեկատվության ապահովման բաժնի պետ Էլնուր Ասլանովը, Ադրբեջանի Հանրապետության նավթային ընկերության (*SOCAR*) փոխնախագահ Խալիգ Մամեդովը, Կրոնական կառույցների հետ աշխատանքի պետական կոմիտեի նախագահ Էլշադ Իսկենդերովը, նրա տեղակալ Գյունդուզ Իսմայլովը, երիտասարդության և սպորտի փոխնախարար Ինթիգամ Բաբաևան, պատգամավոր Ջեյհուն Օսմանլին, նախագահի աշխատակազմին կից Ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն Ֆարհադ Մամեդովը, *տե՛ս Исламизм стучится в наши двери,* Х. Гаджи-заде, редактор Л.Алиева, Центр национальных и международных исследований, Баку, 2016, стр. 21.

նավթային և գազային ընկերությանը (*SOCAR*) կից գործող Ադրբեջանի միջազգային կրթական կենտրոնին [18] (ներկայում այդ հաստատությունները փակվել են Ադրբեջանի կառավարության կողմից):

2016թ. հուլիսին Թուրքիայում տեղի ունեցած հեղաշրջման փորձից հետո Ֆեթուլա Գյուլենը և նրա շարժման հետևորդները հայտարարվեցին երկրի թշնամիներ, ահաբեկիչներ, պետական բոլոր ոլորտներից գյուլենական շարժման անդամները և համախոհները հեռացվեցին, երկրում հայտարարվեց արտակարգ դրություն, փակվեցին թերթեր, հեռուստաալիքներ: Այս ամենն իր արտացոլումը գտավ նաև Ադրբեջանի Հանրապետությունում: Երկրի բարձրաստիճան պաշտոնյաները հաստատեցին թուրքական կողմի տեղեկատվությունն այն մասին, որ Էրդողանի իշխանությունը տապալելուց հետո գյուլենականները ծրագրել էին հեղաշրջում կատարել նաև Ադրբեջանում՝ իշխանությունը զավթելու նպատակով: Ադրբեջանի Հանրապետության գլխավոր դատախազությունը քրեական գործ հարուցեց գյուլենական շարժման հետևորդների նկատմամբ, փակվեցին շարժման հետ կապ ունեցող բոլոր լրատվամիջոցները, կրթական հաստատությունները [19]: Ադրբեջանի իշխանությունները մեկ անգամ ևս հնարավորություն ունեցան գյուլենական շարժմանը հարելու մեղադրանքի պատրվակով քաղաքական դաշտը մաքրել անցանկալի ընդդիմադիր տարրից:

Ամփոփելով նշենք, որ 1991թ. անկախություն ձեռք բերելուց հետո Ադրբեջանում իսլամն առաջնային դիրք գրավեց ոչ միայն որպես ազգային ինքնության անքակտելի բաղադրիչ, այլև արտաքին ուժերի ձեռքում հանդիսացավ «փափուկ ուժի» ռազմավարության ամենակարևոր գործիքներից մեկը: Տարբեր կրոնական ուղղություններ մրցակցում էին միմյանց հետ՝ Ադրբեջանում իրենց դիրքերն ամրապնդելու համար, ինչը, մեծ հաշվով, արտացոլում էր քաղաքական ազդեցության համար տարածաշրջանի երկրների միջև տարվող պայքարը: Անկախացումից հետո Ադրբեջանի Հանրապետության արտաքին քաղաքական ուղեծիրն ուղղվեց բնական դաշնակից Թուրքիայի կողմը, հետևաբար, ի տարբերություն այլ երկրներից ներթափանցող իսլամական ազդեցության, թուրքական պաշտոնական և ոչ պաշտոնական կրոնական կառույցները ստանում էին Ադրբեջանի իշխանությունների լիակատար աջակցությունը: Այս երևույթը պայմանավորված էր ինչպես թյուրքական ընդհանուր ինքնության գիտակցության գերակայությամբ, այնպես էլ Ղարաբաղյան հակամարտության ընթացքում Թուրքիայի Հանրապետության ցուցաբերած ռազմական, քաղաքական, նյութական լուրջ օժանդակությամբ: Նշանակալի դեր խաղաց նաև 1994թ.

կնքված «դարի պայմանագիրը»[1], ինչից հետո Ադրբեջանը վերջնականապես որդեգրեց ամերիկամետ, եվրոպամետ քաղաքականություն, իսկ Թուրքիան կապող օղակ էր ԱՄՆ-ի և Եվրոպայի միջև:

Երկրի անվտանգությանը սպառնացող ծայրահեղական իսլամական հոսանքների ակտիվացումը չեզոքացնելու և իսլամական շարժումների մուտքը քաղաքական դաշտ արգելափակելու նպատակով իշխանությունները դիմեցին կրոնական ոլորտի վերահսկողությունը խստացնող միջոցների: Այդ գործողությունները տարածվեցին նաև Թուրքիայից ներթափանցող կրոնական հոսանքների վրա, որի արդյունքում «թուրքական» իսլամը կորցրեց արտոնյալ դիրքն Ադրբեջանում: Թուրքիայի իսլամական կառույցների գործունեությունն Ադրբեջանում թուլացավ նաև Թուրքիայից Ադրբեջանի տնտեսական, քաղաքական, մշակութային անկախության գործընթացին զուգահեռ:

Սակայն թուրքական պաշտոնական մզկիթները, դպրոցները, Ղուրանի ուսուցման դասընթացները շարունակում են իրենց գործունեությունն ադրբեջանական իշխանությունների խիստ վերահսկողության ներքո, իսկ Թուրքիայի կողմից արվում է ամեն քայլ՝ պահպանելու երկու երկրների իսլամական պետական կառույցների միջև կապը եղբայրական համերաշխության համատեքստում[2]:

Այլ է ոչ պաշտոնական կրոնական շարժումների դրությունը: Զրկվելով Թուրքիայում իրենց արտոնյալ դիրքից և պետական աջակցությունից՝ նրանք աստիճանաբար կորցնում են ազդեցությունը նաև Ադրբեջանում: Թեև ամենաազդեցիկ գյուլենական շարժման դեմ պայքարը շարունակվում է, շարժման անդամները, ունենալով տնտեսական, կրթական, տեղեկատվական հզոր ներուժ, սողոսկել են իշխանական համակարգ՝ սերտաճելով Ադրբեջանի կառավարական շրջանակների հետ:

Սեպտեմբեր, 2017թ.

[1] 1994թ. սեպտեմբերի 20-ին Ադրբեջանի Պետական նավթային ընկերության և արտերկրյա 11 նավթային ընկերությունների միջև ստորագրվել է Կասպից ծովի ադրբեջանական հատվածում «Ազերի», «Չըրագ», «Գյունեշլի» նավթային հանքավայրերի համատեղ վերամշակման պայմանագիր: Ռազմավարական մեծ նշանակություն ունենալով և XXդ. ամենախոշոր գլոբալ էներգետիկ նախագծերից մեկը հանդիսանալով՝ այն ստացավ «դարի պայմանագիր» անվանումը:

[2] Օրինակ՝ 2014թ. փետրվարին Թուրքիայի որոշ մզկիթներում անցկացվեցին այսպես կոչված «Խոջալուի ողբերգության» հիշատակը ոգեկոչող միջոցառումներ, և թեև իսլամի հանեֆիական մազհաբն արգելում է ազանի կատարումը ձայնագրությամբ (այն պետք է անպայման կենդանի կատարվի), որոշ մզկիթներում ձայնագրությամբ հնչեցվել է Ղարաբաղի ազանը (ադրբեջանցիները դա համարում են առաջին և վերջին ազանը, որը կատարվել է Ղարաբաղում՝ այդ տարածքները լքելուց առաջ), տե՛ս *S.Bedford,* Turkey and Azerbaijan: one religion-two states?, Turkish-Azerbaijani relations. One nation-two states, Ed. M. Ismayilov, N. A. Graham, New York, Routledge, 2016, p. 141-142:

Աղբյուրներ և գրականություն

1. *А.Юнусов,* Ислам в Азербайджане, Баку, 2004.
2. *B.Balci,* «Le renouveau islamique en Azerbaïdjan», Les études du CERI (Paris, 2007), մեջբերված է Azerbaijan: Independent Islam and The State, Europe report N°191, 25 March, 2008, p. 8.
3. *S.E. Cornell,* The Politicization of Islam in Azerbaijan, Silk Road Paper, Central Asia-Caucasus Institute, October, 2006.
4. *B.Hasanov,* Azerbaycan'da Din: Sovetler'den Bağımsızlığa Hafıza Dönüşümleri, Istanbul, 2011.
5. Crisis Group interviews, Turkish teachers, north Azerbaijan, October 2007, Azerbaijan: Independent Islam and The State, p. 9, note 91.
6. *S.Bedford,* Islamic Activism in Azerbaijan. Repression and Mobilization in a Post-Soviet Context, Stockholm, 2009, p. 171.
7. *А.Юнусов,* Исламская Палитра Азербайджана, Баку, 2012.
8. *А.Албанви,* Цахурский приемник Халида аль-Багдади, https://www.proza.ru/2011/12/10/1101
9. Накшбандийя одна из течений ислама, «Зеркало», 27 января, 2001г.
10. *F.Bulut,* Kim bu Fethullah Gülen, Üçüncü Basım, Istanbul, Ozan Yayıncılk, 1999, s. 207.
11. *N.Goksel,* Religiously-Inspired Bonding: Changing Soft Power Elements in Turkey's Relations with Azerbaijan, Center for conflict prevention and early warning, Vol. 4, N. 8, 2011, http://www.cpc-ew.ro/occasional_papers/008.pdf
12. *M.Hakan Yavuz,* Towards an Islamic Liberalism? The Nurcu Movement and Fethullah Gülen in Turkey, The Middle East Journal, № 53, Washington, 1999, pp. 584–605.
13. *F.Aliyev,* The Gulen Movement in Azerbaijan, Hudson Institute, 2012, https://www.hudson.org/research/9864-the-gulen-movement-in-azerbaijan
14. *M. Yanardağ*, Kuşatılan Türkiye. Gülen Hareketinin Perde Arkası, 25 Baskı, Istanbul, 2011, s. 34.
15. *Գ.Չորանյան,* Իսլամի քաղաքական դերը հետխորհրդային Աղրբեջանում, 21-րդ ԴԱՐ, #2 (48), Երևան, 2013, էջ 71:
16. *B.Balci,* Between secular education and Islamic philosophy: the approach and achievements of Fethullah Gülen's followers in Azerbaijan, Caucasus Survey, Vol.1, No.1, October 2013, 107-116.
17. Azerbaijan: Independent Islam and The State, International Crisis Group, Europe Report N°191, 25 March 2008, p. 9.
18. *Sh.Sultanova,* Azerbaijan Backing Turkey's Crackdown on Gülen Movement, April 15, 2014, http://www.eurasianet.org/node/68274
19. *М.Талыблы,* Школы Гюлена в Азербайджане: отголоски турецкого путча, http://dlmn.info/ru/shkoly-gyulena-v-azerbaydzhane-otgoloski-tureckogo-putcha/

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Գայանե Չոբանյան

Ամփոփագիր

Անկախացումից հետո Ադրբեջանը դարձավ աշխարհաքաղաքական տարբեր ուժային կենտրոնների շահերի բախման թատերաբեմ: Իսլամական գործոնն այդ ուժերի համար քաղաքական ազդեցության հաստատման գործիքներից մեկը դարձավ: Մերձավոր Արևելքի երկրներից, Իրանի Իսլամական Հանրապետությունից, Հյուսիսային Կովկասից և Թուրքիայից իսլամական տարբեր կառույցներ թափանցեցին Ադրբեջան: Անկախ այն փաստից, որ Ադրբեջանի բնակչության մեծամասնությունը իսլամի շիա ուղղության հետևորդներ էին, աշխարհիկ Թուրքիայի «իսլամական մոդելը» համարվում էր ամենահամապատասխանը և չէր ընկալվում որպես քաղաքական սպառնալիք: Թուրքական պաշտոնական և ոչ պաշտոնական իսլամական կառույցները, ստանալով Ադրբեջանի իշխանությունների աջակցությունը, կրոնական, կրթական, տնտեսական ոլորտներում բավական խոր արմատներ էին գցել: Սակայն, իսլամական ծայրահեղական ուղղությունների տարածման սպառնալիքին զուգահեռ, կրոնական կառույցների գործունեությունը, այդ թվում նաև թուրքական, սահմանափակվեց և դրվեց պետական խիստ վերահսկողության ներքո:

РЕЛИГИОЗНОЕ ВЛИЯНИЕ ТУРЦИИ НА РЕСПУБЛИКУ АЗЕРБАЙДЖАН

Гаяне Чобанян

Резюме

После обретения независимости Азербайджан стал центром столкновения интересов различных геополитических сил. Исламский фактор использовался ими как один из инструментов политического влияния. Различные религиозные организации из стран Ближнего Востока, Исламской Республики Иран, Северного Кавказа и Турции развернули свою деятельность на территории АР. Несмотря на то, что большая часть азербайджанцев исповедовала шиитское течение ислама, «исламская модель» светской Турции считалась наиболее подходящей и не рассматривалась в качестве политической угрозы. Получив поддержку властей, турецкие правительственные и неправительственные организации пустили глубо-

кие корни в религиозные, образовательные и экономические сферы Азербайджана. Однако, параллельно с возникновением угрозы распространения различных течений радикального ислама, деятельность религиозных организаций, в т.ч. турецких, была ограничена и поставлена под жёсткий контроль государства.

TURKISH RELIGIOUS INFLUENCE ON THE REPUBLIC OF AZERBAIJAN

Gayane Chobanyan

Resume

Since gaining its independence Azerbaijan has become an arena of conflict of interests for various geopolitical powers. The Islamic factor served those powers as one of the tools for establishing political influence. Various Islamic organizations from the countries of the Middle East, the Islamic Republic of Iran, the Northern Caucasus and Turkey started their activities in Azerbaijan. Despite the fact that the majority of Azerbaijan's population were followers of Shia branch of Islam, the "Islamic model" of secular Turkey was considered the most appropriate and was not perceived as a political threat. Turkey's official and non-official Islamic organizations, supported by the Azerbaijani authorities, put down rather deep roots in religious, educational and economic areas. However, in parallel to the threat of spreading extremist Islamic directions, the activities of religious organizations, including the Turkish ones, was restricted and placed under strict government control.

ՀՏԴ 336 (479.25):06

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Աշոտ Մարկոսյան**, *Էլյանորա Մաթևոսյան**

Բանալի բառեր ՝ ՀՆԱ, ազգային տնտեսություն, արտահանում, ներմուծում, զուտ արտահանում, արտահանման հակվածություն, ներմուծման հակվածություն, տնտեսական աճ:

1. Զուտ արտահանման ավելացման հիմնախնդիրը

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ)՝ որպես երկրի տնտեսական հզորության գնահատման հիմնական մակրոտնտեսական ցուցանիշի, մեծությունը ծախսային մեթոդով հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

ՀՆԱ=սպառում+ներդրումներ+պետական գնումներ+զուտ արտահանում:

Բանաձևից հետևում է, որ զուտ արտահանման մեծությունը (որը ներկայացնում է արտահանման և ներմուծման տարբերությունը) ուղղակիորեն ազդում է ՀՆԱ մեծության վրա, այսինքն, եթե այդ տարբերությունը դրական է, ապա ՀՆԱ մեծությունն ավելանում է, և ընդհակառակը: Ուստի, ցանկացած երկրի համար կենսականորեն անհրաժեշտ է, որպեսզի զուտ արտահանումն ունենա դրական մեծություն, թեև, ինչպես ցույց է տալիս աշխարհի առանձին երկրների (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության) արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշների վերլուծությունը, միշտ չէ, որ հաջողվում է ապահովել արտահանման գերազանցումը ներմուծման նկատմամբ: Ավելին, աշխարհում անհամեմատ քիչ են այն երկրները, որոնց զուտ արտահանման ցուցանիշը դրական մեծություն է:

Ազգային տնտեսությունների գործունեության արդյունքների համաշխարհայնացման աստիճանի որոշման համար միջազգային տնտեսական հարաբերությունների պրակտիկայում կիրառում են հատուկ ցուցանիշ՝ արտադրության արտահանման քվոտան (չափաբաժինը): Այս ցուցանիշը ցույց է տալիս արտահանման նպատակով թողարկված արտադրանքի բա-

* ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր:
** ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու:

ժինն ամբողջ արտադրանքի մեջ: Ըստ որում, կապված տնտեսական ինտեգրման խորացման հետ՝ այդ ցուցանիշը ժամանակի ընթացքում ունի աճման միտում: Այսպես, շուկայական տնտեսությամբ պետությունների գումարային արտահանման քվոտան վերջին տասնամյակում աճել է ավելի քան 1.5 անգամ: Ընդ որում, արդյունաբերապես զարգացած երկրների խմբում այն աճել է 1.3 անգամ, իսկ աշխարհի մյուս երկրներում՝ 1.8 անգամ:

Յուրաքանչյուր երկիր, որն ընդունում է ազատ շուկայական տնտեսաձևը, առաջին հերթին պարտավոր է որոշել, թե ինչ ապրանքներով և ծառայություններով կարող է մտնել համաշխարհային շուկա և ընդլայնել իր մասնակցությունն աշխատանքի միջազգային բաժանման գործում, այսինքն՝ առանձնացնել իր տնտեսական հնարավորությունները և արտահանման գերակայությունները: Տարբեր երկրներում արտաքին առևտրի վիճակը բնավ նույնը չէ, սակայն այն երկրներում, որտեղ աշխատանքի միջազգային բաժանմանը մասնակցելու հնարավորություններն օգտագործվում են ավելի ակտիվորեն, որպես կանոն, բարձր են նաև տնտեսական աճի տեմպերը: Պատահական չէ, որ Արևմտյան Եվրոպայի երկրներում արտահանման քվոտայի առավել զգալի աճ նկատվել է Գերմանիայում, իսկ արևելյան երկրներից՝ Ճապոնիայում, Չինաստանում և, այսպես կոչված, նոր արդյունաբերական երկրների քառյակում (Հոնկոնգ, Սինգապուր, Թայվան և Հարավային Կորեա), որոնք տնտեսական աճի տեմպերով դասվում են աշխարհի առաջատարների թվին: Այն պետություններում, որոնք չկարողացան ամրապնդել իրենց դիրքերը համաշխարհային շուկայում, ընդհակառակը, նկատվել է տնտեսական աճի դանդաղում կամ անկում: Դա հատկապես ակնառու կերպով նկատվել է Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում:

Նմանատիպ ճակատագրի արժանացավ նաև նախկին Խորհրդային Միության տնտեսությունը, որի հիմնախնդիրների մի մասը կապված էր միջազգային տնտեսական հարաբերությունների դերի թերագնահատման հետ:

Աշխատանքի միջազգային բաժանման ժամանակակից բնույթն այնպիսին է, որ տարեցտարի ավելանում է արդյունաբերական երկրների փոխադարձ առևտրի բաժինը: Նրանց բաժին է հասնում համաշխարհային առևտրի 70%-ից ավելին, մինչդեռ զարգացող երկրների տեսակարար կշիռը չի հատում 20%-ի սահմանագիծը, որի 4/5 մասը ձևավորվում է Արևմուտքի զարգացած երկրների հետ առևտրից:

Հատկանշական է նաև, որ զարգացած և զարգացող պետությունների ղեկավարների շրջանում դեռևս գերիշխող են հակասական տրամադրու-

թյունները. մի կողմից՝ անհրաժեշտ է հնարավորին չափ ապահովել երկրի քաղաքական և տնտեսական անկախությունը, մյուս կողմից՝ առավելագույնս ներգրավվել տնտեսական «մերձեցման» համաշխարհային գործընթացներում:

Այսպիսով, պարզ է դառնում, որ արտաքին առևտուրը դարձել է տնտեսական աճի հզոր գործոն, և զգալիորեն աճել է երկրների կախվածությունը միջազգային ապրանքափոխանակումից:

Միջազգային առևտուրը զարգանում է այն պատճառով, որ մասնակից երկրների համար ապահովվում են բացարձակ և հարաբերական առավելությունները (օգուտները): Դրա հետ կապված՝ միջազգային առևտրի տնտեսագիտության ուսումնասիրության կարևորագույն հարցերից մեկն է. ի՞նչն է ընկած այդ օգուտի հիմքում կամ, այլ կերպ ասած, ինչպե՞ս են որոշվում արտաքին առևտրային հոսքերի ուղղությունները: Այս հարցի պատասխանը մեզ կօգնի բացահայտել այս կամ այն երկրի արտաքին առևտրի կառուցվածքը որոշող գործոնները:

Արտաքին առևտրի վերաբերյալ գաղափար կազմելու և ճիշտ մակրոտնտեսական քաղաքականություն ընտրելու նպատակով յուրաքանչյուր պետության համար կարևոր է զուտ արտահանման (արտահանման և ներմուծման ծավալների տարբերության) հաշվառումը: Կարելի է առանձնացնել զուտ արտահանման հաշվառման երկու մոտեցում.

- զուտ արտահանման հաշվարկ ըստ գործընկեր երկրների,
- զուտ արտահանման հաշվարկ ըստ ապրանքային խմբերի:

ՀՀ-ի համար կարելի է առանձնացնել զուտ արտահանման հաշվառման ևս մեկ մոտեցում. զուտ արտահանման հաշվառումն ըստ առանձին մարզերի:

Արտահանման հիմնախնդիրը շարունակաբար գտնվել է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում, և միշտ խնդիր է դրվել, որպեսզի արտահանման աճի տեմպերը գերազանցեն ներմուծման աճի տեմպերը, այսինքն՝ ներմուծման համեմատությամբ ապահովվի արտահանման առաջանցիկ աճ: Մասնավորապես, ՀՀ կառավարության ծրագրում (2017-2022թթ.) նշվեց. «Առաջիկա հինգ տարվա ընթացքում Հայաստանի տնտեսական աճը հիմնված կլինի տնտեսության ներքին ռեսուրսների արդյունավետ և խելացի օգտագործման ու արտաքին աշխարհում մրցունակության բարձրացման վրա՝ ապահովելով արտահանման ծավալների աստիճանական ավելացումը, ինչը պետք է հանդիսանա տնտեսական աճի առանցքային շարժիչը» [1, էջ 5-6]:

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության ՀՆԱ և արտաքին առևտրի ցուցանիշների դինամիկան 1995-2016թթ.

Տարի	ՀՆԱ, մլն դրամ	Արտահանում մլն ԱՄՆ դոլար	Ներմուծում մլն ԱՄՆ դոլար	Զուտ արտահանում մլն ԱՄՆ դոլար	Զուտ արտահանման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %	Արտահանման հակակծռության գործակիցը (արտահանում/ՀՆԱ)	Ներմուծման հակակծռության գործակիցը (ներմուծում/ ՀՆԱ)	Զուտ արտահանման հարաբերակցությունը ներմուծման ծավալին, %
1	2	3	4	5	6 (4-5)	7 (6/3)	8 (4/3)	9 (5/3)	10 [6/(4+5)]
1995	255256	1287	270.9	673.9	-403.0	-31.3	21.0	52.4	-42.7
1996	661209	1599	284.7	800.9	-516.2	-32.3	17.8	50.1	-47.5
1997	804336	1639	232.5	892.3	-659.8	-40.3	14.2	54.4	-58.7
1998	955385	1892	220.5	902.4	-681.9	-36.0	11.7	47.7	-60.7
1999	987444	1845	231.7	811.3	-579.6	-31.4	12.6	44.0	-55.6
2000	1031338	1912	300.5	884.7	-584.2	-30.6	15.7	46.3	-49.3
2001	1175877	2118	341.8	877.4	-535.6	-25.3	16.1	41.4	-43.9
2002	1362472	2376	605.2	987.2	-382.0	-16.1	25.5	41.5	-24.0
2003	1624643	2807	685.6	1279.5	-593.9	-21.2	24.4	45.6	-30.2
2004	1907945	3577	722.9	1350.7	-627.8	-17.6	20.2	37.8	-30.3
2005	2242881	4900	973.9	1801.7	-827.8	-16.9	19.9	36.8	-29.8
2006	2656190	6384	985.1	2191.6	-1206.5	-18.9	15.4	34.3	-38.0

Տարի	ՀՆԱ, դրամ մլն ՀՀ դրամ	Արտահանում, մլն ԱՄՆ դոլար	Ներմուծում, մլն ԱՄՆ դոլար	Զուտ արտահանում, մլն ԱՄՆ դոլար	Զուտ արտահանման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %	Արտահանման հակակծռության գործակիցը (արտահանում/ՀՆԱ)	Ներմուծման հակակծռության գործակիցը (ներմուծում/ՀՆԱ)	Զուտ արտահանման հարաբերակցությունը արտաքին առևտրի ընդհանուր շրջանառությանը, %
1	2	3	4	5	6 (4-5)	7 (6/3)	8 (4/3)	9 (5/3)	10 [6/(4+5)]
2007	3149283	9206	1152.3	3267.8	-2115.5	-23.0	12.5	35.5	-47.9
2008	3568228	11662	1057.2	4426.1	-3368.9	-28.9	9.1	38.0	-61.4
2009	3141651	8648	710.2	3321.1	-2610.9	-30.2	8.2	38.4	-64.8
2010	3460203	9260	1041.1	3748.9	-2707.8	-29.2	11.2	40.5	-56.5
2011	3777947	10142	1334.3	4145.3	-2811.0	-27.7	13.2	40.9	-51.3
2012	4266461	10619	1380.2	4261.2	-2881.0	-27.1	13.0	40.1	-51.1
2013	4555638	11121	1478.7	4385.9	-2907.2	-26.1	13.3	39.4	-49.6
2014	4828626	11610	1547.3	4424.4	-2877.1	-24.8	13.3	38.1	-48.2
2015	5032089	10529	1485.3	3239.2	-1753.9	-16.7	14.1	30.8	-37.1
2016	5067868	10547	1791.7	3273.5	-1481.8	-14.0	17.0	31.0	-29.3
Ընդամենը	**56512970**	**135680**	**18834**	**51947**	**-33113.4**	**-24.4**	**13.9**	**38.3**	**-46.8**

Աղբյուրը. աղյուսակը կազմվել և հաշվարկվել է՝ Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 27, Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2016, էջ 33, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-փետրվարին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2017, էջ 9, Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1996-1998), Եր., ՀՀ ԱՎԾ, 2001, էջ 16-17, Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999-2000), Եր., ՀՀ ԱՎԾ, 2001, էջ 16-17, ՀՀ ԱՎԾ պաշտոնական՝ www.armstat.am կայքի ժամանակագրական շարքերի՝ համախառն ներքին արդյունք (շուկայական գներով), ներմուծում (մլն ԱՄՆ դոլար), արտահանում (մլն ԱՄՆ դոլար), արտարժութային փոխարժեքներ (դրամ / 1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը) տվյալների հիման վրա:

Զուտ արտահանման բարելավմանն ուղղված ճիշտ մակրոտնտեսական քաղաքականություն վարելու համար հարկավոր է պատկերացում կազմել վերջինիս վրա ազդող գործոնների վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության զուտ արտահանման դինամիկայի ուսումնասիրության նպատակով դիտարկենք ՀՀ ԱՎԾ-ի կողմից հրապարակված պաշտոնական տվյալները ՀՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ 1995-2016թթ. կտրվածքով: Այդ ցուցանիշները ներկայացված են *Աղյուսակ 1*-ում:

Եթե ուսումնասիրենք զուտ արտահանման տեսակարար կշռի, արտահանման և ներմուծման հակվածությունների դինամիկան 1995-2016թթ. (*Գծանկար 1*), կնկատենք, որ զուտ արտահանման ցուցանիշը դիտարկվող ժամանակահատվածի բոլոր տարիներին բացասական մեծություն է եղել:

Գծանկար 1

Զուտ արտահանման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, արտահանման և ներմուծման հակվածությունները և զուտ արտահանման հարաբերակցությունը արտաքին ապրանքաշրջանառությանը ՀՀ-ում 1995-2016թթ.



Վերոնշյալ դիտարկումը թույլ է տալիս եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետության զուտ արտահանումն առաջիկա տարիների ընթացքում կշարունակի մնալ բացասական մեծություն: Հետևաբար, հարկավոր են վճռական քայլեր՝ ստեղծված իրավիճակը շտկելու համար:

2. ՀՀ-ն որպես էներգաարդյունավետ երկիր

ՀՀ կառավարության ծրագրում (2017-2022թթ.) կարևոր տեղ է հատկացված էներգետիկային և էներգետիկ ենթակառուցվածքներին: Մասնավորապես, էներգետիկայի մասով նշվեց. «Էներգետիկայի ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականությունն ուղղված է երկրի էներգետիկ անկախության ապահովմանն ու անվտանգության բարձրացմանը, տարածաշրջանային ինտեգրման գործընթացի ապահովմանը, էներգետիկ ոլորտի կայուն զարգացմանը՝ հենվելով ատոմային էներգետիկայի հետագա զարգացման, էներգակիրների մատակարարման տարատեսակացման և տեղական առաջնային (վերականգնվող) էներգապաշարների լիիրավ, արդյունավետ օգտագործման և էներգաարդյունավետ ժամանակակից միջոցների իրականացման ու նոր տեխնոլոգիաների ներդրման վրա» [1, էջ 62-63]:

Բացի այդ, վերոնշյալ ծրագրում ամրագրվեց, որ ՀՀ կառավարության առաջիկա հինգ տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելու.

- տարածաշրջանում իրացման նոր էներգետիկ շուկաներ փնտրելու, ներկրման և արտահանման ակտիվ քաղաքականության միջոցով Հայաստանի էներգետիկ անկախության ապահովմանը,
- նորագույն և բարձր տեխնոլոգիաների ներդրման համար օրենսդրական խթաններ ձևավորելուն, էներգետիկայի բնագավառի զարգացմանը և էներգաարդյունավետության միջոցառումների ներդրմանն ուղղված քաղաքականություն վարելուն,
- Հայկական ատոմակայանի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգմանը՝ նպատակ ունենալով բարձրացնել ատոմակայանի աշխատանքի արդյունավետությունն ու անվտանգությունը, այդ թվում էներգաբլոկի սարքավորումների և համակարգերի լրացուցիչ հետազոտությունների և սարքավորումների մատակարարման ժամանակացույցի սահմանմամբ,
- Հայաստան-Իրան և Հայաստան-Վրաստան 400 կվտ էլեկտրահաղորդման օդային գծերի կառուցման ծրագրերի իրականացմանը, որի արդյունքում (էլեկտրահաղորդման օդային գծերի կառուցման ավարտից և շահագործման հանձնելուց հետո) Հայաստանի Հանրապետությունը տարածաշրջանում հանդես կգա որպես էլեկտրաէներգետիկ ոլորտի տարածաշրջանային հանգույց (հաբ)՝ կապելով Իրանի, Վրաստանի և Ռուսաստանի էլեկտրաէներգետիկական համակարգերը,

- արևային համակարգային կայանների կառուցման ծրագրի իրականացմանը՝ նպատակ ունենալով մինչև 2018թ. ավարտը իրականացնել Մասրիկ տեղանքում 55 մվտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցումը,
- 2017-2022թթ. ընթացքում աջակցել հողմային էլեկտրական կայանների կառուցման մասնավոր ծրագրերին՝ այդ ուղղությամբ մշակելով նաև օրենսդրական խթաններ,
- «Կարկառ» կոչվող տեղանքում տնտեսական շահավետության տեսանկյունից երկրաջերմային պաշարների վերջնական հաստատման դեպքում նախատեսել մասնավոր ներդրողի ներգրավմամբ էլեկտրակայանի կառուցման ներդրումային ծրագիր [1, էջ 63-66]:

Բացի այդ, ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը ներկայացնելիս իր ելույթում նշեց. «Մենք ունենք մեծ հավակնություններ էներգետիկ ոլորտում: Նպատակ ունենք ոչ միայն վերազինելու ամբողջ էներգետիկ ենթակառուցվածքը, այլև դառնալու ակտիվ և առանցքային տարածաշրջանային խաղացող: Կառավարությունը իրականացնելու է էներգետիկ շուկայի բարեփոխումների ծրագրեր, որոնք մեծապես կնպաստեն վերականգնվող էներգետիկ հզորությունների ստեղծմանը, համակարգի արդյունավետության և անվտանգության բարձրացմանը և էլեկտրաէներգիայի միջսահմանային առևտրի ծավալների կտրուկ ավելացմանը:

Արդյունքում կունենանք ժամանակակից, արդյունավետ, արտահանող և մրցունակ էներգետիկ համակարգ: Միաժամանակ, էներգետիկ ծառայություններն ավելի որակյալ ենք դարձնելու: Այս ոլորտի գլխավոր նպատակներից է էներգետիկ շուկայի ազատականացումը» [2, էջ 10]:

ՀՀ էլեկտրակայանների հզորությունների և դրանց կառուցվածքի վերաբերյալ տվյալները 2000-2015թթ. բերված է *Աղյուսակ 2*-ում:

Աղյուսակ 2-ի տվյալներից հետևում է, որ նշված ժամանակահատվածում բոլոր էլեկտրակայանների հզորությունն ավելացել է 126.5%-ով: Այդ աճը հիմնականում ձեռք է բերվել ջերմային էլեկտրակայանների հզորությունների ավելացման հաշվին (132.8%-ով) և հիդրոէլեկտրակայանների հզորությունների ավելացման հաշվին (125.6%-ով): Ատոմային կայանի հզորությունը նշված տարիների ընթացքում մնացել է անփոփոխ, իսկ այլ աղբյուրներինը (հողմակայաններ) եղել է աննշան: ՀՀ էլեկտրակայանների

հզորությունների կառուցվածքը վկայում է, որ գերակշռող դեր ունեն ջերմային կայանները (2000թ.՝ 55.7%, 2015թ.՝ 58.5%, աճը կազմել է 2.8 տոկոսային կետ), հիդրոէլեկտրակայանների կշիռը 2000թ. կազմել է 31.7%, 2015թ.՝ 31.5%, նվազումը կազմել է 0.2 տոկոսային կետ, Հայկական ատոմակայանի կշիռը 2000թ. կազմել է 12.6%, 2015թ.՝ 10.0%, նվազումը կազմել է 2.6 տոկոսային կետ:

Աղյուսակ 2

ՀՀ էլեկտրակայանների հզորությունը 2000-2015թթ.

	2000	2003	2011	2012	2013	2014	2015
Բոլոր էլեկտրակայանները, այդ թվում՝	3231.1	3351.7	3508.7	4054.6	4094.4	4099.5	4086.8
	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
ջերմային	1799.4	1774.4	1906.0	2394.0	2394.0	2390.0	2390.0
	55.7	52.9	54.3	59.0	58.5	58.3	58.5
հիդրոէլեկտրակայաններ	1024.2	1169.8	1191.2	1249.2	1289.0	1298.1	1286.7
	31.7	34.9	33.9	30.8	31.5	31.7	31.5
ատոմային	407.5	407.5	407.5	407.5	407.5	407.5	407.5
	12.6	12.2	11.6	10.1	10.0	9.9	10.0
այլ աղբյուրներ	-	-	4.0	3.9	3.9	3.9	2.6
	-	-	0.1	0.1	0.1	0.1	0.1

Համարիչում՝ 1000 կվտ, հայտարարում՝ բոլոր էլեկտրակայանների հզորության նկատմամբ՝ %-ով:
Աղբյուրը՝ կազմվել և հաշվարկվել է ըստ [3, էջ 283; 4, էջ 285]:

Աղյուսակ 3-ում բերված են էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների և կառուցվածքի վերաբերյալ տվյալները ՀՀ-ում 2000-2015թթ.:

Աղյուսակ 3-ի տվյալներից հետևում է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՀ-ում բոլոր էլեկտրակայանների կողմից արտադրված էլեկտրաէներգիայի արտադրության ծավալներն ավելացել են 130.8%-ով: Էլեկտրաէներգիայի արտադրության նշված աճը հիմնականում ձեռք է բերվել հիդրոէլեկտրակայաններում (174.9%-ով), ատոմային կայանում (139.0%-ով) և ջերմային էլեկտրակայաններում (104.1%-ով) էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների աճի հաշվին:

Աղյուսակ 3

Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալներն ըստ ստացման աղբյուրների և կառուցվածքը ՀՀ-ում 2000-2015թթ.

	2000	2003	2011	2012	2013	2014	2015
Բոլոր էլեկտրակայան-ները, այդ թվում՝	5958.6	5500.9	7432.7	8036.2	7710.0	7750.0	7798.2
	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
ջերմային	2692.1	1521.5	2390.3	3399.1	3173.1	3288.6	2801.2
	45.2	27.7	32.2	42.3	41.2	42.4	35.9
հիդրոէլեկտրա-կայաններ	1261.1	1981.9	2488.7	2311.0	2173.4	1992.6	2205.6
	21.2	36.0	33.5	28.8	28.2	25.7	28.3
ատոմային	2005.4	1997.5	2548.1	2322.0	2359.7	2464.8	2787.7
	33.7	36.3	34.3	28.9	30.6	31.8	35.7
այլ աղբյուրներ	-	-	5.6	4.1	3.8	4.0	3.7
	-	-	0.1	0.1	0.0	0.1	0.0

Համարիչում՝ մլն կվտ/ժամ, հայտարարում՝ բոլոր էլեկտրակայաններում էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների նկատմամբ՝ %-ով:
Աղբյուրը՝ կազմվել և հաշվարկվել է ըստ [3, էջ 283; 4, էջ 284]:

Նշված փոփոխությունները զգալի տեղաշարժեր են կատարել էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների կառուցվածքում: Եթե 2000թ. ՀՀ էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների կազմում ջերմային էլեկտրակայանների բաժինը կազմել է 45.2%, ապա 2015թ.՝ 35.9% (նվազումը կազմել է 9.3 տոկոսային կետ), հիդրոէլեկտրակայաններում համապատասխանաբար՝ 21.2% և 28.3% (աճը կազմել է 7.1%), ատոմային կայանում համապատասխանաբար՝ 33.7% և 35.7% (աճը կազմել է 2.0 տոկոսային կետ): Բերված կառուցվածքային փոփոխությունները կարելի է գնահատել դրական, քանի որ դրանք ձեռք են բերվել ջերմային էլեկտրակայանների կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի նվազեցման (ինչը կարևոր է հատկապես բնապահպանական տեսանկյունից), ինչպես նաև էլեկտրաէներգիայի արտադրության այնպիսի «մաքուր» արտադրությունների զարգացման հաշվին, ինչպիսիք են հիդրոէլեկտրակայանները:

Աղյուսակ 4-ում ներկայացված են ՀՀ էլեկտրահաշվեկշիռը և դրա կառուցվածքը 2000-2016թթ.:

Աղյուսակ 4

ՀՀ էլեկտրահաշվեկշիռը և դրա կառուցվածքը 2000-2016թթ.

	2000	2003	2011	2012	2013	2014	2015	2016
Արտադրվել է էլեկտրաէներգիա	5958.6	5500.9	7433.0	8036.0	7710.0	7750.0	7798.2	7315.2
	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Ներմուծվել է էլեկտրաէներգիա	352.0	306.7	301.0	98.0	198.0	206.0	174.0	275.1
	5.9	5.6	4.0	1.2	2.6	2.7	2.2	3.8
Արտահանվել է էլեկտրաէներգիա	814.8	583.1	1383.0	1696.0	1226.0	1314.0	1424.0	1228.8
	13.7	10.6	18.6	21.1	15.9	17.0	18.3	16.8

Համարիչում՝ մլն կվտ/ժամ, հայտարարում՝ արտադրված էլեկտրաէներգիայի ծավալների նկատմամբ՝ %-ով:
Աղբյուրը՝ կազմվել և հաշվարկվել է ըստ [3, էջ 282; 4, էջ 283, www.armstat.am]:

Աղյուսակ 4-ի տվյալները վկայում են, որ նշված ժամանակահատվածում զգալիորեն բարելավվել է ՀՀ էլեկտրահաշվեկշռի կառուցվածքը, քանի որ ավելացել է արտադրված էլեկտրաէներգիայի ծավալը (122.7%-ով), նվազել է ներմուծված էլեկտրաէներգիայի ծավալը (2.1 տոկոսային կետով կամ ֆիզիկական ծավալի տեսանկյունից՝ շուրջ 22%-ով), իսկ արտահանման ծավալն ավելացել է 150.8%-ով կամ ավելացել է 3.1 տոկոսային կետով: Թեև 2016թ. 2015թ. նկատմամբ ՀՀ էլեկտրաէներգիայի ներմուծման ծավալները որոշ չափով ավելացել են, իսկ արտահանման ծավալները՝ որոշակիորեն նվազել, սակայն էլեկտրաէներգիան դարձել է ՀՀ-ից արտահանվող հիմնական արտադրատեսակներից մեկը: ՀՀ-ից էլեկտրաէներգիան հիմնականում արտահանվում է Իրանի Իսլամական Հանրապետություն և Վրաստան:

Աղյուսակ 5-ում բերված են ՀՀ-ից էլեկտրաէներգիայի արտահանման և ՀՀ էլեկտրաէներգիայի ներմուծման քանակը, արժեքը, ինչպես նաև 1000 կվտ/ժ արժեքը 2000-2016թթ.:

Աղյուսակ 5-ի տվյալներից հետևում է, որ ՀՀ-ից արտահանվող էլեկտրաէներգիայի քանակը նշված ժամանակահատվածում ամենաբարձրն է

եղել 2012թ. (աճը 2000թ. համեմատությամբ կազմել է 208.2%), որից հետո նկատվել է էլեկտրաէներգիայի արտահանման ծավալների նվազում (2016թ. արտահանման ցուցանիշը կազմել է 2012թ. արտահանման ցուցանիշի 72.4%-ը), իսկ ընդհանուր առմամբ ՀՀ-ից էլեկտրաէներգիայի արտահանման ծավալը 2016թ. 2000թ. համեմատությամբ կազմել է 150.8%: Արտահանվող 1000 կվտ/ժամի արժեքը ամենաբարձրն է եղել 2014թ. ($61.9), որը հետագա տարիներին ունեցել է նվազման միտում (2016թ. ցուցանիշը 2014թ. համեմատությամբ կազմել է 80.2%): Ինչ վերաբերում է ՀՀ էլեկտրաէներգիայի ներմուծմանը, ապա այն ամենամեծ ծավալն է ունեցել 2016թ., երբ նկատվել է նաև ներմուծման ամենամեծ արժեքը (շուրջ $14 մլն), ինչպես նաև 1000 կվտ/ժ էլեկտրաէներգիայի դիմաց վճարված ամենամեծ արժեքը՝ $50.9:

Աղյուսակ 5

ՀՀ-ից էլեկտրաէներգիայի արտահանման և ՀՀ էլեկտրաէներգիայի ներմուծման քանակը, արժեքը և 1000 կվտ/ժ արժեքը 2000-2016թթ.

Տարիներ	Արտահանում			Ներմուծում		
	քանակը, հազ. կվտ/ժ	արժեքը, ԱՄՆ դոլար	1000 կվտ/ժ արժեքը, ԱՄՆ դոլար	քանակը, հազ. կվտ/ժ	արժեքը, ԱՄՆ դոլար	1000 կվտ/ժ արժեքը, ԱՄՆ դոլար
2000	814853.5	20551593	25.2	352012.4	10253051	29.1
2003	279460.6	4590867	16.4	54226	779495	14.4
2011	1533066.1	87514495	57.1	204528.2	9463950	46.3
2012	1696152.9	95223952	56.1	98115.2	3344560	34.1
2013	1312942.9	77962320	59.4	147674.6	4309484	29.2
2014	1313610.5	81292080	61.9	205750.3	9512630	46.2
2015	1423699.3	81211936	57.0	173603.1	7685247	44.3
2016	1228772.1	60991134	49.6	275071.4	13998956	50.9

Աղբյուրը՝ կազմվել և հաշվարկվել է ըստ [5, էջ 27; 6, էջ 31; 7, էջ 52; 8, էջ 52; 9, էջ 54; 10, էջ 54; 11, էջ 59; 12, էջ 59]:

Որպեսզի համոզվենք ՀՀ-ից էլեկտրաէներգիայի արտահանման նպատակահարմարության և արդյունավետության հարցում, օգտագործենք համեմատական առավելությունների տեսությունը: Այդ նպատակով *Աղյուսակ 6*-ում բերված են ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության, ինչպես

նաև էլեկտրաէներգիայի արտահանման համեմատական առավելությունների գործակիցները 2000-2016թթ.:

Աղյուսակ 6

ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության և էլեկտրաէներգիայի համեմատական առավելությունների գործակիցները 2000-2016թթ.

Տարիներ	ՀՀ արտաքին ապրանքաշրջանառություն			Էլեկտրաէներգիա		
	Արտահանում, հազ. ԱՄՆ դոլար	Ներմուծում, հազ. ԱՄՆ դոլար	ՀԱԳ	Արտահանում, հազ. ԱՄՆ դոլար	Ներմուծում, հազ. ԱՄՆ դոլար	ՀԱԳ
2000	300487.4	884733.2	-0.493	20551.6	10253.1	0.334
2003	685599.2	12779485.7	-0.898	4590.9	779.5	0.710
2011	1334338.8	4145332.0	-0.513	87514.5	9463.9	0.805
2012	1380199.2	4261232.7	-0.511	95223.9	3344.6	0.932
2013	1478748.6	4385865.9	-0.496	77962.3	4309.5	0.895
2014	1547286.6	4424424.5	-0.482	81292.1	9512.6	0.790
2015	1485331.9	3239238.7	-0.371	81211.9	7685.2	0.827
2016	1782924.7	3292425.3	-0.297	60991.1	13998.9	0.627

Աղբյուրը՝ կազմվել և հաշվարկվել է ըստ [3, էջ 460; 4, էջ 446; 13, էջ 445; 14, էջ 118]:

Ինչպես հայտնի է, թե՛ երկրի ամբողջ առևտրաշրջանառությունը և թե՛ առանձին ապրանքատեսակների արտահանման և ներմուծման վիճակը բնութագրվում են համեմատական առավելությունների գործակցի (ՀԱԳ) միջոցով, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ՀԱԳ = (Ա-Ն) / (Ա+Ն),$$

որտեղ՝ Ա-ն արտահանումն է, Ն-ն՝ ներմուծումը:

Այլ կերպ ասած, վերոգրյալ բանաձևի համարիչը ներկայացնում է զուտ արտահանումը, իսկ հայտարարը՝ արտաքին ապրանքաշրջանառությունը: Նշված գործակցի մեծությունը գտնվում է [+1, -1] միջակայքում, ըստ որում, ՀԱԳ-ը ստանում է +1, արժեքը, երբ երկիրը միայն արտահանում է, և -1 արժեքը, երբ երկիրը միայն ներմուծում է [15, էջ 26]: Այսինքն, որքան մոտ է ՀԱԳ մեծությունը +1-ին, այնքան բարձր է երկրի արտահանման արդյունավետությունը, և ընդհակառակը: Բացասական մեծություն ունեցող ՀԱԳ-ը մեծացնում է երկրի վճարային հաշվեկշռի բացասական արժեքը, որի

հետևանքով երկիրը հայտնվում է արտաքին պարտքի ավելացման, փոխարժեքի վատթարացման և այլ հիմնախնդիրների առջև, մինչդեռ էլեկտրաէներգիայի արտահանումը ՀՀ-ից և տարածաշրջանի շուկայում հիմնական խաղացող լինելը կարող է զգալիորեն բարելավել երկրի վճարային հաշվեկշիռը: Իսկ դա նշանակում է, որ ՀՀ-ում էլեկտրաէներգիայի շուկայում իրականացվող և վարվող տնտեսական քաղաքականությունը կարող են նկատելիորեն բարձրացնել էլեկտրաէներգիայի արտահանման հնարավորությունները և ավելացնել պետական բյուջեի եկամուտները:

Սեպտեմբեր, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր (2017-2022թթ.), հաստատվել է ՀՀ կառավարության 2017թ. հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ:
2. Հայաստանի Հանրապետության վարչապետ Կարեն Կարապետյանի ելույթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը ներկայացնելիս, 21 հունիսի 2017թ., http://www.gov.am/am/news/item/13047/:
3. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2004թ.:
4. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2016թ.:
5. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2000 թվականին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2001թ.:
6. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2003 թվականին (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի 8-նիշ դասակարգման), Եր., ՀՀ ԱՎԾ, 2004թ.:
7. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2011 թվականին (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 8-նիշ դասակարգման), Եր., ՀՀ ԱՎԾ, 2012թ.:
8. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2012 թվականին (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 8-նիշ դասակարգման), Եր., ՀՀ ԱՎԾ, 2013թ.:
9. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2013 թվականին (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 8-նիշ դասակարգման), Եր., ՀՀ ԱՎԾ, 2014թ.:
10. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2014 թվականին (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 8-նիշ դասակարգման), Եր., ՀՀ ԱՎԾ, 2015թ.:
11. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2015 թվականին (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 10-նիշ դասակարգման), Եր., ՀՀ ԱՎԾ, 2016թ.:
12. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2016 թվականին (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 10-նիշ

դասակարգման), Եր., ՀՀ ԱՎԾ, 2017թ.:
13. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր, ՀՀ ԱՎԾ, 2014թ.:
14. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին, Եր, ՀՀ ԱՎԾ, 2017թ.:
15. *Ա.Մարկոսյան, Գ.Նազարյան, Դ.Հախվերդյան,* Միջազգային տնտեսական հարաբերություններ, ուսումնական ձեռնարկ, մաս I, Եր., ՀՊՃՀ, 2011թ.:

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Աշոտ Մարկոսյան, Էլյանորա Մաթևոսյան

Ամփոփագիր

Յուրաքանչյուր երկրի ՀՆԱ մեծության վրա զուտ արտահանումը (արտահանման և ներմուծման տարբերությունը) ունի անմիջական ազդեցություն. զուտ արտահանման բացասական մեծության դեպքում այդ նույն չափով նվազում է ՀՆԱ մեծությունը, և ընդհակառակը: Այստեղից հետևում է, որ երկրի արտաքին տնտեսական գործունեության հիմնական նպատակ պետք է հանդիսանա արտահանման ծավալների գերազանցումը ներմուծման ծավալների նկատմամբ: Այս խնդիրը հատկապես կարևոր է Հայաստանի Հանրապետության համար, քանի որ 1995-2016թթ. ժամանակահատվածի համար կատարված ուսումնասիրության արդյունքներով զուտ արտահանումը մշտապես բացասական մեծություն է եղել, թեև արտահանման ծավալների ավելացման հիմնախնդիրը մշտապես գտնվել է կառավարության ուշադրության կենտրոնում:

Հեղինակները, ելնելով ՀՀ-ում էլեկտրաէներգիայի արտադրության և արտահանման համեմատական վերլուծությունից, ցույց են տալիս, որ այն կարող է դառնալ արտահանման ավելացման կարևոր ուղի, ինչը նկատելիորեն կնվազեցնի զուտ արտահանման բացասական մեծությունը և դրանով իսկ իրական հնարավորություններ կստեղծի արտաքին առևտրի բարելավման գործում:

ВОЗМОЖНОСТИ ЭКСПОРТИРОВАНИЯ ЭЛЕКТРОЭНЕРГИИ В РА

Ашот Маркосян, Элянора Матевосян

Резюме

На величину ВВП любой страны непосредственно влияет величина чистого экспорта (которая равна разнице объемов экспорта и импорта). Так, если чистый экспорт страны является отрицательной величиной, то ровно на эту величину

уменьшается и ВВП страны, и, наоборот, при положительном чистом экспорте на такую же величину увеличивается и ВВП. Нетрудно предположить, что основной целью внешнеэкономической деятельности страны должно стать превышение объемов экспорта по отношению к импорту. Такая задача наиболее остро стоит перед Республикой Армения, поскольку из анализа статистических данных о внешнеэкономической деятельности за 1995-2016гг. следует, что величина чистого экспорта в течение всего исследуемого периода оставалась отрицательной, хотя проблема увеличения экспорта неизменно находилась в центре внимания правительства РА.

Авторы статьи, исходя из результатов сравнительного анализа производства и экспорта электроэнергии в РА, показывают, что увеличение экспорта электроэнергии может стать одним из основных путей увеличения объемов экспорта из республики, что в свою очередь позволит значительно сократить отрицательное значение чистого экспорта и улучшить ситуацию, сложившуюся в сфере внешней торговли.

OPPORTUNITIES FOR EXPORTING ELECTRICITY FROM THE RA

Ashot Markosyan, Elyanora Matevosyan

Resume

The amount of GDP of any country is directly affected by the value of its net exports (which is the difference between the volumes of exports and imports). Thus, if the net exports value for a country is negative, then exactly this amount decreases the country's GDP, and vice versa, with a positive net export, GDP also increases by the same amount. It then follows that the main goal of foreign economic activity of the country should be the excess of exports in relation to imports. This issue is most acute for the Republic of Armenia, since the analysis of statistical data on foreign economic activity for 1995-2016 indicate that the value of net exports remained negative throughout the entire period under study, although the problem of increasing exports was constantly in the attention focus of the Government of the Republic of Armenia.

Based on the results of a comparative analysis of electricity production and exports in the Republic of Armenia, the authors show that an increase in electricity exports can become one of the main ways to increase exports from the country, which in turn will significantly reduce the negative value of net exports and improve the situation in the area of foreign trade.

ՀՏԴ 378.1

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ռոբերտ Խաչատրյան, Ֆրիդա Հակոբյան***

Բանալի բառեր ՝ կրթություն, կրթական անվտանգություն, ազգային անվտանգություն, կրթության գործառույթներ, գրագիտություն, ֆունկցիոնալ գրագիտություն, գրագիտության ցուցանիշներ, «ուղեղների արտահոսք»:

Ցանկացած պետության և հասարակության կայուն զարգացումը պայմանավորված է ազգային անվտանգության ապահովմամբ, ուստի այն կենսական նշանակություն ունեցող խնդիրներից է: Ազգային անվտանգությունը ենթադրում է պետության կայուն զարգացման ապահովման նպատակով կենսագործունեության տարբեր ոլորտներում անհատի, հասարակության և պետության կենսական շահերի պաշտպանվածությունն արտաքին և ներքին սպառնալիքներից: Այսպիսով, ազգային անվտանգությունը ենթադրում է արտաքին և ներքին մարտահրավերների ու սպառնալիքների պայմաններում մի շարք գործընթացների և գործողությունների իրականացում՝ ուղղված այդ պետության տարածքային ամբողջականության պահպանմանը, անկախության ու ինքնիշխանության ապահովմանը, տնտեսության բնականոն զարգացմանը, շրջակա միջավայրի պաշտպանությանը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, ինչպես նաև մարդու իրավունքների, ազատությունների, հասարակական այլ հարաբերությունների պահպանմանը՝ հիմնվելով ազգային ու սոցիալական արժեքների, կրթության, գիտության, մշակույթի վրա: Մյուս կողմից՝ ազգային անվտանգությունը նպատակաուղղված է առկա ռեսուրսների հնարավորությունների հաշվարկմամբ և իրաչափ օգտագործմամբ քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական, տեխնածին, բնածին, տեղեկատվածին (ինֆոգեն) և այլ բնույթի արտաքին և ներքին սպառնալիքների դիմակայմանն ու հաղթահարմանը:

* Բ.գ.թ., դոցենտ, ԵՊԼՀ կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ, որակի ապահովման կենտրոնի ղեկավար:
** ԵՊԼՀ կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի ասպիրանտ:

Ազգային անվտանգության ապահովման վերաբերյալ բոլոր սահմանումներն ու մոտեցումները կարելի է ներկայացնել երկու հարացույցի շրջանակում՝ պաշտպանվածություն (ապահովվածություն, երաշխավորվածություն) և կայունություն: Պաշտպանվածության հարացույցը ենթադրում է անհատի, հասարակության և պետության կողմից սպառնալիքների կանխատեսում և դրանց կանխարգելմանն ուղղված գործողությունների կազմակերպում և իրականացում, մինչդեռ կայունացման հարացույցը ենթադրում է պետության ներուժի շարունակական զարգացում:

Անվտանգության խնդրի բարդությունով պայմանավորված՝ անհրաժեշտ է անվտանգության բոլոր սուբյեկտների ներգրավվածությունն ազգային անվտանգության ապահովման գործընթացում: Անհատը, հասարակությունը, պետությունը՝ որպես *ազգային անվտանգության սուբյեկտներ,* կանխատեսում են հնարավոր սպառնալիքները և կոչված են ձեռնարկելու վերջիններիս կանխմանն ուղղված հնարավոր մի շարք քայլեր: Ազգային անվտանգության սուբյեկտներն ու այդ սուբյեկտների փոխազդեցությամբ պայմանավորված ժողովրդավարական կենսագործունեության հետևյալ թիրախային տիրույթներն են.

- անհատը, նրա իրավունքներն ու ազատությունները,
- հասարակությունը, նրա ազգային, սոցիալական, նյութական և հոգևոր արժեքները, հասարակական կազմակերպությունները և քաղաքացիական հանրությունը,
- պետությունը, նրա սահմանադրական կարգը, իրավական անվտանգությունը, ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը:

Ազգային անվտանգության բոլոր սուբյեկտները պատասխանատվություն են կրում ազգային անվտանգության, ինչպես նաև դրա առանձին տեսակների և օբյեկտների անվտանգության ապահովման գործընթացների համար: Սակայն պետք է նշել, որ յուրաքանչյուր անհատ միայն մասնակի կարող է մասնակցել ազգային անվտանգության ապահովմանը՝ համակողմանիորեն հաշվի առնելով հասարակության և պետության շահերը: Ազգային անվտանգության ապահովումը պետության հիմնարար գործառույթներից է, և հետևապես պետության գերխնդիրն են դառնում ազգային անվտանգության ապահովմանն ուղղված քաղաքականության մշակումն ու իրականացումը: Պետական (ազգային) անվտանգությունը ենթադրում է և՛ հասարակության, և՛ անհատի անվտանգության ապահովում: Գոյություն ունեն ազգային անվտանգության մարմիններ, որոնք պետության անվտան-

գության միասնական համակարգի բաղկացուցիչ մասն են և իրենց իրավասության սահմաններում ապահովում են անհատի, հասարակության ու պետության անվտանգությունը: ՀՀ ազգային անվտանգության մարմինները կազմված են կենտրոնական և մարզային մարմիններից, սահմանապահ զորքերից, պետական ուսումնական հաստատություններից, հատուկ նշանակության և այլ ստորաբաժանումներից: Եվ քանի որ պետական ուսումնական հաստատությունները նույնպես ներառված են ՀՀ ազգային անվտանգության մարմինների կազմում, հարկ է անդրադառնալ ազգային անվտանգության ապահովման գործընթացում կրթության դերին՝ մասնավորապես ներկայացնելով ազգային անվտանգության տեսակներից կրթական անվտանգության ապահովման գործընթացը:

«Կրթական անվտանգությունը» լիովին նոր իրողություն և հասկացություն է Հայաստանի Հանրապետության համատեքստում: Այն բազմամակարդակ կառուցվածք ունեցող բաղկացուցիչ տարրերի տիրույթ է, որը ներառում է պետության և հասարակության մտավոր, հոգևոր, կրթական և մասնագիտական ներուժի ձևավորման, կուտակված գիտելիքների և կարողությունների, գրագիտության և ֆունկցիոնալ գրագիտության (գիտական, վերլուծական, քննադատական մտքի և ակադեմիական գրագիտության ցուցանիշներ), ինչպես նաև սոցիալական զարգացումն ու հասարակության կրթական պահանջմունքների արդյունավետ բավարարման և ոլորտային խնդիրների, միջավայրային գործոնների վերաբերյալ հասարակության պատրաստվածության ու պետության մարտունակության աստիճանը համակցող համակարգեր: Կրթական անվտանգության ապահովումը ենթադրում է պետության կողմից պլանավորված կրթագիտական գործընթացի կազմակերպում և իրականացում՝ միտված համակարգաստեղծ բնորոշիչների, բաղադրիչների և չափորոշիչների ստեղծմանը, ինչպես նաև ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից կարևոր սոցիալ-քաղաքական, սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային գործառույթների իրականացմանը: Այն կարևորվում է ժամանակակից տնտեսության զարգացման, ինչպես նաև պաշտպանական ներուժի ձևավորման և ամրապնդման գործում՝ ապահովելով երկրի կայուն զարգացումը, ազգային անվտանգությունը, մարտունակությունը, պաշտպանությունն ու երկրի մրցունակությունը: Ներկայում կրթության համակարգի արդյունավետ կիրարկումը կրթական անվտանգության գլխավոր մարտահրավերներից է:

Կրթությունը պետության կարիքների բավարարմանն ու ազգային անվտանգության ապահովմանն ուղղված ազգային ռազմավարական

նպատակների առաջնահերթություններից է: Այն նպաստում է պետականության ամրապնդմանը, երկրի ինքնիշխանությանը, ազգային անվտանգության ապահովմանը, պետության ռազմական պատրաստվածությանը: Հարկ է նշել, որ ազգային և կրթական անվտանգության համակարգերը սերտորեն փոխկապակցված են՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հասարակության կենսագործունեության ցանկացած բնագավառ կարևորագույն դերակատարություն ունի ազգային անվտանգության պաշտպանության գործընթացում. հասարակությունն անվտանգության օբյեկտ է, հասարակությունն անվտանգության սուբյեկտ է՝ անվտանգությունն ապահովող միջոց/ռեսուրս, հասարակությունը միաժամանակ տարաբնույթ վտանգներ է ստեղծում և իրականացնում դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Զարգացած երկրներում կրթությունը դիտվում է որպես հասարակության կենսունակության ապահովման կարևորագույն տարր, իսկ պետական կրթական քաղաքականությունը՝ որպես ազգային անվտանգության ապահովման միասնական պետական քաղաքականության բաղկացուցիչ: Կրթական անվտանգության ապահովումը պահանջում է տվյալ հասարակության օբյեկտիվ կարիքների հիման վրա կրթության և գիտության համակարգերի համապատասխան բարեփոխումների իրականացում՝ ի նպաստ պետության և հասարակության սոցիալական կապիտալի վերարտադրման, ինչպես նաև սոցիալ-արտադրական մրցունակության խթանման: Կրթական անվտանգությունը միտված է հիմնական (ընդհանուր) և մասնագիտական կրթության մրցունակության ապահովմանը: Հետևաբար, ազգային անվտանգության ապահովումը նաև պայմանավորված է կրթության բնագավառում պետական քաղաքականության արդյունավետ իրականացմամբ:

Ընդհանուր առմամբ՝ կրթության բնագավառում ՀՀ որդեգրած քաղաքականությունը նպատակաուղղված է կրթության միջոցով պետականության հզորացմանը, հոգևոր արժեքների պահպանմանը, մշակույթի, ավանդույթների, գիտության զարգացմանը, տնտեսական, սոցիալական ու կրթական հիմնահարցերի լուծմանը, որը հնարավոր է բացառապես գիտելիքահենք տնտեսության ու հասարակության հիմքերի ստեղծմամբ, բարձրագույն և շարունակական կրթության համակարգերի հետագա կատարելագործմամբ: Գիտության ոլորտի զարգացման տեսլականը Հայաստանի Հանրապետությունը գիտելիքահենք տնտեսություն ունեցող, հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների մակարդակով մրցունակ երկիր դարձնելն է: Գիտելիքահենք տնտեսության տեսանկյունից կարևոր-

վում են տեղեկատվական նոր տեխնոլոգիաները, նորաստեղծությունը, կրթությունն ու վերապատրաստումը: Երկրի տնտեսության՝ կրթության, գիտության և բարձր տեխնոլոգիաների հենքերի վրա մրցակցային առավելությունների ստեղծումը զարգացման առաջնահերթ նախապայման է: Այդ նպատակներին հասնելու հիմնական նախապայմանն արդյունավետ գիտակրթական համակարգի ձևավորումն է, որը կոչված է ոչ միայն արդիական գիտելիքներ հաղորդելու, այլև ստեղծելու նոր գիտելիքներ և դրանք ծառայեցնելու պետությանը:

Գլոբալացման պայմաններում ձևավորվում են նոր մարտահրավերներ և սպառնալիքներ, որոնք պահանջում են վերանայել պետական քաղաքականությունը կրթության ոլորտում որպես ազգային անվտանգության ռազմավարության բաղադրիչ: ՀՀ զարգացման պետական քաղաքականության մեջ կրթությունը գերակայությունների շարքում շարունակում է մնալ ազգային արժեք և երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացն ապահովող առանցքային գործոն: Հայաստանի կրթության զարգացումն անհրաժեշտ է դիտարկել երկրի ընդհանուր զարգացման, ազգային և պետական անվտանգության ապահովման հետևյալ հիմնական նպատակադրումների համատեքստում՝ անկախ պետականության ամրապնդում և քաղաքացիական հասարակության զարգացում, աղքատության հաղթահարում և բարեկեցության ապահովում, կայուն տնտեսական աճի և մրցակցության ապահովում, հայապահպանություն, միջազգային և տարածաշրջանային համագործակցություն[1]:

Այս նպատակադրումների կատարումն ապահովում է կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքների իրականացման նախադրյալները: Պետք է նշել, որ կրթության նպատակներն իրագործելի են միայն այն դեպքում, երբ ձևավորված է պետական և սոցիալական պահանջարկ անհատի զարգացման, մասնագետների ձևավորման և շարունակական զարգացման նկատմամբ: Այդ պահանջարկի հիման վրա ստեղծվում է կրթության ազգային համակարգը, որը միտված է կապակցելու կրթությունը և ազգային անվտանգությունը, ֆիզիկական անվտանգությունը, հոգևոր անվտանգությունը, տեղեկատվական անվտանգությունը, սոցիալական բարեկեցությունը, պետության տնտեսական մրցակցությունը և գիտելիքների ու նորարարությունների հիման վրա տնտեսության զարգացումը: Մնացյալ դեպքերում կրթության նպատակները մասնակի են իրագործելի, որը հանգեցնում է կրթության՝ որպես սոցիալական ինստիտուտի, ճգնաժամի, որի պայմաններում սոցիալական ինստիտուտը գործում է միայն կա-

[1] ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիր:

ռուցվածքային (ուսումնական հաստատություններ), բայց ոչ գործառական (ֆունկցիոնալ) մակարդակներում: Այս իրավիճակը կրթական անվտանգության տեսանկյունից կարող է հանգեցնել լուրջ խնդիրների և մարտահրավերների կրթության համակարգի բոլոր բաղադրիչների առումով:

Ընդհանուր առմամբ, կրթությունը նկարագրվում է հետևյալ հիմնական բնութագրիչներով. այն դիտարկվում է որպես գիտելիքների, կարողությունների և հմտությունների համակարգված ամբողջություն, որն անհատը ձեռք է բերում ինքնուրույն կերպով կամ ուսումնական հաստատություններում ուսումնառության ընթացքում: Սա անհատի սոցիալական կարգավիճակը նկարագրող ցուցանիշներից է, ինչպես նաև հասարակական համակարգի ինքնակարգավորման մեխանիզմ, հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխության և զարգացման գործոն: Կրթությունը պայմանավորում է հասարակական գիտակցության մակարդակը, հասարակական զարգացումները կառավարելու հնարավորությունները և զարգացման միտումները [1]: Բացի այդ, կրթությունը նաև դիտարկվում է որպես սոցիալական ինստիտուտ, որը կոչված է ապահովելու անհատի մասնագիտական պատրաստումն ու վերապատրաստումը՝ այդ կերպ երաշխավորելով նրա մասնակցությունը և հանրային ներգրավվածությունը հասարակական գործունեության տարբեր բնագավառներում, մասնագիտական, սոցիալական-տնտեսական և սոցիալ-մշակութային խնդիրներ լուծելու կարողունակության ձևավորումը, նոր գիտելիքի ստեղծման ներունակության ապահովումը:

Կրթական անվտանգության ապահովումը նախևառաջ պայմանավորված է կրթության գործառույթների արդյունավետ և փոխկապակցված իրականացմամբ: Մասնագիտական գրականության մեջ կրթության հիմնական գործառույթների դասակարգման վերաբերյալ առկա են մի շարք մոտեցումներ: Հաշվի առնելով *անհատի զարգացման վրա կրթության համակարգի ազդեցությունը* ՝այդ գործառույթների շարքին կարելի է դասել.

- *անհատի սոցիալականացումը,*
- *դաստիարակությունը,*
- *անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և կարողությունների փոխանցումը*:

Ըստ հասարակության վրա կրթության ազդեցության ՝ առանձնացվում են կրթության հետևյալ գործառույթները.

- *սոցիալական* (հասարակության սոցիալական կառուցվածքի վերարտադրություն),

- *մասնագիտական* (հասարակության անդամների մասնագիտական պատրաստման և վերապատրաստման իրականացում),
- *մարդասիրական* (սերնդեսերունդ գիտելիքների և մշակույթի փոխանցում),
- *բարոյահոգեբանական* (արժեքային կողմնորոշում, բարոյական արժեքների փոխանցում և վարքագծի ձևավորում) գործառույթները:

Առանձնացվում են նաև *տնտեսության վրա կրթության ազդեցությամբ* պայմանավորված գործառույթներ՝ մարդկային և ազգային կապիտալի ձևավորում և զարգացում և այլն:

Անհատի, հասարակության և պետության վրա կրթության համակարգի ազդեցությամբ պայմանավորված՝ կրթության հիմնական գործառույթները կարելի է դասակարգել հետևյալ խմբերում.

1. սոցիալ-քաղաքական
- հասարակության անվտանգության ապահովում,
- սոցիալական շարժունություն,
- սոցիալական վերահսկողություն,
- հասարակության կայուն զարգացում,
- համաշխարհային քաղաքակրթության մեջ հասարակության ներառում:

2. սոցիալ-տնտեսական
- հասարակության մտավոր, մասնագիտական և գիտատեխնիկական ներուժի ձևավորում,
- մարդկային և ազգային կապիտալի ձևավորում և զարգացում,
- մասնագիտական միջավայրի ձևավորում,
- մասնագիտական կողմնորոշում,
- սոցիալական ընտրություն,
- տնտեսական ռեսուրսների վերարտադրություն:

3. սոցիալ-մշակութային
- հումանիստական (անհատի սոցիալականացում),
- դաստիարակություն,
- ուսուցում,
- հասարակության մեջ մշակույթի տարածում,
- մշակույթի մեջ նորարարությունների իրականացում,
- արժեքային կողմնորոշում,

- հոգևոր-մշակութային արժեքների փոխանցում,
- սոցիալական պատասխանատվության ձևավորում,
- հասարակական մտածողության ձևավորում:

Այսպիսով, կրթությունն անհատի սոցիալական դերակատարման համար անհրաժեշտ հասարակական վարքագծի ձևավորման բաղադրիչներից և միաժամանակ այն միջոցներից է, որի օգնությամբ անհատը մասնակցում է պետության և հասարակության կենսագործունեության տարբեր բնագավառների և սոցիալական ինստիտուտների գործունեությանը: Այլ կերպ ասած՝ կրթությունը սոցիալական ինստիտուտ է՝ փոխկապակցված հասարակության հիմնական ենթահամակարգերի հետ (տնտեսական, սոցիալական, քաղաքական, մշակութային, հոգևոր և այլն) [2]: Կրթությունը մշտապես սոցիալական շարժունության կարևորագույն գործոններից է, հետևաբար՝ կրթական մակարդակը ոչ միայն անհատի սոցիալական զարգացման նախադրյալ է, այլ նաև հասարակությանն ու պետությանը սպառնացող վտանգների կանխարգելմանն ուղղված միջոց՝ միտված հասարակության անվտանգ զարգացման ապահովմանը:

Կրթության դերը գլոբալ համատեքստում խիստ կարևոր է, քանզի հասարակության կրթության մակարդակով է երաշխավորվում ազգային և համամարդկային արժեքների պահպանումը: Այն էական դերակատարություն ունի անհատի, հասարակության, պետության զարգացման գործընթացներում, այլ կերպ ասած՝ կրթության ընդհանուր և հիմնական նպատակներն են անհատի զարգացումը, նրա անձնային և մասնագիտական ունակությունների բացահայտումը և շարունակական կատարելագործումը, որն անհրաժեշտ է հասարակության կայուն զարգացման և պետության պաշտպանության համար: Կրթության նպատակներից է նաև այնպիսի մասնագետների պատրաստումը, որոնք կարող են հստակ ձևակերպել իրենց բնագավառի հիմնախնդիրներն ու առաջարկել դրանց լուծման իրատեսական տարբերակներ, ինչպես նաև մշակել գիտության և կրթության ինտեգրման համակարգեր ու դրանց զարգացման ներազգային մեխանիզմներ: Մարդկային կապիտալի ապահովման տեսանկյունից կրթությունը հասարակության և երկրի տնտեսական զարգացման առանցքային հիմքերից է: Որակյալ մարդկային կապիտալի ձևավորմանը զուգահեռ՝ կրթությունն ունի նաև կարևոր սոցիալ-քաղաքական և սոցիալ-մշակութային գործառույթներ՝ դառնալով ազգային անվտանգության առանցքային գործոն: Սոցիալ-տնտեսական գործառույթների իրականացման շրջանակնե-

րում կրթության ազգային համակարգը պետք է բավարարի պետությանն անհրաժեշտ մասնագետների և մարդկային կապիտալի պահանջարկը՝ այդ կերպ երաշխավորելով մտավոր անկախությունը հասարակական կյանքի և արտադրության բոլոր փուլերում: Այսինքն՝ կրթական անվտանգության ապահովման համատեքստում կրթությունն անհատական մակարդակում պետք է բավարարի անհատի կրթություն ստանալու պահանջները, իսկ ազգային մակարդակում՝ պետությանն անհրաժեշտ մարդկային կապիտալի ձևավորման պահանջարկը:

Այսպիսով, կրթության գործառույթները պետք է նպատակաուղղված լինեն անհատի ձևավորմանն ու նրա ունակությունների և կարողությունների զարգացմանը, ինչպես նաև հասարակության մտավոր ներուժի ձևավորմանը՝ ի նպաստ պետության կայուն զարգացման: Հետևաբար, կրթության զարգացման ոլորտում էական նշանակություն ունի ներդրումների համակարգի կատարելագործումը: Կրթության համակարգում կատարվող ներդրումներն իրենց ծավալով և նշանակությամբ մարդկային կապիտալի ձևավորման հիմնական գործոններից են: Իսկ բարձրագույն կրթության մեջ կատարվող ներդրումները նպաստում են մրցունակ մասնագետների ձևավորմանը, որոնց բարձր որակավորում ունեցող աշխատանքն առավել մեծ ներգործություն է ունենում տնտեսական աճի տեմպերի վրա. ի տարբերություն արդյունաբերական նյութականացված ռեսուրսի՝ մտավոր ռեսուրսը չի սպառվում, այլ անընդհատ վերարտադրվում է, որը և տնտեսական առումով շարունակաբար կարող է ապահովել բարձր արդյունավետություն: Այսպիսով, «կրթության ոլորտը ներդրումների իրականացման միջավայր է, որը թույլ է տալիս ապահովել տնտեսության բոլոր ճյուղերում աշխատանքի բարձր արտադրողականությունը» [3]: Ըստ էության, կրթության ոլորտում կատարվող ներդրումները միջոցներ են, որ ծախսվում են ապագա եկամուտների ստացման կամ դրանց աճի նպատակով: Հետևաբար, կրթական ծախսերը ներդրումների յուրահատուկ տեսակ են, որ ունեն երկարաժամկետ բնույթ և իրականացվում են որոշակի արդյունքի ստացման նպատակով: Քանի որ մարդկային կապիտալը տնտեսական աճի, ինչպես նաև գիտելիքահենք տնտեսության ձևավորման կարևորագույն գործոններից է, խիստ կարևորվում է կրթության ոլորտում պետական ներդրումների շարունակական աճը:

Կրթության ոլորտը Հայաստանում կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը: Կրթության ոլորտը մարդկային կապիտալի ձևավորման կարևորագույն գործառույթի իրականաց-

մամբ նպաստում է նաև սոցիալական և ազգային մարդկային կապիտալների զարգացմանը, որոնք տնտեսության, հասարակության, ազգային հարստության հիմնական բաղկացուցիչներից են: Ազգային մարդկային կապիտալը ներառում է տվյալ պետության և հասարակության քաղաքական, սոցիալական, տնտեսական կապիտալը, ազգային մտավոր ռեսուրսները, ազգային մրցունակության առավելությունները և ժողովրդի բնական ներուժը: Մարդկային կապիտալը սահմանվում է որպես գիտելիքների, հմտությունների, կարողությունների և շարունակական ինքնազարգացման ամբողջություն, որն անհատը ձեռք է բերում ուսումնառության և աշխատանքային գործընթացներում՝ միտված սոցիալական և մասնագիտական շարժունությանը, ինչպես նաև սոցիալական կապիտալի ձևավորմանը: Սոցիալական կապիտալը նկարագրվում է մարդկանց միջև եղած սոցիալական կապերով և դիտարկվում է որպես մարդկային կենսագործունեության տարբեր բնագավառներում անհատական ռազմավարության իրականացման գործոն [4]: Սոցիալական կապիտալը ռեսուրսների ամբողջություն է, որը դրսևորվում է անհատի կամ խմբի կողմից փոխադարձ ճանաչողության հիման վրա ինստիտուցիոնալացված հարաբերությունների արդյունքում և միտված է հասարակությունում մարդկանց միջև փոխգործակցության որակի և ծավալի աճին ու հիմնարար արժեքների տիրապետմանը:

Կրթության համակարգը, ապահովելով կրթական և մասնագիտական ներուժի վերհանումը և կապիտալի ձևավորումը, ազդում է քաղաքական, տնտեսական, պաշտպանական համակարգերի և ազգային անվտանգության մյուս բաղկացուցիչների վրա: Եվ ճիշտ հակառակը՝ քաղաքական, տնտեսական, ռազմական և մյուս համակարգերը, լինելով հասարակական գործունեության կարևորագույն ոլորտներ, ստեղծում են համապատասխան պայմաններ կրթական ներուժի ձևավորման և զարգացման համար, հետևաբար նաև ազդում են կրթության համակարգի առաջընթացի վրա: Կրթական ներուժը բնութագրվում է որպես պետության ներունակություն, որը ներառում է հասարակության կողմից կուտակված գիտելիքները, հմտությունները, փորձն ու փորձառությունը, ճանաչողական կարողությունները, ինչպես նաև կրթական հաստատությունների փոխհարաբերությունների և նորմերի ամբողջությունը, գիտամանկավարժական կադրերի համակազմը, կրթական ենթակառուցվածքները, կրթության ոլորտի ֆինանսավորման համակարգը, կրթության բնագավառում հարաբերությունների կարգավորման իրավաքաղաքական հիմքերը, որոնք ձևավորում են անհատ, հասարակություն, պետություն բաղադրիչների միջև փոխգործակցության որակը և ծավալը:

Ազգային և կրթական անվտանգության ապահովման համատեքստերում պետական կրթական քաղաքականության գերակայությունները պետք է լինեն հետևյալը՝ հասարակական, ինչպես նաև տնտեսական զարգացման պահանջներին համապատասխան որակյալ կրթության երաշխիքների ապահովումը, կրթության որակի բարձրացման անհրաժեշտ պայմանների ձևավորումը, կրթության համակարգում արդյունավետ տնտեսական կապերի ձևավորումը, ազգային կրթական համակարգը բարձր որակավորմամբ մասնագետներով համալրումը, կրթության սուբյեկտների միջև պատասխանատվության բաշխումը: Թվարկված գերակայություններից յուրաքանչյուրն ունի իր կարևորությունը. դրանք սահմանվում են որևէ խնդրի կարգավորման կամ պետության հեռանկարային զարգացման նպատակով: Գերակայությունների իրականացման շնորհիվ հնարավոր է ոչ միայն վերացնել կրթության ոլորտում առկա բացասական միտումները, այլ նաև ամրապնդել պետության ազգային անվտանգության համակարգն ու ստեղծել բարենպաստ պայմաններ վերջինի զարգացման համար:

Պետական կրթական քաղաքականությունը փոխկապակցված է պետական, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի, գիտամանկավարժական հասարակության գործունեության հետ: Սակայն հարկ է նշել, որ ոչ միշտ են նշյալ օբյեկտների շահերը համընկնում: Այդ պատճառով խիստ կարևորվում են վերջիններիս համապատասխանեցմանն ուղղված հետազոտությունների իրականացումը, կրթության բնագավառում պետական և մասնավոր հատվածների միջև համագործակցությունը: Հասարակական, քաղաքական, սոցիալ-տնտեսական զարգացումներում տեղի ունեցող փոփոխությունները, կրթության միջազգայնացումը, գիտության և կրթության զարգացումը՝ որպես ժամանակի հրամայական, ազգային և միջազգային աշխատաշուկաների պահանջները, նորարարական տեխնոլոգիաների գործուն ներդրումը, տեղեկատվական ռեսուրսների դերակատարության մեծացումը հանգեցնում են մասնագիտական կրթության ոլորտում պետական քաղաքականության վերանայման, կրթության որակի ապահովման, միջազգային չափանիշներին համապատասխան մրցունակ մասնագետների պատրաստման անհրաժեշտությանը:

Պետական կրթական քաղաքականության իրականացման դերակատարներից են պետական ուսումնական հաստատությունները, որոնք ապահովում են ազգային և կրթական անվտանգությանը միտված մի շարք գործառույթների իրականացումը.

- մարդկային կապիտալի կրթվածության բավարար մակարդակի

ապահովում՝ ուղղված տնտեսության զարգացմանը, հասարակության կենսագործունեության տարբեր ոլորտների, ինչպես նաև ազգային անվտանգության համակարգի մասնագետների պատրաստում, ռազմական անվտանգության համար պատասխանատու մասնագետների կրթական բարձր մակարդակի ապահովում,

- հասարակության գրագիտության բավարար մակարդակի ապահովում (նախնական զինվորական պատրաստություն, առողջապահության և անվտանգության դասընթացներ)՝ կանխատեսելով ազգային անվտանգությանը սպառնացող հնարավոր ռազմական վտանգները,
- կրթական գործունեության հետ մեկտեղ հայրենասիրական դաստիարակության իրականացում,
- ֆունկցիոնալ գրագիտության բավարար մակարդակի ապահովում,
- ուսումնական հաստատություններում գիտահետազոտական գործունեության շրջանակներում այնպիսի հետազոտությունների իրականացում, որոնք այս կամ այն կերպ առնչվում են ազգային անվտանգության ապահովմանը,
- տեղեկատվական անվտանգության ապահովմանն ուղղված գիտելիքների փոխանցում, տեղեկատվական միջավայրի պաշտպանվածության վերաբերյալ իրազեկվածության բարձրացում:

Այսպիսով, պետական ուսումնական հաստատությունները, իրականացնելով պետական կրթական քաղաքականությունը, էապես նպաստում են կրթական անվտանգության ապահովմանը. վերջիններս անհատին զինում են գիտելիքներով, հմտություններով, կարողություններով, որոնք անհրաժեշտ են անհատական, ինչպես նաև ազգային անվտանգության ապահովման համար, ձևավորում են անվտանգության ապահովման մշակույթ, պատրաստում, վերապատրաստում, վերառրակավորում են մասնագետներ, որոնք զբաղվում են անվտանգության տարբեր տեսակների ապահովմամբ, ինչպես նաև վերահսկում են տարաբնույթ օբյեկտների անվտանգ գործառությունը:

Անդրադառնալով ՀՀ-ում կրթական անվտանգության ապահովման վրա ազդող բացասական գործոններին՝ հարկ է նշել, որ ընդհանրապես ազգային, ինչպես նաև կրթական անվտանգության համար մեծ սպառնալիք է ՀՀ ժողովրդագրական իրավիճակը, որը տարեցտարի ավելի է վատթարանում արտագաղթի պատճառով. ուսումնասիրելով մշտական բնակչության թվաքանակն ըստ տարիների՝ կարելի է փաստել, որ 2000 թվականից մինչև

2016 թվականը ՀՀ մշտական բնակչության թվաքանակը շարունակաբար նվազել է՝ 3.221.100-ից հասնելով 2.992.500-ի[1]: Այդ սպառնալիքների շարքում կարելի է առանձնացնել «ուղեղների արտահոսքը», որը բացասաբար է անդրադառնում երկրի թե՛ տնտեսության զարգացման և թե՛ կրթության համակարգի արդյունավետության ու մրցունակության վրա [5, էջ 496]:

«Ուղեղների արտահոսք» հասկացությունը սահմանվում է որպես հմուտ և բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող կադրերի արտագաղթ կամ հաճախ նաև՝ մարդկային կապիտալի հոսք: Ուղեղների արտահոսքը մտավոր և տեխնիկական հմտություններով աշխատուժի կորուստ է դեպի ավելի նպաստավոր աշխարհագրական, տնտեսական կամ մասնագիտական միջավայր՝ այդպիսի աշխատուժի տեղաշարժման միջոցով: Ուղեղների արտահոսքը կամ մարդկային կապիտալի արտահոսքը տեխնիկական հմտություններով կամ գիտելիքներով անձանց մեծ արտագաղթն է, սովորաբար՝ բախումների, անբավարար հնարավորությունների, քաղաքական անկայունության կամ առողջության ռիսկերի պատճառով: Ուղեղների արտահոսքը հաճախ կապված է տնտեսական ծախսերի հետ, քանի որ արտագաղթողներն իրենց հետ տանում են ուսումնառության արժեքի մասը, որը ֆինանսավորվել է կառավարության կողմից [6, էջ 399]: «Ուղեղների արտահոսքի» բացասական ազդեցությունն ազգային և կրթական անվտանգության վրա քանակապես դժվար է հաշվարկել: Սակայն հարկ է նշել, որ «որակապես այն կարող է հանգեցնել հայրենական այնպիսի դպրոցների քայքայման, որոնցից շատերը զբաղեցրել և դեռ շարունակում են զբաղեցնել առաջատար դիրքեր համաշխարհային գիտության մեջ (մաթեմատիկա, ֆիզիկա, կենսաբանություն և այլն)» [7], հետևաբար նաև խոչընդոտել երկրի կրթական և գիտատեխնիկական անկախության պահպանման գործընթացին: Բարձրորակ մասնագետների արտագաղթի հետևանքով աշխատաշուկայում աշխատուժի առաջարկը մի շարք մասնագիտությունների գծով փոփոխվում է, վտանգվում է գիտատեխնիկական և մասնագիտական ներուժի զարգացումը: Քանի որ մասնագետների արտագաղթի ընթացքում տեղի է ունենում նաև կապիտալի արտահանում, այն բացասաբար կարող է ազդել պետության տնտեսության զարգացման և սոցիալական բարեկեցության վրա: Բացի այդ, «ուղեղների արտահոսքի» բացասական ազդեցությունը նկատելի է նաև ժողովրդագրական տեսանկյունից: Քանի որ հիմնականում երիտասարդ և բարձրագույն կրթություն ունեցող քաղաքացիներն են հեռանում երկրից՝ արտերկրում

[1] ՀՀ ԱՎԾ, ՀՀ մշտական բնակչության միջին թվաքանակը, http://www.armstat.am

աշխատանք փնտրելու նպատակով, երկրում նկատվում են բնակչության ծերացում, ծնելիության կտրուկ անկում, մահացության գործակցի աճ և բնական վերարտադրության ցածր մակարդակ, որը հանգեցնում է խոր ժողովրդագրական ճգնաժամի:

Այսպիսով, «ուղեղների արտահոսքը» էապես կարող է ազդել երկրի տնտեսական, մասնագիտական և աշխատանքային ներուժի, ինչպես նաև ազգային և կրթական անվտանգության վրա. կրճատվում է աշխատանքային ռեսուրսների մտավոր ներուժը, ազգային տնտեսությունը կորցնում է իր բնակչության առավել ճկուն և մրցունակ զանգվածին, որը հանգեցնում է աշխատաշուկայում կառուցվածքային փոփոխությունների: Որպես հետևանք՝ երկրում նվազում է աշխատանքի արտադրողականությունը, և ընկնում է երկրի մրցունակությունը համաշխարհային շուկայում:

Նշված խնդիրների լուծման և կրթական անվտանգության ապահովման նպատակով պետությունը պետք է համապատասխան միջոցառումներ ձեռնարկի՝ ստեղծելով աշխատատեղեր, նպաստելով որակավորված աշխատուժի ձևավորմանն ու պահպանմանը ներպետական տարածքում, ինչպես նաև «ուղեղների ներհոսքի» կազմակերպմանը: «Ուղեղների արտահոսքի» կանխմանը կարող են նպաստել հիմնարար գիտական հետազոտություններում պետական ներդրումների ապահովումը, կրթության և գիտության ոլորտներում վարձատրության համակարգի վերանայումը, ինչպես նաև ըստ տնտեսության ճյուղերի պահանջների բուհերում դիմորդների ընդունելության կազմակերպումն ու մասնագետների պատրաստումը:

Կրթական անվտանգության կարևորության աստիճանի վերաբերյալ դիրքորոշումները պայմանավորված են յուրաքանչյուր պետության առջև ծառացած խնդիրների բնույթով և կրթության ազգային համակարգի զարգացման որոշակի օրինաչափություններով և պետական շահերով: Այսպես, օրինակ, եթե մտավոր կարողությունների արտահոսքը Հայաստանից ազգային և կրթական անվտանգության ապահովման տեսանկյունից դիտվում է որպես սպառնալիք, ապա մյուս պետությունների համար այդ երևույթը կարող է լուրջ մտահոգություն չառաջացնել. «ուղեղների արտահոսքը» բնորոշ է այն երկրներին, որտեղ բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների պահանջարկն էապես զիջում է առաջարկին, քանի որ բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների համար տվյալ պետության տնտեսության զարգացումները չեն կարող ապահովել համապատասխան զբաղվածություն և բավարար վարձատրություն: Պետք է նշել, որ ՀՀ-ում նույնպես աշխատուժի պահանջարկի և առաջարկի միջև անհամապա-

տասխանության արդյունքում տնտեսապես ակտիվ բնակչության մի մասը դիտվում է որպես աշխատուժի առաջարկի ավելցուկ՝ հանգեցնելով «ուղեղների արտահոսքի»: Որակյալ աշխատուժի և մարդկային ռեսուրսների արտահոսքը սպառնալիք է ՀՀ-ի համար, որն իր զարգացման տեսլականը կապում է գիտելիքահենք տնտեսության ստեղծման հետ: Մինչդեռ, պետք է նշել, որ զարգացած երկրները մշակում և կիրառում են ներհոսքի հատուկ քաղաքականություն որակյալ մասնագետների ներգրավման համար՝ ընդլայնելով նրանց աշխատանքի հնարավորությունները:

«Բարձրորակ մարդկային կապիտալը ժամանակակից տնտեսական զարգացման հիմնական նախապայմանն է, առանց դրա անհնար է երկարաժամկետ հեռանկարում ապահովել կայուն տնտեսական զարգացում: Կրթության համակարգը պետք է լինի բարձր մտավոր և ստեղծագործական ունակություններով օժտված, միջազգայնորեն մրցունակ գիտության և բարձր տեխնոլոգիաների բնագավառի կադրերի պատրաստման պատասխանատուն և երաշխավորը: Կայուն տնտեսական աճը երկարաժամկետ հեռանկարում, ինչպես նաև երկրի արդիականացման աստիճանը և ինստիտուցիոնալ կարողությունների աճը մեծապես պայմանավորված են կրթության ոլորտի բարեփոխումների հաջող իրականացմամբ»[1]:

Հասարակության կրթվածության հիմնախնդիրը որոշիչ է ազգերի ժամանակակից և սոցիալական նշանակություն ունեցող արժեքային համակարգի, հասարակության կողմնորոշվածության, մարդու կողմից իր դերի գիտակցված ընտրության համար: Կրթությունը կոչված է աջակցելու և զարգացնելու հասարակության արժեքային համակարգը: Յուրաքանչյուր երկրի բնակչության գիտելիքներն ու կրթությունը դիտարկվում են որպես մարդկային կապիտալի բաղկացուցիչներ, որոնցով պայմանավորված են ազգային տնտեսությունների գործառություններն ու նորարարությունները: Այդ պատճառով յուրաքանչյուր երկրի կրթական անվտանգության մակարդակը ներկայացնող ցուցանիշների շարքում կարևորվում են հատկապես տվյալ երկրում գրագիտության ցուցանիշները: ՀՀ ԱՎԾ 2015թ. տվյալների համաձայն՝ ՀՀ-ում գրագիտության[2] ցուցանիշներն ու կրթության բնագավառում բնակ-

[1] ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիր:

[2] Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը (*UNESCO*) գրագիտությունը դիտարկում է որպես հասկանալու, սահմանելու, մեկնաբանելու, ստեղծելու, հաղորդակցվելու, համակարգչից օգտվելու հմտությունների ամբողջություն: ՄԱԿ զարգացման ծրագիրը գրագիտության ցուցանիշները դիտարկում է որպես տվյալ պետության մարդկային ներուժի զարգացման գործակցի բաղադրիչ: Գրագիտության ցուցանիշները ներկայացնում են բնակչության ընդգրկվածությունը կրթական համակարգում՝ հաշվի առնելով վերը թվարկված հմտությունների տիրապետումը:

չության համախառն ընդգրկվածությունը հետևյալն է. տարրական (1-4 դասարաններ) - 91.6%, հիմնական (1-9 դասարաններ) - 96.3%, ավագ (10-12 դասարաններ) - 57.9%, միջնակարգ (1-12 դասարաններ) - 86.4%, նախնական մասնագիտական (արհեստագործական) - 7.2%, միջին մասնագիտական - 10.9%, բակալավրիատ - 52.9%, մագիստրատուրա - 12.7%[1]:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում բնակչության զգալի հատվածն ունի գրագիտության բավարար մակարդակ՝ կարդալ և գրելու, քննադատական (հասկանալ, սահմանել, մեկնաբանել), թվաբանական (հաշվել), համակարգչային (համակարգչից օգտվելու ունակություններ պրակտիկ առաջադրանքների իրականացման համար) և հաղորդակցվելու հմտություններ հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում կիրառելու համար, քանի որ միջնակարգ կրթությունն անվճար է և պարտադիր ՀՀ քաղաքացիների համար, այլ կերպ ասած՝ պետությունը ձեռնարկել է բոլոր միջոցառումները՝ ապահովելու համար հասարակության գրագիտության մակարդակը: 2011թ. մարդահամարի տվյալներով՝ Հայաստանի բնակչության միայն 0.3%-ը գրաճանաչ չէ[2]: Իսկ ինչ վերաբերում է ֆունկցիոնալ գրագիտությանը[3], պետք է նշել, որ դեռևս այս ուղղությամբ առկա են մի շարք խնդիրներ, որոնց վերաբերյալ չեն իրականացվում համակարգային գնահատում և վերլուծություններ:

Ի տարբերություն հիմնական կրթության, սովորողների ընդգրկվածությունը միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում և բուհերում համեմատաբար ավելի ցածր է, իսկ աղքատների և ոչ աղքատների ընդգրկվածության տարբերությունը՝ բավական նկատելի: Ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների՝ 2015-2016 ուսումնական տարում ՀՀ բուհերում սովորողների 75.1%-ը ոչ աղքատ տնային տնտեսություններից են, 24.4%-ը՝ աղքատ, և մոտ 0.5%-ը ծայրահեղ աղքատ: Հետևաբար, ՀՀ բուհերում սովորողների մոտ 25%-ը աղքատ և ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններից է, և կարելի է եզրակացնել, որ ՀՀ բարձրագույն կրթության համակարգում հիմնականում ընդգրկված են ոչ աղքատ տնային տնտեսությունների ներկայացուցիչներ, մինչդեռ աղքատ և ծայրահեղ աղքատ բնակչության որոշակի մաս դուրս է մնում բարձրագույն կրթության համակարգից: Վերջինս լուրջ սպառնալիք

[1] ՀՀ ԱՎԾ, Հազարամյակի զարգացման նպատակների ցուցանիշներ, http://www.armstat.am/am/?nid=19

[2] ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, http://www.armstat.am/file/article/poverty_2016a_4.pdf

[3] Ֆունկցիոնալ գրագիտությունը սահմանվում է որպես հենակետային գիտելիքները, հաղորդակցման, համակարգչային, ճանաչողական և գործնական բնույթի այլ հմտությունները կենսագործունեության բոլոր ոլորտներում կիրառելու ընդունակություն:

է թե՛ կրթական, թե՛ ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից: Չնայած 2011թ. հունիսի 30-ին ՀՀ կառավարության ընդունած «ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությունը» նախատեսում էր ուսանողների ֆինանսական աջակցության որոշակի ծրագրերի ներդնում, ինչպես նաև պետություն-բուհ հարաբերությունների շրջանակի վերանայում, հատկապես՝ ուսման վարձերի ձևավորման, ուսանողների ընդունելության հարցերում, պետության համար առաջնային նշանակություն ունեցող մասնագիտությունների պետական քվոտաների տրամադրում, հարկ է նշել, որ դեռևս հիմնախնդրային են աղքատ և միջին խավի, ինչպես նաև սահմանամերձ շրջաններում ապրող բնակչության համապատասխան տարիքային խմբի ներկայացուցիչների ընդգրկվածությունը բարձրագույն կրթության համակարգում, նրանց համար բարձրագույն կրթության մատչելիության բարձրացումը և բուհեր ընդունվելու հավասար հնարավորությունների ստեղծումը:

Տարբերությունները որակյալ կրթության հասանելիության առումով հարուստ և աղքատ տնային տնտեսությունների, քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև հետզհետե դառնում են ավելի նշանակալի: Նշյալ գործոններն, անկասկած, իրենց բացասական ազդեցությունն ունեն կրթական անվտանգության ապահվման գործընթացի վրա, քանի որ կրթության գործառույթները լիարժեք չեն կարող իրականանալ, եթե կրթությունը մատչելի և հասանալի չէ բնակչության բոլոր խավերին: Պետք է փաստել, որ ազգային մակարդակում նշված հիմնախնդիրների վերաբերյալ որևէ համապարփակ ուսումնասիրություն կամ վերլուծություն արված չէ: Մինչդեռ, կրթության համակարգում բնակչության ընդգրկվածության ցուցանիշների նվազագույն շեմի գերազանցումը բացասաբար է ազդում պետության կրթական, ինչպես նաև ազգային անվտանգության ապահովման վրա:

Անդրադառնալով կրթության համակարգում բնակչության ընդգրկվածության հիմնախնդիրների միջազգայնորեն կարգավորմանը՝ պետք է նշել, որ ՄԱԿ-ի կողմից սահմանված Հազարամյակի զարգացման կարևորագույն նպատակներից է ապահովել համընդհանուր տարրական կրթություն մինչև 2015թ., ինչպես նաև վերացնել գենդերային անհավասարությունը[1] կրթու-

[1] Գենդերային անհավասարությունը հասարակական բարիքների և պատասխանատվության անհամաչափ բաշխումն է կնոջ և տղամարդու միջև: Գենդերային հավասարությունը սահմանվում է որպես կանանց և տղամարդկանց հավասար իրավական կարգավիճակ և դրա իրականացման համար հավասար հնարավորություններ, որոնք թույլ են տալիս անձանց, անկախ սեռից, ազատորեն օգտագործել իրենց ունակությունները քաղաքական, տնտեսական սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում մասնակցություն ունենալու համար:

թյան բոլոր մակարդակներում: 2015թ. ցուցանիշների վերլուծությունը փաստում է, որ հանրակրթության մակարդակում գենդերային անհավասարությունն այդքան էլ նկատելի չէ, իսկ կրթության հաջորդող մակարդակներում՝ միջին մասնագիտական, բակալավրիատ, մագիստրատուրա, իգական սեռի ներկայացուցիչների թվաքանակը գերազանցում է արական սեռի ներկայացուցիչների թվաքանակը: Արական սեռի ներկայացուցիչների նվազ թվաքանակը կարող է բացասաբար անդրադառնալ երկրի մարտունակության, հետևաբար նաև ազգային անվտանգության ապահովման գործընթացի վրա: Սակայն պետք է նշել, որ ի տարբերություն կրթության համակարգում ընդգրկվածության ցուցանիշների՝ ՀՀ-ում զբաղվածների կազմում արական սեռի ներկայացուցիչների թվաքանակը ավելի մեծ է. համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2015թ. զբաղվածների կազմում արական սեռի ներկայացուցիչների միջին տարեկան թվաքանակը կազմել է 562.300 (որից 156.500՝ բարձրագույն և հետբուհական կրթությամբ), իսկ իգական սեռինը՝ 510.400 (որից 155.200՝ բարձրագույն և հետբուհական կրթությամբ) մարդ: Նույն թվականի տվյալների համաձայն՝ արական սեռի ներկայացուցիչների զբաղվածության մակարդակը[1] եղել է 59.8%, իսկ իգական սեռինը՝ 43.8%[2]:

Համաձայն ՄԱԿ զարգացման ծրագրի «Մարդկային զարգացման զեկույց 2016»-ի՝ ՀՀ-ում 15-24 տարեկան իգական սեռի ներկայացուցիչների գրագիտության մակարդակը 99.9% է, իսկ արական սեռինը՝ 99.8%[3]: Ըստ այս զեկույցի՝ Հայաստանը ներկայում դասվում է մարդկային ներուժի զարգացման «բարձր մակարդակ» ունեցող երկրների թվին և զբաղեցնում է 84-րդ տեղն աշխարհի 188 երկրների թվում: Երկրի վարկանիշը ենթակա է ամենամյա փոփոխության՝ կախված երկրի զարգացման աստիճանից: Մյուս կողմից՝ երկրի տնտեսական զարգացումը և տնտեսական աճը կախված են մարդկային կապիտալի զարգացման աստիճանից. մարդկային զարգացումը լուրջ նախադրյալ է հասարակության քանակական և որակական առաջընթացի, հետևապես՝ տնտեսական աճի շարունակականության համար: Մարդկային կապիտալը նպաստում է տնտեսության զարգացմանն ու աճին տնտեսական և արտադրական գործունեության բոլոր ոլորտներում, խթանում աշխատանքի որակի ու արդյունավետության բարձրացումը հասարակության կենսագործունեության և կենսապահովման բոլոր ուղղություններում:

[1] Զբաղվածության մակարդակը զբաղվածների տեսակարար կշիռն է աշխատանքային ռեսուրսներում:
[2] ՀՀ վիճակագրական տարեգիրք 2016, http://www.armstat.am/file/doc/99499388.pdf
[3] ՄԱԿ զարգացման ծրագիր, «Մարդկային զարգացման զեկույց 2016», էջ 231, http://hdr.undp.org/en/2016-report

Անդրադառնալով ՀՀ-ում մարդկային կապիտալի ցուցանիշներին՝ հարկ է նաև ներկայացնել մեկ այլ զեկույցի տվյալներ, որոնք, մասնավորապես, վերաբերում են մարդկային կապիտալի կրթությանը, զարգացմանն ու զբաղվածությանը: Ըստ 2016-2017թթ. «Մրցունակության համաշխարհային զեկույցի»՝ Հայաստանն իր մրցունակությամբ 79-րդն է աշխարհի 138 երկրների մեջ՝ նախորդ տարվա համեմատ դիրքը բարելավելով 3 տեղով: Համաձայն այս զեկույցի՝ նախորդ տարիների համեմատ որոշ դրական փոփոխություններ են գրանցվել բարձրագույն կրթության և վերապատրաստման, աշխատաշուկայի արդյունավետության և նորարարությունների բնագավառում[1]: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ այս համաթվի ցածր մակարդակը պայմանավորված է աշխատուժի ցածր ցուցանիշներով և զբաղվածության ապահովման գործընթացում երկրի թերացումներով: Պատճառը գործազրկության, հատկապես երիտասարդների գործազրկության բարձր մակարդակն է, տաղանդների գրավման և պահպանման՝ երկրի սահմանափակ հնարավորությունները, աշխատուժի վերապատրաստման ծառայությունների ցածր որակը և այլն:

Կրթական անվտանգության բաղադրիչներից է նաև լրացուցիչ և շարունակական կրթության ապահովումը: Անընդհատ վերափոխվող և զարգացող աշխարհում առաջադրված նոր մարտահրավերներն անմիջականորեն ուղղված են մարդուն, որի գերակա խնդիրն է դառնում արձագանքել արտաքին միջավայրի փոփոխվող պայմաններին և լինել մրցունակ: Այս տեսակետից, մեկ անգամ հիմնարար կրթություն ստանալն այլևս բավարար պայման լինել չի կարող: Այդ պատճառով էլ զարգացած երկրներում որակավորման բարձրացման ծրագրերի զարգացումը պատասխանն է արագ փոփոխվող և աճող արտադրության պահանջներին: Ուստի առաջ է քաշվում լրացուցիչ և շարունակական կրթության գաղափարը, որը դրվում է ազգային կրթական համակարգերի վերակառուցման և բարեփոխումների հիմքում: Լրացուցիչ և շարունակական կրթության նպատակներից են.

- անձի շարունակական կրթական պահանջմունքների բավարարումը, յուրաքանչյուրի նախասիրություններին ու հետաքրքրություններին համապատասխան հմտությունների ձեռքբերումը, արժեքային համակարգի ձևավորումը,
- մարտահրավերներին դիմակայելու, փոփոխություններին արձագանքելու և հարմարվողականության նպատակով անձի ունակությունների բարձրացումը,

[1] «Մրցունակության համաշխարհային զեկույց, 2016-2017», http://www3.weforum.org/docs/GCR2016-2017/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2016-2017_FINAL.pdf

- հասարակության և նրա անդամների համակողմանի զարգացման համար հոգևոր և սոցիալ-տնտեսական նպաստավոր պայմանների ապահովումը,
- ինտեգրումը լրացուցիչ և շարունակական կրթության միջազգային հանրությանը և զբաղվածության ոլորտների զարգացումներին,
- երկրի մրցունակության ապահովումը՝ աշխատուժի մասնագիտական կարողությունները և հմտությունները աշխատաշուկային համապատասխանեցնելու և զարգացնելու միջոցով:

ՀՀ ԿԳՆ-ի կողմից «ՀՀ լրացուցիչ և շարունակական կրթության մասին ազգային զեկույցի» շրջանակներում կատարված հետազոտության արդյունքում պարզվել է, որ Հայաստանում ոչ ֆորմալ կրթություն իրականացնում են ավելի քան 245 կազմակերպություններ (Երևանում՝ 155, մարզերում՝ 90), որոնք ունեն տարբեր իրավական-կազմակերպական ձևեր: 2010թ. տվյալներով՝ ոչ ֆորմալ ուսուցում է ստացել շուրջ 11 հազար մարդ, որից Երևանում՝ 3150 (կանայք 62%), մարզերում՝ 7850 (կանայք՝ 61%): Ներկայացված ցուցանիշները վկայում են, որ մարզերում ներգրավվածությունն ավելի մեծ է, քան Երևան քաղաքում, ընդ որում՝ Երևանին բնորոշ է ուրբանիզացիայի բավական բարձր մակարդակը, և ենթադրաբար ցուցանիշներն էլ պետք է ավելի բարձր լինեին այստեղ: Սակայն սա կարելի է բացատրել մարզերի բնակչության առավել հետաքրքրվածությամբ կամ Երևան քաղաքում գործող ոչ ֆորմալ կրթություն իրականացնող կազմակերպությունների՝ նաև մարզերում գործունեություն ծավալելու հանգամանքով:

Կրթական անվտանգությունը դիտարկվում է որպես կրթության ոլորտում ազգային շահերի և պետական կարիքների երաշխավորված պաշտպանություն, որը կհամապատասխանի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությանը: Հարկ է նշել, որ գիտելիքահենք տնտեսության ձևավորման գործընթացում բուհերն իրականացնում են արտադրության և ծառայությունների սպասարկման ոլորտների մասնագետների պատրաստում և վերապատրաստում, գիտատեխնիկական բնագավառի կադրերի մասնագիտացում, նորարարական արտադրանքի ստեղծում և վերջինիս գործառության խթանում: Հետևաբար, բարձրագույն կրթությունը նպաստում է մարդկային կապիտալի զարգացմանը, ձևավորում երկրի աշխատանքային ռեսուրսները, դարձնում աշխատանքն ավելի արդյունավետ, բարձրացնում աշխատակիցների կատարողականը, բարելավում մարդու կյանքի որակը, զարգացնում մարդու ստեղծագործ մոտեցումը

աշխատանքի նկատմամբ, բարձրացնում նրա գիտելիքների մակարդակն ու հարստացնում մտավոր պաշարը՝ նպաստելով մարդկային կապիտալի քանակական և որակական աճին: Կրթական անվտանգության ապահովման գործընթացում բարձրագույն կրթության դերը նկարագրելու համար հարկ է նաև ներկայացնել ոլորտը բնորոշող այնպիսի ցուցանիշներ, որոնք առնչվում են բուհերի, դասախոսների և ուսանողների թվաքանակին:

Ներկայում ՀՀ-ում մասնագիտական կադրերի պատրաստումն իրականացվում է պետական և ոչ պետական 60 բուհում: Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1998-2016թթ. ընթացքում ՀՀ բուհերի թվաքանակը բավական նվազել է՝ 98-ից հասնելով 60-ի: Վերլուծելով ցուցանիշները՝ հարկ է նշել, որ 2015-2016թթ. ուսանողների թվաքանակը 96.502 էր, իսկ բուհերինը՝ 60, հետևաբար ՀՀ բուհերում ընդգրկված ուսանողների միջին թիվը 1600 է: Տարիների ընթացքում ՀՀ բուհերի թվաքանակի կրճատումը ենթադրաբար պայմանավորված է բուհերում ընթացող ինստիտուցիոնալ հավատարմագրման իրականացման գործընթացով: Այդ գործընթացը հետապնդում է շարունակական բարելավման քաղաքականություն և նպաստում է մատուցվող կրթական ծրագրերի զարգացմանը, ինչպես նաև թույլ է տալիս գնահատել բուհերի գործունեության արդյունավետությունը, պարզել, թե արդյոք վերջիններս իրականացնում են իրենց առաքելությունը: Ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է ՈԱԱԿ-ի (Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ) կողմից, և այն շնորհվում է որոշակի ժամկետով՝ հավաստելով, որ ուսումնական հաստատությունները կամ կրթական ծրագրերն ունեն անհրաժեշտ կարողություն տվյալ ժամանակահատվածում երաշխավորված որակով կրթական գործունեություն իրականացնելու համար: Պետք է նշել, որ 2014 թվականից ՀՀ-ում սկսված ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի արդյունքում մինչ օրս հավատարմագրվել են 20 պետական և ոչ պետական բուհեր:

Եթե 1998թ. ոչ պետական բուհերի թիվը 80-ից ավելի էր և 5 անգամ գերազանցում էր պետական բուհերի թիվը, ապա հարկ է նշել, որ ուսումնասիրվող տարիներին ոչ պետական բուհերի թիվը նվազել է, իսկ պետական բուհերինը՝ աճել: Ոչ պետական բուհերը, որոնք հիմնադրվել են սկսած 1991 թվականից, ընդլայնել են մասնավոր կրթության ոլորտն ու պահանջարկը, որը ձևավորվում էր հատկապես այն ուսանողների կողմից, որոնք պատրաստ էին վճարել մատչելի և հեշտ ուսումնառության համար: Սակայն վերջին տարիների ընթացքում ոչ պետական բուհերի թիվը

կրճատվել է, ինչը ենթադրաբար պայմանավորված է կրթության ոլորտի վերոնշյալ բարեփոխումներով: Հարկ է նշել, որ ՀՀ պետական և ոչ պետական բուհերի միջև արդյունավետ մրցակցային միջավայրի բացակայությունը նպաստում է ոչ պետական բուհերի կրճատմանը, արդունքում՝ մասնագիտական կրթության արդյունավետ կազմակերպման մենաշնորհը պետական բուհերինն է:

Անդրադառնալով ՀՀ-ում գործող պետական և ոչ պետական բուհերին՝ պետք է նշել, որ կրթության անվտանգության տեսանկյունից կարևորվում են նաև գործող 6 միջկառավարական բուհերը, որոնք պետական և ոչ պետական բուհերից տարբերվում են կրթության կազմակերպման մեթոդներով, կրթության բովանդակությամբ, ֆինանսավորման մեխանիզմներով, զարգացման ուղղություններով և արժեքային համակարգով: Պետական մակարդակում պետք է համապատասխան ուսումնասիրություններ իրականացնել՝ պարզելու համար նշյալ բուհերի կողմից ներկայացվող հնարավոր սպառնալիքները ՀՀ բարձրագույն կրթության համակարգում:

Կրթության ոլորտի բարեփոխումների և զարգացման ծրագրերի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական պատրաստվածությամբ և փոփոխությունների նկատմամբ նրանց պատրաստակամությամբ: Այդ է պատճառը, որ կրթական անվտանգության ապահովման գործընթացում խիստ կարևորվում է նաև նրանց դերակատարությունը: ՀՀ ԱՎԾ-ի կողմից ներկայացված տվյալների ուսումնասիրությունը փաստում է, որ 2000թ. ՀՀ բուհերում 60726 ուսանողին դասավանդել է 11643 դասախոս, իսկ 2015թ. 96502 ուսանող է սովորել, մինչդեռ պրոֆեսորադասախոսական կազմի թիվը եղել է 11197՝ ավելի քիչ, քան 2000թ.:

Սակայն պետք է նշել, որ ուսանողների թվաքանակի փոփոխությունը պարտադիր կերպով չի անդրադառնում դասախոսների թվաքանակի փոփոխության վրա: Օրինակ, 2005-2010թթ. ուսանողների թվաքանակի շարունակաբար աճին զուգահեռ՝ նվազել է դասախոսների թիվը, իսկ 2010-2011թթ., երբ նվազել է ուսանողների թիվը, կտրուկ ավելացել է դասախոսների թիվը: Ցուցանիշների վերլուծությունը փաստում է, որ չի իրականացվում դասախոսական կազմի գործունեության արդյունավետության գնահատում, որով հնարավոր կլինի պայմանավորել դասախոսական կազմի թվաքանակի քանակական և որակական փոփոխությունները: Կրթության ոլորտի բարեփոխումների իրականացման համատեքստում կարևոր է նաև հաշվի առնել բարձրագույն կրթության նկատմամբ պահանջարկը, որի

հիման վրա հնարավոր է դասախոսական կազմում իրականացնել անհրաժեշտ որակական և քանակական փոփոխություններ:

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2007-2011 թվականներն առանձնանում են ՀՀ բուհերում ուսանողների առավելագույն թվաքանակով, որից հետո նվազման միտում է նկատվում, ինչը ենթադրաբար պայմանավորված է ժողովրդագրական բացասական միտումներով: Քննելով ժողովրդագրական բացասական միտումները՝ պետք է նշել, որ լավ կրթված, բարձր որակավորում ունեցող աշխատողների արտահոսքը դեպի այլ երկրներ մեծ ազդեցություն է ունեցել ՀՀ աշխատուժի մասնագիտական և որակական կառուցվածքի, մարդկային կապիտալի կուտակման տեմպերի վրա: Որակյալ աշխատուժի արտահոսքը լուրջ վտանգ է սակավաթիվ ռեսուրսներով պետության համար սոցիալական, ժողովրդագրական, ինչպես նաև ազգային անվտանգության տեսանկյունից, ուստի պետությունը պետք է լուրջ քայլեր ձեռնարկի:

ՀՀ բուհերում դասախոս-ուսանող թվաքանակի հարաբերակցության ցուցանիշը նույնպես բավական ցածր է. 2014թ. այդ հարաբերակցությունը մեկ դասախոսի հաշվով կազմել է 7 ուսանող, 2015թ.՝ 7.5, 2015թ.՝ 7.2[1]: Հարկ է նշել, որ ՏՀԶԿ երկրներում դասախոս-ուսանող հարաբերակցության միջին ցուցանիշը 16 է[2]: Իսկ աշխարհի առաջատար բուհերում ուսանող-դասախոս հարաբերակցության նվազագույն ցուցանիշը 2016թ. եղել է 10.3-ը, իսկ առավելագույնը հասնում է մինչև 28-ի[3]: Ենթադրաբար, ՀՀ-ում բարձրագույն կրթության որակը և արդյունավետությունը պետք է բավական բարձր լինեին՝ պայմանավորված ուսանող-դասախոս թվաքանակի ցածր հարաբերակցությամբ: Սակայն պետք է նշել, որ ՀՀ բուհերում ուսանող-դասախոս թվաքանակի հարաբերակցության ցածր ցուցանիշները դրականորեն չեն անդրադառնում կրթական ծառայությունների և գիտական արտադրանքի որակի վրա:

Ե՛վ կրթությունը, և՛ գիտությունը՝ որպես մարդկային և մասնագիտական կապիտալի ձևավորման համակարգեր, և մարդկային կապիտալն իր ամբողջությամբ դիտվում են որպես տնտեսական աճի և զարգացման,

[1] ՀՀ ԱՎԾ, http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__22%20Education/PS-ED-11-2016.px/table/tableViewLayout2/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a

[2] OECD (2014). Education at Glance: Economic Indicators https://www.oecd.org/edu/Education-at-a-Glance-2014.pdf

[3] University League Table 2016. http://www.thecompleteuniversityguide.co.uk/league-tables/rankings?o=Student-Staff+Ratio&y=2016

հասարակական առաջադիմության և կյանքի որակի բարձրացման գլխավոր գործոններ: Համաշխարհային գիտատեխնիկական և սոցիալ-տնտեսական առաջընթացի արդի փուլին բնորոշ է մարդկային գործոնի դերի և նշանակության աննախադեպ աճը տնտեսության մեջ ու հասարակական կյանքում: Մարդկային կապիտալը դառնում է տնտեսական աճի, ինչպես նաև գիտելիքահենք տնտեսության ձևավորման բացառիկ կարևոր և վճռորոշ գործոն: Մարդկային կապիտալի էական բաղադրիչներից է գիտելիքի կապիտալը: «Գիտելիքի կապիտալը «իմանալ ինչպեսն» է կամ «նոու-հաուն», որն արդյունք է հաստատությունների աշխատողների փորձի, տեղեկատվության, գիտելիքի, ուսումնառության և հմտությունների [3]»:

Ինչպես արդեն նշվել է, բարձրագույն կրթության նպատակներից մեկն անհրաժեշտ հմտություններով և գիտելիքներով աշխատուժ պատրաստելու միջոցով տնտեսության զարգացմանը նպաստելն է: Մինչդեռ, Հայաստանի կրթական ծառայությունների շուկան թույլ է կապված աշխատաշուկայի հետ. կրթական ծառայությունների շուկան համապատասխան չի արձագանքում տնտեսության իրական հատվածի պահանջներին: Այն ունի իր հիմնավորված պատճառները. բացակայում են տնտեսության ճյուղերում աշխատատեղերի կառուցվածքի փոփոխման վերաբերյալ հիմնավորված կանխատեսումները և աշխատանքի շուկայում առաջարկի ու պահանջարկի ուսումնասիրությունները, բուհերն ուղղակի տրամադրում են կրթություն այն մասնագիտությունների գծով, որոնց համար առկա է պետական ֆինանսավորում և, հետևաբար, չեն կարողանում հետևողականորեն ապահովել որակյալ շրջանավարտներ աշխատաշուկայի համար: Գիտելիքահենք տնտեսության ձևավորման համատեքստում կարևորվում է մասնագիտությունների համապատասխանեցումը տնտեսության և աշխատաշուկայի պահանջներին՝ հաշվի առնելով տնտեսական փոփոխություններն ու զարգացումները:

Նշյալ մի շարք հիմնախնդիրների առկայությունը ենթադրաբար կարելի է պայմանավորել այն իրողությամբ, որ կրթական համակարգը դեռևս գտնվում է կառուցվածքային, բովանդակային և կառավարչական բարեփոխումների փուլում՝ միտված տնտեսության և աշխատանքի շուկայի կարիքներին համահունչ մասնագիտական կրթության և ուսուցման կազմակերպմանը: Այս առումով ՀՀ կառավարության գերակա խնդիրն է՝ նախ նպաստել ժամանակակից տնտեսության պահանջներին համապատասխան որակապես նոր հիմքի վրա մարդկային կապիտալի ձևավորմանն ու զարգացմանը, իսկ այնուհետև բարենպաստ պայմաններ ստեղծել նրա արդյունավետ

օգտագործման համար: Դա հնարավոր է մրցունակ կրթական համակարգի, մարդու ինքնազարգացման և ինքնադրսևորման համար անհրաժեշտ երաշխիքների ստեղծմամբ, մրցունակ մասնագետների պատրաստմամբ, ինչպես նաև բնակչության արդյունավետ զբաղվածության մակարդակ ապահովող տնտեսական քաղաքականության մշակմամբ և իրականացմամբ:

Հայաստանի գիտակրթական ընդհանուր ներուժը, ուսումնական և գիտահետազոտական հաստատությունները, կրթության բնագավառում ազգային ավանդույթները, բարձր որակավորում ունեցող մասնագետներով ապահովվածությունը կարող են հիմնավոր նախադրյալներ ստեղծել ՀՀ կրթական անվտանգության ապահովման համար: Ակնհայտ է, որ կրթության համակարգի արդյունավետության ցածր ցուցանիշները և կրթական անվտանգության կարևորության թերագնահատումն անխուսափելիորեն բազմաբնույթ ճգնաժամերի, ինչպես նաև հոգևոր և բարոյական արժեքների անտեսման պատճառ կարող են դառնալ՝ բացասաբար ազդելով երկրի ազգային անվտանգության վրա: ՀՀ ազգային և կրթական անվտանգության տեսանկյունից առկա մարտահրավերների լուծման ուղին գիտության և կրթության համակարգված զարգացումն է, հասարակության հիմնախնդիրների լուծման նպատակով կրթության զարգացման, շարունակականության, հաջորդականության և արդյունավետության ապահովումը:

Հետևաբար, հարկ է իրականացնել կրթական անվտանգության ապահովմանն ուղղված հետևյալ փոխկապակցված քայլերը.

- Հստակեցնել ՀՀ որակավորումների ազգային շրջանակին համապատասխան պետական կրթական չափորոշիչները՝ ուղղված կրթական տարբեր մակարդակներում ուսումնառողների կողմից այնպիսի գիտելիքների և հմտությունների ձեռքբերմանը, որոնք անհրաժեշտ են ազգային անվտանգության ապահովմանը: Ազգային անվտանգության ապահովման համար խիստ կարևոր է հասարակության շրջանում տարբեր ոլորտների (մշակույթ, տնտեսություն, գիտություն, կրթություն, քաղաքականություն) վերաբերյալ գիտելիքների համակցումը, ինչպես նաև ընդհանրական և մասնագիտական հմտությունների տիրապետումը (քննադատական մտածողություն, համակարգչային գրագիտություն, բանավոր և գրավոր խոսքի հմտություններ): Ժամանակակից կրթության հիմքում ընկած են հասարակության պահանջները և գիտությունների ու տեխնիկայի առաջանցիկ միտումները: Առանց կրթության բովանդակության իրականացման չի կարող լինել մտավոր ներուժի և կարողությունների ու հմտությունների զարգացում, զարգա-

ցած հասարակություն, գիտությունների, տեխնիկայի և տնտեսության առաջընթաց: Ուստի հիմք ընդունելով պետական կրթական չափորոշիչները՝ կրթության մշակված բովանդակությունը (չափորոշիչներ, ծրագրեր, դասագրքեր) պետք է ներառի ազգային և կրթական անվտանգության ապահովման գործընթացի կազմակերպման վերաբերյալ հիմնական դրույթներ, ինչպես նաև համապատասխանի ՀՀ-ում կրթական անվտանգության ապահովման պահանջներին;

- Գնահատել բուհերի գործունեության արդյունավետության և կրթական գործընթացների ու ծրագրերի որակը՝ հիմնված ինստիտուցիոնալ ձեռքբերումների և հաստատության շրջանավարտների մասնագիտական հաջողությունների վրա: Խիստ կարևոր է կրթական հաստատությունների գործունեության արդյունավետության գործընթացում հաշվի առնել, թե բուհն ավարտելուց հետո քանիսն են իրենց մասնագիտությամբ աշխատանք գտնում: Քանի որ տնտեսության վերարտադրության համակարգում զգալի է բարձրագույն կրթության դերը, շատ կարևոր է վերլուծել տնտեսության գերակա ոլորտներում համապատասխան մասնագիտություններով ուսանողների ներգրավվածության և զբաղվածության ցուցանիշները՝ պարզելու համար ապագայում առանձին մասնագիտություններով շրջանավարտների պոտենցիալ պահանջարկը տնտեսության մեջ;
- Մշակել «կրթական անվտանգություն» հասկացութային հենք, պետական կրթական հայեցակարգ և իրականացնել նմանատիպ քաղաքականություն, որոնք հստակ կսահմանեն կրթության ցուցանիշների ներկայացման և հասարակության շրջանում իրազեկվածության ապահովման պատասխանատուներին;
- Կրթության բարեփոխումների իրականացման համատեքստում ապահովել կրթական համակարգի բաղադրիչների շարունակական զարգացումը;
- Բարձրացնել մասնագիտական կրթության որակը և համապատասխանեցնել այն աշխատաշուկայի պահանջներին;
- Բարձրացնել կրթության մատչելիությունն ու ապահովել հասանելիությունը հասարակության տարբեր սոցիալական խմբերի համար, ստեղծել հավասար հնարավորություններ, զարգացնել լրացուցիչ և շարունակական կրթություն ստանալու հնարավորությունները տարիքային տարբեր խմբերի ներկայացուցիչների համար;

- Ապահովել կրթության և գիտության բնագավառների բարձր որակավորում ունեցող կադրերի թվաքանակի կայուն աճ, միաժամանակ նպաստել «ուղեղների ներհոսքին»:

Հոկտեմբեր, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Михалёв Ю.А.,* Национальная государственная образовательная политика РФ как фактор укрепления национальной безопасности, Вестник МГЛУ, №2 (662), 2013.
2. *Смирнова Н.В.,* Структурно-функциональные характеристики образовательного процесса, М., 2002.
3. *Аветисян П.С.,* Образование в контексте национальной безопасности Российской Федерации и Республики Армения, Вестник Российско-Армянского (Славянского) университета, 2008.
4. *Попова* И., Образование - человеческий и социальный капитал молодежи. Высшее образование в России, № 10, 2007.
5. *Խաչատրյան Ռ., Հակոբյան Ֆ.,* Մասնագիտական հայրենադարձության կարգավորումը որպես Հայաստանի Հանրապետությունում կրթական անվտանգության ապահովման բաղադրիչ, ԵՊԼՀ, Բանբեր 2(39), 2017, էջ 496:
6. *Վարդանյան Գ.,* Գիտելիքահենք տնտեսություն, Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտությունների հրատարակչություն, 2008:
7. *Գալստյան Ա.,* Ուղեղների արտահոսքը և աշխատանքի շուկան, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», 11(37), 2011:
8. *Котова Н.С., Есенская Т.В.,* Образовательная безопасность как базовый компонент системы национальной безопасности России, Ученые записки СКАГС, №3, 2015.
9. *Плотников Н.В.,* Проблемы обеспечения экономической безопасности высшего образования на современном этапе. Экономика и экологический менеджмент, №3, 2015.

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ռոբերտ Խաչատրյան, Ֆրիդա Հակոբյան

Ամփոփագիր

Կրթական անվտանգությունը կարևորվում է տնտեսության կայուն զարգացման, պաշտպանական ներուժի ձևավորման և ամրապնդման, ազգային անվտանգության, երկրի մրցունակության ապահովման, պետության և հասարակության մտավոր, հոգևոր, աշխատանքային ներուժի ձևավորման և զարգաց-

ման, բնակչության գրագիտության և ֆունկցիոնալ գրագիտության ապահովման տեսանկյունից: Հոդվածի հիմնական նպատակն է ներկայացնել բարձրագույն կրթության դերը կրթական անվտանգության ապահովման գործընթացում՝ վերլուծելով ՀՀ բարձրագույն կրթության համակարգը բնութագրող հիմնական ցուցանիշներն ու վերջին տարիների ընթացքում դրանցում եղած փոփոխությունները և վերջինի ազդեցությունը կրթական անվտանգության ապահովման գործընթացի վրա: Բարձրագույն կրթությունը նպաստում է մարդկային կապիտալի զարգացմանը, ձևավորում երկրի աշխատանքային ռեսուրսները, դարձնում աշխատանքն ավելի արդյունավետ, բարձրացնում աշխատակիցների կատարողականը, բարելավում մարդու կյանքի որակը, զարգացնում մարդու ստեղծագործ մոտեցումն աշխատանքին, բարձրացնում նրա գիտելիքների մակարդակն ու հարստացնում մտավոր պաշարը՝ նպաստելով մարդկային կապիտալի քանակական և որակական աճին:

РОЛЬ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ В ПРОЦЕССЕ ОБЕСПЕЧЕНИЯ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

Роберт Хачатрян, Фрида Акопян

Резюме

Образовательная безопасность важна с точки зрения устойчивого экономического развития, формирования и укрепления оборонного потенциала, национальной безопасности, конкурентоспособности страны, формирования и развития интеллектуального, духовного и трудового потенциала государства и общества, грамотности и функциональной грамотности населения. Основная цель статьи - представить роль высшего образования в процессе обеспечения образовательной безопасности, проанализировать основные показатели, характеризующие систему высшего образования РА, и изменения, которые произошли за последние годы, и его влияние на процесс обеспечения образовательной безопасности. Высшее образование способствует развитию человеческого капитала, формирует трудовые ресурсы страны, улучшает занятость и качество жизни людей, развивает творческий подход к работе, повышает уровень знаний и обогащает интеллектуальные ресурсы, способствует количественному и качественному росту человеческого капитала.

THE ROLE OF HIGHER EDUCATION IN THE PROCESS OF ENSURING EDUCATIONAL SECURITY

Robert Khachatryan, Frida Hakobyan

Resume

Ensuring educational security is crucial for the country's stable economic development, national security, national competitiveness, country's intellectual, spiritual and workforce potential, literacy and functional literacy of the population. The main objective of this article is to present the role of higher education in the process of ensuring educational security by analyzing main indicators characterizing the higher education system, changes occurring in recent years and their effects on the process of ensuring educational security. Higher education contributes to the development of human capital and workforce, enhances their performance, improves the quality of life, advances the level of creativity in work, and enriches human knowledge, resulting in quantitative and qualitative development of human capital.

ՀՏԴ 001.89:316.66 (4)

ԵՐԵՎԱՆԱԲՆԱԿ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ[1]

Արթուր Աթանեսյան[*], *Նվարդ Մելքոնյան*[**], *Լիլիթ Իսկանդարյան*[***], *Արմեն Խաչիկյան*[****]

Բանալի բառեր ՝ միջմշակութային հաղորդակցում, «ուրիշի կերպար», ազգային ինքնություն, հայաստանյան երիտասարդություն, Եվրոպա, եվրոպացիներ:

Հիմնախնդրի էությունը

Եվրոպայի հետ Հայաստանի դարավոր կապերը և քաղաքակրթական սերտաճվածությունը պայմանավորում են նաև ՀՀ-ԵՄ ժամանակակից փոխհարաբերությունները, որոնք 2010 թվականից ի վեր զարգանում են «Արևելյան գործընկերություն» ծրագրի շրջանակներում: Միևնույն ժամանակ, Հայաստանի և եվրոպական տարբեր պետությունների միջև տնտեսական, գիտական և կրթական, մշակութային, մարզական և այլ տիպի փոխհարաբերություններն իրականացվում են միջանձնային և խմբային մակարդակներում՝ ներառելով առանձին անհատների, խմբերի, պետական և հասարակական կազմակերպությունների:

Եվրոպացիների հետ հայաստանցիների միջմշակութային հաղորդակցման տարբեր ինտենսիվությունը՝ առանձին սոցիալական խմբերի ներառվածությամբ, այդ հաղորդակցման դրդապատճառները, փոխադարձ ընկալումները, շփման ընթացքում կարծրատիպերի ձևավորումն ու փո-

---

[1] Հոդվածը պատրաստված է ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի 15ՐԳ-20 «Երիտասարդության շրջանում Եվրոպայի ընկալումն արդի աշխարհաքաղաքական փոխակերպումների համատեքստում (Կրասնոդարի և Երևանի օրինակներով)» դրամաշնորհի շրջանակներում:

[*] Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ:

[**] Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ:

[***] ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի մագիստրանտ:

[****] ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի ասպիրանտ:

խակերպումը և մի շարք այլ հարցեր խիստ արդիական են՝ հասկանալու համար ՀՀ-ԵՄ փոխհարաբերությունների սոցիալական բնույթը, մարդկային չափման որակը:

Միջմշակութային հաղորդակցման անկյունաքարային եզրույթներից է «ուրիշի» («օտարի») կերպարը, որը նկարագրում է տարբեր մշակույթներ ներկայացնողների ինքնընկալումը՝ զրուցակցի տարբերությունների հաշվառմամբ, զրուցակցի օբյեկտիվ և սուբյեկտիվ տարբերությունների գնահատմամբ և մյուսների հետ հարաբերությունների սահմանազատմամբ: «Ուրիշի» («օտարի») կերպարի հիմնախնդիրներին են նվիրված Մ.Ֆուկոյի, Գ.Զիմելի, Ա.Շյուտցի, Լ.Հարությունյանի և այլոց աշխատությունները[1]: «Ուրիշի» և «օտարի» կերպարները կարող են ունենալ բարեկամության/թշնամանքի տարբեր աստիճաններ[2] և նկարագրվում են «միջմշակութային հեռավորություն» եզրույթով[3]:

Այս իմաստով կարևորվում է նաև «նշանակալի ուրիշի» երևույթը, որի տակ հասկանում են անձի սոցիալականացման ընթացքում իր վրա էական ազդեցություն ունեցած, իր զարգացումը պայմանավորող հեղինակավոր մեկ «ուրիշին»[4]: Հետաքրքիր է նկատել, որ «նշանակալի ուրիշի» սահմա-

[1] *Фуко М.,* История безумия в классическую эпоху, СПб., 1997; *Зиммель, Георг,* Человек как враг // «Социологический журнал», № 2, 1994. С. 114-119; *Шютц, Альфред,* Смысловая структура повседневного мира: очерки по феноменологической социологии, М., Институт Фонда «Общественное мнение», 2003; *Լ.Արտյոնյան,* Сто лет спустя: перспективы отрицания геноцида армян, «Բանբեր Երևանի պետական համալսարանի», «Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն» 133.5, Երևան, 2011թ., էջ 11-19:

[2] «Ուրիշի» կերպարն անհատի գիտակցության դիրքորոշումն է՝ կապված սոցիալական և քաղաքական տարածությունում նրա ինքնորոշման հետ, որի հիմքն է այնպիսի անձանց, խմբերի, ինստիտուտների առանձնացումը, որոնք օժտված են այդ անձի համար նման կամ տարբերվող բնութագրիչներով և ուրվագծում են անձի ինքնությունների սահմանները: Սահմանումը կիրառելի է նաև խմբերի ինքնագիտակցության և այլ խմբերի հետ տարբերությունների սահմանագծման գործընթացին: Ուրիշի կերպարը կարող է իրացվել 2 տարբեր մոդելով՝ 1) քաղաքական հանդուրժողականության, որը կարելի է նկարագրել «Ես-Ուրիշ-Այլ» բանաձևի միջոցով և 2) անհանդուրժողականության մոդելը՝ ներկայացված «Ես-Ուրիշ-Օտար-Թշնամի» բանաձևով: Տե՛ս, օրինակ՝ Политическая идентичность и политика идентичности. В 2 т. Т.1; Идентичность как категория политической науки: словарь терминов и понятий /Отв. ред. И.С. Семененко, М., РОССПЭН, 2011; Морозова Е.В., Образ Другого/Чужого в формировании внешнеполитической идентичности (Обзор литературы)// Историческая и социально-образовательная мысль, 2016; 8 (6/2).

[3] Տե՛ս, օրինակ՝ Межкультурная дистанция и межкультурный диалог в истории и современности: материалы открытого регион. молодеж. науч. форума, Изд-во Самар. науч. центра РАН, 2008, *Morosini, P., Shane, s., & Singh, H.,* National Cultural Distance and Cross-Border Acquisition Performance. Journal of international business studies, 29 (1), 1998, 137-158, Raza, G., Singh, S., & Dutt, B. Public, Science, and Cultural Distance. Sage Journals, 23(3), (2001), pp. 293-309.

[4] «Նշանակալի ուրիշ» (անգլ. significant other) հասկացությունը առաջին անգամ կիրառել է ամերիկյան հոգեբույժ Հարի Սալիվանը (*Sullivan*, 1892-1949): Այդ մասին տե՛ս, օրինակ՝ Web.: http://psychology.academic.ru.

նումները ներառում են տարբեր չափանիշներ, որոնք նկարագրում են այդ «ուրիշի» հետ հարաբերությունները, մասնավորապես՝ որպես առանձնապես ինտենսիվ և բացառիկ, կենսագրության մեջ շատ նշանակալի իրադարձություններով հագեցած, և այլն[1]: Մեկ այլ պետության, տարածաշրջանի կամ կազմակերպության՝ որպես «նշանակալի ուրիշի» ընկալումը կարող է բնութագրվել որպես ազգային ինքնությունն ու քաղաքականությունն էապես պայմանավորող, այն պատմականորեն և արդի պայմաններում ուղղորդող և կամ էլ որոշակի արժեքավոր փորձ փոխանցող:

Ազգային ինքնության տեսանկյունից Եվրոպայի ընկալումը կարող է ծառայել որպես «յուրայինի», «ուրիշի» կամ «օտարի» կերպարի ձևավորում՝ սեփական «Ես»-ի սահմանազատման, Եվրոպայում կամ Եվրոպայից դուրս սեփական ինքնության սահմաններն ընկալելու, այդ ընկալումների հիման վրա ազգային զարգացման ուղենիշներ մշակելու և արտաքին քաղաքական ռազմավարություններ կառուցելու տեսանկյունից:

Սույն հետազոտության տեսանկյունից հատկապես կարևորվել են ազգային, էթնիկ, քաղաքացիական ինքնության հասկացությունները[2]: Պետության կերպարը հասարակական ընկալումներում և սոցիալական հաղորդակցություններում ուսումնասիրվել է Ե.Շեստոպալի, Ա.Աթանեսյանի, Տ.Պիսչևայի, Ն.Վինոգրադովայի, Ա.Նեդովայի, Ն.Մելքոնյանի և այլոց կողմից[3]:

Եվրոպայի կերպարն ու դրա արտացոլումը հետխորհրդային հասարակություններում վերջին տարիներին քննարկվել է Լ.Անդրեևի, Մ.Գորշ-

[1] Տե՛ս, օրինակ՝ *Кондратьев М.Ю.,* «Значимый другой»: слагаемые межличностной значимости //Социальная психология и общество, № 2/2011, сс. 17-28, http://psyjournals.ru/files/42338/social_psy_2011_n2_Kondratyev.pdf

[2] Տե՛ս, օրինակ՝ *Goffman, Erving,* The Presentation of Self in Everyday Life. University of Edinburgh Social Sciences Research Centre, 1959; *Beck, Ulrich,* The Reinvention of Politics. Rethinking Modernity in the Global Social Order. Cambridge: Polity Press, 1996; *Хабермас Ю.*, В поисках национальной идентичности: Философские и политические статьи, Донецк, Донбасс, 1999; *Ачкасов В.А.,* Запад как "значимый другой" России // Консерватизм и либерализм: история и современные концепции: Материалы международной научной конференции 15 февраля 2002г. / ред. А.С. Карцов, СПб., Издательство С.-Петербургского университета, 2002; *Мкртичян А.Е.*, Хаос как системообразующий механизм самоорганизации социума, Изд. ЕГУ, Ереван, 2008.

[3] *Атанесян А.,* «Публичная политика и технологии современной политической риторики» // Бюллетень Научно-образовательного фонда Нораванк, 2005, N 10 (16), с. 72-100; *Атанесян А.,* «Коммуникативно-психологические аспекты конфликта идентичности» //Психология и жизнь, 2005, N 4, сс. 74-78; Образы государств, наций, лидеров / Под ред. Е.Б. Шестопал, М., 2008., *Մելքոնյան Ն.,* Քաղաքական իմիջ. մեկնաբանություններ և ձևավորման սկզբունքներ: Դասընթաց հասարակագետների համար, Ե., ԵՊՀ հրատ., 2007; *Мелконян Н.,* Социологические исследования как условие эффективности технологий политического имиджмейкинга, Социология и право, №2 (13), Санкт-Петербург, 2012, *Т.Н. Пищева, Н.С. Виноградова, А.Д. Недова*, Образ России под углом зрения политических коммуникаций, Полис, Политические исследования, №4, 2010.

կովի, Պ.Շուլցեի, Վ.Պետուխովի, Ա.Զդրավոմիսլովի, Ե.Պախոմովի, Ե.Կոֆանովի, Ն.Սեդովի, Ֆ.Շերեգիի, Ն.Մելքոնյանի աշխատություններում[1]:

Այս իմաստով առավել արդիական է հայաստանյան երիտասարդների՝ Եվրոպայի հանդեպ կողմնորոշումների առանձնահատկությունների բացահայտումը[2], ինչը թույլ կտա ոչ միայն հասկանալ հայաստանյան հասարակության մակարդակում մարդկանց քաղաքական գիտակցության վրա ազդող սոցիալական, քաղաքական, տեղեկատվական գործոնների բնույթը, այլև կանխատեսումներ անել եվրոպական ուղղության վերաբերյալ սոցիալական ամենաակտիվ խմբի՝ երիտասարդների դիրքորոշումների վերաբերյալ: ՀՀ արտաքին քաղաքականության իրականացման բազմաբևեռ բնույթն առավել քան արդիական է դարձնում ԵՄ-ի հետ ՀՀ համագործակցության խթանման մեխանիզմների և նոր հնարավորությունների բացահայտումը:

Այսպիսով, սույն հետազոտության ընթացքում շեշտադրվել է հայաստանյան երիտասարդների՝ «Եվրոպայի» և «եվրոպացիների» մասին ընկալումներում «յուրայինի», «ուրիշի», «օտարի» կերպարի ընկալման առանձնահատկությունների բացահայտումը: Այս առանձնահատկությունները հատկապես կարևորվում են ազգային ինքնության սահմանների բնորոշման տեսանկյունից և պայմանավորում սեփական հավաքական «ես»-ի առանձնացումը «ոչ-ես»-ից՝ համապատասխան նմանությունների և տարբերությունների մասին կարծրատիպային պատկերացումների ձևակերպմամբ: Հետազոտության ընթացքում որպես վարկած առանձնացվել է այն հարցադրումը, թե արդյոք «Եվրոպան» և «եվրոպացիները»՝ հայաստանյան երիտասարդների ընկալմամբ, իրենց և Հայաստանի համար «նշանակալի ուրիշ» են և կարևորվում են իրենց դերով արդի հայաստանյան հասարակության փոխակերպումներում[3]:

[1] *Melkonyan, N., Prots, T., Mramornova, O.,* Construction and Representation of the "Image" of Europe in the New Eastern Europe Countries Mass Media. (After the example of Armenian and Ukrainian print press), Bulletin of Yerevan State University, 138.5, Yerevan, 2012; *Горшков М.К.,* Национальная и гражданская идентичность в контексте глобальных процессов, Ростов-на-Дону, «МАРТ», 2014.

[2] Այն դեպքերում, երբ հոդվածում խոսվելու է Եվրոպայի և եվրոպացիների մասին՝ ըստ երիտասարդների սուբյեկտիվ պատկերացումների և ընկալումների, «Եվրոպա» և «եվրոպացիներ» եզրույթներն օգտագործվելու են չակերտներում:

[3] Այստեղ չեն քննարկվում Եվրոպայի հետ Հայաստանի պատմաքաղաքական և քաղաքակրթական առնչությունները, որոնք, բնականաբար, իրենց ազդեցությունն են թողել ժամանակակից հայաստանցիների ընկալումների և արժեհամակարգի վրա: Այստեղ շեշտադրվելու է արդի արժեքային փոխակերպումների տիրույթում հայաստանյան երիտասարդների կողմնորոշումների հիմնահարցը՝ «Եվրոպայի» և «եվրոպացիների» մասին իրենց ընկալումների համատեքստում:

Սույն հետազոտության ընթացքում կիրառվել է գիտական մեթոդների և մոտեցումների համախումբ, որոնք մշակված և փորձարկված են սոցիոլոգիական և միջառարկայական ուսումնասիրություններում: Մասնավորապես, թիրախավորված ընտրանքի միջոցով տարբեր շերտերից (կրթական տարբեր մակարդակներ, տարիք, արտասահմանյան և հատկապես եվրոպական կրթական ծրագրերում մասնակցության փորձի առկայություն և բացակայություն, ԵՄ-ում հարազատներ ունենալու և այլն) չափանիշներով ընտրված երիտասարդների մասնակցությամբ իրականացվել են ֆոկուս-խմբային քննարկումներ: Ֆոկուս-խմբային քննարկումների մեթոդի հիմնական առավելություններից են մասնակիցների ելույթների և պատասխանների նպատակային բևեռվածությունն ուսումնասիրվող խնդրին, կարծիքների ազատ արտահայտումն ու անձնական փորձի փոխանակումը: Իրականացվել է 6 ֆոկուս-խմբային քննարկում, որոնք ներառել են ընդհանուր առմամբ 60 երիտասարդ:

Բացի ֆոկուս-խմբային մեթոդի ուղղակի կիրառումից, ընթացքում օգտագործվելու է նաև մասնակիցների կողմից քննարկվող երևույթներն (Եվրոպա, եվրոպացիներ, ԵՄ, եվրոպական հասարակություն և այլն) արտացոլող նկարների պատկերման մեթոդ, որի արդյունքում ստացվել են երիտասարդների կողմից ուսումնասիրվող երևույթի վերաբերյալ ասոցիատիվ, պատկերավոր պատասխանները:

Հետազոտության արդյունքները

«Եվրոպա»

Նախնառաջ պետք է նշել, որ հարցված երիտասարդության համար «Եվրոպայի» վերաբերյալ տեղեկատվության գլխավոր չափաբաժինը հայկական աղբյուրներն են, այնուհետև ռուսականները, և երրորդ տեղում՝ արևմտյան ԶԼՄ-ն: Հայկական լրատվամիջոցներից գրեթե բոլորում առանձին ուշադրություն է դարձվում միջազգային լրահոսին: Բացի այդ, երկու միջազգային ալիքներ՝ *BBC* (ՄԲ) և *CNN* (ԱՄՆ), զգալի տեղ են զբաղեցնում հայաստանցի երիտասարդների համար՝ Եվրոպայի վերաբերյալ տեղեկատվության ձևավորման գործում:

Հարցված երիտասարդների կողմից դիտվող եվրոպական արտադրության հաղորդումները կարելի է բաժանել 3 տեսակի՝ լրատվական, ժամանցային, մտավոր: Դրանցից առավել հաճախ նշվել են հետևյալները՝ «Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր», *«The voice», «Hiden talent», «X factor»*, ինչպես նաև տարբեր հեռուստաալիքների լրատվական հաղորդումներ:

Եվրոպական արտադրության ֆիլմերի մասին խոսելիս առաջին հերթին շեշտադրել են ֆրանսիական արտադրության ֆիլմերը: Բացի այդ, որպես «եվրոպական» նշվել են բազմաթիվ ֆիլմեր և մուլտֆիլմեր, որոնք, սակայն, ամերիկյան արտադրության են, ինչից կարելի է եզրակացնել, որ զանգվածային տեղեկատվական դաշտում մատուցվող եվրոպական և ամերիկյան արտադրանքը հայաստանցիները հաճախ նույնացնում են:

Նկատվել է, որ եթե գրքեր նախընտրում են կարդալ հայերենով, ապա ԶԼՄ արտադրանքը սպառում են հիմնականում ռուսերենով: Հայաստանցի երիտասարդների մեծ մասը նշել է, որ չի վստահում հայկական արտադրության հեռուստահաղորդումներին, հայաստանյան լրատվությանը:

Տեղեկատվության փոխանակման համար արդյունավետ հարթակ են սոցիալական ցանցերը, որտեղ երիտասարդներն իրենց ծանոթներից ստանում են օպերատիվ և ճշգրիտ ինֆորմացիա Եվրոպայում տեղի ունեցող ընթացիկ իրադարձությունների վերաբերյալ:

Այն հարցին, թե ինչ պատմական իրադարձություններ են մտաբերում երիտասարդները Եվրոպան պատկերացնելիս՝ հարցվողները հիմնականում տվել են այնպիսի պատասխաններ, որոնք վկայում են հայաստանյան կրթական համակարգում Եվրոպայի պատմության մասին գիտելիքի էական ծավալի մասին: Նկատելի է, որ երիտասարդները ծանոթ են եվրոպական պատմության տարբեր իրադարձություններին, նշվում են տարբեր դարերում տեղի ունեցած եվրոպական պատերազմներ, հիշատակվում հայտնի եվրոպական քաղաքական, մշակութային գործիչների, գիտնականների և հերոսների անուններ (Հիտլեր, Նապոլեոն, անգլիական տարբեր թագուհիներ, Ժաննա դ՛Արկ և այլք):

Գրքեր կարդալու հարցում լեզվի ընտրությունն առավելապես պայմանավորված է պրակտիկ և մատչելի լինելու հանգամանքով, չկա սկզբունքորեն այս կամ այն լեզվով կարդալու գործոնը: Հարցված երիտասարդները հիմնականում նախընտրում են կարդալ հայերեն, և «եվրոպական հեղինակներ» ասելով նշել են իրենց նախընտրելի հեղինակներին, որոնք մեծ մասամբ ժամանակակից չեն. Ալբեր Քամյու, Հերման Հեսսե, Էրիխ Մարիա Ռեմարկ, Գի դը Մոպասան, Օսկար Ուայլդ, Օնորե դը Բալզակ, Վիկտոր Հյուգո, Մարկ Տվեն և այլք: Բացի այդ, ուսանող երիտասարդները Եվրոպայի մասին կարդում են մասնագիտական գրականությունից:

Ինչ վերաբերում է ժամանակակից Եվրոպայի մասին անհատականացված պատկերացումներին, ապա որպես հայտնի դեմքեր են առանձնացվում հիմնականում մի շարք դերասաններ ու ֆուտբոլիստներ՝ պայմա-

նավորված տվյալ երիտասարդի ճաշակով/նախասիրություններով: Ստացվում է, որ Եվրոպայի անցյալի մասին երիտասարդների գիտելիքները ստացվել են հիմնականում դպրոցական պատմության դասերից, իսկ ժամանակակից Եվրոպայի մասին գիտելիքները ստացվել են ժամանցի անցկացման՝ կինոդիտման կամ սպորտային խաղերի դիտման, երաժշտության ունկնդրման ընթացքում:

Որպես տնտեսական զարգացածության չափանիշ հանդիսացող երկրներ մեծ մասամբ նշվել են Արևմտյան և Հյուսիսային Եվրոպայի դասական խոշոր և բարեկեցիկ երկրները՝ Գերմանիան, Շվեյցարիան, Սկանդինավյան երկրները և Մեծ Բրիտանիան: Գերմանիան և Մեծ Բրիտանիան որոշ հարցվողներ կապակցում են նաև կրթական/մասնագիտական օջախների հետ: Հայաստանցի երիտասարդների պատկերացումներում եվրոպական կրթական համակարգն օրինակելի է, և Եվրոպայում սովորելը մեծ առավելություն է մասնագիտական որակներ ձեռք բերելու, կարիերայի կառուցման համար:

Այս ընկալումները կարելի է բացատրել հայաստանյան երիտասարդության և հատկապես ուսանողության շրջանում դեպի Եվրոպա կրթական միգրացիայի արդիականությամբ. այն երիտասարդները, ովքեր անձամբ Եվրոպայում սովորելու փորձ չունեն, այնուամենայնիվ, որպես կանոն, շրջապատում ունեն նման ծանոթներ և որոշ առումով նույնպես կրում են Եվրոպայի՝ որպես տնտեսապես բարեկեցիկ և բարձր կրթական չափանիշներ ունեցող տարածության մասին պատկերացումներ:

«Ես պատկերացնում եմ Գերմանիան ու Մեծ Բրիտանիան, որովհետև այնտեղ գտնվում են երկրագնդի խոշորագույն համալսարանները»:
(արական սեռ, 21 տարեկան, արևելագետ)
«Բժշկությունը միանգամից ասոցացնում եմ Գերմանիայի հետ, որովհետև մենք շատ բան ունենք այդտեղից վերցնելու»:
(իգական սեռ, 22 տարեկան, բժիշկ)

Տնտեսական զարգացածությունը ֆոկուս խմբերի մասնակիցների գիտակցության մեջ երկրի «եվրոպականության» կարևորագույն պայմաններից է. հանդիպել են նույնիսկ դեպքեր, երբ հարցվողներն ընդգծել են, որ ԵՄ կազմում գտնվող ոչ բարեկեցիկ երկրները, օրինակ՝ Ալբանիան, չի կարելի համարել Եվրոպա:

Երիտասարդներից ոմանք նշել են հայաստանյան իրականության մեջ հայրենասիրական գաղափարախոսության և դաստիարակության գերա-

կայությունը՝ որպես ազգային պատկանելության և գործունեության հիմնական դրդապատճառ: Մինչդեռ «Եվրոպայում», իրենց կարծիքով, հիմնական դրդապատճառը ֆինանսական բարեկեցությունն ու այն հնարավորություններն են, որոնք երաշխավորում է քաղաքացիությունը և պատկանելությունը եվրոպական ազգերին (դարձյալ՝ նկատի ունենալով բարեկեցիկ եվրոպական պետությունները): Երիտասարդների կողմից «Եվրոպան» և Հայաստանը պատկերող նկարներից կարելի է տեսնել, որ Հայաստանը բնութագրող խորհրդանիշերն ավելի կայուն, ավանդական են (տուն, եկեղեցի, լեռնաշխարհ), իսկ ակտիվ-դինամիկ պատկերներից է միայն գյուղատնտեսական գործունեությունը: Մինչդեռ «Եվրոպան» պատկերված է դինամիկ գործընթացների ամբողջությամբ՝ ճանապարհներ, ինքնաթիռներ, մեքենաներ, աշխատող գործարաններ:

Դարձյալ այս երկու տարբերակները չեն բացառում միմյանց և արտահայտում են ոչ թե «մենք»-ի հանդեպ «նրանց» օտար լինելը, այլև «ուրիշ» հանդիսանալը (շատ դեպքերում հայաստանյան երիտասարդության համար *«Եվրոպան» «ուրիշ» է՝ արժեքավոր, դրական, ուսանելի և գրավիչ իմաստով):*

Հետաքրքիր է նկատել, որ հայաստանյան *երիտասարդների շրջանում գերակայում է եվրոպական արժեքների հանդեպ սպառողական վերաբերմունքը* ՝ օգտագործելու, սովորելու, ունենալու, ստանալու իմաստով, ինչը վերաբերում է կրթություն և աշխատանք ստանալուն, եկամուտ ունենալուն, ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելուն, իրավունքների առումով պաշտպանված լինելուն և այլն: Որևէ երիտասարդ չի արտահայտել ցանկություն՝ նպաստելու եվրոպական արժեքների տարածմանը, տնտեսության հզորացմանը, «Եվրոպայի» դրական համբավի ամրացմանը, եվրոպական երկրների անվտանգության ապահովմանը և այլն: Հնարավոր է, որ հենց այդ պատճառով է նկատվում Եվրոպայի նախընտրելիությունը Հայաստանի հանդեպ. ցավոք, երիտասարդները նախընտրում են իրավունքներ՝ առանց պարտականությունների, ինչը միակողմանիորեն կապակցում են «Եվրոպայի» հետ, մինչդեռ ՀՀ-ում ապրելն իրենց ընկալումներում կապվում է հիմնականում պարտականություններ ունենալու, հարկային ծանր բեռի տակ գտնվելու, բանակում ծառայելու, իրավունքների մեծ մասի իմաստով պետությունից պաշտպանված չլինելու հետ:

Խոսելով Եվրոպայի՝ որպես ժողովրդավարության տարածության մասին, երիտասարդները ժողովրդավարության տակ հիմնականում հասկանում են ոչ այնքան «ժողովրդի կառավարման», որքան՝ իրավահավասարության, օրենքի գերակայության ու քաղաքական կայունության մասին:

Ընդ որում՝ «Եվրոպայի» մասին բոլոր նման պատկերացումներն, ըստ էության, ձևավորվում են որպես հակադրություն Հայաստանի մասին պատկերացումներին. «Հայաստանում կոռուպցիա կա, Եվրոպայում՝ ոչ», «Հայաստանում մենաշնորհ է, Եվրոպայում՝ ազատ շուկայական տնտեսություն» և այլն: Այս առումով ստեղծվում է դրական/բացասական դիխոտոմիա. Եվրոպան հավաքական իդեալ է, իսկ Հայաստանը հակադիր է այդ իդեալին. ժողովրդավարական չէ, ազատ չէ, հանդուրժող չէ, բարեկեցիկ չէ և այլն: Հետաքրքիր է նկատել նաև, որ «Եվրոպա» ասելով՝ հայաստանցի երիտասարդները մարդու իրավունքների և ժողովրդավարության հետ գրեթե նույնքան կարևորում են տնտեսական բարեկեցությունը և անգամ այդ հանգամանքն են ներկայացնում որպես տարածաշրջանի այս կամ այն պետության «եվրոպական» լինել-չլինելը:

Հայաստանի Եվրոպա լինելու/չլինելու հարցի շուրջ հարցվողների կարծիքներում առկա են եղել նաև երկու այլ միտումներ, որոնք բնութագրում են և՛ հայաստանյան հասարակության փոխակերպումը, և՛ ինքնատիպությունը: Հայաստանյան հասարակությունը փոխակերպվում է, և հետխորհրդային սերունդն իր տեսանկյունով, վարքով, արտաքին և ներքին բնութագրիչներով ավելի մոտ է «եվրոպացիներին», քան խորհրդային սերունդը, ինչը պայմանավորված է ավելի ազատ սահմաններով, փոխանակումներով, զբոսաշրջությամբ, ազատ մեդիա-միջավայրով և համացանցի մատչելիությամբ:

Արտահայտված մյուս տեսակետն այն է, թե Հայաստանը չի կարող և չպետք է լինի եվրոպական երկիր, քանի որ իր մշակույթով տարբերվում է բոլոր քաղաքակրթություններից և պետք է շարունակի զարգանալ որպես առանձին մշակութային տարածություն:

«Ես նորմալ եմ վերաբերվում, որ Հայաստանը տարբեր բաներ է վերցնում տարբեր մշակույթներից, բայց պետք է կարողանալ այդ ամենը ձուլել ու չկորցնել տեսակը: Ես տեսակի պահպանման կողմնակիցն եմ: Չեմ ուզում հինը չհիշվի»:

(արական սեռ, 21 տարեկան, իրանագետ)

Չնայած մոտեցումների տարբերությանը՝ գրեթե բոլոր երիտասարդները փորձել են ներկայացնել Հայաստանի և «Եվրոպայի» միջև առնչությունները և նմանությունները՝ քննարկելով Հայաստանի և մեկ այլ բևեռի՝ «Ասիայի» միջև նմանություններն ու տարբերությունները: Այդ առումով, երիտասարդների պատկերացումներում առկա է որոշակի սանդղակ, որի մի

բևեռը ներկայացնում է «Եվրոպան», մյուսը՝ «Ասիան», և կարիք է ստեղծվում սահմանելու, թե այդ սանդղակի վրա ինչ տեղ է գրավում Հայաստանը:

«Ես հավասար ազդեցություն տեսնում եմ, այսինքն՝ ինչքան արևելք, այնքան էլ արևմուտք: Այսինքն՝ համարյա հավասար թե՛ մշակույթում, թե՛ կենցաղում, թե՛ նույնիսկ քաղաքի կառուցման մեջ տեսնում եմ հավասար ազդեցություն»:

(իգական սեռ, 25 տարեկան, լեզվաբան)

«Մենք գնանք դեպի Եվրոպա՞, թե՞ Արևելք»:

(իգական սեռ, 22 տարեկան, բժիշկ)

«Ասիայի» հավաքական կերպարը հայաստանյան երիտասարդների աչքերում իսլամական է և գրեթե նույնացվում է Մերձավոր Արևելքի հետ: Այս հանգամանքը հեշտ բացատրվում է Մերձավոր Արևելքի հետ Հայաստանի թե՛ աշխարհագրական, թե՛ պատմամշակութային առնչություններով:

Այս համատեքստում փոքր-ինչ շոշափվել է նաև Ռուսաստանի Դաշնության դերը՝ Հայաստանի արտաքին կողմնորոշումների գործընթացում: Երիտասարդներից ոմանք նշել են, որ Հայաստանում ստեղծված քաղաքական իրավիճակը նպաստավոր չէ եվրոպամետ քաղաքականություն վարելու համար, և այս պարագայում նկատելի է Եվրոպա-Ռուսաստան հակադրությունը: Հարցվողների շրջանում առկա է դիրքորոշումն այն մասին, որ Հայաստանը քաղաքական առումով կարծես գտնվում է Ռուսաստանի և Եվրոպայի արանքում: Համապատասխանաբար, բացի Հայաստան-Մերձավոր Արևելք առանցքից, նաև հստակորեն ընկալվում է Հայաստան-Ռուսաստան առանցքը, որոնք պայմանավորում են Հայաստան-Եվրոպա հարաբերությունները:

Այսպիսով, ՀՀ-ի և «Եվրոպայի»՝ որպես պետությունների ամբողջության համեմատության դեպքում հայաստանյան երիտասարդների ընկալումը «մենք» և «նրանք» համատեքստում հիմնականում դրական է. *«նրանք» օտար չեն, անհասկանալի և անընդունելի չեն, սակայն ուրիշ են՝ դրական իմաստով:* Դարձյալ, «Եվրոպայի» մասին գիտելիքների և այնտեղ գտնվելու, եվրոպական արժեքները ճանաչելու և սպառելու դեպքում կարելի է նշել երիտասարդների համար «Եվրոպայի» հետ առնչվելու փորձի արժեքավորությունը (նյութական և հոգևոր իմաստներով), կողմնորոշիչ և աջակցող լինելը: *Երիտասարդների նման ընկալումները հաստատում են իրենց համար «Եվրոպայի»՝ որպես «նշանակալի ուրիշը» լինելու վարկածը:*

«Եվրոպացիներ»

Առօրյա, կենցաղային մշակույթի մասին խոսելիս հայաստանյան երիտասարդները մեկնաբանել են հայկական մշակույթը որպես «ջերմ», եվրոպականը՝ որպես «սառը», չնայած հայկական «ջերմ» մշակույթն ավելի «ծանր» է, իսկ եվրոպական «սառը» մշակույթը՝ «թեթև»: Այդ թեթևությունը հիմնականում կապվել է անհոգության, պարզության և կարծրատիպերի բացակայության հետ: Մասնակիցները, որպես կանոն, կարծրատիպ են անվանել հայկական մշակույթի տարատեսակ արտահայտումներ (հագուստի ձևեր, ժամանցի կազմակերպման ձևեր, սեռերի միջև հարաբերություններ և այլն՝ իրենց սահմանափակումներով), իսկ եվրոպական մշակույթի արտահայտումներն անվանել են կարծրատիպերի բացակայություն:

«Եվրոպացիների» առօրյա մշակույթի ընկալումը մեծ մասամբ կապվում է քաղաքային մշակույթի հետ[1], արտահայտում անհատապաշտական գծեր (պատկերվում են միայնակ հեծանվորդներ և առանձին մարդիկ): Այս ընկալմանը հակադրվում է Հայաստանի մշակույթի ընկալումը, որը կապվում է երիտասարդների ազգային ու կրոնական ինքնության հետ (պատկերվել են տարատեսակ մշակութային խորհրդանիշեր՝ նուռ, Մասիս սար, եկեղեցիներ, երբեմն ռազմական խորհրդանիշներ՝ զենք, զինվորներ), և արտացոլում է կոլեկտիվիստական մշակույթի գծեր (պատկերվել են միասին պարող մարդիկ, ընտանիքներ):

Հարցվողներից ոմանք նշել են, որ Եվրոպան տարբեր մշակույթների միաձուլման ու ինտեգրման տարածություն է, և այդ ըմբռնումն արտացոլված է նաև մասնակիցների կողմից պատկերված նկարներում:

Գաղափարական նմանությունների մասին խոսելիս երիտասարդները նշել են այն հանգամանքը, որ եվրոպական երկրների բնակչության մեծամասնությունը քրիստոնյա է, ինչն ըստ էության հայ ժողովրդի հետ իրենց արժեքային-գաղափարական ընդհանրությունների մասին է վկայում: Միևնույն ժամանակ, եվրոպական արտադրության գրքերը, ֆիլմերը և այլ տեղեկատվությունը գրավիչ կերպով մատուցվելու արդյունքում մշտապես եղել է և շարունակում է մնալ հայաստանցի երիտասարդների աշխարհայացքի բաղկացուցիչ մասը:

Հարցվողները հիմնականում դասակարգել են եվրոպական երկրներն աշխարհագրական-մշակութային սկզբունքով՝ նշելով, որ հյուսիսային և

[1] Ֆոկուս խմբերի մասնակիցների կողմից պատկերված նկարներում ամենահաճախ հանդիպող խորհրդանիշը էյֆելյան աշտարակն է, հաճախակի են պատկերվում բազմահարկ շենքեր և լայն փողոցներ:

արևմտյան երկրների մշակույթն ավելի «սառն» է (*«Ջիգյարով չի շփումը, ինչպես որ հայերի միջև»*), մեծ է մարդկանց միջև սոցիալական հեռավորությունը, ավելի արտահայտված են անհատակենտրոնությունն ու անտարբերությունը միմյանց նկատմամբ, մինչդեռ հարավային և արևելյան երկրներում մարդիկ ավելի ջերմ են, տաքարյուն, մշակույթն ավելի ավանդական է, և ըստ այդմ՝ հարավային ու արևելյան երկրները մշակութային առումով Հայաստանին ավելի մոտ են ընկալվում:

«Եվրոպական» ընտանիքի մոդելի վերաբերյալ իրենց ունեցած պատկերացումներից ելնելով՝ հայաստանյան երիտասարդների մեծ մասն այն օտար է համարում. այդ իսկ պատճառով «եվրոպացիների» հետ ընտանիք կազմելու վերաբերյալ հարցվածների կարծիքն ավելի շուտ բացասական է:

«Ես կնախընտրեմ հայի հետ ապրել և հայ երեխաներ ունենալ: Երբեք չեմ ամուսնանա եվրոպացու հետ»:

(իգական սեռ, 21 տարեկան, լրագրող)

«Հարևանի հարսը միշտ սիրուն է, ու հայերին թվում է, թե եվրոպական երկրներում ամեն ինչ իդեալական է»:

(իգական սեռ, 25 տարեկան, հոգեբան)

Նրանք, ովքեր ունեցել են եվրոպացիների հետ շփման անմիջական փորձ, այնուամենայնիվ, այս հարցի վերաբերյալ փոքր-ինչ ավելի դրական են տրամադրված: Այդ երիտասարդներն իրենց եվրոպացի հասակակիցների հետ ծանոթացել են եվրոպական երկրներում, և այնտեղ ձեռք բերված շփումը որոշ դեպքերում շարունակվել է վիրտուալ սոցիալական ցանցերում. օրինակ՝ ֆեյսբուքում, ինչպես նաև *skype*-ի տեսազանգերի միջոցով: Շփման առարկան հիմնականում առօրյա հարցերն են, միմյանց տոների առթիվ շնորհավորանքները, նաև Հայաստանում կամ եվրոպական երկրում տեղի ունեցած որևէ իրադարձության քննարկումը:

Հարցվածների խոսքերով՝ հայաստանցի և եվրոպացի երիտասարդների միջև շփման ընթացքում հաճախ առկա են հաղորդակցական խոչընդոտներ, մասնավորապես՝ վերբալ և ոչ վերբալ միջոցների օգտագործման պարագայում: Լեզվական և լեզվամտածողական տարբերություններով պայմանավորված՝ տարընկալում է լինում (ենթատեքստերը, հումորը, մնջախաղը և ժեստերի լեզուն): Միևնույն ժամանակ, սա բոլորովին չի նշանակում, որ շփումն անհնար է կամ ցանկալի չէ:

«Եվրոպացիների հետ շփումն ու առնչությունը անհրաժեշտ են և հետաքրքիր»:

(արական սեռ, 25 տարեկան, ծրագրավորող)

«Եվրոպայի մասին իմանում ենք նորություններից, Facebook-ից»:

(արական սեռ, 21 տարեկան, քաղաքագետ)

Եվրոպացիների կենսակերպը նկարագրելու հարցում հայ երիտասարդները զգալի ազդեցություն են կրում ֆիլմերից, գրքերից, ԶԼՄ-ից, սոցիալական ցանցերից և այլ միջնորդավորված աղբյուրներից: Այդ կենսակերպը պայմանավորող գործոնների շարքում հայաստանցի երիտասարդները նշում են ֆինանսական և սոցիալական ապահովվածությունը, որը, ըստ նրանց, բերում է բարեկեցության ու հարմարավետության:

Դրականորեն է բնութագրվել եվրոպացիների կողմից հանգստին, ժամանցին, առողջությանը ուշադրություն դարձնելը: Շատ են կարծիքներն այն մասին, որ եվրոպացի երիտասարդները վայելում են կյանքը, հաճույքով են ապրում, ազատ են և իրենց կամքին հակառակ ոչինչ չեն անում:

«Եվրոպայում ծայրահեղությունից ծայրահեղություն է, Իսպանիայից մինչև Գերմանիա: Իտալացիները շատ տաքարյուն են, շատ կրքոտ, գերմանացիները շատ սառը և չշփվող են»:

(արական սեռ, 21 տարեկան, իրավագետ)

«Եվրոպայում մարդը բնական է, ապրում է այնպես, ինչպես ինքն է ուզում, ազատ է բարդույթներից»:

(արական սեռ, 20 տարեկան, ֆիզիկոս)

«Գործի ժամին գործի են, հանգստի ժամին իսկապես հանգստանում են»:

(իգական սեռ, 23 տարեկան, լրագրող)

Բացի այդ, որպես դրական հատկություն նշվել է «եվրոպացիների» մշտապես սովորելու, առաջ գնալու, ինքնակատարելագործվելու ձգտումը:

Ըստ հայաստանցի երիտասարդների՝ միջանձնային հարաբերությունները «եվրոպացիների» միջև արմատապես տարբերվում են հայերի միջև առկա հարաբերություններից: Մասնավորապես, որպես բացասական երևույթ նշվել է երիտասարդների և ծնողների թույլ կապվածությունը, ընտանիքի անդամների միջև մեծ սոցիալական հեռավորությունը:

«Ծնողը երեխայի 18 տարին լրանալուն պես դուռը բացում է, ասում՝ գնա, ազատ ես»:

(իգական սեռ, 22 տարեկան, լեզվաբան)

Միևնույն ժամանակ, որպես բացասական են դիտվել թե՛ տղաների և թե՛ աղջիկների սեռական անկանոն կյանքով ապրելն ու տարածված թմրամոլությունը:

Ինչ վերաբերում է «եվրոպացիների» արտաքին տեսքի նկարագրությանը, ապա այս դեպքում ևս հայաստանցի երիտասարդներն ավելի հակված են նկարագրելու Հյուսիսային Եվրոպայի բնակիչներին բնորոշ արտաքինը. բարձրահասակ, շիկահեր, բաց գույնի աչքերով, պարզ ու անպաճույճ հագուստով: Քննարկումների մասնակիցները նշել են, որ «եվրոպացիները» հիմնականում գեղեցիկ արտաքին ունեն:

«Բարձրահասակ, շիկահեր, կապուտաչյա, շատ բաց մաշկով, ուսապարկով, կիսահնամաշ լաթերով, ժպտացող: Բարի կերպար եմ պատկերացնում, արտաքին հայացքից համենայն դեպս»:

(իգական սեռ, 22 տարեկան, բժիշկ)

Ավելի շուտ բացասական է բնութագրվել եվրոպացիների արտաքնապես «թափթփված լինելը» և «արտաքին տեսքին ոչ պատշաճ ուշադրություն դարձնելը»: Մյուս կողմից, արձանագրվել է, որ օբյեկտիվորեն հայաստանցիները հաճախ կրում են նույն հագուստը, ինչ իրենց եվրոպացի հասակակիցները, քանի որ այն իր ոճով կամ ներկրմամբ եվրոպական է: Միևնույն ժամանակ, նշվել է հայաստանցի երիտասարդների՝ չափից դուրս արտաքին տեսքով տարվելն ու նյութական կողմի շեշտադրումն ի վնաս հոգևոր կողմի, մարդու անձնական որակների, ինչը նշվել է որպես մեկ այլ ծայրահեղություն և նույնպես բացասաբար է գնահատվել:

«Եվրոպայի երիտասարդները, թե՛ աղջիկները, թե՛ տղաները, ոչինչ չունեն ցույց տալու, ինչպես Հայաստանում: Իրենք չեն պճնվում, երեկոյան զգեստով երթուղային չեն նստում, և դա, իհարկե, լավ է: Մարդը բնական է, ապրում է այնպես, ինչպես ինքն է ուզում, ազատ է բարդույթներից»:

(արական սեռ, 20 տարեկան, ֆիզիկոս)

Այսպիսով, եթե Հայաստանը նման է «Եվրոպային», ապա ավելի շատ Արևելյան Եվրոպայի և Միջերկրական ծովի եվրոպական մասում ապրող ազգերին, և դա, այնուամենայնիվ, հիմք չի հանդիսանում հարցվողների համար Հայաստանը «Եվրոպա» համարել: Հիմնական պատճառն այն է, որ «Եվրոպայի» հավաքական ընկալումն ավելի շուտ արտացոլում է Հյուսիսային Եվրոպայի կերպարը, քան Հարավայինը: Այս իմաստով «Եվրոպան» դարձյալ «ուրիշ» է՝ Արևելյան Եվրոպայի դեպքում ավելի քիչ ուրիշ, քան՝

Արևմտյան և Հյուսիսային Եվրոպայի, սակայն բոլոր դեպքերում «եվրոպացիներին» վերագրվող սոցիալ-մշակութային բնութագրիչների առումով այն երկակի է: Մի կողմից՝ հայաստանցի երիտասարդների մի մասի համար «եվրոպացիներին» վերագրվող հավաքական կերպարը, այդ թվում՝ կոլեկտիվ արժեքների և կոլեկտիվ վարքի սակավության, անհատապաշտության և դրանից բխող մարդու անհատականության գերակայության առումով, *խիստ գրավիչ է, «նշանակալի ուրիշ» է:*

Մյուս դեպքում *այդ կերպարը ոչ միայն ցանկալի չէ չեզոք առումով, այլև անգամ անցանկալի է, կիրառական չէ, վախենալի է* (հիմնախնդիրների հետ դեմ առ դեմ մնալու, սոցիալական ծանոթ միջավայրից և ծանոթ-բարեկամներից մշտապես օգնություն ակնկալելու մշակույթի բացակայության իմաստով), որոշ իմաստով նաև անհանդուրժելի (չնայած հարցված երիտասարդները նշում էին անհանդուրժողականությունը որպես հայաստանյան հասարակությանը հատուկ թերություններից մեկը): Այս իմաստով նկատելի է հայաստանցի երիտասարդների բևեռացվածություն, ինչը դրսևորվում է ոչ միայն անհատապաշտություն և կոլեկտիվ (համայնքային) արժեքներ դավանելու, քարոզելու, դրանց հետևելու, այլ նաև արտաքին տեսքի, կենսակերպի և անհատական ոճի առումով:

Այսպիսով, ի տարբերություն «Եվրոպայի»՝ որպես հիմնականում «նշանակալի ուրիշի» մասին երիտասարդների պատկերացման, խոսելով հասարակությունների, այսինքն՝ «եվրոպացիների» և հայաստանցիների համեմատության մասին՝ հարցված երիտասարդները միշտ չէ, որ ընկալում են «եվրոպացիներին» որպես «նշանակալի ուրիշ»:

Եզրակացություններ

Այսպիսով, «Եվրոպայի» մասին ընկալումների բացահայտման և քննարկման ընթացքում դուրս են բերվել մի շարք առանձնահատկություններ, որոնք օգնում են հասկանալու հայաստանյան երիտասարդության շրջանում «Եվրոպա» և «եվրոպացիներ» եզրույթների հետ առնչվող գիտելիքներն ու կարծրատիպերը.

- «Եվրոպա» ասելով՝ երիտասարդները որոշ դեպքերում ընդհանրացնում են այդ աշխարհագրական տարածքում գտնվող երկրների ամբողջությունը՝ ունենալով հիմնականում դրական վերաբերմունք տվյալ հավաքական հասկացությանը: Հստակեցման փորձը բերում է «Եվրոպայի»՝ որպես հիմնականում Արևմտյան և Հյուսիսային Եվրոպայի պետությունների ընկալմանը:

- Երկրորդ դեպքում «Եվրոպան» ընկալվում է որպես քաղաքակրթություն, որի կարևոր տարրերից է քրիստոնեությունը, և որը քրիստոնյա «Եվրոպան» և Հայաստանը միավորող հենասյուներից է:
- «Եվրոպա» եզրույթի հետ առնչվում է նաև տնտեսական զարգացածությունը, ինչը նույնպես բխում է երիտասարդների՝ «Եվրոպան» մի քանի տնտեսապես հարուստ և զարգացած երկրների հետ նույնացնելուց:
- Չնայած նշված որոշ քաղաքակրթական և սոցիալ-հոգեբանական նմանություններին (մասնավորապես՝ Արևելյան Եվրոպայի և Միջերկրական ծովի եվրոպական երկրների հետ)՝ հայաստանցի երիտասարդների համար տեղին չէ խոսել Հայաստանի և Եվրոպայի՝ որպես ընդհանրական «մենք»-ի մասին: Հայաստան – «Եվրոպա» առնչությունները բնութագրվում են «մենք» և «նրանք» եզրույթներով, ընդ որում՝ «նրանք» մեզ համար «ուրիշ» են, սակայն՝ դրական իմաստով և առնչություններով ծանոթ, ոչ «օտար»:
- «Եվրոպա» ասելով երիտասարդները հասկանում են նաև ժողովրդավարական մի միջավայր, որտեղ գերակա են մարդու իրավունքները: Այս ընկալումն ունի ինչպես միանշանակ դրական, այնպես էլ որոշ իմաստով քննադատական իմաստ՝ կապված բացարձակ ազատությունը մերժելու հետ: Մի կողմից՝ երիտասարդների մի մասը չի գտնում, որ իրենց պատկերացրած և «Եվրոպային» վերագրվող բոլոր ազատություններն ընդունելի են Հայաստանում: Մյուս կողմից՝ փաստացիորեն և սուբյեկտիվ ընկալումներում հարցված գրեթե բոլոր երիտասարդները ցանկանում են լինել եվրոպական տարբեր երկրներում, ձեռք բերել նյութական և հոգևոր այն արժեքները, որոնք վերագրվում են Եվրոպային՝ ազատությունը, բարեկեցությունը, անկաշկանդությունը, լավ կրթությունը, աշխատանքը: Քննարկումների բոլոր մասնակիցներն՝ անկախ իրենց վերաբերմունքից «Եվրոպայի» հանդեպ, ցանկանում են այս կամ այն առիթով, ծրագրով կամ հնարավորությամբ հայտնվել «այնտեղ» (կրթական, աշխատանքային, զբոսաշրջային շարժունության առումով արտահայտվում է Հայաստանի՝ որպես «այստեղի», և «Եվրոպայի»՝ որպես «այնտեղի» մասին ընկալումը): Փաստորեն, շարժունության իմաստով «մենք» եվրոպացի չենք, իսկ «նրանք»՝ «մենք» չեն: Միևնույն ժամանակ, «Եվրոպայի» հետ առավելագույնս առնչվելու ցանկությունը, որն արտահայտում են և օրինակներով փաստում հայաստանցի երիտասարդները, վկայում է

այն մասին, որ «Եվրոպան» մեզ համար, չնայած «ուրիշ» է, սակայն՝ «նշանակալի ուրիշ»:

- Նկատվել է, որ հայաստանյան երիտասարդների շրջանում գերակայում է եվրոպական արժեքների հանդեպ սպառողական վերաբերմունք: «Եվրոպայում» լինելու, այնտեղ նյութական և հոգևոր արժեքներ ձեռք բերելու, ազատությունները վայելելու ցանկության հետ մեկտեղ բացակայում է ընկալումը՝ փոխարենը որևէ բան տալու, «Եվրոպայի» զարգացմանը, բարեկեցությանն ու անվտանգությանը նպաստելու:
- «Եվրոպացիների» մասին հայաստանցի երիտասարդների ընկալումները վկայում են Հայաստանում առկա կարծիքների բևեռացվածության և որոշ հակասականության մասին: Մի կողմից՝ որպես դրական նշվում են «եվրոպացիներին» վերագրվող «ազատությունը», «անկաշկանդ լինելը», «թեթև» վերաբերմունքը հագուստի և հանրային կարծիքի հնարավոր սահմանափակումներին: «Եվրոպացիների» արժանիքներին են դասվում նաև հանդուրժողականությունը, ոչ կոնֆլիկտայնությունը, բարությունն ու արտաքին համակրելիությունը: Միևնույն ժամանակ, որպես բացասական նշվում են «եվրոպացիներին» վերագրվող թույլ միջանձնային և ընտանեկան կապերը, ազատ սեքսուալ հարաբերությունները: Հակասություններից մեկն այն է, որ հայաստանցի երիտասարդները, համակրելով և անգամ նախանձելով «եվրոպացիներին» վերագրվող ազատությանն ու անհատակենտրոնությանը, միշտ չէ, որ պատրաստ են ընկալել և ընդունել վերոնշյալ ազատություններից բխող վարքականոնները:
- Հայաստանյան երիտասարդությունը բևեռացված է նաև «եվրոպացիների» ընդհանրական կերպարը՝ վարքաձևերն ու արտաքին կերպարն ընդունելու առումով: Մի մասը գտնում է, որ սա «ուրիշ», բայց խիստ համակրելի և պրակտիկ իմաստով ուսանելի կերպար է («նշանակալի ուրիշ»): Մյուսները, հակառակը, այն պարզունակ և թափթփված են որակում: Միևնույն ժամանակ, «եվրոպացին» մեզ համար «ուրիշ», բայց ծանոթ և ոչ հակադիր «ուրիշ» է, այսինքն՝ նույնպես «օտար» չէ: Պետք է նշել նաև, որ երկու դեպքերում էլ առկա է «եվրոպացիների» մասին միակողմանի, սահմանափակ պատկերացում:
- «Եվրոպացիների» մասին պատկերացումների ամբողջությունը թույլ է տալիս բնութագրել նաև հայաստանյան երիտասարդության որոշակի զանգվածի՝ «մենք»-ի մասին ընկալումը, որն իր բոլոր տարբերակնե-

րով չի նույնացվում «եվրոպացի» կերպարի հետ: Երիտասարդների ինքնագիտակցության մեջ «մենք»-ը կա՛մ «եվրոպացիներ» կերպարին միտված, փոխակերպվող խումբ է, կա՛մ՝ «նրանցից» փոխառնող, սակայն սեփական ինքնատիպությունը պահպանելու խնդիր ունեցող «մենք» (երկու դեպքերում էլ «եվրոպացիները» «նշանակալի ուրիշ» են), կա՛մ էլ «նրանց» արժեհամակարգի հակապատկերն ունեցող (անհատակենտրոն «նրանք» և համայնքային-կոլեկտիվիստական-խմբային գիտակցություն ունեցող «մենք»):

Սեպտեմբեր, 2017թ.

ԵՐԵՎԱՆԱԲՆԱԿ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արթուր Աթանեսյան, Նվարդ Մելքոնյան,
Լիլիթ Իսկանդարյան, Արմեն Խաչիկյան

Ամփոփագիր

Սույն հետազոտության նպատակը հետխորհրդային հասարակություններում «Եվրոպայի», այդ թվում Եվրամիության, եվրոպական կառույցների, եվրոպական հասարակության և եվրոպացիների կերպարի ընկալման առանձնահատկությունների վերհանումն է: Ստացված տեղեկատվության կարևորությունը Հայաստանի համար պայմանավորված է ՀՀ բազմավեկտոր կոմպլեմենտար արտաքին քաղաքականության առանձնահատկությամբ, որում եվրոպական ուղղությունը գերակայություններից մեկն է: Համապատասխանաբար՝ հայ հասարակությունում Եվրոպայի ընկալման առանձնահատկությունները կարևոր նշանակություն ունեն ոչ միայն քաղաքական որոշումներ ընդունելու, այլ նաև ազգային ինքնության խորքային հարցերի և բնութագրերի բացահայտման համար: Հետազոտությունն իրականացվել է Երևանի երիտասարդության օրինակով՝ թիրախային խմբերի բանավեճերի, փորձագիտական հարցազրույցների և փաստաթղթերի վերլուծության մեթոդների օգտագործմամբ:

ЕВРОПА И ЕВРОПЕЙЦЫ В ВОСПРИЯТИЯХ МОЛОДЕЖИ ЕРЕВАНА

Артур Атанесян, Нвард Мелконян,
Лилит Искандарян, Армен Хачикян

Резюме

Целью данного исследования является выявление особенностей восприятия образа «Европы» – в том числе Евросоюза, европейских структур, европейских обществ и европейцев – в постсоветских обществах. Важность полученной информации для Армении обусловлена особенностью многовекторной комплементарной внешней политики РА, в которой европейское направление является одним из приоритетов. Соответственно, особенности восприятия Европы в армянском обществе имеют важнейшее значение не только для принятия политических решений, но и для раскрытия глубинных вопросов и характеристик национальной идентичности. Исследование осуществлено на примере молодежи Еревана с использованием методов фокус-групповых дискуссий, экспертных интервью и анализа документов.

PERCEPTIONS OF THE YEREVAN YOUTH ON EUROPE AND EUROPEANS

Arthur Atanesyan, Nvard Melkonyan,
Lilit Iskandaryan, Armen Khachikyan

Resume

The aim of the article is to find out and describe specifics of the image of “Europe” including the EU, European structures, European societies and Europeans as stereotypically seen and perceived in the post-Soviet societies. The importance of the project for Armenia is determined by specifics of Armenian foreign policy as multipolar and complementary, which makes the European direction one of the top priorities. Accordingly, the image of Europe as perceived among Armenian citizens has a crucial importance for political decision-making, as well as for better understanding of Armenian social development and identity trends. The study is implemented on the case of Yerevan with use of methods of focus-group discussions, expert interviews, and analysis of documents.

ՀՏԴ 94/99 (=919.81):316

ԱՄՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ. ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՓՈՐՁ

Վահրամ Հովյան*

Բանալի բառեր ՝ ԱՄՆ հայ համայնք, քաղաքական ներուժ, լոբբիստական կազմակերպություններ, հայազգի գործիչներ, դաշնային (համապետական) իշխանություններ, տեղական իշխանություններ, լրագրողներ։

ԱՄՆ հայ համայնքը կարևորվում է ոչ միայն գիտական և տնտեսական, այլև քաղաքական ներուժով։ Սույն հանգամանքը պայմանավորված է ինչպես համայնքի ստվարաթվությամբ, այնպես էլ այդ երկրին բնորոշ որոշակի առանձնահատկություններով։ Խնդիրը միայն այն չէ, որ ԱՄՆ-ում առավելագույնս զարգացած է լոբբիզմի ինստիտուտը։ Այն որոշակիորեն պայմանավորված է նաև այդ երկրի բնույթով, ավելի կոնկրետ՝ ամերիկյան ինքնությամբ։ Հայտնի ամերիկացի քաղաքագետ Ս.Հանթինգթոնը գտնում է, որ ԱՄՆ արտաքին քաղաքականությունը պայմանավորված է վերջինիս ինքնությամբ։ Իր երկրի ինքնությանը նվիրված հայտնի աշխատությունում քաղաքագետը նշում է. «Հակասությունների արմատները, թե ինչ պետք է մենք անենք արտասահմանում, գտնվում են այն հակասություններում, թե ով ենք մենք տանը» [1, p. 10]։

Ամերիկյան ինքնության վերաբերյալ կան բազմաթիվ տեսակետներ, որոնցից մեկն էլ բազմամշակութային հասարակության հայեցակարգն է։ Հանթինգթոնի համոզմամբ՝ «...Ամերիկայի ամենամեծ նվաճումներից մեկը, թերևս՝ ամենամեծը, այն աստիճանն է, որով այն ջնջել է ռասայական և էթնիկ բաղադրիչները, որ պատմականորեն կենտրոնական են եղել իր ինքնության համար և դարձել բազմէթնիկ, բազմառասա հասարակություն, որում անհատների մասին դատում են իրենց արժանիքներով» [1, p. xvii]։ Խոսելով ամերիկյան ինքնության և արտաքին քաղաքականության կապի մասին՝ հեղինակը նկատում է. «Եթե Միացյալ Նահանգները գլխավորապես մշակութային և էթնիկ հանրույթների ամբողջություն է, ապա նրա ազգային

* «Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար, Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ։

շահն այդ հանրույթների նպատակների առաջմղման մեջ է, և մենք պետք է ունենանք «բազմամշակույթ արտաքին քաղաքականություն» [1, p. 10]:

Սույն հայեցակարգը լայն հնարավորություններ է բացում ԱՄՆ հայ համայնքի առջև՝ այդ երկրի ներքին և արտաքին քաղաքականության մեջ ձգտելու առաջ մղել հայկական շահերը: Իսկ այն, որ հայ համայնքը ամերիկյան բազմամշակույթ հասարակության մշակույթներից (մշակութային ընդհանրություններից) մեկն է, հիմնավորել է ազգագրագետ Հ. Մարությանը՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանավոր նյութերը (Ցեղասպանությունը վերապրածների հիշողությունները) թվայնացման և արխիվացման նպատակով Հարավային Կալիֆորնիայի համալսարանի Շոայի հիմնադրամի ինստիտուտին հանձնելու օրինակով [2, էջ 47-54]:

Ավելին, այս տեսակետից հայ համայնքը որոշակի առավելություն ունի մրցակից թուրք-ադրբեջանական համայնքի նկատմամբ, քանի որ թուրքերը և ադրբեջանցիները ԱՄՆ-ում քանակապես ավելի սակավաթիվ են, համեմատաբար ավելի նորաբնակ և դեռևս չեն կարող դիտվել որպես բազմամշակույթ ամերիկյան հասարակության ենթամշակույթներից մեկը: Հետևաբար, եթե նրանց ազդեցությունն ամերիկյան ներքին և արտաքին քաղաքականության վրա որպես այդպիսին հանդիսանում է արտաքին ներգործություն՝ պայմանավորված այն հանգամանքով, որ թուրքական և ադրբեջանական լոբբիստական կազմակերպությունները ստեղծվում և «սնվում» (ֆինանսավորվում) են դրսից՝ Թուրքիայից և Ադրբեջանից, հետևաբար նրանց գործունեությունն էլ ուղղորդվում է այդ երկրների իշխանությունների կողմից, ապա հայկական ազդեցությունը մեծ հաշվով էնդոգեն (ներածին) է և ունի ինքնուրույնություն Հայաստանից[1]:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք ասել, որ ԱՄՆ հայ համայնքի հայանպաստ քաղաքականության գործունեության հիմքում ընկած են հետևյալ հանգամանքները.

1. ԱՄՆ արտաքին քաղաքականության որոշակի պայմանավորվածությունը Միացյալ Նահանգների ինքնությամբ;
2. Ամերիկյան ինքնության բազմամշակութայնությունը;
3. Հայ համայնքի հանդես գալը որպես ամերիկյան բազմամշակույթ հասարակության մեկ բաղադրիչ (մեկ մշակույթ);
4. Համեմատական առավելությունը թուրքական և ադրբեջանական համայնքների նկատմամբ՝ քանակական և ինտեգրվածության չափանիշներով:

[1] ՀՀ իշխանություններ-ԱՄՆ հայ համայնք հարաբերություններում խոսքը կարող է վերաբերել միայն համագործակցությանը և խորհրդատվությանը, այլ ոչ թե Երևանից ուղղորդմանը:

Իսկ որպեսզի ԱՄՆ հայ համայնքն առավելագույն արդյունավետությամբ լծվի համահայկական շահերի պաշտպանությանը, այլ կերպ ասած՝ բարձրանա նրա արդյունավետության աստիճանը, անհրաժեշտ է գնահատել նրա քաղաքական ներուժը՝ քաղաքականության ոլորտում ներգրավված անհատներին և կառույցները, նրանց գործունեության ուղղություններ-ը և այլն: Հոդվածում սույն խնդիրը դիտարկվում է երկու մակարդակով՝ ինստիտուցիոնալ, որում դիտարկվում են քաղաքական գործունեությամբ զբաղվող ԱՄՆ հայկական հաստատությունները, և անհատական, որում դիտարկվում են քաղաքական գործունեություն ծավալող հայ անհատները:

Ինստիտուցիոնալ մակարդակ

Առհասարակ, Սփյուռքի քաղաքական հաստատություններ ասելով հասկանում են առաջին հերթին ավանդական կուսակցությունները՝ ՀՅԴ-ն, ՍԴՀԿ-ն և ՌԱԿ-ը: Չնայած վերջիններս ԱՄՆ-ում նույնպես ծավալում են ակտիվ գործունեություն[1], այնուամենայնիվ, ինչպես ընկալումներում, այնպես էլ իրականության մեջ ԱՄՆ հայ համայնքի պարագայում վիճակը մի փոքր տարբեր է: Այստեղ քաղաքական կառույցներ ասելով հասկանում են առաջին հերթին հայկական լոբբիստական հաստատությունները: Չնայած ԱՄՆ-ում գործում են մոտ մեկ տասնյակ հայկական լոբբինգային կազմակերպություններ [5, էջ 117], այնուամենայնիվ, իրենց քաղաքական կշռով և ազդեցությամբ առանձնանում են երկու խոշորագույնները՝ Ամերիկայի հայկական համագումարը և Ամերիկայի հայկական ազգային կոմիտեն: Վերջինս հայտնի է նաև Հայ դատի հանձնախումբ անվամբ: Այն, լինելով ամերիկյան հաստատություն, գործնականում հանդես է գալիս որպես համազգային կառույց, քանի որ, իր մասնաճյուղերն ունենալով արտերկրի գրեթե բոլոր հայ համայնքներում, գործունեություն է ծավալում գրեթե բոլոր հայաշատ երկրներում [տե՛ս 6, c. 131]:

[1] Թեև Սփյուռքի երեք կուսակցությունների կենտրոնական մարմինները գտնվում են ԱՄՆ-ից դուրս [3, էջ 756], սակայն այստեղ առկա են նրանց մասնաճյուղերը կամ տեղական մարմիններ-ը: Բացի այդ, այստեղ, ի թիվս կուսակցությունների հովանու տակ գործող այլ հաստատությունների՝ մամուլ, դպրոցներ և այլն, գործում են նաև այսպես կոչված կուսակցապատկան բարեգործական, մշակութային և քաղաքական նշանակալի կառույցներ: Բարեգործական կառույցներից, օրինակ, Հայ օգնության միությունը պատկանում է ՀՅԴ-ին [4, էջ 87): ԱՄՆ-ում գործում են նաև կուսակցապատկան այլ հաստատությունների մասնաճյուղեր: Օրինակ՝ ՌԱԿ-ին պատկանող Թեքեյան մշակութային միությունը, որը նույնպես համազգային կառույց է, ԱՄՆ-ում ևս ունի իր մասնաճյուղերը: Ինչ վերաբերում է քաղաքական կառույցներին, ապա երկու խոշորագույն հայկական լոբբիստական կառույցներից մեկը՝ Ամերիկայի հայկական ազգային կոմիտեն (Հայ դատի հանձնախումբը), գործում է ՀՅԴ հովանու ներքո:

Այս երկու կազմակերպությունների համատեղ ջանքերով է 1995թ. ԱՄՆ Կոնգրեսում ստեղծվել Հայկական հարցերի հանձնախումբը: Ընդհանրապես, Կոնգրեսի հանձնախումբը կոնգրեսականների ոչ ֆորմալ խումբ է, որը հետապնդում է միասնական օրենսդրական նպատակներ [7, էջ 170]: Հանձնախմբի անդամները պաշտպանում են համայնքի շահերը Կոնգրեսում, ինչի շնորհիվ հայկական լոբբիի պահանջներն արժանահավատություն, օրինականություն և ուժ են ձեռք բերում ԱՄՆ օրենսդիր մարմնում [7, էջ 171]:

Կոնգրեսի Հայկական հարցերի հանձնախումբը ամենախոշորներից է իր տեսակի մեջ: Այն ունի մոտ 150 անդամ (435 կոնգրեսականների շուրջ 34%-ը), այն դեպքում, երբ հայերը, տարբեր հաշվարկներով, կազմում են ԱՄՆ բնակչության 0.5%-ը [8, էջ 65]: Համեմատության համար նշենք, որ «օրինակ՝ Կոնգրեսի Սևամորթների շահերը պաշտպանող (*Black Caucus*) լոբբինգային խմբում կա ընդամենը 41, իսկ Թուրքիայի շահերը պաշտպանող խմբում՝ 106 հոգի» [5, էջ 115]:

Հայկական լոբբին իր գործունեությունը ծավալում է հայության համար բոլոր կարևոր հարցերի ուղղությամբ: Ներկայում կարելի է առանձնացնել վերջինիս հայանպաստ գործունեության չորս հիմնական ուղղություն.

ա) *Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում և դատապարտում*, ինչը դրսևորվում է ինչպես համապետական (դաշնային), այնպես էլ նահանգային և քաղաքային մակարդակներով Հայոց ցեղասպանությունը ճանաչող ակտերի ընդունման ուղղությամբ գործադրվող ջանքերով: Ներկայում արդեն ԱՄՆ 47 նահանգ ճանաչել է Հայոց ցեղասպանությունը:

Ցեղասպանության ճանաչման և դատապարտման խնդրի առանցքային տեղը ԱՄՆ հայկական լոբբիստական կառույցների գործունեության մեջ պայմանավորված է ոչ միայն նրանով, որ ցեղասպանության հիշողությունը հանդիսանում է Սփյուռքի, այդ թվում նաև ամերիկաբնակ հայության ինքնության հիմնայունը, այլ նաև՝ հետագայում նման իրադարձությունները կանխելու կամ բացառելու նկատառումներով: Խնդիրն այն է, որ «...Ցեղասպանությունից փրկված հայերի ժառանգների նույնիսկ երրորդ կամ արդեն չորրորդ սերնդում առկա է խոր անվստահություն և կասկած թուրքերի և Թուրքիայի նկատմամբ» [9, c. 24]:

բ) *Արցախյան հիմնահարց*, ինչն ընդգրկում է ոչ միայն Արցախի անկախության միջազգային ճանաչման, այլև շփման գծում հրադադարի ռեժիմի ամրապնդման, ականազերծման, սոցիալական ծրագրերի իրականացման, Ադրբեջանին տրամադրվող ռազմական օգնության սահմանափակման ուղղությամբ գործադրվող ջանքերը:

գ) *Հայաստանին ԱՄՆ-ի կողմից տրամադրվող օգնության ծավալների մեծացում*, որը ներառում է ոչ միայն ամենամյա բյուջեով ՀՀ-ին և ԼՂՀ-ին հատկացվող, այլև տարատեսակ խնդիրների (Հայաստան ներգաղթած սիրիահայերի դրության թեթևացում, ռազմական օգնություն) իրականացման համար տրամադրվող գումարների մեծացման համար գործադրվող ջանքերը: Հայ համայնքի գործադրած ջանքերի շնորհիվ ԱՄՆ-ը ՀՀ-ից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը երկրորդ ամենամեծ ուղղակի ֆինանսական աջակցություն ցույց տվող երկիրն է [10, p. 23]:

դ) *Հայ-ամերիկյան հարաբերությունների զարգացում*, ինչին են նպատակաուղղված ՀՀ-ի և ԱՄՆ-ի միջև կրկնակի հարկման վերացման, Երևան-Լոս Անջելես ուղղակի չվերթների իրականացման, տարատեսակ կրթական և այլ ծրագրերի իրականացմանն ուղղված ջանքերը:

Բացի այս հիմնական ուղղություններից, որպես օժանդակ ուղղություններ ԱՄՆ հայկական լոբբիստական կազմակերպությունների գործունեության ծիրում են գտնվում նաև ՀՀ և ԼՂՀ ապաշրջափակման [11, էջ 207; 7, էջ 175], Մերձավոր Արևելքում քրիստոնյաների և, մասնավորապես՝ հայերի փրկության, Ջավախքի և այլ հիմնահարցերը[1]:

Կապված վերջին տարիներին հայ-ադրբեջանական (ՀՀ-Ադրբեջան և ԼՂՀ-Ադրբեջան) սահմանային լարվածության և բախումների քանակական աճի ու ինտենսիվության խորացման հետ (որի գագաթնակետը 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմն էր)՝ արցախյան թեման ավելի ու ավելի մեծ տեղ է գրավում ԱՄՆ հայկական լոբբիստական կառույցների գործունեության մեջ: Վերջիններս, բացի Արցախի անկախության միջազգային ճանաչման համար ռազմավարական պայքարից, որպես մարտավարական խնդիր փորձում են հնարավորինս արագ արձագանքել նաև հաճախակիացած սահմանային միջադեպերին՝ ձգտելով հայկական տեսակետը հասցնել ԱՄՆ հանրությանն ու իշխանական շրջանակներին: Օրինակ՝ 2016թ. դեկտեմբերի վերջին ՀՀ Տավուշի մարզի ուղղությամբ ձեռնարկված ադրբեջանական դիվերսիոն գործողությունից հետո ԱՄՆ Հայ դատի հանձնախումբը ձեռնամուխ եղավ համացանցային արշավի կազմակերպմանը՝ Կոնգրե-

[1] ԱՄՆ հայկական լոբբիստական կառույցների գործունեության ուղղությունների մասին տե՛ս նաև Fiscal Year 2017 Testimony: Armenian Assembly of America: Submitted by Bryan Ardouny, Executive Director, http://www.aaainc.org/fileadmin/aaainc/pdf/2016/AAA_Testimony_FY_17.pdf; ANCA Confers With U.S. House Majority Leader Kevin McCarthy, http://hayernaysor.am/en/archives/ 226050; ANCA Welcomes Rep. David Trott as New Republican Co-Chair; Rep. Gus Bilirakis as Vice-Chair of the Congressional Armenian Caucus, http://hayernaysor.am/en/archives/227283; [12, էջ 35-37]:

սում, Սպիտակ տանը և ԵԱՀԿ Մինսկի խմբի ղեկավարության մոտ դատապարտելու ադրբեջանական ագրեսիան[1]:

Արցախի միջազգային ճանաչման գործընթացում կարևոր նշանակություն ունի տարբեր առիթներով այդ ուղղությամբ քարոզչական միջոցառումների անցկացումը: 2016թ. լրացավ Արցախի անկախության 25-ամյակը: Հիշյալ նկատառումներից ելնելով՝ կարևոր նշանակություն ունեցավ ԱՄՆ Կապիտոլիումի բարձունքին Կոնգրեսի Հայկական հարցերով հանձնախմբի կողմից կազմակերպված միջոցառումը՝ նվիրված Արցախի անկախության 25-րդ տարեդարձին (չնայած ադրբեջանական հակազդեցությանը), որին, բացի պատգամավորական խմբի անդամներից, մասնակցում էին Արցախի Հանրապետության վարչապետ Արայիկ Հարությունյանը, Վաշինգտոնում ՀՀ և ԼՂՀ ներկայացուցիչները, ԱՄՆ հայ համայնքի ղեկավար դեմքեր և այլք[2]:

Կարևոր իրադարձություն պետք է համարել նաև 2016թ. սեպտեմբերի 2-ին (ԼՂՀ անկախության օրը) Արցախի անկախության 25-րդ տարեդարձի կապակցությամբ Կոնգրեսի Հայկական հարցերով հանձնախմբի ուղարկած նամակը ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանին, որում կոնգրեսականները շնորհավորում էին արցախցիներին անկախության քառորդդարյա հոբելյանի կապակցությամբ, հայտնում իրենց աջակցությունը Արցախի միջազգային ճանաչման գործին և դատապարտում նույն թվականի ապրիլին Ադրբեջանի կողմից քառօրյա պատերազմի սանձազերծումը[3]:

Ընդհանրացնելով Արցախյան հարցում Սփյուռքի դերը՝ քաղաքագետ Ս.Մինասյանը նշում է, որ Հայաստանը՝ ի դեմս աշխարհով մեկ սփռված և իր բնակության երկրների որոշ մասի տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական կյանքում ուժեղ դիրքեր զբաղեցնող արդարև մեծաքանակ Սփյուռքի, ունի այնպիսի ռեսուրս, որը թույլ է տալիս նրան հակակշռել Ադրբեջանին լոբբինգի ասպարեզում և ներգրավել տնտեսական և ֆինանսական ռեսուրսներ Հայաստանի համար: Սփյուռքի քաղաքական ռեսուրսները, ըստ քաղաքագետի, ապահովում են Երևանին ու Ստեփանա-

[1] Տե՛ս Ադրբեջանի զինուժի դիվերսիայի փորձից հետո ԱՄՆ հայ համայնքն առցանց արշավ է սկսել, http://hayernaysor.am/archives/227703

[2] Տե՛ս Artsakh's 25th Anniversary Marked with Capitol Hill Celebration, http://hayernaysor.am/en/archives/224634; Ամերիկայի հայկական համագումարը Կոնգրեսում տոնել է Արցախի անկախության 25-րդ տարեդարձը, http://hayernaysor.am/archives/225021

[3] Տե՛ս http://www.aaainc.org/fileadmin/aaainc/pdf/2016/NKR_25th_Anniversary_Caucus_Letter_9-2-16.pdf; տե՛ս նաև Armenian Caucus Congratulates Nagorno Karabakh Republic: Condemns Azeri Atrocities: Calls for Formal Recognition of Artsakh's Independence, http://www.aaainc.org/index.php?id=7&no_cache=1&newsID=660

կերտին կարողությամբ՝ ազդելու Ղարաբաղյան կարգավորման արտաքին ակտորների մոտեցումների վրա [10, p. 23]։ Կարծում ենք, բովանդակ Սփյուռքին տրված այս գնահատականն առավել չափով վերաբերում է ԱՄՆ-ի՝ որպես արցախյան հակամարտության կարգավորմամբ զբաղվող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրի, հայ համայնքին։

Անհատական մակարդակ

Քաղաքական տեսակետից ԱՄՆ հայ համայնքը կարևորվում է ոչ միայն իր լոբբիստական կառույցներով, այլև քաղաքական ասպարեզում նշանակալի դիրքերի հասած, բարձր պետական պաշտոններ զբաղեցնող անհատ գործիչներով։ Այս տեսակետից հայ համայնքի ներկայացուցիչներն առավել մեծ հաջողությունների են հասել հիմնականում տեղական կառավարման մակարդակներում, հատկապես հայաշատ բնակավայրերում։ Հայերն ընտրվում են նահանգային և քաղաքային խորհուրդների անդամներ, քաղաքապետեր և այլն։ Նրանց կողքին, թեև ոչ մեծ քանակությամբ, կան նաև դաշնային իշխանությունների մակարդակով հաջողությունների հասած հայ գործիչներ։

Դաշնային (համապետական) իշխանությունների մակարդակով նշանակալի դիրքերի հասած հայեր կան ԱՄՆ իշխանության երեք ճյուղերում էլ՝ օրենսդիր, գործադիր և դատական.

- *Օրենսդիր իշխանությունում* նշանակալի դիրքերի հասած հայերը ներկայում երկուսն են՝ հայկական արմատներ ունեցող կոնգրեսականներ Ջեքի Սփայերը և Աննա Էշոուն։
- *Գործադիր իշխանությունում* հայերն առավելապես դրսևորվում են խորհրդականների պաշտոնում։ Այս առումով նշանակալի էր ԱՄՆ նախկին պետքարտուղար Ջոն Քերիի գիտական հարցերով խորհրդական, դոկտոր Թերիքյանը։ Վերջին շրջանում ամենանշանակալի հաջողության հասած հայ գործիչներից է Քեն Նահիկյանը, որն ԱՄՆ վերջին նախագահական ընտրություններից հետո նշանակվեց նորընտիր նախագահ Դոնալդ Թրամփի անցումային թիմի (կառավարության) գործադիր տնօրեն։
- *Դատական իշխանությունում* հիշատակելի հայեր են ԱՄՆ գլխավոր դատախազի խորհրդատվական կոմիտեի նախագահ Ռիչարդ Հարթունյանը, դաշնային դատավոր Սամուել Տեր-Եղիայանը (Իլինոյսի Հյուսիսային օկրուգ)։

Բացի իշխանության երեք ճյուղերում ներկայացվածներից, կարևոր են նաև միջազգային կազմակերպություններում, առաջին հերթին՝ ՄԱԿ-ում աշխատող ամերիկաբնակ հայերը[1]: Այս առումով նշանակալի է Արմեն Օրուջյանը, որն զբաղեցնում է Միավորված Ազգերի Կազմակերպության Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների և երիտասարդության հարցերի հանձնաժողովի ղեկավարի պաշտոնը: Մեկ այլ ամերիկաբնակ հայ գործիչ՝ Վազգեն Յարտըմյանը 2017թ. հուլիսին նշանակվեց Լիբանանի կենսոլորտային հարցերի նախարարությունում ՄԱԿ խորհրդական[2]: Այս քաղաքական գործիչները, փաստորեն, ոչ թե ներպետական (թեկուզ դաշնային մակարդակով), այլ միջազգային մակարդակի գործիչներ են, քանի որ պաշտոններ են զբաղեցնում համաշխարհային ամենահեղինակավոր կառավարական կազմակերպությունում:

Տեղական իշխանությունների մակարդակով հայերը ԱՄՆ-ում նշանակալի դիրքերի են հասնում ինչպես նահանգային, այնպես էլ քաղաքային իշխանություններում: Այս առումով հայերի հաջողություններով առավել աչքի ընկնող նահանգը Կալիֆորնիան է, որտեղ էլ կենտրոնացած է ամերիկաբնակ հայության մեծ մասը: Բացի Կալիֆորնիայից, նշանակալի դիրքերի հասած հայեր կան այլ նահանգներում ևս: Խնդիրը դիտարկենք երկու ենթամակարդակով՝ նահանգային և քաղաքային.

- *Նահանգային ենթամակարդակում* ներկայում նշանակալի դիրքեր զբաղեցնող հայեր են, օրինակ, Սարա Գիդեոնը (Մեյն նահանգի խորհրդարանի նախագահ), Ադրին Նազարյանը (Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանի անդամ), Քեթրին Կազարյանը (Ռոդ Այլենդի Ներկայացուցիչների պալատի անդամ):
- *Քաղաքային ենթամակարդակում* նշանակալի են քաղաքապետեր Վարդան Կարապետյանը (Գլենդելի քաղաքապետ), Վռամ Ծատուրյանը (Ռոլինկ Հիլզ Էսթեյթ քաղաքի քաղաքապետ), Սքոթ Ավեդիսյանը (Վարվիքի քաղաքապետ): Որպես քաղաքային խորհուրդների անդամներ կարելի է հիշատակել Փոլ Գրիգորյանին (Լոս Անջելեսի քաղաքային խորհրդի անդամ), Վարդան Ղարպետյանին (Գլենդելի քաղաքային խորհրդի անդամ), Ջեք Հաջինյանին (Մոնտեբելոյի քաղաքային խորհրդի անդամ): Այլ պաշտոններում նշանակալի են Արմինե Ղարպետյանը (Գլենդելի կրթական խորհրդի անդամ), Աշոտ Մուրադյանը (Մոնտեբելո քաղաքի գանձապետ) և այլք:

[1] ՄԱԿ կենտրոնակայանը գտնվում է Նյու Յորքում:
[2] Վազգէն Եարտըմեան Լիբանանի Կենսոլորտային Հարցերու Նախարարութեան Մօտ ՄԱԿի Խորհրդական Կը Նշանակուի, http://hayernaysor.am/cl/archives/251639

ԱՄՆ-ում ազգությամբ հայերի բարձր դիրքերի հասնելը հաճախ պայմանավորված է ոչ միայն նրանց անհատական արժանիքներով և ամերիկյան հասարակության մեջ նրանց ինտեգրվածության բարձր աստիճանով, այլև համայնքային կառույցների, հիմնականում հայկական լոբբիստական կառույցների հետ համագործակցությամբ, որոնք էլ ընտրությունների ժամանակ սատարում են նրանց: Օրինակ՝ Լոս Անջելեսի քաղաքային խորհրդի 2017թ. ընտրություններում Արևմտյան Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը որոշեց պաշտպանել Կարո Թորոսյանի թեկնածությունը[1]:

Այսպիսով, ԱՄՆ հայ համայնքի ներսում ընտրությունների ժամանակ տեղի է ունենում յուրահատուկ անհամաչափ համագործակցություն անհատ գործիչների և հայկական կառույցների միջև, ինչն էլ էապես նպաստում է անհատ գործիչների հաջողությանը: Իսկ դա նշանակում է, որ ԱՄՆ-ում բարձր դիրքի հասած հայ պաշտոնյաները հաճախ կտրված չեն համայնքից, վայելում են վերջինիս աջակցությունը: Հետևաբար, նրանց հաջողությունները պետք է դիտել ոչ միայն որպես անհատական, այլև հավաքական նվաճումներ:

Անդրադառնանք նաև այն հայ լրագրողներին, ովքեր աշխատում են ամերիկյան լրատվամիջոցներում: Չնայած վերջիններիս կարելի էր ընդգրկել մտավոր ներուժի շրջանակներում՝ նկատի ունենալով, որ լրագրողական գործունեությունը պարունակում է վերլուծական-փորձագիտական աշխատանքի լուրջ տարրեր, այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ՝ ա) դժվար է գերագնահատել լրատվամիջոցների ազդեցությունը քաղաքական գործընթացների վրա և բ) ԱՄՆ լրատվամիջոցներն իրենց վարկանիշով, ինչպես նաև ազդեցության մասշտաբներով հանդիսանում են, ըստ էության, համաշխարհային լրատվամիջոցներ, նպատակահարմար է նրանց համարել որպես այդ երկրի հայ համայնքի քաղաքական ներուժի մաս:

ԱՄՆ լրատվամիջոցներում աշխատող հայազգի լրագրողներից հայտնի են Սթիվ Քյուրքյանը (*«The Boston Globe»* օրաթերթի հետաքննական բաժնի հիմնադիր, հետաքննող լրագրող, Պուլիտցերյան մրցանակի եռակի դափնեկիր), Դեյվիդ Իգնեյշըսը[2] (*Washington Post* օրաթերթի խմբագիրներից), Լարա Սեդրակյանը (*Bloomberg* հեռուստաընկերության նախկին աշխատակից, ներկայում՝ *News Deeply* մեդիա և տեխնոլոգիական հարթակի համահիմնադիր), Արաքսյա Կարապետյանը (*Fox* հեռուստաընն-

[1] Տե՛ս Հայ Դատը Կը Զօրակցի Լոս Անճելըսի Քաղաքապետական Խորհուրդի Թեկնածու Գարօ Թորոսեանին, http://hayernaysor.am/cl/archives/225359

[2] Իգնադիոսյան:

կերության հաղորդավար) և ուրիշներ [ԱՄՆ լրատվամիջոցներում աշխատող հայ լրագրողների մասին մանրամասն տե՛ս 13, էջ 62-69]:

Այս շրջանակներում կարելի է ընդգրկել նաև այլ երկրների հեղինակավոր լրատվամիջոցների ԱՄՆ թղթակիցներին, ինչպես, օրինակ՝ Գայանե Չիչակյանին *(«Russia Today»* հեռուստաընկերության Վաշինգտոնի թղթակից), Թոմաս Գորգիսյանին (եգիպտական *«AL AHRAM»* թերթի Վաշինգտոնի թղթակից):

Համաշխարհային լրատվամիջոցներում աշխատող հայ լրագրողների ներուժի օգտագործումն ի նպաստ ազգային խնդիրների լուծման էլ ավելի է կարևորվում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հենց այդ լրատվամիջոցներով է թուրք-ադրբեջանական լոբբին ծավալում իր հակահայկական քարոզչությունը՝ փորձելով մոլորության մեջ գցել հայկական խնդիրներից անտեղյակ կամ դրանց ոչ այնքան քաջածանոթ համաշխարհային հանրությանը [տե՛ս 14]: Այդ նպատակով ծախսվում են հսկայական գումարներ:

Համաշխարհային լրատվամիջոցներով հակահայկական քարոզչության դեմ պայքար են մղում հայկական լոբբիստական կառույցները՝ փորձելով հակադարձել հակահայ հրապարակումներին այդ լրատվամիջոցներին ուղղված բողոք-նամակների և այլնի միջոցով [տե՛ս 14]: Կարծում ենք, այդ պայքարում նպատակահարմար կլիներ օգտագործել նաև ամերիկյան լրատվամիջոցների՝ ազգությամբ հայ աշխատակիցների հնարավորությունները:

Հասկանալի է, որ վերջիններս լիովին անկախ չեն իրենց գործունեության մեջ և չեն կարող իրենց աշխատանքը նվիրել հայկական թեմատիկային: Այնուամենայնիվ, կան որոշ մեխանիզմներ նրանց հայկական խնդիրների հետ որոշակիորեն կապելու և դրանց լուծմանը նրանց աշխատանքն ուղղորդելու համար: Այդպիսիք են.

1. *Մասնակցությունը համահայկական լրագրողական համաժողովներին:* Մինչև օրս կազմակերպված Լրագրողների համահայկական համաժողովներին (մինչ այժմ կազմակերպվել է 8 այդպիսի համաժողով) հրավիրվել են միայն Սփյուռքի հայկական լրատվամիջոցների ներկայացուցիչները: Հետայսու կարելի է հրավիրել նաև միջազգային լրատվամիջոցներում աշխատող հայ լրագրողներին կամ կազմակերպել միջազգային լրատվամիջոցներում աշխատող հայ լրագրողների առանձին համաժողովներ:
2. *Դեպի Հայաստան այցերի կազմակերպում:* 2016թ. հոկտեմբերի 20-24-ը Երևանում և Ստեփանակերտում անցկացված Լրագրողների համա-

հայկական 8-րդ համաժողովի հոլովույթում միտք հնչեց Սփյուռքի հայ համայնքների միջոցներով պարբերաբար դեպի Հայաստան օտարերկրյա լրագրողների գործուղումներ կազմակերպելու մասին, ինչը դիտարկվեց համեմատաբար փոքր միջոցներով արդյունավետ տեղեկատվական քաղաքականություն՝ ի նպաստ Հայաստանում զբոսաշրջության զարգացման և տեղեկատվական ասպարեզում հայության շահերի պաշտպանության [տե՛ս 15]: Կարծում ենք, նման քաղաքականություն իրականացնելիս նպատակահարմար է շեշտը դնել առաջին հերթին օտարերկրյա լրատվամիջոցներում աշխատող հայ լրագրողների վրա, այդ կերպ՝ ա) նրանց կապելով հայ համայնքներին ու հայրենիքին, բարձրացնելով նրանց մեջ ազգային ինքնագիտակցությունը և բ) նրանց հնարավորություններն օգտագործելով հօգուտ ազգային խնդիրների լուծման:

Սեպտեմբեր, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Samuel P. Huntington,* Who We are? America's Great Debate, New Delhi: Penguin Books, 2004.
2. *Մարության Հ.,* Ցեղասպանության հարյուրամյա հիշողությունը և «ամերիկահայ ազգության» ձևավորման գործընթացը, Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում, գիտաժողովի զեկուցումներ, Եր., ԵՊՀ հրատ., 2013:
3. «Հայ սփյուռք» հանրագիտարան, Եր., «Տիգրան Մեծ», 2003:
4. *Վարդանյան Ա.,* Հայ օգնության միության (ՀՕՄ) գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում և Արցախում, Հայրենիք-սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009թթ.): Հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, «Պոլիգրաֆ» ՓԲԸ, 2010:
5. *Եգանյան Ա.,* Հայաստանի Հանրապետության և ամերիկահայ լոբբինգային կառույցների համագործակցության ռազմավարական գնահատումներ, Աշխատանքային տետրեր (ԱՄՆ-ի Հայկական լոբբինգային կառույցների գործունեությունը ՀՀ ազգային անվտանգության ռազմավարական շահերի տեսանկյունից), թիվ 1 և 2, 2010:
6. *Дятлов В., Мелконян Э.,* Армянская диаспора: очерки социокультурной типологии, Ер., Институт Кавказа, 2009.
7. *Զարիֆյան Ժ.,* Ամերիկահայկական լոբբին. կառուցվածքը, մեթոդները և արդյունքները, Աշխատանքային տետրեր (ԱՄՆ-ի Հայկական լոբբինգային կառույցների գործունեությունը ՀՀ ազգային անվտանգության ռազմավարական շահերի տեսանկյունից), թիվ 1 և 2, 2010, էջ 170:
8. *Տեր-Մաթևոսյան Վ.,* Հայրենիք-Սփյուռք. խնդիրների ռազմավարական գնահատումներ, Աշխատանքային տետրեր (ԱՄՆ-ի Հայկական լոբբինգային կառույց-

ների գործունեությունը ՀՀ ազգային անվտանգության ռազմավարական շահերի տեսանկյունից), թիվ 1 և 2, 2010։
9. *Искандарян А., Минасян С.,* Прагматичность политики сквозь реалии исторических ограничений: анализируя армяно-турецкий процесс, *Аналитические доклады Института Кавказа, №1, январь 2010,* Ер., Институт Кавказа, 2010.
10. *Sergey Minasyan,* Nagorno-Karabkh After Two Decades of Conflict: is Prolongation of the Status Quo Inevitable? Caucasus Institute Research Papers, #2, August 2010. – Yerevan: Caucasus Institute.
11. *Քոչիկյան Ա.,* Հայկական լոբբինգային խմբերի ծագումն ու զարգացումը Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Աշխատանքային տետրեր (ԱՄՆ-ի Հայկական լոբբինգային կառույցների գործունեությունը ՀՀ ազգային անվտանգության ռազմավարական շահերի տեսանկյունից), թիվ 1 և 2, 2010։
12. *Հովյան Վ.,* Սփյուռքի դերակատարումը Հայաստանի համար, Գլոբուս, թիվ 6, 2014։
13. *Վերանյան Կ., Նահապետյան Հ., Սիմավորյան Ա., Ղանալանյան Տ.,* Հայ համայնքն ԱՄՆ-ում, Եր., «Գասպրինտ», 2010։
14. *Գասպարյան Ս.,* Հակահայկական «Ռեյչել մեդոու շոու», Ազգ, 23.12.2016։
15. *Հարեյան Ա.,* Պատկերացրեք, եթե սփյուռքը հայրենիքին օգներ PR-ի այս ձևով, ինչքան արդյունավետ կլիներ այն, Առավոտ, 24.11.2016։

ԱՄՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ. ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՓՈՐՁ

Վահրամ Հովյան

Ամփոփագիր

ԱՄՆ հայ համայնքի քաղաքական ներուժը, ըստ կազմակերպվածության աստիճանի, կարելի է բաժանել երկու մասի՝ ինստիտուցիոնալ և անհատական։ Ինստիտուցիոնալ մակարդակում այն հանդես է գալիս ավանդական կուսակցությունների և գլխավորապես՝ լոբբիստական կազմակերպությունների տեսքով։ Անհատական մակարդակում ԱՄՆ հայկական քաղաքական ներուժն իր հերթին բաժանվում է երկու մասի՝ դաշնային (համապետական) և տեղական իշխանություններում ընդգրկված հայազգի գործիչներ։ Դաշնային մակարդակով հայ գործիչներն ընդգրկված են իշխանության երեք ճյուղերի (օրենսդիր, գործադիր և դատական), ինչպես նաև միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ) գործունեության մեջ։ Տեղական մակարդակում հայեր կան ինչպես նահանգային, այնպես էլ քաղաքային իշխանական մարմիններում։

ԱՄՆ հայ համայնքի քաղաքական ներուժի (անհատական մակարդակով) մաս են կազմում նաև ամերիկյան լրատվամիջոցներում աշխատող հայազգի լրագրողները։

ПОЛИТИЧЕСКИЙ ПОТЕНЦИАЛ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ США: ПОПЫТКА КЛАССИФИКАЦИИ

Ваграм Овян

Резюме

Политический потенциал армянской общины США по степени организованности можно разделить на две части: институциональную и индивидуальную. На институциональном уровне она представлена в виде традиционных партий и, преимущественно, лоббистских организаций. На индивидуальном уровне армянский политический потенциал США в свою очередь делится на две части – политиков-армян, функционирующих на уровне федеральных (общегосударственных) и местных властей. На федеральном уровне политики-армяне представлены во всех трех ветвях власти (законодательной, исполнительной и судебной), а также в сфере деятельности международных организаций (ООН). На локальном уровне армяне есть как в штатских, так и в городских органах управления.

Частью политического потенциала армянской общины США (на индивидуальном уровне) являются также работающие в американских СМИ журналисты армянского происхождения.

THE POLITICAL POTENTIAL OF THE ARMENIAN COMMUNITY OF THE USA: A CLASSIFICATION ATTEMPT

Vahram Hovyan

Resume

The political potential of the Armenian community of the USA can be divided in two parts according to the level of organization: institutional and individual. At the institutional level it is manifested in the form of traditional political parties and predominantly, lobbyist organizations. At the individual level, the Armenian political potential, in turn, is divided into two levels: federal and local government officials of Armenian descent. At the federal level, there are Armenians in all three branches of power (legislative, executive and judicial), as well as in international organizations (such as UN). At the local level, there are Armenians in both state and municipal government bodies.

The Armenian reporters working in American media are part of the political potential of the Armenian community in the US, at the individual level.

ՀՏԴ 391/395 (=919.81):316.3

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վլադիմիր Հակոբյան*

Բանալի բառեր՝ Հայկական սփյուռք, Եվրոպա, Ռուսաստանի Դաշնություն, ազգային ինքնություն, ձուլման վտանգ, հայկական մամուլ:

Հետազոտողները փաստում են, որ Արևմտյան Եվրոպայի երկրներում հայերը սկսել են հաստատվել անհիշելի ժամանակներից, իսկ հատկապես միջին դարերում առավել հայտնի են եղել Արևելյան Եվրոպայի հայկական գաղթօջախները, որոնց մեծ մասն առևտրական քաղաքներ կամ թաղամասեր էին՝ իրենց դպրոցներով, եկեղեցիներով, տպարաններով, այլ հաստատություններով, իսկ ավելի ուշ՝ նաև մամուլով:

Սկզբնական շրջանում առավել ծանր էր հայ գաղթականների վիճակը Արևմտյան Եվրոպայի արագ զարգացող երկրներում՝ Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում և այլուր: Սակայն տարիների ընթացքում հաղթահարելով իրենց առջև ծառացած դժվարությունները՝ հայերը կարողացան դառնալ այդ երկրների լիիրավ քաղաքացիներ: Այսօր արդեն Արևմտյան Եվրոպայի բոլոր երկրներում՝ բացի Լյուքսեմբուրգից, Սան Մարինոյից, Անդորայից, Մոնակոյից, Լիխտենշտեյնից և Վատիկանից, կան ձևավորված հայկական համայնքներ, որոնցից ամենախոշորը Ֆրանսիայի հայկական համայնքն է (մոտ 700 հազար)[1]:

Հյուսիսային Եվրոպայում՝ բացի Իսլանդիայից, մյուս բոլոր երկրներում նույնպես կան ձևավորված հայկական համայնքներ, որոնցից ամենախոշորը Շվեդիայի հայկական համայնքն է (մոտ 13 հազար)[2]:

Արևելյան Եվրոպայում՝ բացի Սլովենիայից, Բոսնիա և Հերցեգովինայից ու Կոսովոյից, մնացած բոլոր երկրներում նույնպես կան ձևավորված հայկական համայնքներ: Այս տարածաշրջանի ամենահայաշատ երկիրը Լեհաստանն է (մոտ 45 հազար)[3]:

---

* ՀՀ նախագահի մամուլի քարտուղար:

[1] *Հրանուշ Հակոբյան,* Հայերի վիճակն աշխարհում, Երևան, 2016թ., էջ 61:

[2] Նույն տեղում, էջ 69:

[3] Նույն տեղում, էջ 72:

Իսկ Ռուսաստանի հայկական համայնքն ամենամեծն է աշխարհում: Պաշտոնական տվյալներով այսօր Ռուսաստանում ապրում է մոտ 1.200.000, իսկ ոչ պաշտոնական տվյալներով՝ մոտ 2.600.000 հայ[1]:

Գիտական ուսումնասիրություններում հայկական սփյուռքի ձևավորման և զարգացման պատմաաշխարհագրական ընթացքը հիմնականում ներկայացվում է երեք փուլով (1-ին փուլ՝ մինչև 1915թ., 2-րդ փուլ՝ 1915-1991թթ. և 3-րդ փուլ՝ 1991-ից մինչև օրս), որոնց առանձնացման հիմքում ընկած են ձևավորման պատճառների, ինքնակազմակերպման առանձնահատկությունների և աշխարհագրական տեղաբաշխման ընդհանրությունները[2]:

Կարելի է փաստել, որ դարերի ընթացքում հայերի շարունակական արտագաղթը կանխորոշել է հայության աշխարհընկալման և կենսափիլիսոփայության այնպիսի առանձնահատուկ բնույթի ձևավորումը, երբ այլ երկրներում ապրելը սկսել է դիտվել որպես ճակատագրով նախասահմանված, անխուսափելի մի երևույթ: Դրա հետ մեկտեղ, շարունակ ապրելով օտար երկրներում՝ նրանցում ձևավորվել են ինչպես այլ հասարակություններին և մշակույթներին հարմարվելու, այնպես էլ իրենց ազգամշակութային ինքնությունը պահպանելու և զարգացնելու ունակություններ և ավանդույթներ:

Ինչ վերաբերում է Եվրոպայի և Ռուսաստանի սփյուռքի ձևավորման գործընթացին, այն եղել և շարունակվում է նշված բոլոր երեք փուլերում էլ:

Առաջին փուլի ավարտին, երբ հայրենիքից դուրս ապրող հայության թիվը (առանց ռուսահպատակ և թուրքահպատակ տարածքներում ապրող հայերի) հասնում էր 200 հազարի, նրանց մի մասն ապրում էր հենց եվրոպական երկրներում, և արդեն կային հայկական այնպիսի համեմատաբար խոշոր գաղթօջախներ, ինչպիսիք էին Բուլղարիայի (25 հազար) և Ռումինիայի (10 հազար) հայ համայնքները: Առաջին փուլի ավարտին *«հայկական սփյուռքի ձևավորվող աշխարհագրական պատկերի մեջ առանձնանում էին կարևոր կենտրոններ, որտեղ ապրող հայության ազգային գործունեությունը կազմակերպվում ու կարգավորվում էր համայնքային հաստատությունների ամբողջական համակարգով՝ եկեղեցիներ, բարեգործական, կրթամշակութային, հայրենակցական, քաղաքական և այլ կազմակերպություններ»*[3]: Այդ կենտրոնների մեջ կային այնպիսիները (եվրոպական և ռուսական տարածաշրջանում՝ Վենետիկ, Մոսկվա), որոնք հայ ազգի մշակու-

[1] Նույն տեղում, էջ 44-46:
[2] *Ա.Ներսիսյան,* Հայկական Սփյուռքի աշխարհագրություն, Գյումրի, 2014թ., էջ 8-12, http://etm.gspi.am/wp/wp-content/uploads/:
[3] Նույն տեղում, էջ 8:

թային, քաղաքական և տնտեսական կյանքում ավելի մեծ ազդեցություն ունեին, քան հայրենի աշխարհագրական տարածությունում գտնվողները:

Երկրորդ փուլի ավարտին արդեն *«ամբողջացավ հայկական սփյուռքի աշխարհագրական պատկերը, որի ցրված տեղաբաշխման մեջ առանձնանում էին սփյուռքի կազմակերպիչ-կենտրոնները»*, դրանց թվում՝ Ֆրանսիան և Ռուսաստանը: Արտաքին միգրացիաներն արտահայտվել են հայրենադարձության ալիքների միջոցով, իսկ ներքին միգրացիաների մեջ գերակշռել է Մերձավոր Արևելքի տնտեսապես թույլ զարգացած երկրներից հայերի արտագաղթը դեպի զարգացած, այդ թվում՝ եվրոպական երկրներ: Այս ամենի ընթացքում կտրուկ աճել է եվրոպական երկրների *«հայկական համայնքների քանակական և որակական (մասնագիտական ներուժի, կապիտալի տեսքով) պոտենցիալը՝ ի հաշիվ ասիական համայնքների»*[1]:

Այս փուլի ավարտին *«Հայկական սփյուռքը, չնայած իր ներքին բազմաշերտությանը, հասարակական և գիտական շրջանակներում սկսեց ընկալվել որպես մեկ ամբողջություն՝ ներքին կազմակերպչական կառուցվածքով և սոցիալական ինստիտուտների կայուն և նպատակաուղղված գործունեությամբ: Արդյունքում՝ չնայած ուծացմանը նպաստող պայմաններին, հայկական սփյուռքը շարունակում էր առանձնանալ ազգային մտածելակերպի շատ բարձր նշաձողով»*[2]:

Երրորդ փուլը, որը ժամանակային առումով համընկնում է նորանկախ Հայաստանի Հանրապետության գոյության շրջանին, պետք է որ առանձնանար հայրենադարձության պատկերով, սակայն իրականում պատկերն այլ է, և հայրենադարձության փոխարեն տեսանք արտագաղթ, ինչը հանգեցրեց հայկական սփյուռքի ձևավորման ևս մեկ փուլի:

Երրորդ փուլում հայրենիքից տեղի ունեցած արտագաղթի արդյունքում (հստակ թվեր հայտնի չեն) սփյուռքը քանակապես համալրվեց, ավելացան նաև Ռուսաստանի Դաշնության և Եվրոպայի հայկական համայնքները:

Ռուսաստանի ու Եվրոպայի հայկական համայնքների ընդլայնման վրա ազդեցություն ունեցավ նաև Ադրբեջանից հայերի բռնագաղթը. կազմաքանդվեց Ադրբեջանի 400 հազարանոց հայկական համայնքը, և ունեզրկված, մահից փրկված հայերի զգալի մասը գաղթեց Ռուսաստան ու Եվրոպա: Նմանատիպ գործընթաց տեղի ունեցավ նաև ասիական երկրներում, երբ իրաքյան և սիրիական ճգնաժամերի արդյունքում տեղի հայ հա-

[1] Նույն տեղում, էջ 10:
[2] Նույն տեղում:

մայնքները նույնպես գրեթե կազմաքանդվեցին, և մեծ քանակությամբ հայեր տեղափոխվեցին նաև եվրոպական երկրներ[1]:

Հայկական սփյուռքը պայմանականորեն բաժանվում է երկու հատվածների՝ դասական հատված, որի ձևավորման ժամանակագրությունը համապատասխանում է հայկական սփյուռքի ձևավորման 1-ին և 2-րդ փուլերին, և արդի հատված: Այս հատվածի աշխարհագրական տեղաբաշխման մեջ առավել ընդգծվողներից են հենց ռուսական և եվրոպական արեալները: Թերևս, պետք է համաձայնել այն դիտարկմանը, որ *«հայկական սփյուռք» ամբողջական հասկացության պայմանական բաժանումը պայմանավորված է ոչ միայն ժամանակագրական, այլև բովանդակային հանգամանքով, քանի որ սփյուռքի երկու հատվածների և հայկական նոր պետականության միջև փոխադարձ կապերը տարբեր հարթություններում են արտահայտվում»*[2]:

Ինչ վերաբերում է ԱՊՀ տարածաշրջանի երկրներից Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի հայկական համայնքներին, ապա վերջիններիս պատմությունը սկիզբ է առնում մոտավորապես 11-րդ դարից, երբ Կիևյան Ռուսիայի տարածքում արդեն կային հայկական համայնքներ: Ի դեպ, այս երկրներում հայերը միշտ աչքի են ընկել իրենց օրինապաշտությամբ և աշխատասիրությամբ, արժանացել են պարգևների, տարատեսակ արտոնությունների: Այս երկրներում հայերը մեծ ներդրում են ունեցել տնտեսական, քաղաքական, ռազմական, գիտական, մշակութային և այլ ոլորտներում: Այսօր Ռուսաստանի հայկական համայնքը, ինչպես արդեն վերևում նշել ենք, ամենամեծն է աշխարհում: Ուկրաինայինն էլ ամենամեծ համայնքներից է՝ մոտ 550 հազար հայ, Բելառուսինը՝ մոտ 35 հազար[3]:

Այսպիսով, Ռուսաստանում և Եվրոպայում հայկական համայնքներ գոյություն են ունեցել դեռ վաղ անցյալից, և դրանց ձևավորումը պայմանավորված է եղել օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններով: Վիճակագրությունը փաստում է, որ հայերն այսօր տեղաբաշխված են Եվրոպայի ժամանակակից քաղաքական քարտեզում առանձնացող գրեթե բոլոր պետություններում, իսկ դրանց մոտ կեսում հայկական համայնքները հանդես են գալիս ինքնակազմակերպվածության բավական բարձր մակարդակով: Եվրոպական 44 պետություններից առնվազն 22-ում գործում են հայկական կազմակերպված համայնքներ, որտեղ ապրում է շուրջ 1 միլիոն 280 հազար հայ[4]:

[1] Նույն տեղում, էջ 12:
[2] Նույն տեղում, էջ 13:
[3] *Հրանուշ Հակոբյան,* Հայերի վիճակն աշխարհում, Երևան, 2016թ., էջ 44-46:
[4] Նույն տեղում, էջ 49:

Ինչպես և մյուս բոլոր հայկական գաղթօջախներում, Եվրոպայում և Ռուսաստանում ապրող հայերը նույնպես ունեն օտար հասարակություններում չձուլվելու, ազգային ինքնության պահպանման և ամրապանդման խնդիր, ինչի լուծմանը նպաստում են հայկական գաղթօջախների համայնքային բոլոր հաստատությունները՝ եկեղեցիները, դպրոցները, բարեգործական, մշակութային և քաղաքական կազմակերպությունները, և, իհարկե, հայկական մամուլը, որը Եվրոպայում և Ռուսաստանում նույնպես ունի բավական հարուստ պատմություն: Հարկ է նշել, որ ինչպես Եվրոպայի և Ռուսաստանի հայկական սփյուռքերն են որոշակիորեն տարբերվում Ամերիկայի, Ավստրալիայի, Մերձավոր Արևելքի և այլ տարածաշրջանների հայկական սփյուռքերից, համապատասխանաբար՝ Եվրոպայի և Ռուսաստանի հայկական մամուլն էլ ունի իր առանձնահատկությունները, քանզի տարբեր մայրցամաքների հայկական համայնքների խնդիրներն էլ որոշ չափով տարբեր են: Հատկապես մեծ է ձուլման, ուծացման վտանգը Ռուսաստանի Դաշնությունում, որովհետև ռուսերենը հայերի համար մատչելի և հասկանալի լեզու է, հետևաբար տեղափոխվելով Ռուսաստան բնակության և տեղի լեզվին ի սկզբանե տիրապետելով՝ հայերն ավելի արագ կարող են ինտեգրվել նոր հասարակությունում, ընդունել նոր արժեհամակարգը, բարքերը: Իսկ արդյունքում նրանք ավելի արագ կարող են հեռանալ իրենց ազգային ինքնությունից:

Ընդհանրապես, նորը մարդկանց ձգում է, հրապուրում, շատերի մեջ նույնիսկ կարող է տեղի ունենալ որոշ արժեքների վերանայում, և այստեղ է, որ կարող է տուժել ազգային ինքնության գիտակցությունը: Իսկ այդ գիտակցությունը չկորցնելու համար մեծ է նշված համայնքներում գործող հայկական տարբեր կառույցների, ինստիտուտների և հատկապես հայկական մամուլի դերը: Մարդկանց, որոնց համար առաջնային խնդիր է դարձել նոր հասարակություններում ինտեգրվելը և այդ հասարակությունների արժեհամակարգը յուրացնելը, թերևս՝ այդտեղ գործող հայկական, մանավանդ հայալեզու լրատվամիջոցներն են, որ կարող են հնարավորություն տալ հաղորդակից լինել մայրենի լեզվին (մանավանդ եթե հայն ապրում և աշխատում է օտարալեզու միջավայրում), հետևել Հայաստանի և հայերի հետ կապված քաղաքական, հասարակական, մշակութային, մարզական և այլ նորություններին: ԶԼՄ-ն կարող են նույնիսկ օտար միջավայրով ոգևորված հայ մարդուն հաղորդակից դարձնել ազգային խնդիրներին և օգնել՝ չհեռանալու իր ինքնությունից: Այս տեսանկյունից չափազանց կարևոր են Եվրո-

պայի և Ռուսաստանի հայկական մամուլի մանրակրկիտ ուսումնասիրությունն ու վերլուծությունը, դրանց հետ կապված բոլոր խնդիրները վեր հանելը, առավել ևս, որ Եվրոպայի և Ռուսաստանի հայկական մամուլի գերխնդիրը հենց տեսակի, տեղի հայկական համայնքների ազգային ինքնությունը պահպանելն է: Թե ինչպես է Ռուսաստանի և Եվրոպայի հայկական մամուլը լուծում այդ խնդիրը և իրականացնում իր առաքելությունը՝ այլ հոդվածի թեմա է, որին կանդրադառնանք հանգամանորեն:

Սեպտեմբեր, 2017թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վլադիմիր Հակոբյան

Ամփոփագիր

Ինչպես և մյուս հայկական համայնքներում, Եվրոպայում և Ռուսաստանում ապրող հայերը նույնպես կանգնած են ուծացման վտանգի առջև: Հատկապես Ռուսաստանում մեծ է ուծացման վտանգը, քանի որ հայերը տիրապետում են ռուսերենին, ինչի հետևանքով ավելի արագ են ընդունում տեղի կենսակերպն ու արժեհամակարգը՝ հեռանալով ազգային ինքնությունից: Եվրոպայում և Ռուսաստանում ապրող հայերը նույնպես ազգային ինքնությունը պահպանելու խնդիր ունեն: Այս խնդրի իրագործմանը նպաստում են համայնքներում գործող ինչպես բազմաթիվ ազգային հաստատություններն ու կազմակերպությունները, այնպես էլ զանգվածային լրատվամիջոցները, հայկական մամուլը, որը Ռուսաստանում և Եվրոպայում բավական հարուստ պատմություն ունի: Չէ՞ որ հենց զանգվածային լրատվամիջոցներն են կարող օտար միջավայրով տարված հայերին հաղորդակից դարձնել իրենց ազգայինին: Այս տեսակետից շատ կարևոր են համարվում Եվրոպայում և Ռուսաստանում հայկական մամուլի մանրազնին ուսումնասիրումն ու վերլուծությունը, մանավանդ որ այդ մամուլի գլխավոր խնդիրը սույն երկրներում ապրող հայերի ազգային ինքնության պահպանումն է:

АРМЯНСКАЯ ДИАСПОРА В ЕВРОПЕ И РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ

Владимир Акопян

Резюме

Как и во всех других армянских общинах, армяне, живущие в Европе и в России, тоже стоят перед угрозой ассимиляции. В России опасность ассимиляции особенно велика из-за доступности для армян русского языка, вследствие чего армяне быстрее принимают местный образ жизни и местные ценности, отходя от своей национальной идентичности. У армян, живущих в Европе и России, тоже есть задача сохранения национальной идентичности. Выполнению данной задачи способствуют как многие национальные учреждения и организации в общинах, так и средства массовой информации, армянская пресса, которая в России и в Европе имеет довольно богатую историю. Поэтому тщательное изучение и анализ армянской прессы в Европе и России очень важны, тем более что главной задачей этой прессы является сохранение национальной идентичности армян, проживающих в данных странах.

ARMENIAN DIASPORA IN EUROPE AND THE RUSSIAN FEDERATION

Vladimir Hakobyan

Resume

Just like in all other Armenian communities, Armenians who live in Europe and Russia, also face the challenge of assimilation. Especially in case of Russia, the danger of assimilation is much higher due to the command of the Russian language by Armenians, as a result of which Armenians quickly adopt the local lifestyle and local values, distancing themselves from their national identity. Armenians, living in Europe and Russia have an objective to maintain their national identity. Many national institutions, organizations within communities, mass media, as well as Armenian press, which has a rich history both in Russia and Europe, foster the achievement of this objective. After all, it is the mass media that can accustom the Armenians, who are attracted by foreign environment, to the national values. From this point of view, it is of an utmost significance to conduct thorough research and analysis of the Armenian press in Europe and Russia, especially since the main task of these media is to preserve the national identity of Armenians residing in these countries.

ՀՏԴ 94 (55):325/327

Ա. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ, ԻՐԱՆԸ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ

Դերենիկ Մելիքյան*

Բանալի բառեր ՝ Առաջին աշխարհամարտ, Իրան, սրբազան պատերազմ, չեզոք դիրք, թուրքական արտաքին զավթումներ, Իրանական Ատրպատական:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմում թեև Ղաջարական Իրանը Ահմեդ շահի օրոք չեզոքություն էր որդեգրել[1], սակայն, կենտրոնական իշխանության տկարության պատճառով, դա իրականացնել չհաջողվեց: Երկրի հյուսիսը, հարավը, արևելքն ու արևմուտքը յուրային ու օտար բանակների ասպարեզ հանդիսացան, հատկապես պատերազմական կիզակետ դարձած Ատրպատականում, և արդյունքում՝ 4-ամյա պատերազմական շրջանում երկիրը մեծագույն վնասներ ու կորուստներ կրեց: Ըստ «Այգ»-ի մեկնաբանության՝ «*Չկա մի անկյուն ամբողջ երկրագնդի վրա, ուր իր բացասական ազդեցության դրոշմը դրած չլինի ներկա համաշխարհային փոթորիկը: Մեր երկիրը* (Պարսկաստանը- *Դ.Մ.) ավելի սերտ կերպով կապված լինելով պատերազմող կողմերի հետ, թե՛ իր տնտեսական ու քաղաքական կյանքով և թե՛ աշխարհագրական դիրքով, բոլորովին անսպասելի չէր, որ նա էլ ենթարկվեր որոշ ցնցումների*»[2]:

Չնայած Ա. աշխարհամարտի վերաբերյալ Պարսկաստանի կողմից ի սկզբանե չեզոք դիրք որդեգրելու հանգամանքին, այնուամենայնիվ, «*...կարելի է ասել,*- գրում է «Այգ»-ը,- *որ ողջ աշխարհը բաժանված է երկու կռվող բանակների: Չեզոքություն բառը վաղուց արդեն կորցրել է իր իսկական իմաստը: Այդ բաժանումը տեղի է ունեցել ոչ կրոնական և ոչ էլ ցեղական կապերի հիման վրա: Այլապես մենք այսօր երբեք ականատես չէինք լինի,*

* «Ալիք» օրաթերթի գլխավոր խմբագիր:

[1] Ըստ պարսկալեզու «Ռաադ» (Ամպրոպ) թերթի՝ Իրանի ներքին գործերի նախարարությունը, վկայակոչելով Ահմեդ շահի հրովարտակը Եվրոպայի պատերազմի մասին, երկրի մակարդակով շրջանառության մեջ էր դրել մի շրջաբերական, որում, ընդգծելով իր կառավարության չեզոքությունը, հորդորում էր հասարակական լայն խավերին խուսափել հակամարտող կողմերից որևէ մեկին կողմնակցություն կամ հակադրություն ցուցաբերելուց («Ռաադ», 4 նոյ. 1914թ., հ. 19, էջ 9):

[2] «Այգ» եռօրյա, 1915թ., հոկտ. 18, հ. 6, Թավրիզ:

թե ինչպես է մահմեդական Տաճկաստանը քրիստոնյա գերմանացու հետ միասին կռվում քրիստոնյա դաշնակիցների դեմ: ...Վարվում է մի կռիվ, որի հիմքը, երեսն ու աստառը մինչև այն աստիճան ակներև ու զուտ տնտեսական են և ազգային, որ ամենահամեստ մտավոր ընդունակության տեր մարդու համար էլ կասկածելի են այն բոլոր հայտարարությունները, որոնք տրվել ու տրվում են կառավարությունների կողմից ցեղակցական թասիբի, դաշնակցային պատվի, թույլի պաշտպանության, միջազգային օրենքի պաշտպանման և շատ այս կարգի ազնիվ զգացմունքների համեմով շաղախված, որոնք ամենևին չեն սազում ժողովրդի կյանքն ու բախտը անտեսող դիպլոմատիային, որ երկրին էլ պատկանելիս լինեն դրանք:

...Մասնավորապես, մենք՝ հայերս, ինչքան շատ անգամներ ֆիզիկապես զգացել և դեռ շարունակում ենք զգալ գարշ բյուրոկրատիայի «բարեմասնությունների» բովանդակ արժեքը: Նա (բյուրոկրատիան- *Դ.Մ.*) *ամեն երկրում էլ կա և դեռ կմնա. չգիտենք՝ այդքանը հասկանո՞ւմ են մեր պարսիկ հայրենակիցները, թե՞ ոչ: Մենք կասկածում ենք,-* շարունակում է «Այգ»-ի հոդվածագիրը,- *կասկածում ենք, երբ տեսնում ենք, որ կրոնական մղումով պարսիկը իր համակրանքն ու աջակցությունն է նվիրում տաճիկին: Զանազան ձրի խոտումներով, որպիսին է երկրի վերածնությունը, նրա կատարյալ անկախությունը և այլն, նույն պարսիկ ինտելիգենտը գերմանական պրովոկացիային է ենթարկվում:*

Պարսիկ հրապարակագիրները չեն քաշվում նույնիսկ այդ տեսակետից իրենց արջի ծառայությունը լիուլի մատուցելու քաղաքականապես այնքան տհաս մեր պարսիկ հայրենակիցներին, որոնց աչքում տպագրական խոսքը ճանաչվում է որպես սրբություն, իսկ դրա միջոցով ասված ամեն մի անհեթեթություն իսկ՝ որպես ճշմարտություն:

Ամենից ցավալին մեր ներկա կառավարության բռնած անճարակի դիրքն է: Ամեն բան ընդունում է, ամեն բան՝ բացառում...»[1]:

Այսպիսով, «Այգ»-ի վերոգրյալ մեկնաբանությամբ առավել պարզ է դառնում այն իրողությունը, որ տվյալ պատմական պահին ղաջարական իշխանության ապիկարության և տկարության պատճառով Պարսկաստանի չեզոքության դիրքորոշումը հետագայում մնաց ապարդյուն, և արհավիրքները դարձան անխուսափելի:

Հենց այդ իրողությունն էր հիմք հանդիսանում նույն պարսիկ ինտելիգենցիային, որպեսզի կենտրոնական իշխանությանը դատապարտելով՝ բարձրաձայնի գերմանա-թուրքական դաշինքին միանալու կողմնորոշումը,

[1] «Այգ» եռօրյա, 1915թ., 22 հոկտ., հ. 7, էջ 1:

հատկապես վերջիններիս պրովոկացիային անհարկի տուրք տալով: Եվ իզուր չէր, որ նույն ժամանակաշրջանում պարսկական հաղորդակցական միջոցներում (իշխանական ընդդիմադիր թերթեր) տարածվում էին գերմանա-թուրքական պրովոկացիոն հայտարարություններ, ըստ որոնց. «*...Հաղորդում են, որ Պոլսի գերմանացի դեսպան Վագենհայմը աշխատում է գլուխ բերել թուրք-պարսկական դաշնակցություն, այն մտքով, որ Թուրքիան օգնի Պարսկաստանին զորքը մարգելու գործում, իսկ Պարսկաստանը տա Տաճկաստանին Ուրմիան և Խոյը*»[1]: Այսպես, հակաիշխանական գրողբանաստեղծ, «Նոբահար» թերթի խմբագիր Մալեքօլշոարայե Բահարը գովազդում էր հետևյալը. «*Նաջաֆի* (Իրաքում՝ կրոնական քաղաք- *Դ.Մ.*) *հոգևորականները հրապարակել են մի հրովարտակ, որով խրախուսում են, որպեսզի աշխարհի մուսուլմանները նեցուկ կանգնեն Օսմանյան կայսրությանը՝ ներգրավվելով պատերազմում...*»[2]:

Նույն «Նոբահար»-ը, սակայն, ճարահատ ավելացնում է նաև հետևյալը. «*Թավրիզի կրոնապետ Հաջի Միրզա Հասան Թաբրիզին սույն հրովարտակը պատռել և Նաջաֆի հոգևորականներին է ուղղել այսպիսի մի հեռագիր. «...Մենք այսօր չենք կարող օսմանցուն համընթաց լինել ու կռվել Ռուսաստանի դեմ. եթե մենք փորձենք չեզոքությունը կասեցնել և անել այն, որ անում է օսմանցին, ենթարկվելու ենք աշխարհի այն կողմից եկող մտրակի հարվածներին: Օսմանցին ազատ է ու ինչ կամենում է թող անի, սակայն մենք մեր կյանքը փրկելու համար պարտադրաբար պետք է չեզոքություն որդեգրենք...*»[3]:

Գերմանական պրովոկացիայի մեկ այլ ցուցիչ է հետևյալը, երբ պարսկերեն «Ռաադ» թերթը, վկայակոչելով «Ռոյթեր» գործակալությանը, «*Գերմանացիք մուսուլման են դառնում*» խորագրի ներքո գրում էր. «*Գերմանացիները, որպեսզի օսմանցիների համակրությունը ապահովեն ու ներթափանցեն մուսուլմանների մեջ, հայտարարում են, որ ընդունել են իսլամի պատվիրանները և մուսուլմանների մզկիթ են այցելում ու նամազ կարդում: Նույնիսկ մզկիթների շուրջ գերմանացի պահակներ են կանգնում, որոնց թևակապերը կրում են իսլամադավանություն ընդունող արաբերեն հայտնի կարգախոսը...*»[4]:

Այս երևույթը չի վրիպել ռուսական «Ռուսկոյե սլովո» լրատվամիջոցի ուշադրությունից. «*Գերմանական գործակալները Պարսկաստանում թռուցիկներ են տարածում՝ գրգռելով ընդհանուր Սրբազան պատերազմի*»[5]:

[1] Նույն տեղում, հոկտ. 19, էջ 3:
[2] «Նոբահար» (Նոր գարուն), 30 փետրվ. 1915թ., հ. 21, էջ 2:
[3] Նույն տեղում:
[4] «Ռաադ», 21 դեկտ. 1914թ., էջ 1:
[5] «Այգ» շաբաթաթերթ, 5 հոկտ. 1914թ., Գ. տարի, հ. 21, հաղորդում «Ռուսկոյե սլովո»-ից», էջ 5:

Գերմանա-թուրքական պրովոկացիոն գործողությունները միտում էին նաև Իրանին սիրաշահել՝ պատերազմում հակառուսական կեցվածք որդեգրելու համար: Դա էին վկայում նաև Ջուլֆայից Թիֆլիսի թերթերին հղված հեռագրերը, ըստ որոնց՝ «*Ատրպատականում ուժեղանում է թուրք–գերմանական պրոպագանդը ռուսական ազդեցության դեմ*»[1]: Կամ, ինչպես կրկին «Այգ»-ն է վկայակոչել. «*Պարսկաստանում, մանավանդ Թեհրանում և Թավրիզում գերմանական էմիսարները ազգաբնակչության մեջ եռանդուն ագիտացիա են մղում ռուսական իշխանությունների դեմ*»[2]:

Եվ ահա, իրեն չեզոք երկիր հայտարարած Իրանի տարածքում 1914թ. նոյեմբերի 2-ին ասորիների ջարդեր իրականացվեցին: Բանն այն էր, որ գերմանական և թուրքական հրամանատարությունների մշակած ծրագրում ռազմական գործողություններ էին նախատեսվել նաև Իրանում, որի տարածքը Գերմանիան և Թուրքիան ուզում էին օգտագործել որպես միջանցք դեպի Բաքվի նավթային շրջաններն ու այնուհետև՝ Միջին Ասիան գրավելու համար: Ուստի, Հյուսիսային Իրանը ևս վերածվեց հակամարտող երկու ճամբարների ռազմական գործողությունների թատերաբեմի[3]:

Մյուս կողմից, երբ Թուրքիան նույնիսկ դեռևս չէր մտել պատերազմի մեջ, այդուհանդերձ, թուրքական հրամանատարությունն իր զորքերը տեղակայեց Վանի, Սարայի, Բաշկալեի և Շամդինանի տարածքներում: Ի պատասխան՝ ռուսական հրամանատարությունը 1914թ. նոյեմբերի 20-ին գեներալ Ֆ.Չերնոզուբովի գլխավորությամբ զորքեր մտցրեց Իրան: Ռազմական հաջող գործողությունների արդյունքում ռուսական բանակը շուտով գրավեց Խոյը, Ուրմիան և Թավրիզը: Իրանական կառավարությունը Մոսթոֆի-օլ-Մամալեքի գլխավորությամբ, որն իշխանության գլուխ էր եկել 1914թ. օգոստոսին, իր դժգոհությունը հայտնեց ռուսական զորքերի Իրան ներթափանցելու կապակցությամբ: Հատկանշական է, որ դեռ նախքան ռուսական զորքերի՝ Իրանի տարածք մտնելը, 1914թ. նոյեմբերի 14-ին, Ուրմիայում Ռուսաստանի փոխհյուպատոս Վեդենսկին հեռագրեց, որ թուրքերը նպատակ ունեն գրավել Ուրմիայի շրջանը՝ այստեղից երկու ուղղություններով՝ Խոյ–Ջուլֆա և Սոլդուզ–Սաուջբուլաղ, հետագայում Թավրիզի շրջան դուրս գալու համար: Այս պայմաններում ռուսական հրամանատարությունը դիմեց այնպիսի մի հակաթուրքական ուժի աջակցությանը, որպիսին Ուրմիայում և նրա շրջակայքում ապրող 70.000 ասորիներն էին: Ավելի ուշ ռուսական զորքերը գրավեցին

[1] «Ղարադաղ» երկշաբաթաթերթ, 1914թ., մայիս 15:
[2] «Այգ» շաբաթաթերթ, 14 սեպտ. 1914թ., հ. 18:
[3] *Անահիտ Խոսրոևա,* «Ցեղասպանության փաստագրություն», «Ասորիների ջարդերը թուրքաբնակ վայրերում Ա. աշխարհամարտի տարիներին», էջ 88:

Խոյը, Ուրմիան և Թավրիզը: Նրանց օգնում էին ասորիները, որոնց վիճակն անգամ մինչև պատերազմը, իրոք, անտանելի էր: Դա էր պատճառը, որ նեստորական ասորիների մեծ մասն ընդունել էր ուղղափառ կրոն՝ այն հույսով, որ Ռուսաստանն օգնության ձեռք կմեկնի: Հանուն դրա՝ ասորիները խոստացել էին ռուսական հրամանատարության տրամադրության տակ դնել 40.000 զինյալ: Ասորիների ռուսական կողմնորոշմանը Թեհրանը պատասխանեց թշնամական գործողություններով՝ համագործակցեց թուրքերի և քրդերի հետ: Վերջինները 1914թ. սեպտեմբերին Ուրմիայի շրջանում հրդեհեցին ավելի քան 30 հայկական և ասորական գյուղեր[1]:

Նման պայմաններում և նույնիսկ մինչև այդ Մոսթոֆի-օլ-Մամալեքը բողոքի նոտա է հղում Ռուսաստանի դեսպանությանը, որտեղ հայտնում էր, թե Իրանի կառավարությունը մտադիր է պահպանել չեզոք դիրքը՝ հեռու մնալով պատերազմում ներքաշվելուց. ուստի Իրանի կառավարությունը Ռուսաստանին խնդրում է, որպեսզի վերջինս իր զորքերը հետ կանչի իրանական տարածքներից, որով էլ ապացուցած կլինի իր հարգանքը Իրանի չեզոքության նկատմամբ: Մոսթոֆի-օլ-Մամալեքը շեշտադրում էր նաև այն հանգամանքը, որ Ռուսաստանի դրական պատասխանը պատճառ է հանդիսանալու, որ օսմանական բանակը ևս իրեն հեռու պահի երկրի տարածքներից ու նույնպես հաշվի նստի Իրանի չեզոքության հետ, որի մասին իբր խոստացել է օսմանցի ավագ դեսպանը[2]: *«Թեհրանից հեռագրում են,-* գրում է «Այգ»-ը,- *որ սեպտեմբերի 21-ին պարսկական կառավարությունը դիմել է Ռուսաց միսիային մի հայտագրով, որի մեջ ասում է, թե Պարսկաստանը ուզում է խուսափել համաշխարհային պատերազմին մասնակցելու կործանարար հետևանքներից՝ չեզոքություն հայտարարելով: Նա խնդրում է, որ Ռուսաստանը օգնի իրեն այս գործում՝ իր զորքերը հետ կանչելով Ատրպատականից, որպիսի դեպքում թուրքաց դեսպանն իբր թե երաշխավորում է, որ Թուրքիան կհարգի Պարսկաստանի չեզոքությունը»*[3]: Մինչդեռ նույն համարում «Այգ»-ը, վկայակոչելով Պետրոգրադի հաղորդումը, նշում է, որ «*Մինիստրական խորհուրդը Սազանովի նախագահությամբ վճռել է մերժել Պարսկաստանի առաջարկը՝ ռուսական զորքերը հետ տանելու: Այդ մասին հայտնվել է Պարսից կառավարությանը՝ հասկացնելով, որ ռուս զորքի ներկայությունն անհրաժեշտ է՝ պաշտպանելու համար օտարահպատակների շահերը և հաստատելու ներքին կարգը*»[4]:

[1] *Ստ. Պողոսյան,* «Հայոց ցեղասպանության պատմություն», 2-րդ հատոր, էջ 443:
[2] «Ռաադ», 15 հոկտ. 1914թ., հ. 10, էջ 2:
[3] «Այգ» շաբաթաթերթ, 5 հոկտ., 1914թ., Գ. տարի, հ. 21 , էջ 5:
[4] Նույն տեղում:

Իրանի չեզոքության դիրքորոշման նկատմամբ հակամարտ ուժերի կողմից դրսևորվող արհամարհանքին բազմիցս են անդրադարձել ժամանակի թերթերը: Ընդդիմադիր «Նոբահար»-ը, հատկապես «Ի վերջո ուր է գնում Իրանը» խորագրի ներքո գրում էր. «...*Թուրքիայի գործողություններն Ատրպատականում, Քերմանշահում և Արաբստանում* (Խուզիստան- *Դ.Մ.*) *և ապա՝ ռուսական պետության սանձարձակություններն Ատրպատականում, Ղազվինում, Համադանում ու Թեհրանում, առերևույթ արյունալի մրցասպարեզ են հանդիսացել չեզոք Իրանում, բայց խորքում ապացուցում են, որ մինչև Իրանը ի զորու չլինի ինքնահաստատման ու գործնապես երաշխավորելու չեզոքության պահպանումը, անհնարին է լինելու իր ինքնուրույն քաղաքականության գործադրումը*»[1]: Իրանի կառավարության ջանքերը չեզոքության դիրքորոշման վերաբերյալ, հատկապես գերմանա-թուրքական ուժերի կողմից դրական կեցվածքի ապահովումը, սակայն, մնում էին ապարդյուն, քանզի մայրաքաղաք Թեհրանում աշխատող թուրքական, գերմանական և ավստրիական դեսպանատներն իրենց քմահաճ քայլերն ու քարոզչությունն էին առաջ մղում: Զորօրինակ՝ *«...Տաճկական դեսպանի ստացած «Սրբազան պատերազմ» գրգռող 30.000 կեղծ «ֆեթվա»-ների ցրումը Թեհրանում կառավարության կողմից արգելվեց: Ինչպես հաղորդում են՝ այդ թռուցիկները կուղարկվեն գավառներ:*

Գաղտնի հավաքումները շարունակվում են, ավելի հաճախ՝ բազմամարդ: Կառավարությունը... գաղտնի հսկողություն է նշանակել տաճիկ և գերման դեսպանատների մոտ, որպեսզի զենքի ցրումն արգելվի: ...Այժմ էլ ավստրիական դեսպանատունն է սկսել զենքերի ցրումը... Վերոհիշյալ երեք դեսպանատները ամեն միջոց գործ են դնում խլրտումներ առաջացնելու և այդ նպատակով կաշառում են կառավարական պաշտոնյաներին: Նույնիսկ մինիստրներից 3-ը, որոնք նույնպես կաշառված են, աշխատում են գործել նրանց ծրագրով և ամեն հարցում թեքվում են նրանց կողմը...»[2]:

Այս կապակցությամբ պարսկալեզու «Նոբահար» թերթն իր 1915թ. մայիսի 4-ի համարում այսպես է բնութագրել Գերմանիայի հյուպատոսի միջամտությունները. «...*Գերմանիայի նոր հյուպատոսը, որը Թուրքիայից Սպահան է գործուղվել, ճանապարհին ամենուր հակաքարոզչություն է ծավալել Ռուսաստանի և Անգլիայի դեմ և ազգաբնակչությանը իրազեկում է, թե իբր լոռերը, քրդերը և մյուս ցեղերը հաստատակամորեն հովանավորում են օսմանցիներին...*»[3]:

[1] «Նոբահար», 13 հուլիսի 1914թ., հ. 57, էջ 1:
[2] «Այգ» շաբաթաթերթ, 1914թ., դեկտ. 7, հ. 30, էջ 4:
[3] «Նոբահար», 4 մայիսի 1915թ., հ. 38, էջ 2:

Սեֆևյան Պարսկաստանի ժամանակաշրջանից ի վեր Օսմանյան կայսրության նկրտումները Իրանի և մասնավորապես Ատրպատականի նկատմամբ հետագայում ևս մնացին անփոփոխ, իսկ նորագույն ժամանակաշրջանում, այսինքն՝ 20-րդ դարասկզբին, նույն նկրտումները «Մեծ Թուրանի»[1] համատեքստում իրագործելու համար՝ լավագույն խթան էր հանդիսանում Ա. աշխարհամարտը, որում ընդգրկվելու խրախուսիչ հանգամանքը հօգուտ Թուրքիայի՝ գերմանական նեցուկն էր:

Ըստ պարսիկ պատմաբան Քավե Բայաթի՝ թուրք գաղափարախոս և «*Իթթիհադ վե թերաքքի*» կուսակցության Կենտրոնական կոմիտեի անդամ Զիա Գոք Ալփը «Մեծ Թուրանի» նպատակի իրագործման համար երեք հանգրվան է ենթադրել. «*Առաջին՝ օսմանական թուրքերի տիրապետության ամրապնդում կայսրությունում և փոքրամասնությունների թուրքացում. երկրորդ՝ պանթրքության հանգրվան, որտեղ ներգրավվում և մերվում են օսմանական թուրքերի ցեղակիցները, այսինքն՝ Իրանի ատրպատականցիները և Կովկասի մուսուլմանները. երրորդ՝ Ասիա ցամաքամասի թուրանական ցեղախմբերի և բոլոր ազգությունների միասնությունը թուրքական առանցքի շուրջ*»[2]:

«*Իրանում, սակայն,*- գրում է Քավե Բայաթը,- *հաշվի առնելով ռուս–անգլիական բռնաճնշումները, հասարակաց կարծիքը հակված էր Իրան-օսմանական միությանը՝ ընդդեմ դաշնակից ուժերի, և այդ իսկ պատճառով երկրում ձևավորվեց գերմանա-օսմանամետ մի ժամանակավոր իշխանություն ընդդեմ Ռուսաստանի և Անգլիայի. հետագայում, սակայն, այդ իշխանավորներից շատերն Իրանի արևմտյան շրջաններում օսմանցիների իրական գործունեությանը ականատես դառնալով՝ անդրադարձան, որ «Իսլամական միություն»-ը լոկ մի քողածածկույթ է*»[3]: Իսկ ինչպես վերը նշեցինք, համընդհանուր պատերազմում Թուրքիայի նպատակներից մեկն էր, ի շարս այլ շրջանների, գրավել նաև Իրանի Ատրպատական նահանգը: Այդպիսի նպատակ էր հետապնդում Օսմանյան Թուրքիան մինչև պատերազմը՝ 1905 թվականից, երբ սուլթանը փորձում էր պաշտպանվել Պարսկաս-

[1] Թուրք համաթուրանականները՝ աշխարհակալական մեծ ծրագրերով, ամեն տեսակի ցանցեր նետելով, առանց կանգ առնելու որևէ զոհողության առաջ, աշխատում են տիրել Իրանին պատկանող Ատրպատական նահանգին՝ «Կովկասյան Ադրբեջանին» և ապա երկարել մինչև Թուրքմենստան, Ուզբեկստան, Տաջիկստան, Ղրղզստան ու Ղազախստան, այսպես՝ Կասպից ծովից դեպի արևելք... և դեպի հյուսիս, մինչև Վոլգայի ափերը՝ ստեղծելու համար հսկա, անպարտելի Օսմանյան հանրապետական մեծ կայսրություն (տե՛ս «Ատրպատականի գոյամարտը», հեղ. *Յ.Սարդ,* Թեհրան, 1964թ.):

[2] *Բայաթ Ք.,* «Պանթուրքիզմը և Իրանը», էջ 18-19:

[3] Նույն տեղում, էջ 19-20:

տանում ծայր առած Սահմանադրական շարժումից: Սա նույնպես համընկնում էր Գերմանիայի մասնավորապես մերձավորարևելյան աշխարհաքաղաքական նպատակներին, որն Ա. աշխարհամարտի գլխավոր ասպարեզներից էր հանդիսանում ու եվրոպական հիմնական երկրների հակամարտության կիզակետը: Ընդհանուր այս համատեքստում, ահա, կարելի է արձանագրել հետևյալ փաստը. *«...Հայերի տեղահանման գաղափարը թուրքերին հուշեց Բեռլինից աշխարհագրագետ դոկտ. Ռորբախը: Մերձավոր Արևելքի ժողովուրդների քարտեզը կազմելիս նա նկատել էր, որ կենտրոնական բարձրավանդակում բնակություն հաստատած հայերը մի կողմից իջնում են Սև ծով՝ Տրապիզոն, մյուս կողմից՝ Միջերկրական ծով, Կիլիկիա: Նրանք Անատոլիայում հաստատված թուրքերին անջատում են հյուսիսարևմտյան Պարսկաստանում և ռուսական Կովկասում ապրող թուրքալեզու ժողովուրդներից:*

Եթե հայկական այս թումբը վերացվի, ապա դոկտ. Ռորբախը կկարողանա պատրաստել մի քարտեզ, որտեղ Գերմանիայի օսմանյան դաշնակիցները Ադրբեջանի (Ատրպատական- *Դ.Մ.) և Արաքսի հովտի իրենց ազգակիցների հետ շղթայական բլոկ էին կազմելու»*[1]:

Պատմական հետադարձ մի ակնարկ նետելով՝ պարզ է դառնում, որ «*...սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը ոչ առանց հիմքի վախենում էր, որ իրանական հեղափոխությունը վարակիչ օրինակ կարող է հանդիսանալ նաև Թուրքիայի համար: Այդ պատճառով նա որոշեց դիմել կանխարգելիչ միջոցառման՝ ջախջախել հեղափոխական շարժումն Իրանում և թույլ չտալ նրա ներթափանցումը Թուրքիա: 1905թ. նոյեմբեր-դեկտեմբերից թուրքական բանակն անցնում է իրանական սահմանը և ձեռնամուխ լինում ինտերվենցիայի: Բոլոր նշաններից երևում էր, որ Աբդուլ Համիդի կառավարությունը ծրագրել էր նաև զավթողական լայն քաղաքականություն Իրանում, որի նպատակն էր ընդարձակել կայսրության սահմաններն իր արևելյան հարևանի հաշվին, մասնավորապես գրավել Իրանական Քուրդիստանն ու Ատրպատականը և իրագործել պանիսլամիստական գաղափարը՝ Սուլթան – Խալիֆի գլխավորությամբ ստեղծել միասնական մեծ մահմեդական պետություն, որի կազմի մեջ պետք է մտնեին Օսմանյան կայսրությունը, Իրանը, Կովկասը և Թուրքեստանը: ...Դիմելով արտաքին զավթումների քաղաքականության, թուրքական կառավարող շրջանները հույս ունեին նաև բորբոքել կայսրության մահմեդական բնակչության*

[1] *Այբերտ Փարսադանյան,* «Թղթապանակ 1915» (Վահան Անտոնյանի «Հայերի բնաջնջումը» հոդվածից, որը տպագրվել է 1916թ. անգլիական «Թայմս» պարբերականում), Երևան, 2005, էջ 71:

ռազմաշունչ ոգին՝ միաժամանակ խոչընդոտելով Ռուսաստանի ազդեցության մեծացումը Հյուսիսային և Հյուսիսարևմտյան Իրանում»[1]:

Հետագայում, երբ 1908-ին Թուրքիայում հաստատվեցին սահմանադրական կարգեր, որից էլ խանդավառվել էին Իրանում հեղափոխական շրջանակներն ու մասնավորապես Ատրպատականը, ուր նույնիսկ լուրեր տարածվեցին, որ շուտով երիտթուրքական կառավարության զորքերն օգնության ձեռք կմեկնեն ռեակցիայի դեմ մարտնչող Թավրիզի հեղափոխականներին..., բայց *«...Շատ շուտով պարզվեց, որ «Նոր Թուրքիայի» կառավարող շրջանները բնավ մտադիր չեն հրաժարվել Ատրպատականի և Իրանական Քուրդիստանի նկատմամբ մեծապետական-զավթողական հավակնություններից: Առհասարակ արտաքին քաղաքականության հարցերում երիտթուրքերն ամբողջապես որդեգրեցին իրենց նախորդի ծրագրերը: «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության նախաձեռնությամբ Ստամբուլը սկսեց հող նախապատրաստել Իրանի ներքին գործերին միջամտելու համար: 1908թ. սեպտեմբերի 13-ին Նախարարների խորհրդի արտակարգ նիստում, որին մասնակցում էին մեծ վեզիրը, ռազմական, ֆինանսների և ներքին գործերի նախարարները, որոշվեց հայտարարել իրանական կառավարությանը, որ եթե Թավրիզում հեղափոխական ֆիդայիների և կառավարական զորքերի միջև տեղի ունեցող ռազմական գործողությունների հետևանքով թուրքահպատակները վնասներ կրեն, ապա անհապաղ Թավրիզ կուղարկվեն թուրքական զորքերը: Թեհրանում թուրքական դեսպանատունը ճնշում էր գործադրում շահական կառավարության վրա՝ պահանջելով թույլատրել Թավրիզ մտցնել «ազգային պահակախումբ», իբր թե թուրքական հյուպատոսությունը և թուրքահպատակներին պաշտպանելու համար»*[2]:

Ատրպատականը իրանական պետության կազմից անջատելու և Թուրքիային միացնելու միտումով, ինչպես նաև Իրանի թուրքալեզու ժողովուրդներին հեղափոխության դեմ ոտքի հանելու նպատակով երիտթուրքական գործակալությունը պրովոկացիոն ագիտացիա էր մղում, որ իբր Թեհրանի սահմանադրական կառավարությունը որոշել է բնաջնջման քաղաքականություն վարել ադրբեջանցիների (ատրպատականցիներ- *Դ.Մ.*) և առհասարակ Իրանի թուրքալեզու ժողովուրդների նկատմամբ:

[1] *Վ.Ա. Բայբուրդյան,* «Օսմանյան Թուրքիայի ինտերվենցիան Իրանում 1905 – 1911թթ.», էջ 93: Տե՛ս Штаб Кавказского военного округа. Сводка сведений о сопредельных странах, добытых разведкой, Тифлис, 1911, № 3, Ч 26-, ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1009.
[2] Նույն տեղում, էջ 96:

Երիտթուրքական կառավարության ինտերվենցիան վերջնականապես հոդս ցնդեցրեց Ատրպատականի հեղափոխական շրջանների այն մասի հույսերը, որոնք ենթադրում էին, թե ցարական Ռուսաստանին երկրամասից դուրս մղելու և ներքին ռեակցիայի դեմ պայքարելու համար կարելի է ապավինել «*Սահմանադրական Թուրքիայի*» կառավարությանը: Աստիճանաբար ուժեղանում էր իրանական հեղափոխականների դժգոհությունը երիտթուրքական կառավարության քաղաքականության և օկուպացված շրջաններում թուրքական քաղաքացիական իշխանությունների բռնությունների նկատմամբ: Ամենուրեք հեղափոխական շրջանները սկսեցին պայքար ծավալել թուրքական զավթիչների դեմ: 1910թ. վերջին կովկասյան մամուլն այդ առթիվ գրում էր, որ «*ֆիդայիների գործունեությունը թուրքական ռեժիմից դժգոհ բոլոր տարրերին համախմբելու ուղղությամբ դառնում է ավելի ու ավելի ակնառու*»[1]:

1911թ. Ատրպատականում և Իրանական Քուրդիստանում արդեն ծավալվեց զանգվածային հակաթուրքական շարժում, որը և կարևոր դեր խաղաց Իրանում Օսմանյան Թուրքիայի ագրեսիվ զավթողական քաղաքականության ձախողման գործում:

Այսպիսով, 1905-1911թթ. իրանական հեղափոխության տարիներին Օսմանյան Թուրքիան՝ հանձինս սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի և երիտթուրքական կառավարությունների, հանդես էր գալիս իրանական ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը խեղդողի դերում: Ընդ որում, եթե իմպերիալիստական Անգլիան և ցարական Ռուսաստանն Իրանում ինտերվենցիայի դիմեցին 1909թ., ապա Թուրքիան ձեռնամուխ եղավ այդ քայլին նրանցից նշանակալիորեն ավելի վաղ՝ 1905թ.[2]:

Փաստ է, որ Բալկանյան պատերազմի ժամանակ և նրանից հետո էլ Թուրքիան իրանական Ադրբեջանի վերաբերմամբ չթուլացրեց իր հարձակողական ձգտումները: Նա շարունակեց ավազակախմբեր կազմել թուրքասերներից, քրդական ցեղերից և Իրանում խափանարար աշխատանքներ տարավ ռուսների դեմ՝ այդ նպատակի համար հավաքագրելով նաև Ռուսաստանի դեմ թշնամաբար տրամադրված իրանցի պետական գործիչների: Այս հանգամանքը շատ լավ հայտնի էր Թեհրանի ռուսական դեսպանին, Թավրիզի, Խոյի, Ուրմիայի հյուպատոսներին, որոնք այդ մասին շարունակ ահազանգում էին Պետերբուրգին:

[1] Նույն տեղում, էջ 102:
[2] Նույն տեղում, էջ 103:

Իր հարձակողական ծրագրերն Իրանում լրացնելու համար թուրքական կառավարությունը քրիստոնյա բնակչության՝ հայ, ասորի և այլն, բնաջնջման ծրագիր էր հղանում: Հայտնի է, որ թուրքական իշխանավորները նման գործերի համար բավականաչափ փորձառություն ունեին: Նրանք իրանական Ադրբեջանի քրդերին զինում էին ռուսների դեմ՝ պայքարի ժամանակ օգտագործելու համար:

Իրանական Ատրպատականի նկատմամբ Թուրքիայի հավակնոտ նպատակները շարունակվեցին նույն կերպ, մինչև Ա. աշխարհամարտի տարիները:

Այսպես՝ 1913թ. հեղաշրջման արդյունքում «Միություն և առաջադիմություն» կուսակցության ծայրահեղական թևը հաջողեց չեզոքացնել երիտթուրքերի ազատական և հավասարության ջատագով հոսանքը, որով էլ ավելի ծավալեց պանթուրքական նկրտումները: Ի հետևանս դրա՝ ներկայացուցիչներ գործուղվեցին դեպի Կովկաս, Իրան, Աֆղանստան և Միջին Ասիա: Ա. աշխարհամարտի սկսմամբ «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարները հասունացած համարեցին Ռուսաստանից վրեժխնդիր լինելու պահը և ցարական կայսրության փլուզմամբ՝ Ռուսաստանի թուրքերի ազատագրումը...[1]:

1914-ին, երբ հայտարարվում է ռուս-թուրքական պատերազմը, հրապարակ են գալիս համաթուրանականները՝ որպես պանիսլամիստներ: Պոլսում իսլամ կրոնապետերը, «*Սանճաղը – Շերիֆը*» (սուլթանական բարեկորոգումների հրովարտակ) դուրս հանելով, «*ջիհադ*» են հայտարարում (սրբազան պատերազմ)՝ մոլեռանդներին մղելով անմեղ ժողովուրդներին կոտորելու, արյուն թափելու...[2]: «*...Թուրքական կառավարությունը*,- գրում է Զարեվանդը,- *հայտարարեց սրբազան պատերազմ (ջիհադ)*:- Այդ հայտարարության մեջ ասվում էր.- «*Մեզ հարստահարող թշվառականները բնաջնջելը սուրբ գործ մըն է՝ գաղտնի, թե հայտնի կատարվի: Ըստ Ղուրանի բառին՝ առեք զանոնք և սպաննեցեք, ուր որ կրնաք գտնել, մենք կուտանք զանոնք ձեզի և կշնորհենք ձեզ ամեն իշխանություն անոնց վրա*»[3]: Իսկ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտկոմի շրջաբերականում պատերազմը սկսելու կապակցությամբ կարդում ենք. «*Շմոռանանք, որ համաշխարհային պատերազմին մեր մասնակցության նպատակը մեզ*

[1] Դեհղանի Ռեզա, « Հայերը Համաշխարհային Ա. պատերազմում», էջ 228:
[2] *Յ.Սարո,* «Ատրպատականի գոյամարտը», Թեհրան, 1964թ., էջ 5-6:
[3] *Զարեվանդ,* «Միացյալ, անկախ Թուրանիա», Աթենք, 1988թ., էջ 105 (տե՛ս *Ստ. Պողոսյան*, «Պանթուրքիզմը, երեկ և այսօր»):

սոսկ վերահաս, սպառնացող կորուստե փրկելը չէ, այլ մենք կհետապնդենք ավելի անմիջական նպատակ մը – մեր ազգային իդեալին իրականացումը: Մեր ժողովրդին և Հայրենիքին ազգային իդեալը մեզի մեկ կողմե կմղե խորտակելու Մոսկովյան թշնամին, ատով հասնելու մեր կայսրության համար բնական սահմանի մը, որուն մեջ կպարփակվին ու կմնան մեր բոլոր ազգակից եղբայրները»[1]:

Եվ այսպիսով, Պարսկաստանի հյուսիսային սահմանների թույլ ու անպաշտպան լինելու պատճառով ռուսական և թուրքական բանակները, ոտնակոխ անելով միջազգային ընդունված օրենքը, անարգել մուտք են գործում չեզոք Իրանի Ատրպատական նահանգ և դարձնում այն պատերազմի թատերաբեմ: Համաթուրանականները Պարսկաստանում և մասնավորապես Ատրպատականում մեծ թափով գործի են լծվում՝ պրովոկացիոն քարոզչություններով մոլեռանդներին գրգռելով քրիստոնյաների դեմ:

Հուլիս, 2017թ.

Ա. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ, ԻՐԱՆԸ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ

Դերենիկ Մելիքյան

Ամփոփագիր

Հոդվածն անդրադառնում է 1914թ. Առաջին համաշխարհային պատերազմում Իրանի որդեգրած չեզոքության քաղաքականությանը: Թեև Ահմեդ շահի օրոք երկիրը չեզոքություն էր որդեգրել, սակայն կենտրոնական իշխանության թույլ լինելու պատճառով այն պահել չհաջողվեց: Երկրի հյուսիսը, հարավը, արևելքն ու արևմուտքը յուրային և օտար բանակների գործողությունների ասպարեզ դարձան, հատկապես պատերազմական կիզակետ դարձավ Ատրպատականը: Արդյունքում՝ 4-ամյա պատերազմական շրջանում երկիրը մեծագույն վնասներ և կորուստներ կրեց:

[1] Նույն տեղում, էջ 107:

ПЕРВАЯ МИРОВАЯ: ИРАН И ТУРЕЦКИЕ ПОПОЛЗНОВЕНИЯ В АТРОПАТЕНЕ

Дереник Меликян

Резюме

В статье говорится об иранской политике нейтралитета в ходе Первой мировой войны 1914г. Хотя при шахе Ахмеде страна придерживалась нейтралитета, однако из-за слабости центральной власти сохранить его не удалось. Север, юг, восток и запад страны стали ареной действий собственно иранских и иностранных армий, а Атропатена стала особым эпицентром войны. В результате страна понесла значительные потери и ущерб за 4 года войны.

THE WORLD WAR I, IRAN AND THE TURKISH AMBITIONS IN ATROPATENE

Derenik Melikyan

Resume

The article elaborates on Iran's policy of neutrality during the WWI. Although Ahmad shah declared neutrality, due to the weakness of the central government it was not secured. The north, south, east and west of the country became theaters of military actions between belligerent armies, especially with Atropatene being the focal war area. As a result, during the four years of war Iran sustained tremendous losses and damages.

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 12 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*, ինչպես նաև բանալի-բառեր:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա ամփոփագիր (հայերեն, ռուսերեն, անգլերեն):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), с. (ռուսերեն), p. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝
   - *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
   - *Шарипова Р.,* Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
   - *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from http://www.internews.ras.ru/books/media, Sept. 28, 1998.
5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ՐԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 01.11.2017թ.
Թիվ 6 (76), 2017թ.
Տպաքանակը՝ 150:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 7 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում